

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՏԵՍԱԳԻՒՅԱՆ ՀԱՄԱԼՍՐԻՆ**  
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ  
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՏԵՍԱԳԻՒՅԱՆ ՀԱՄԱԼՍՐԻՆ**

**ВЕСТНИК АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА**

**MESSENGER OF ARMENIAN STATE  
UNIVERSITY OF ECONOMICS**

**3(39)**

**«ՏԱՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

---

**ԵՐԵՎԱՆ 2015**

«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի»  
հանդեսն ընդգրկված է դոկտորական ատենախոսությունների արդյունքների  
տպագրման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում

#### Գլխավոր խմբագիր՝ Կողյուն ԱԹՈՅԱՆ

**Խմբագրական խորհուրդ՝** Սուրեն ԳԵՎՈՐԳՅԱՆ, Արարատ ԶԱԿԱՐՅԱՆ, Աշոտ ԹԱՎԱԴՅԱՆ, Աշոտ ԹԱՎԱԴՅԱՆ, Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Միկայել ՄԵԼԿՈՒՄՅԱՆ, Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, Խորեն ՄԽԻՏԱՐՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Աշոտ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, Արամ ՍԱՐԳՍՅԱՆ, Վարդան ՍԱՐԿԻՍՅԱՆ, Յուրի ՍՈՎԱՐՅԱՆ, Գագիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Պարույր ԿԱԼԱՆՏԱՐՅԱՆ

#### Главный редактор Корюн АТОЯН

**Редакционная коллегия:** Сурен ГЕВОРГЯН, Арарат ЗАКАРЯН, Ашот ТАВАДЯН,  
Григор КИРАКОСЯН, Микаел МЕЛКУМЯН, Хорен МХИТАРЯН  
(заместитель главного редактора), Ашот САЛНАЗАРЯН, Арам  
САРКИСЯН, Вардан САРКИСЯН, Юрий СУВАРЯН, Гагик  
ВАРДАНЯН, Парујр КАЛАНТАРЯН

#### Editor-in-chief Koryun ATOYAN

**Editorial board:** Suren GEVORGYAN, Ararat ZAKARYAN, Ashot TAVADYAN, Grigor KIRAKOSYAN, Mikayel MELKUMYAN, Khoren MKHITARYAN (Deputy Editor-in-chief), Ashot SALNAZARYAN, Aram SARGSYAN, Vardan SARGSYAN, Yuri SUVARYAN, Gagik VARDANYAN, Paruyr KALANTARYAN

Պատասխանատու քարտուղար՝ Գոհար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Ավագ խմբագիր՝ Սուսաննա ՉԱԼԱԲՅԱՆ  
Տեխնիկական խմբագիր՝ Նաիրա ԽՇԵՅԱՆ

Ответственный секретарь Гоар ОГАНЕСЯН  
Старший редактор Сусанна ЧАЛАБЯН  
Технический редактор Найра ХЧЕЯН

Executive secretary Gohar HOVHANNISYAN  
Senior editor Susanna CHALABYAN  
Technical Editor Naira KHCHEYAN

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԿՈՐՅՈՒՆ ԱԹԵՅԱՆ

Միջազգային արտարժութային պահուստների ինստիտուցիոնալ հիմքերն ու կառավարման առանձնահատկություններն արդի փուլում .....	9
---	---

### ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

#### ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ

Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության տնտեսական գնահատականները .....	18
--	----

#### ՄՐԾՈՒՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ բնակչության եկամուտների ու սպառողական ծախսերի դիմամիկան և աղքատության մակարդակը .....	34
---	----

### ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԳԱՅՆՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ տնտեսության հակվածությունը «հոլանդական հիվանդության» նկատմամբ .....	45
---	----

#### ԼՈՒԺԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները .....	58
--	----

#### ԼԻՍՆ ԿԱՐՄՊԵՏՅԱՆ

Տնտեսության կառուցվածքային վերափոխումները որպես ներդրումային քաղաքականության գերակա մարտահրավեր .....	72
--	----

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

#### ՍՈՒՍԱՆՆ ԿԱՐՄՊԵՏՅԱՆ

ՀՀ զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները և զարգացման միտումները .....	79
---	----

#### ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրային ծառայության դերը հանրային կառավարման համակարգում .....	88
--	----

#### ՔՐԻՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ, ՄԱՐՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Զբոսաշրջության դերը Սյունիքի մարզի տնտեսության մոցունակության բարձրացման գործում .....	99
---	----

## **ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

### **ՀԱՅԿ ՍԱՐԳԱՅԱՆ, ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՅՅԱՆ**

Երկրի սահմանադրականության մակարդակի գնահատումը  
դիսկրետ մոդելավորման և քլաստերային վերլուծության  
մեթոդներով ..... 111

### **ԵՎԳԵՆՅԱ ԲԱԶԻՆՅԱՆ**

Տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների և գործարար  
միտումների հարցումների ցուցանիշների փոխկապվածության  
ուսումնաժրությունը ..... 128

## **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

### **ԿԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ, ԼԻԼԻԹ ՂԱՂԱՅԱՆ**

Տեղեկատվական-հաղորդակցական անվտանգության  
ապահովման արդի խնդիրների շուրջ ..... 136

## **ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽԸՈՒԹՆԵՐ**

### **ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՅՅԱՆ**

Հետքուհական կրթության կազմակերպման մարտահրավերները  
Հայաստանում ..... 151

## **ՄԻԿՐՈՏՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

### **ՔԻԱՆԳ ՀՈՒԱՆԳ**

«Մետաքսի ճանապարհ» որպես հայ-չինական համատեղ  
ձեռնարկատիրության բարենպաստ գործոն ..... 159

## СОДЕРЖАНИЕ

### **КОРЮН АТОЯН**

Институциональные основы международных валютных резервов и особенности их управления на современном этапе.....	9
--	---

### **ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ**

#### **ВАРДАН АРАМЯН**

Экономическая оценка присоединения Армении к Евразийскому экономическому союзу, как региональной интеграции.....	18
--	----

#### **АРЦРУНИ ТОРОСЯН**

Динамика доходов и потребительских расходов населения РА и уровень бедности.....	34
--	----

### **МАКРОЭКОНОМИКА**

#### **КНАРИК ВАРДАНЯН, ГЯНЭ АВАКЯН**

Склонность экономики РА к „голландской болезни”.....	45
--	----

#### **ЛУСИНЕ МХИТАРЯН**

Реальный обменный курс и изменения структуры экспорта и импорта РА .....	58
--	----

#### **ЛИАНА КАРАПЕТЯН**

Структурные перестройки экономики как приоритетный вызов инвестиционной политики .....	72
--	----

### **МЕНЕДЖМЕНТ**

#### **СУСАННА КАРАПЕТЯН**

Нынешнее состояние и особенности развития туризма в РА.....	79
---	----

#### **АСМИК АРУТЮНЯН**

Роль публичной службы в системе публичного управления .....	88
---	----

#### **КРИСТИНЕ СААКЯН, МАРТИН ОГАННИСЯН**

Роль туризма в деле повышения конкурентоспособности экономики Сюникского марза.....	99
---	----

### **МАТЕМАТИЧЕСКИЕ МЕТОДЫ**

#### **ГАЙК САРКИСЯН, ЖИРАЙР МХИТАРЯН**

Оценка уровня конституционализма в стране с методами дискретного моделирования и кластерного анализа. ....	111
--	-----

#### **ЕВГЕНИЯ БАЗИНЯН**

Исследование взаимосвязи между добавленными стоимостями отраслей экономики и индексами опросов деловых тенденций.....	128
---	-----

## **ПОЛИТОЛОГИЯ**

**ВАРДАН АТОЯН, ЛИЛИТ ДАДАЯН**

О современных проблемах обеспечения информационно-коммуникационной безопасности ..... 136

## **ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ РЕФОРМЫ**

**АРМЕН ДЖУГУРЯН**

Вызовы организации послевузовского образования в Армении ..... 151

## **МИКРОЭКОНОМИКА**

**КИАНГ ХУАНГ**

"Шелковый путь" как благоприятный фактор армяно-китайского совместного предпринимательства ..... 159

## C O N T E N T S

### ***KORYUN ATOYAN***

Institutional Basics of International Currency Reserves and Features of Their Management in the Present Stage.....	9
---	---

## **THEORY OF ECONOMICS**

### ***VARDAN ARAMYAN***

Economic Assessment of Armenia's Joining the Eurasian Economic Union as Regional Integration.....	18
--	----

### ***ARTSRUNI TOROSYAN***

Incomes and Consumer Spendings Dynamics of the RA Population and the Poverty Level .....	34
---	----

## **MACROECONOMICS**

### ***QNARIK VARDANYAN, GAYANE AVAGYAN***

The Disposition of the Armenian Economy to the "Dutch Disease" .....	45
--	----

### ***LUSINE MKHITARYAN***

The Real Exchange Rate and Changes in Export and Import Structure of the Republic of Armenia.....	58
--	----

### ***LIANA KARAPETYAN***

Restructuring the Economy as a Priority Challenge to the Investment Policy .....	72
---	----

## **MANAGEMENT**

### ***SUSANNA KARAPETYAN***

Present Condition and Features of Tourism Development in the RA.....	79
--	----

### ***HASMIK HARUTYUNYAN***

The Role of Public Service in the System of Public Administration.....	88
--	----

### ***KRISTINE SAHAKYAN, MARTIN HOVHANNISYAN***

The Role of Tourism in the Increase of Competitiveness in the Economy of the Syunik Marz .....	99
---	----

## **MATHEMATICAL METHODS**

### ***HAYK SARGSYAN, ZHIRAYR MKHITARYAN***

Evaluation of the Level of Constitutionalism with the Methods of Discrete Modelling and Cluster Analysis .....	111
---	-----

### ***YEVGENYA BAZINYAN***

Investigation of the Relationship between Economic Activity Indicator and the Values Added in the Main Sectors of Economy .....	128
--	-----

## **POLITOLOGY**

***VARDAN ATOYAN, LILIT DADAYAN***

Issues Related to the Security of Information and Communication Systems .....	136
---	-----

## **EDUCATION REFORMS**


***ARMEN TSHUGURYAN***

Challenges in Post-Graduate Education Organization in Armenia .....	151
---	-----

## **MICROECONOMICS**

***QIANG HUANG***

The “Silk Road” as a Favorable Factor for Armenian-Chinese Joint Venture .....	159
--	-----



## ԿՈՌՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Միջազգային պահուստները արժութային քաղաքականության կարևոր գործիք են: Դրանք անհրաժեշտ են նաև արտաքին պարտքի սպասարկման գծով վճարում-ների կատարման, ինչպես նաև ներմուծման նպատակով արտարժութային միջոցների մկանամբ պահանջարկի բավարարման համար: <<-ում միջազգային պահուստների համալրման հիմնական աղբյուր են Կառավարության և Կենտրոնական բանկի՝ արտարժույթով արտաքին կամ ներքին փոխարություններն ու դրամաշնորհները, ֆինանսական կազմակերպությունների՝ ԿԲ-ում արտարժույթով հաշիվների մնացորդների աճը, արտարժույթի առքը, Կառավարության կողմից գույքի ապահովականացման արդյունքում արտարժութային միջոցների ներհոսքն ու պահուստների ներդրումից ստացված եկանուտը:

**Հիմնաբառեր.** միջազգային պահուստներ, արտաքին պարտք, ազգային արժույթ, վճարային հաշվեկշիռ, իրացվելիություն

Միջազգային պահուստների կառավարման խնդիրը մշտապես գտնվել է կենտրոնական բանկերի ուշադրության կենտրոնում: Դրանք սովորաբար դիտարկվում են որպես տվյալ երկրի ֆինանսական մարմինների կողմից պահվող և հաշվառվող ազատ փոխարկելի արտարժույթով անվանական ակտիվներ, որոնք ծառայում են որպես արժութային քաղաքականության իրականացման նպատակով արտարժութային շուկաներում ներդրումների, արտաքին պարտքի սպասարկման, միջազգային վճարումների, և ազգային հարստության կուտակման միջոց<sup>1</sup>: Ցանկացած ազգային դրամական համա-

<sup>1</sup> Ст. и Малышева С., Тараскина Т., Международные валютные резервы стран на современном этапе. М., Консалт Б., 2015, § 8:

կարգի համար պետության կենտրոնական բանկի, ֆինանսների նախարարության կամ այլ պաշտոնական գործակալությունների միջազգային պահուստները երկրի ներքին դրամական համակարգի կայունության գրավականներից են:

Միջազգային պահուստները արժութային քաղաքականության կարևոր գործիք են և հատկապես արժեքավոր են այն երկրների համար, որոնք որդեգրել են ամրագույք (ֆիքսված) փոխարժեքի քաղաքականություն: Վերջինիս դեպքում միջազգային պահուստների միջոցով շուկայական փոխարժեքը պահպում է տատանման թույլատրելի սահմաններում<sup>2</sup>:

Միջազգային պահուստներն անհրաժեշտ են նաև արտաքին պարտքի սպասարկման գօնվ վճարումների կատարման համար: Եվ թեև արտաքին պարտքի սպասարկման վճարումները հնարավոր է իրականացնել նաև արտարժութային շուկաներում ազգային արժույթի վաճառքի և պարտավորությունների արժույթի ձեռքբերման ձանապարհով, սակայն վերջինս խիստ ոչսկային է և չափազանց թանկ: Այդ իսկ պատճառով երկրների գերիշխող մասը, որպես կանոն, աշխատում է պահել իր արտաքին պարտքի ծավալին հավասար կամ նույնիսկ գերազանցող միջազգային պահուստների համապատասխան պաշար:

Միջազգային պահուստները ծառայում են նաև որպես ներմուծման համար անհրաժեշտ արտարժութային միջոցների նկատմամբ պահանջարկի բավարարման գործիք: Դրանք առևտրային հաշվեկշռի ժամանակավոր ձեղքվածքները ծածկելու թափարգելիչ (բուժերային) գործառույթ են կատարում: Գործարքներով պայմանավորված այս շարժառիթը առավել հաճախ հանդիպում է այն դեպքերում, երբ առկա է փոխարժեքի խիստ վերահսկում, և արտարժութային գործարքների մեջ մասն իրականացվում է կենտրոնական բանկերի, այլ ոչ թե արտարժութային շուկաների միջոցների հաշվին: Հետևաբար՝ միջազգային պահուստների ծավալը երկրի վճարունակության կարևոր ցուցանիշ է: Որքան մեծ է տվյալ երկրի պահուստների ծավալը, այնքան արտասահմանյան շուկաների մասնակիցներն ավելի վստահ են, որ երկիրն ունակ է մարելու իր վճարային պարտավորությունները:

Ի վերջո, միջազգային պահուստները ազգային հարստության կուտակման կարևոր միջոց են: Այս պարագայում առաջ են գալիս միջազգային պահուստների փաթեթի հետ կապված հարցեր, որոնք վերաբերում են դրանց մակարդակին, արժութային բաղադրությանը և հնարավորինս բարձր եկամտաբերության ապահովմանը<sup>3</sup>:

Այսպիսով՝ արդի փուլում կենտրոնական բանկը կառավարում է միջազգային պահուստները՝ առաջնորդվելով հետևյալ շարժառիթներով:

- **Ազգային արժույթի պաշտպանվածություն.** ուսկու ստամդարտ: Միջազգային պահուստները կոչված են ապահովելու ազգային արժույթի պաշտպանվածությունը, որը հիմնականում վերաբերում է ոսկու պաշտոնական պահուստներին:
- **Արտարժութային պահանջարկի բավարար և վճարային հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորում.** Բրետոն-Կուլսի համակարգ: Միջազ-

<sup>2</sup>Տես **Brendon Stage**, International Currency Reserve System Management. Corporate Integration Legacy – London, UK, May, 2013:

<sup>3</sup>Տես **Максимов Т., Устинова Л.**, Финансы и кредит. Учебное пособие для студентов. Саратов, 2014, էջ 274-275:

գային պահուստները երբեմն օգտագործվում են ֆինանսավարկային հաստատությունների արտաքինական պահանջարկի բավարարման, ինչպես նաև երկրի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման նպատակով:

- **Ինտերվենցիա:** Ըստ դասական սահմանման՝ ինտերվենցիան որևէ արժույթի փոխարժեքի վրա ազդելու նպատակով Կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գործառնություն է, որը համարվում է պահուստների նկատմանք պահանջարկի առաջնային շարժարիթ<sup>4</sup>:
- **Հարստության կուտակում:** Կենտրոնական բանկը միջազգային պահուստները դիտարկում է որպես իրացվելի և ներդրումային փաթեթների հանրագումար: Իրացվելի փաթեթում պետք է ընդգրկվեն առավել բարձր իրացվելիություն ունեցող ակտիվները, որոնք հիմնականում կոչված են ապահովագրելու բացասական ճեղքածքից, որն առաջանում է ինտերվենցիաների, պարտքի անսպասելի վճարման և այլ անկանխատեսելի երևոյթների ժամանակ: Իսկ ներդրումային փաթեթի կարավարման նպատակը հարստության կուտակումն է: Կենտրոնական բանկը, օգտագործելով պորտֆելային տեսությունն ու կիրառվող մոդելները և նախապես որոշելով ռիսկի թույլատրելի մակարդակը, փորձում է գտնել ռիսկ/եկամտաբերություն օպտիմալ հարաբերակցությունը:
- **Միջազգային պահուստները օգտագործվում են նաև արտաքին պարտավորությունների սպասարկման նպատակով, ինչպես նաև անհարահարելի ուժի հետևանքով առաջացած արհավիրքների դեմ պայքարելու միջոց են:** Այս կարգի խնդիրներ լուծելիս պահուստների առկայությունը առավելապես կարևորվում է փոքր տնտեսությունների դեպքում, որոնց համար ֆորս-մաժորային ռիսկերը կարող են խոր ճգնաժանի պատճառ դառնալ. օրինակ՝ փոթորիկը Կարիբյան ավագանի երկրներում, երկրաշարժն ու ջրհեղեղը ճապոնիայում և այլն:

Պահուստները հանդես են գալիս որպես տնտեսական և ֆինանսական ճգնաժանների խուսափելու հնարավորություն<sup>5</sup>: Դա կիրառելի է բոլոր՝ մասնավորապես նոր զարգացող և անցումային տնտեսություններ ունեցող երկրներում, որոնց շուկաները ենթարկվում են միջազգային կապիտալի հոսքերի տատանման ցնցումների ազդեցությանը:

Միջազգային ասպարեզում արտաքինական ակտիվների ձեռքբերման առավել տարածված մեթոդներից են.

- Արտաքինական միջոցների պաշտոնական փոխառություն (պետական վարկեր, պարտատոմսների թողարկում):
- Արտաքինական սպով շուկայում ազգային արժույթի դիմաց արտաքինական փոխառության ձեռքբերում:
- Ազգային դրամի վաճառքի դիմաց արտաքինական առնիջական գնում, որը կարող է ազդել փոխարժեքի մակարդակի վրա:

Երկրների մեծ մասում միջազգային պահուստները կառավարվում են կենտրոնական բանկերի կողմից, արտացոլվում են դրանց հաշվեկշռում, և կառավարման գործընթացի վերաբերյալ որոշումներն ընդունվում են միայն

<sup>4</sup> Տես **Մալուշևա Ս., Տարասինա Տ.**, նշվ. աշխ., էջ 86–87:

<sup>5</sup> Տես **Ս. Ֆիշեր**, ԱՄՀ և Համաշխարհային բանկի «Միջազգային պահուստների կառավարման քաղաքականություններ», համաժողովի նյութեր, 2001 թ. ապրիլի 28:

կենտրոնական բանկի կողմից: Որոշ երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա և այլն) պահուստները պաշտոնապես պատկանում են կառավարությանը և դրանց վերաբերյալ որոշումների իրավունքը տվյալ երկրի Կառավարությանն է (ֆինանսների նախարարություն կամ գննձապետարան)<sup>6</sup>:

ՀՀ-ում միջազգային պահուստների համարման հիմնական աղբյուրներն են ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի՝ արտարժույթով արտաքին կամ ներքին փոխառություններն ու դրանշանորհները, ֆինանսական կազմակերպությունների՝ ԿԲ-ում արտարժույթով հաշիվների մնացորդների աճը, արտարժույթի առքը, Կառավարության կողմից գույքի ապահովականացման արդյունքում արտարժութային միջոցների ներհոսքն ու պահուստների ներդրումից ստացված եկամուտը: Միջազգային պահուստները հաշվառվում են դոլարով, մինչդեռ պահուստային արտարժույթի կարգավիճակ ունեցող հիմնական արժույթներն են ԱՄՆ դոլարը, Եվրոն, բրիտանական ֆունտը և Ճապոնական իենը: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ մյուս արժույթների արժենորումը/արժեզրկումը նույնպես կարող է հանգեցնել դոլարային արտահայտությամբ պահուստների նակարդակի փոփոխության<sup>7</sup>:

Այսպիսով՝ միջազգային պահուստների կառավարումը կենտրոնական բանկերի կարևորագույն գործառույթներից է, և յուրաքանչյուր թերացում կամ բացթողում կարող է լուրջ կորուստների պատճառ դառնալ: Այս գործառույթի պատշաճ կատարումը կարևորվում է ինչպես արտասահմանյան գործընկերների շրջանակներում և միջազգային ֆինանսական շուկաներում դրական համբավ ձեռք բերելու, այնպես էլ տվյալ պետությանը, մասնավորապես՝ կենտրոնական բանկին սխալ, չժրագրավորված որոշումների հետևանքով հնարավոր ֆինանսական կորուստներից պաշտպանելու տեսանկյունից:

Ինչպես հայտնի է, կենտրոնական բանկի գերխնդիրը հանրապետությունում գների կայունության ապահովումը և դրան համեմելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումն է: Այս առումով, միջազգային պահուստների կառավարման նպատակներն ու առաջնայնությունները սահմանելու տեսանկյունից, հատուկ ուշադրության են արժանի փոխարժեքի ռեժիմը և երկրի արտաքին պարտքը: Նշված երկու կարևորագույն խնդիրների՝ դրամավարկային քաղաքականության և կառավարության ֆինանսական գործակալի գործառույթների իրականացմամբ էլ պայմանավորվում է կենտրոնական բանկերի կողմից միջազգային պահուստների կառավարման առանձնահատկությունը:

Եթե, ըստ առևտրային բանկերի, արտարժութային միջոցների կառավարման արդյունավետությունը կախված է ոնսկի ընդունելի սահմաններում առավել եկամտաբեր զամբյուղի ստեղծումից, ապա կենտրոնական բանկը, որպես շահույթի ստացման նպատակ շետապնդող կազմակերպություն, միջազգային պահուստների կառավարումը դիտարկում է սկզբունքներն այլ տեսանկյունից:

Փաստորեն, միջազգային պահուստների կառավարման ընթացքում կենտրոնական բանկերն առաջնորդվում են 3 հիմնական՝ անվտանգության, իրացվելիության և եկամտաբերության սկզբունքներով:

Անվտանգության ապահովումը, թերևս, շարունակում է մնալ կենտրոնական բանկի պահուստների կառավարման առաջնային խնդիրը՝ հանգեց-

<sup>6</sup> Տես Ֆինանսы / Под ред. Ковалевая В., М., Велби, Проспект, 2007, էջ 485:

<sup>7</sup> Տես <http://armtimes.com/hy/read/62301>

ներով վարկային սահմանափակումների ավելացմանը և բանկերի գործունեության ընթացքում ծագող ռիսկերի մանրակրկիտ գնահատմանը: Վերջին տարիներին գրեթե բոլոր կենտրոնական բանկերը էապես խստացրել են պահուստների կառավարման ոլորտում վարկային ռիսկի սահմանափակումները:

Իրացվելիության կառավարումը ևս շարունակում է մնալ կենտրոնական բանկերի հիմնական խնդիրներից մեկը: Այս պարագայում իրացվելիությունն ունի չափանակ այլ միավոր, որը բխում է ֆինանսական շուկաները ցնցումներից ապահովագրելու և ֆինանսական տատանումներ չառաջացնելու անհրաժեշտությունից, քանի որ նման իրավիճակների ստեղծումը կարող է հակասել կենտրոնական բանկի մյուս խնդիրներին:

Առավելագույն եկամտաբերության ապահովման խնդրի դերը միջազգային պահուստների կառավարման ոլորտում կայուն կերպով աձում է: Այս միտումը հիմնականում պայմանավորված է մի քանի դրդապատճառներով, մասնավորապես.

- շատ երկրներում կառավարությունները ճնշում են գործադրում կենտրոնական բանկի վրա՝ պահանջելով հնարավորինս մեծացնել պահուստներից ստացվող եկամուտների ծավալը, ինչը կնպաստի կառավարության ֆինանսավորման համալրմանը և արտաքին պարտքի սպասարկմանը,
- բարձր եկամտաբերությունը համարվում է պահուստները կառավարող անձնակազմի արհեստավարժության և կենտրոնական բանկի հեղինակության վկայություն<sup>8</sup>:

Կենտրոնական բանկերը սահմանում են պահուստների արժութային բաղադրությունը, ռազմավարական ուղենչային պայուսակը, որը ներառում է ռիսկերի ընդունելի մակարդակը և ներդրումային ուղեցույցը: Միջազգային պահուստների օպտիմալ մակարդակը կախված է մի շարք գործուներից:

- տնտեսության իրական հատվածի տատանողականությունից,
- արժութային փոխարժեքի ռեժիմից,
- արտաքին ցնցումների և ճգնաժամների նկատմամբ զգայունակությունից և այլն:

Ժամանակակից պայմաններում գործում է միջազգային պահուստների համապատասխանության մի քանի սկզբունք, որոնցից ամենատարածվածներն են.

1. Միջազգային պահուստների և արտաքին առևտորի ցուցանիշների հարաբերակցությունը: Պահուստների բավարար մակարդակ է համարվում երեք ամսվա ներմուծման ծածկույթը: Այս ցուցանիշը լայնորեն օգտագործվում է զարգացող երկրների տնտեսությունների պարագայում, որոնք մեծ կախվածության մեջ են գտնվում ապրանքների և ծառայությունների ներմուծումից:
2. Գվիդուտիի կանոնը: Միջազգային պահուստները, որոնք ներառում են բոլոր հնարավոր վարկային գծերը, պետք է ապահովեն առաջիկա մեկ տարվա արտաքին պարտքի մայր գումարի և տոկոսագումարի բոլոր հնարավոր վճարները: Այլ կերպ ասած՝ Գվիդուտիի կանոնը մեկնաբանվում է որպես մեկ տարի առանց նոր արտաքին


<sup>8</sup> Ст. Гризнова А., Маркина Е., Седова М., Финансы. М., Финансы и статистика, 2012, кн 408:

փոխառությունների ապրելու ունակության ցուցանիշ<sup>9</sup>: Այս կանոնը բավականին արդյունավետ է և թույլ է տալիս կանխատեսել տվյալ երկրի ֆինանսական ճգնաժամին հակածության չափը:

- 3.** Ոեղիի չափանիշը: Միջազգային պահուստները պետք է ապահովեն երեք ամսվա ներմուծման և մեկ տարվա արտաքին պետական ու մասնավոր պարտքի մայր գումարի և տոկոսագումարների վճարումների ծածկույթը<sup>10</sup>:

Միջազգային պահուստների արժութային բաղադրությունը որոշելիս նախևառաջ անհրաժեշտ է համախառն արտաքին պահուստները տարածաշտել երկու մասի՝

1. արտաքին պարտավորությունները հեջափորելու համար նախատեսված ակտիվներ,
2. ազատ կամ զուտ ակտիվներ:



**Գօնկար 1. Համախառն արտաքին պահուստների դասակարգումը**

Արտաքին պահուստները հեջափորելու համար նախատեսված ակտիվները ենթադրում են համախառն արտաքին ակտիվների կազմում արտաքին պահուստների ծավալին հավասար կամ գերազանցող ակտիվների առկայություն՝ արտահայտված պարտավորությունների արժույթներով (գօնկար 1):

Բացի այդ, միջազգային պահուստների արժութային բաղադրությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի նաև տվյալ երկրի համար պահուստների առկայության շարժաթիթների քննարկումը, մասնավորապես՝ արժութային շուկաներում ինտերվենցիաների հաճախականությունը և ինտերվենցիոն արժույթը: Ազատ կամ զուտ պահուստների արժութային բաղադրությունը սահմանելիս հարկ է հատուկ ուշադրություն դարձնել ներդրումային տեսանկյունից նպաստավոր շուկաների, այսինքն՝ բարձր եկամտաբերություն ապահովող արժույթների ընտրությանը՝ հաշվի առնելով ներդրումների անվտանգությունը, իրացվելիությունը և եկամտաբերությունը:

<sup>9</sup>Տես **Пертая М.**, Критерии оптимальности размеров и динамика золотовалютных резервов России. Журнал Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. Вып. № 31, том 10, 2007:

<sup>10</sup>Տես **Алексин Э.**, Государственные и муниципальные финансы. Учебник. Пенза, 2010, էջ 264:

Միջազգային պահուստների կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով կենտրոնական բանկերի, այդ թվում նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ներկայում տվյալների տարածման հատուկ չափորոշչի (SSZQ) շրջանակներում մշակվել է միջազգային պահուստների և արտաքինական իրացվելիության աղյուսակ, որը նպատակ ունի գնահատելու երկրների արտաքինական իրացվելիությունը: Եթե միջազգային պահուստային ակտիվները պահանջներ են ոչ ռեզիլենտների նկատմամբ, ապա միջազգային պահուստների և արտաքինական իրացվելիության աղյուսակն ընդգրկում է ռեզիլենտների և ոչ ռեզիլենտների նկատմամբ արտաքինական պահանջներն ու պարտավորությունները: Դա ներառում է այդ ակտիվների և պարտավորությունների՝ մեկ տարվա ընթացքում նախատեսվող հոսքերը: Այսուսակը կազմվում է ինչպես ԿԲ հաշվեկշռային, այնպես էլ արտահաշվեկշռային տվյալների և կառավարության արտաքին հոսքերի հիման վրա<sup>11</sup>:

Համախառն միջազգային պահուստների և այլ արտաքինական պահուստների շուկայական արժեքը, ըստ միջազգային պահուստների և արտաքինական իրացվելիության աղյուսակի, 2015 թ. մայիսի դրությամբ ունի հետևյալ պատկերը.

#### Աղյուսակ 1

##### **Համախառն միջազգային պահուստների և այլ արտաքինական պահուստների շուկայական արժեքը 2015 թ. մայիսի դրությամբ (մլն դրամ)\***

I. Համախառն միջազգային պահուստներ	1,598.7
1. Արտաքին ակտիվներ (ազատ փոխարկելի արժույթով)	1,595.4
1.1. Արժեթղթեր	1,102.6
1.2. Ընդամենը կանխիկ արտաքույթ և ավանդներ	492.8
2. Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	-
3. ՀՓԻ (SDR) ԱՄՀ-ում	3.6
4. Ոսկի՝ ներառյալ ոսկով ավանդներն ու ոսկով սկոպները	-
5. Այլ պահուստային ակտիվներ	0.3
II. Այլ արտաքինական պահուստներ	21.0

\* Աղյուսակ՝ ՀՀ ԿԲ պահուստական կայքէ՝

[https://www.cba.am/AM/News/Pages/news\\_30-12-14\\_2.aspx](https://www.cba.am/AM/News/Pages/news_30-12-14_2.aspx)

Պահուստների կառավարման ընթացքում կենտրոնական բանկերը, որպես կանոն, նախապատվությունը տալիս են բարձրիրացվելի և հուսալի ակտիվներին: Միջազգային ոլորտում լայնորեն կիրառվող գործիքներից են պետական արժեթղթերը, Վերազգային կազմակերպությունների, առաջնակարգ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների, երաշխավորված գործակալությունների կողմից թողարկվող արժեթղթերը, եվրոպարտասունները, ժամկետային դեպոզիտները, թանկարժեք մետաղներով գործարնությունները, սկոպ գործարքները և այլն:

Վերջին տարիների ընթացքում որոշ կենտրոնական բանկեր միջազգային պահուստների կառավարման ընթացքում սկսել են կիրառել ածանցյալ գործիքներ, ինչպես օրինակ՝ օացիոն, ֆյուչերս և այլն:

<sup>11</sup>Տես [https://www.cba.am/AM/News/Pages/news\\_30-12-14\\_2.aspx](https://www.cba.am/AM/News/Pages/news_30-12-14_2.aspx)

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա միջազգային պահուստների համալրման հիմնական աղբյուրներ են ակնկալվող ներհոսքերը և ԿԲ-ում առևտրային բանկերի արտարժույթով հաշիվների մնացորդների մակարդակի կայունացումը:

Համաձայն պաշտոնական կանխատեսումների՝ 2015 թ. ակնկալվող ներհոսքերը կկազմեն շուրջ 510 մլն ԱՄՆ դոլար, որից շուրջ 300 մլն ԱՄՆ դոլարը կծառավորվի եվրոպարտատոմսի տեղաբաշխման արդյունքում, իսկ մնացածը՝ շուրջ 210 մլն ԱՄՆ դոլարը՝ այլ արտաքին փոխառություններից: Այս ներհոսքը կզուգակցվի ընթացիկ տարում, նախորդ երկու տարիների համեմատությամբ, արտաքին պարտքի սպասարկման բեռի զգալի (շուրջ 30%-ով) կրճատմամբ<sup>12</sup>:

ՀՀ առևտրային բանկերի ներգրաված արտարժութային ավանդների դիմաց ՀՀ ԿԲ-ում արտարժույթով պարտադիր պահուստավորման պահանջի աստիճանական վերացումը հանգեցրել է ՀՀ ԿԲ-ում բանկերի արտարժույթով հաշիվների մնացորդների տատանողականության աճի՝ պայմանավորված այդ միջոցների կառուցվածքում պարտադիր/կանխատեսելի բառադրիչի բացակայությամբ: Ըստ այդմ՝ այս միջոցները շարունակաբար նվազել են, սակայն 2013 թվականի վերջին կտրուկ աճել (շուրջ 375 մլն ԱՄՆ դոլարով՝ կապված առևտրային բանկերի և վերջիններիս հաճախորդների գործունեության հետ, ապա 2014 թվականի սկզբին կրկին նվազել (շուրջ 305 մլն ԱՄՆ դոլարով՝ կրելով միանգամյա բնույթ):

Ակնկալվում է, որ ՀՀ ԿԲ իրականացրած վերջին միջոցառումները, որոնք ուղղված են առևտրային բանկերի կապիտալի համալրմանն ու արտարժութային միջոցների ներհոսքի խրախուսմանը, կիանգեցնեն ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի արտարժույթով հաշիվների աճի:

Պաշտոնական կանխատեսումների համաձայն՝ 2015 թ. առաջին կիսամյակի վերջին ՀՀ միջազգային պահուստները կկազմեն շուրջ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար: Ըստ այդմ՝ միջազգային պահուստները կշարունակեն համապատասխանել միջազգային ոլորտում արտարժութային պահուստներին ներկայացվող պահանջներին՝ ապահովելով ներմուծման շուրջ շորս ամսվա ծածկույթ և կարճաժամկետ պարտավորությունների սպասարկման (մինչև 1 տարի) ավելի քան հինգ տարվա ծածկույթ, հանդես կգան որպես ՀՀ ԿԲ արտաքին ակտիվներ, այսինքն՝ կիմնեն ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջներ, կզունվեն ԿԲ հսկողության ներքո և անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի դրանք օգտագործել՝ միաժամանակ լինելով նաև բարձրիրացվելի ֆինանսական ակտիվներ:

<sup>12</sup> Տես <http://armtimes.com/hy/read/62301>

## КОРЮН АТОЯН

Ректор АГЭУ, доктор экономических наук,  
профессор

**Институциональные основы международных валютных резервов и особенности их управления на современном этапе.**— Международные резервы являются важнейшим инструментом осуществления валютной политики. Их наличие необходимо также для осуществления выплат в сфере обслуживания внешнего долга. Они одновременно отображаются как средство удовлетворения спроса по отношению к валютным средствам необходимым для импорта. Основными источниками пополнения международных резервов в РА являются гранты, внешние и внутренние займы Правительства РА и Центрального банка РА в иностранной валюте, рост баланса иностранных счетов в ЦБ РА, скупка валюты, приток валютных средств в результате приватизации имущества со стороны правительства РА и прибыль, полученная от инвестиционных резервов.

**Ключевые слова:** международные резервы, внешний долг, национальная валюта, платежный баланс, ликвидность.

## KORYUN ATOYAN

Rector ASUE, Doctor of Economics, Professor

*Institutional Basics of International Currency Reserves and Features of Their Management in the Present Stage.*—

International reserves are a major tool for the realization of currency policy. Their presence is also necessary for the realization of payments in the service sphere of the external debt which are simultaneously displayed as means of meeting the demand regarding currency necessary for import. The basic sources of updating the international reserves in the RA are grants, external and internal loans of the RA Government and the RA Central Bank in a foreign currency, growth of balance of foreign accounts in the RA Central Bank, currency buying up, inflow of currency means as a result of privatization of property from the RA Government and the profit received from investment reserves.

**Key words:** *international reserves, external debt, national currency, balance of payments, liquidity.*

# ՏՆՏԵՍԱԳԻԾ ՈՒԹՅԱՆ ԵՍՈՒԹՅՈՒՆ



ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ  
ՀՀ նախագահի աշխատակազմի  
ղեկավարի առաջին տեղակալ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՇԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՆԱ ԵԿՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Մաքսային միություններին անդամակցող երկրների փորձը ցույց է տալիս, որ սակագնային և ոչ սակագնային համակարգերի ներդաշնակեցման ընթացքում առաջ են գալիս տնտեսական ազդեցություններ, որոնք լինում են ստատիկ (անմիջապես արտահայտվող) և դիմամիկ (դրսարվում են ժամանակի ընթացքում): Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում ունենում է վնասներ և օգուտներ, որոնց գուտ արժեքն ըստ օգուտի գնահատված է լրացուցիչ ՀՆԱ 2.35 տոկոսային կեսի սահմաններում: ԵԱՏՄ բարձր մաքսատուրքերի պատճառով բարեկեցության կորուստը գնահատված է ՀՆԱ 0.14%: Ընդ որում, ժամանակի ընթացքում ԵԱՏՄ ընդհանուր մաքսատուրքերի նվազման արդյունքում բարձր մաքսատուրքերից առաջ եկող հնարավոր տնտեսական վնասները Հայաստանի համար պակասում են, իսկ բարեկեցության կորուստը կազմում է ՀՆԱ 0.09%-ը:

**Հիմնաբառեր.** մաքսատուրք, բարեկեցության օգուտ և վնաս, առևտորի ստեղծում, առևտորի վերակողմնորոշում, գնած, սակագնային և ոչ սակագնային համակարգեր

2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահը պաշտոնապես հայտարարեց Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցության մտադրության մասին, որին հաջորդեց 2014 թ. հոկտեմբերի 10-ին հա-

մապատասխան պայմանագրի ստորագրումը: 2015 թ. հունվարի 2-ից Հայաստանը դարձավ ԵԱՏՄ անդամ 4-րդ երկրը:


Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Երկրները տարածաշրջանային միասնացման 3-րդ մակարդակից՝ Մաքսային միությանն անդամակցումից հետո պարտադրված են լինում ներդաշնակեցնել տարիֆային համակարգը և ոչ տարիֆային կարգավորումները Մաքսային միության գործող համակարգերի հետ: Արդյունքում առաջանում են տնտեսական ազդեցություններ, որոնք լինում են ստատիկ և դինամիկ:

Սույն հոդվածում ներկայացվում են Հայաստանի տնտեսության վրա Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու առևտի և բարեկեցության ազդեցության ստատիկ գնահատականները:

Տնտեսական գնահատականները հիմնվում են Հայաստանի և ԵԱՏՄ մաքսատուրքերի համեմատականների վրա, ընդ որում, Վերջիններիս դեպքում հաշվի են առնվել ինչպես արժեքային (ադվալորային), այնպես էլ յուրահատուկ և բաղադրյալ մաքսատուրքերը<sup>1</sup>:

Կատարվել է նաև համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ մաքսատուրքերն աստիճանաբար նվազելու են մինչև 2020 թ.՝ կապված ՌԴ՝ Առևտի համաշխարհային կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունների հետ<sup>2</sup> (ՌԴ մաքսատուրքի փոփոխությունները մինչև 2020 թ. ՌԴ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների համաձայն, կարտացոլվեն ԵԱՏՄ մաքսատուրքերում)<sup>3</sup>:

Ստորև ներկայացվում է ԵԱՏՄ մաքսատուրքերի կառուցվածքը գործող մաքսային օրենսգրքի շրջանակներում.



<sup>1</sup> Հաշվարկներում օգտագործված թվային տվյալների համարդեկիությունը և աճողջականությունը ապահովելու համար օգտագործվել է Համաշխարհային բանկի Երկրների արտաքին առևտի տվյալների բազան: Թե՛ առևտի Եվկետուային տվյալները, թե՛ կիրառվող մաքսատուրքերի ցուցանիշներն ըստ 2013 թ. են, քանի որ տվյալների համադրելիությունն ապահովելու տեսանկյունից Համաշխարհային բանկի միասնական տվյալների բազայում նշյալ տարկա ցուցանիշներն անբողջական են:

<sup>2</sup> Տես Договор о функционировании Таможенного союза в рамках многосторонней торговой системы.

<sup>3</sup> Տես **Օլեքսանդր Շեպոտյոլ, Դեյվիդ Գ. Թար,** «ԱՀԿ անդամակցության և Մաքսային միության ազդեցությունը Ռուսաստանի Դաշնության մաքսատուրքի թույլատրելի առավելագույն և կիրառված դրույքափերի վրա», Համաշխարհային բանկի բաղադրականության հետազոտության աշխատանքային փաստաթուղթ 6161, օգոստոս, 2012 (**Oleksandr Shepotylo and David G. Tarr, Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation World Bank Policy Research Working Paper 6161, August, 2012**):

ԵԱՏՄ մաքսատուրթերի գործող սանդղակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս, ի տարբերություն Հայաստանի՝ մինչ անդամակցությունը գործող սանդղակի, ավելի ցրված են և բազմաթերթ, որտեղ արժեքային (ադվալորային) մաքսատուրթերը կազմում են ընդհանուրի 84%-ը, իսկ մնացածը համախմբված և հատուկ (սպեցիֆիկ) մաքսատուրթերն են: Հայաստանում սակագնային համակարգն ավելի պարզ էր. Երկանդղակային էր՝ 0 կամ 10, իսկ մաքսատուրթերը, ըստ տեսակի, հիմնականում արժեքային էին (հատուկ մաքսատուրթեր են գործել, օրինակ, սպիրտային խմիչքների մասով՝ ԱՏԳ 2203-2208 խմբերի և որոնց մեջ մտնող որոշ ենթախմբների համար):<sup>4</sup>

2013 թ. ՀՀ ներմուծման ծավալներով կշռված ՀՀ միջին մաքսատուրթը, ըստ հաշվարկների, կազմել է 3.1%, իսկ ԵԱՏՄ նույն ցուցանիշը՝ 8.14%: Այլ հավասար պայմաններում, առևտությունները և փորձառական վերլուծությունները փաստում են, որ տարիքների բարձրացումը բարեկեցության կրոստի և «մեռյալ ծախսերի» (deadweight losses) պատճառ է դաշնում: Իհարկե, այս պնդումը միշտ դիտարկվում է մակրոմակարդակում և ոչ՝ ժամանակի ընթացքում (դիմամիկայում), ուստի ներկայացնում է ստատիկ գնահատական: Միջնաժամկետում (դիմամիկայում) սակագնային համակարգի ներդաշնակեցումը հարաբերական գների փոփոխությունների միջոցով կարող է հանգեցնել ստատիկ գնահատականից տարբերվող ազդեցությունների, բայց նշյալ վերլուծությունը սույն հոդվածի շրջանակներից դուրս է. այստեղ դիտարկվում են միայն ստատիկ գնահատականները:

Այյուսակ 1-ում, ըստ ներմուծման ծավալների, Հայաստանի մաքսատուրթերի բաշխվածությունը համեմատվում է ԵԱՏՄ մաքսատուրթերի բաշխվածության հետ: Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ, օրինակ, մեր ներմուծման 27.4%-ի դեպքում նույն տարիքային՝ 0<3% միջակայքն էր գործում և Հայաստանում և ԵԱՏՄ-ում, իսկ ներմուծման 8.4%-ը մեզ մոտ հարկման 0<3% միջակայքում էր, ԵԱՏՄ տարիքային համակարգի կիրառման դեպքում՝ 10<15% միջակայքում<sup>5</sup>: Ընդհանուր առմամբ, այյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ մեր ներմուծման 29.1%-ը և ԵԱՏՄ-ում, և Հայաստանում հարկվում են նույն կարգի մաքսատուրթերով, ներմուծման 6.7%-ի համար կիրառվող ՀՀ մաքսատուրթերն ավելի բարձր են, քան ԵԱՏՄ-ում, և մնացածի մասով՝ ԵԱՏՄ մաքսատուրթերն են ավելի բարձր: Ընդ որում, ներմուծման 32.8%-ը ԵԱՏՄ-ում հարկվում են 10%-ից բարձր մաքսատուրթերով:

<sup>4</sup> Քանի որ վերլուծությունում օգտագործված են 2013 թ. տվյալները, ապա ծխախոտի մասով ևս մինչ 2014 թ. գործել է հատուկ մաքսատուրթ՝ համաձայն հաստատագրված վճարների մասին ՀՀ նախկին օրենքի կարգավորումների, որն ուժը կորցրած է ձանաշվել 2014-ից:

<sup>5</sup> Ինչպես արդեն նշվել է, ԵԱՏՄ սակագնային համակարգը բավականին տարբերակված է և ըստ դրույքների, և ըստ տեսակների, բայց որպեսզի վերլուծության առումնով և ՀՀ-ում նախկինում գործող, և ԵԱՏՄ տարիքային համակարգերի համեմատության համար համարդելիությունն ապահովվի, տարիքները բաժանվել են միջակայքերի: Օրինակ՝ ՀՀ-ի համար գորեք բոլոր ապահութեանները կուտակվել են 0<3 և 8<10 միջակայքերում, որովհետև մեր երկրում գործող սակագները եղել են կամ 0, կամ 10, իսկ հատուկ սակագները բերվել են արժեքային՝ ուղղակի վճարված մաքսատուրթը հարաբերելով տվյալ վեցանիշ դասակարգմանը ապրանքատեսակի ներմուծման արժեքին, ուստի որոշ դեպքերում կարող ենք ներմուծման կշռի ցուցանիշ տեսնել, օրինակ՝ 5<8 միջակայքում: Դա նշանակում է՝ վերոնկարագրյալ մեթոդով հատուկ տարիքը արժեքայինին բերելիս այն հայտնվել է 5<8 միջակայքում:

### Աղյուսակ 1

**Հայաստանի՝ մինչ անդամակցության և ԵԱՏՄ-ում ներմուծման մաքսատուրքերի  
խմբերը և դրանց բաժին ընկող ներմուծման ծավալները 2013 թ.<sup>6</sup>**

#### ԵԱՏՄ

Հայաստան	0<3%	3<5%	5<8%	8<10%	10<15%	15<20%	20<25%	25<30%	>30%	Ընդամենը
0<3%	27.4	18.7	8.0	4.7	8.4	3.1	0.0	0.0	0.0	70.2
3<5%	0.0	0.1	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2
5<8%	0.3	0.2	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	1.0
8<10%	2.7	2.1	1.4	1.3	10.6	5.9	0.3	1.7	2.6	28.6
Ընդամենը	30.4	21.1	9.8	6.0	19.0	9.0	0.3	1.7	2.8	100.0

**Ծանոթություն.** Կիրառված մաքսատուրքերը ԱՏԳ վեցանիշ մակարդակով են հաշվարկված, կշիռներն ապրանքների ներմուծման մասնաբաժններն են ընդհանուրի մեջ՝ որպես հիմք ընդումելով 2013 թ. ներմուծման տվյալները:

Այժմ, վերը նկարագրված սակագնային համակարգերի համեմատության ներքո, կատարվել է ուսումնասիրություն. Ենթադրվել է, որ Հայաստանն ամբողջովին կիրառում է վերոնկարագրյալ ԵԱՏՄ տարիքային համակարգը և այդ պարագայում հաշվարկվել է, թե որքան է լինելու առաջնային ազդեցությունը մի շարք մակրոտնտեսական փոփոխականների վրա: Նախ դիտարկենք գնաճի վրա առաջնային ազդեցությունը: Արդյունքները ցույց են տալիս, որ ԵԱՏՄ գործող տարիքային համակարգը եթե Հայաստանի տնտեսությունում անմիջապես կիրառվեր (առանց տարիքային խմբերի բացառությունների, որոնց շուրջ բանակցվեց), ապա առաջնային ազդեցությունը գնաճի վրա կլիներ 1.2–1.4% տոկոսային կետ<sup>7</sup>: Թերևս այս ցուցանիշը ներ տնտեսությունը կարող էր կլանել, սակայն, այնուամենայնիվ, այս իրավիճակը մեղմելու և ԵԱՏՄ բարձր տարիքների բացասական ազդեցությունը << տնտեսության վրա նվազեցնելու նկատառումներից ելնելով էր բանակցային գործընթացների շրջանակներում քննարկվել և առանձնացվել է շուրջ 780 տեսակի ապրանքների սակագների անփոփոխ մակարդակ առաջիկա 3–7 տարիների համար (միջին հաշվով՝ 5 տարի):<sup>8</sup> Մասնավորապես՝ բանակցությունների առարկա դարձած 752 ապրանքատեսակների մասով Հայաստանի սակագներն ավելի ցածր էին, քան ԵԱՏՄ-ինը (ևս 10 ապրանքատեսակների մասով կատարվել է հատուկ կարգավորում, ըստ որի պահպանվելու են << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրքերը), և 18 ապրանքատեսակների մասով Հայաստանի մաքսատուրքերն ավելի բարձր էին, քան ԵԱՏՄ-ինը: Վերջինս հիմնականում ներառում էր գյուղատնտեսական ապրանքները, որոնց մասով անհրաժեշտություն կար դեռևս կիրառելու պաշտպանական 10% մաքսատուրքի դրույքաչափը՝ ԵԱՏՄ 0%-ի փոխարեն, հակառակ դեպ-


<sup>6</sup> Հաշվարկները կատարված են WITS-ի (World International Trade Solutions) տվյալների և Համաշխարհային բանկի SMART գործիքի հիման վրա:

<sup>7</sup> Գնահատականը ստացվել է հետևյալ կերպ. հաշվի են առնվել սպառողական ապրանքների ներմուծման սակագների աճի ցուցանիշները՝ դրանք կիրառելով ՍԳԻ՝ զամբյուղի մեջ մտնող ներմուծված ապրանքատեսակների կշռների վրա:

<sup>8</sup> Հայաստան՝ ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 4-րդ հավելվածով տրված է այն ապրանքների ցանկը, որոնց գծով պահպանվելու են <<ում գործող սակագները, ինչպես նաև նշված է այն ժամանակահատվածը, որի ավարտից հետո կիրառվեն ԵԱՏՄ սակագները:

քում Հայաստանի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կարող էր 3-րդ երկրներից ներմուծման էական ճնշումների տակ հայտնվել և չփինանալ մրցակցությանը: Պետք է նաև նշել, որ ընտրված 752 ապրանքատեսակները թեև սակագնային 10 հազար տողերի (ըստ ԱՏԳ 10-անից դասակարգման) չնչին մասն են կազմել, սակայն, ըստ << ներմուծվող ապրանքների (առանց բնական գազի ներմուծման) ծավալի, հասնում են 46%-ի: Ընդ որում, նշյալ 752 ապրանքատեսակների գծով սակագների տարրերությունն ամենամեծն է (օրինակ՝ սարեցված խոզի մսի ներմուծման դեպքում <<-ում կիրառվում է 10%, ԵԱՏՄ-ում՝ 65%): Եթե դիտարկենք միայն բացառումների գծով հաշվարկված միջին կշռված մաքսատուրքերը, ապա << պարագայում դա կազմում է 2.7%, իսկ ԵԱՏՄ-ի դեպքում՝ 13.2%: Մնացած ապրանքատեսակների գծով << միջին կշռված մաքսատուրքը 3.4% է, ԵԱՏՄ-ինը՝ 4.7%: Այս ցուցանիշներն արդեն վկայում են, որ բանակցությունների առարկա սակագնային բացառումները հնարավորություն են տվել մոտեցնելու << և ԵԱՏՄ սակագները, իսկ այս պարագայում արդեն գնաճի ազդեցությունը գնահատվում է 0.2–0.4 տոկոսային կետ, որը մեր տնտեսությունն ամբողջությամբ ի զորու է կլանելու:

Այստեղ կարևոր է նաև ուշադրություն դարձնել վերոնշյալ ապրանքատեսակների գծով բացառումների (արտոնությունների) կիրառման ժամկետներին, որը, միջին հաշվով, 5 տարի է: Խնդիրն այն է, որ ՈԴ-ն, լինելով Արևոտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ, ունի ստանձնած պարտավորություններ՝ մինչև 2020 թ. նվազեցնել իր տարիֆները, իսկ քանի որ ԵԱՏՄ տարիփային համակարգի՝ ըստ ապրանքային տողերի 82%-ն ընդունված են ՈԴ սակագները, հետևաբար՝ առաջիկայում ԵԱՏՄ սակագնային համակարգը ևս պետք է համամասնորեն փոփոխության ենթարկվի: Իսկ դա նշանակում է, որ երբ Հայաստանի համար բացառումների ժամանակահատվածն ավարտվի, սակագների էական թթիչք չի արձանագրվի: Ստորև բերված է նկարագրված իրավիճակը.



**Գծանկար 1.** Ակնկալվող սակագնային շարժընթացք ԵԱՏՄ-ում (համաձայն ՈԴ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների) և Հայաստանում (ԵԱՏՄ-ին միանալուց հետո)

Վերլուծության արդյունքները գործնականին ավելի մոտեցնելու նկատառումներից ելնելով՝ խնդիր դրվեց նաև հաշվի առնել այն հանգամանքը, թե ինչ ազդեցություն կը ունենալ տնտեսությունը, երբ բացառումներն ամբողջությամբ վերանան, և, միևնույն ժամանակ ՈՂ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների ներքո իշեցվեն ԵԱՏՄ սակագները։ Այսինքն՝ զնահատվել են առևտուրի և բարեկեցության ազդեցությունները՝ այս անգամ արդեն 2020 թ. սակագնային համակարգի արդյունքներով<sup>9</sup>։ Այդուսակ 2-ում բերված ցուցանիշներն արդեն վերահաշվարկված են ԵԱՏՄ նոր տարիքային ցուցանիշներով։

## Այուսակ 2

### Հայաստանի՝ մինչ անդամակցության և ԵԱՏՄ-ում ներմուծման մաքսատուրքերի խմբերը և դրանց բաժին ընկած ներմուծման ծավալները 2020 թ. մաքսատուրքերով

#### ԵԱՏՄ

Հայաստան	0<3%	3<5%	5<8%	8<10%	10<15%	15<20%	20<25%	25<30%	>30%	Ընդամենը
0<3%	29.3	21.7	11.5	3.1	4.1	0.5	0.0	0.0	0.0	70.2
3<5%	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2
5<8%	0.5	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.0	1.0
8<10%	2.9	3.0	5.3	6.0	6.8	1.2	0.9	0.9	1.8	28.6
Ընդամենը	32.7	25.2	16.8	9.1	10.9	1.7	0.9	1.1	1.8	100.0

**Ծանոթություն.** Վերառված մաքսատուրքերը ԱՏԳ վեցանիշ մակարդակով են հաշվարկված, կշռներն ապրանքների ներմուծման մասնաբաժիններն են ընդհանուրի մեջ՝ որպես հիմք ընդունելով 2013 թ. ներմուծման տվյալները։

Այդուսակում ներկայացված տվյալներից ակնհայտ երևում է գծանկար 1-ում պատկերված իրավիճակը թվերով, այսինքն՝ ԵԱՏՄ մաքսատուրքերի նվազման միտունը, որի ներքո, օրինակ՝ 2020-ին արդեն 10%-ից բարձր մաքսատուրքերով կհարկվի մեր ներմուծման ոչ թե 32.8%-ը, այլ 16.4%-ը։ ԵԱՏՄ և << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրքերը նույնն են ներմուծման 35.5% ապրանքների մասով, 12.0%-ի մասով << մաքսատուրքերն ավելի բարձր են, իսկ մնացած դեպքերում ԵԱՏՄ մաքսատուրքերն են ավելի բարձր։ Այստեղ կարևոր է նշել մեկ հանգամանք ևս. Վերոնշյալ նվազումը հիմնականում նկատվելու է այն ապրանքախմբերի մասով, որոնց գծով ներկայումս կիրառվող մաքսատուրքերն էականորեն բարձր են << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրքերից։

Մաքսատուրքերի երկու համակարգերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո զնահատվել է նաև Վայների էֆեկտը << տնտեսության համար, այն է՝ առևտուրի ստեղծումը և առևտուրի վերակողմնորոշումը<sup>10</sup>։ Ընդ որում,

<sup>9</sup> ԵԱՏՄ սակագները ճշգրտվել են հետևյալ մեթոդով. հիմք են ընդունվել ԵԱՏՄ սակագները՝ դուրս բերելով այն տողերը, որոնք համընկնում են ՈՂ-ինի հետ։ Դրանք մոտ 8140 տող են կազմել՝ ըստ տասանիշ դասակարգման։ Այնուհետև այդ տողերը ճշգրտվել են ԱՀԿ-ի նկատմամբ ՈՂ՝ ըստ սակագների ստանձնած պարտավորությունների։ Այս հաշվարկները կատարելուց հետո վերահաշվարկվել են նաև ԵԱՏՄ միջին կշռային սակագնը, որը կազմել է 5.4% սկզբնական 8.14%-ի փոխարեն։

<sup>10</sup> Տերմինը շրջանառության մեջ է մտել 1950 թ. ԵՄ Մաքսային միության ստեղծման շրջանակներում տնտեսագետ Յակոբ Վայների առևտուրի ստեղծման և առևտուրի վերակողմնորոշման թեգերի առաջադրության հետո։

հաշվարկները կատարվել են և 2013 թ. ԵԱՏՄ սակագնային համակարգով (ուժի մեջ է այն ենթադրությունը, թե ինչպիսին կլիներ ազդեցությունը մեր տնտեսության վրա, եթե չիմեծ բանակցություններ բացառումների շուրջ), և 2020 թ. համար Վերահաշվարկված ԵԱՏՄ սակագնային համակարգով:

Արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի՝ ԵԱՏՄ մաքսատուրքի աճբողջական ընդունումը ենթադրում էր ներմուծման որոշակի կրծատում ոչ ԵԱՏՄ աղբյուրներից, որոշ ապրանքատեսակների ներմուծման աճ ԵԱՏՄ աղբյուրներից (առևտրի Վերակողմնորոշում) և բարեկեցության ոչ մեծ վնասներ՝ պայմանավորված ներմուծման համար սպառողների վճարած ավելի բարձր գներով<sup>11</sup>:

Ըստ ստացված գնահատականների՝ այն ապրանքների ներմուծման ծավալների կրծատումը, որոնց գծով մաքսատուրքը բարձրանում է, սկզբնական շրջանում կկազմի 215.4 միլիոն դոլար (*ՀՆԱ 2.1 տոկոսը*)՝ նվազելով և հասնելով մինչև 117.8 միլիոն դոլարի (*ՀՆԱ 1.1 տոկոսը*), երբ հաշվի են արևոտն 2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքերի նվազեցումները: Միևնույն ժամանակ, ապրանքների ներմուծման աճը, որոնց գծով մաքսատուրքերը ԵԱՏՄ շրջանակում նվազելու են, սկզբնական շրջանում գնահատվում են 15.3 միլիոն դոլար (*ՀՆԱ 0.15 տոկոսը*)՝ մինչև 2020 թ. հասնելով 21.2 միլիոն դոլարի (*ՀՆԱ 0.2 տոկոսը*):

3-րդ այդուսակում բերված են ներմուծման 15 խմբերը, որոնց առևտրի ծավալներում, ըստ գնահատականների, ԵԱՏՄ 2013 թ. մաքսատուրքի պայմաններում կարծանագրվեր ամենամեծ անկումը: Ամկումը ներկայացված է ինչպես ներմուծման ծավալային արժեքով, այնպես էլ *ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ*: Ապրանքախմբերը, որոնք մեծ խմբաքանակներով են ներմուծվում, և որոնց մաքսատուրքը մեծ փոփոխությունների կարող էր ենթարկվել, վերաբերում են թօչնամսին, խոզի մսին, ավտոմեքենաներին և ավտոբուսներին: Առևտրի տվյալներում նշված հնարավոր տեղաշրջերը հաստատվել են նաև Պազախստանի փորձով՝ սկսած 2010 թ. Վերջին ԵԱՏՄ անդամակցությունից: Պազախստանի կողմից ոչ ԵԱՏՄ-ից ներմուծվող մարդատար ավտոմեքենաների քանակը (ԱՏԳ ՆՀ 870323) կտրուկ նվազեց՝ 2007 թ. 1.30 միլիարդ դոլարից 2012 թ. հասնելով 390 միլիոն դոլարի: ԵԱՏՄ-ից կատարվող ներմուծումներն աճեցին՝ 2007 թ. 130 միլիոն դոլարից 2013 թ. հասնելով 360 միլիոն դոլարի, որն ամենակին էլ բավարար չէր ԵՄ-ից և Ճապոնիայից մատակարարման անկման դիմաց փոխհատուցելու համար: Նմանատիպ իրավիճակ կարող էր ստեղծվել նաև <<-ում, եթե բանակցություններ տեղի չունենային 3-րդ և 4-րդ այդուսակներում բերված ապրանքախմբերի բացառումների մասով: Այլ կերպ ասած՝ հենց այս իրավիճակի գնահատականներն էլ հիմք են դարձել բանակցելու վերոնշյալ ապրանքատեսակների մասով բացառումների շուրջ, որոնք ամրագրվել են << ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 3-րդ (հատուկ կարգավորումների մասով) և 4-րդ հավելվածներում<sup>12</sup>:

<sup>11</sup> Բարեկեցության ազդեցությունը գնահատվել է առևտրի տեսության մեջ հայտնի մասնակի հավասարակշռության մոդելը կիրառելիս: մասնավորապես՝ մաքսատուրքերի բարձրացման գույտ ազդեցության հետևանքով սպառողները ստիպված են լինում ավելի քիչ ապրանքներ սպառել բարձրացված գների պատճառով, նյութ կողմից՝ պետությունը լրացնից մաքսատուրքը է հավաքագրում մաքսատուրքերի բարձրացման հաշվին, իսկ արտադրողները, ովքեր արտադրում են նոյն ներմուծված ապրանքները, կարողանում են գնային առավելություն ստանալ:

<sup>12</sup> 3-րդ և 4-րդ այդուսակներում բերված գրեթե բոլոր ապրանքախմբերի մասով բացառումներ են սահմանված, այսինքն՝ ԵԱՏՄ-ին << անդամակցությունից հետո կշարունակվի << նախկին մաքսատուրքերի կիրառությունը:

## Աղյուսակ 3

**Մաքսատուրքի փոփոխությունների ազդեցությունը ներմուծման վրա՝  
2013 թ. ԵԱՏՄ նաքսատուրքի կիրառմամբ<sup>13</sup>**

Անույնի ուղարկման տարեթիվ	Ասկրիուս	Ապրանքի մկարագիր	Առաջդիր ծավալային գործ ստուգում. Trade creation (1000 ԱՄ դրամ)	Ներմուծման կողմունությունը (%՝ <ԱՀ նկատմամբ)	Հայաստանի ճարագարական արժուագիրը ԵԱՏՄ	ԵԱՏՄ ճարագարական արժուագիրը ԱՀ	Արտահանող երկրներ
020714	Ընտանի հավ, Ենթանասեր և սննդային Ենթամթերք՝ սարեցրած	-23,520	-0.23%	10	75.8	ԱՄՆ, Բրազիլիա, Չինաստան	
710812	Ուլի՝ այլ անմշակ տեսքով	-10,493	-0.10%	0	18.4	Նվեյցարիա	
710239	Այլ ոչ արդյունաբերական ալմաստներ	-8,264	-0.08%	0	12.7	ԱՍՏ, Բելգիա, Հնդկաստան, Նվեյցարիա	
240220	Սիկարետներ (ծխախոտ պարունակող)	-7,953	-0.08%	6.5	19.6	Ուկրաինա	
870323	Թթվակ մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի 1500-3000 լ/սմ աշխատանքային ծավալով	-7,344	-0.07%	10	37.4	Ճապոնիա, Հ. Կորեա, Գերմանիա, ԱՍՏ	
271011	Նավթ (ոչ հոլմ)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտունացված հանքաքարից, թթվակ դիստիլյատ (օր.՝ բենզին)	-7,292	-0.07%	0	4.5	Ուսմինիա, Բուլղարիա	
300490	Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	-6,374	-0.06%	0	7.7	Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Նվեյցարիա	
271019	Նավթ (ոչ հոլմ)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտունացված հանքաքարից (օր.՝ բամոյութեր)	-6,322	-0.06%	0	4.8	Իսրայել, Իրաք, Թուրքմենստան	
020329	Խոզի միս՝ ազդեցի և թիակներ (արջկի ազդեցի) և դրանց հատվածներ՝ ուկրահան չարված	-4,881	-0.05%	10.0	52.5	Բրազիլիա, Իտալիա	
710813	Ուլի՝ այլ կիսամշակված տեսքով	-3,505	-0.03%	0	19.0	Ավստրիա, Նվեյցարիա, ԱՍՏ	
020321	Խոզի միս՝ սարեցրած, մսեղիք և կիսամսեղիք	-3,456	-0.03%	10.0	65.0	Բրազիլիա, Իտալիա	
020230	Խողոր եղջերավոր անասունների միս՝ սարեցրած, ուկրահան արված	-3,333	-0.03%	10.0	28.3	Հնդկաստան, Բրազիլիա	
870324	Մեծ մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի > 3000 աշխատանքային ծավալով	-3,061	-0.03%	10.0	31.4	Ճապոնիա, Գերմանիա, ԱՄՆ, Սլովակիա, Ավստրիա	

<sup>13</sup> Աղյուսակներ 3-ում և 4-ում ներկայացված չէ փոփոխության Ենթակա ապրանքախմբերի ամբողջական շարքը, բերված են միայն այն ապրանքատեսակները, որոնց մասով ներմուծման արժեքային փոփոխությունները քիչ են շատ նշանակալի են:

870210	Ծարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ տեղափոխելու համար	-2,877	-0.03%	0	15.1	Զինաստան, Գերմանիա, Հ. Կորեա
020712	Ընտանի հավի միս՝ չնասնատված, թարմ	-2,865	-0.03%	10.0	80.0	Բրազիլիա, Բուլղարիա, Ուկրաինա
<b>Ներմուծման նվազում՝ ներառյալ այլ ապրանքներ</b>		<b>-230,640</b>	<b>-2.21%</b>			
090111	Սոլր (չբոված կամ առանց կոֆեինի)	2,336	0.02%	10.0	0	Ինդոնեզիա, Վիետնամ, Ուգանդա, Եթովպիա
851712	Հեռախոսային կամ հեռագրային էլեկտրական ապարատներ հաղորդալարային կապի համար	2,131	0.02%	10.0	0	Զինաստան, Վիետնամ
080300	Բանաններ, ներառյալ պանուայններ՝ թարմ կամ չորացրած	920	0.01%	10.0	4.3	Էկվադոր, Կոստա Ռիկա
481840	Կանացի հիգիենիկ միջադիրներ և վիրախնձորներ (տապաններ), մանկական խանձարուրներ, տակդիրներ և համանման սանհիտարահիգիենիկ իրեր	642	0.01%	10.0	4.7	Զինաստան, Հունգարիա, Կիպրոս, Շվեյցիա, Բուլղարիա
841510	Օդի ռոսկավորման ավտոնոմ կայանքներ պատուհանի կամ պատի համար	488	0.0%	10.0	0	Զինաստան, Թաիլանդ
<b>Ներմուծման աճը՝ ներառյալ՝ այլ ապրանքներ</b>		<b>15,287</b>	<b>0.15</b>			
<b>Ընդհանուր ազդեցությունը</b>		<b>-215,352</b>	<b>2.06</b>			

**Ծանոթություն.**  $\angle \Sigma = 10.44$  մլրդ ԱՄՆ դոլար, 2013 թ.

**Աղյուսակ**՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա

4-րդ այլուսակում ցույց է տրվում մինչև 2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի նվազման հետևանքով սպասվող ներմուծման ամկման զսպումը: Օրինակ՝ սպասվում է, որ ծխախոտի ԵԱՏՄ մաքսատուրքը 2013 թ. 19.6%-ից կնվազի՝ 2020 թ. հասնելով մինչև 8.8%-ի, որը նոտ է Հայաստանի համար հաշվարկված 6.5% մաքսատուրքին<sup>14</sup>:

5-րդ այլուսակում ներկայացված են Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում ի հայտ եկող առևտորի վերակողմնորոշման ցուցանիշները: Թվարկված ապրանքները ներմուծվելու են Ռուսաստանից կամ Բելառուսից՝ ԵԱՏՄ ներմուծման մաքսատուրքն ընդունելու արդյունքում (առևտորի վերակողմնորոշում): Ապրանքատեսակները, որոնց առնչությամբ ակնկալվում է Ռուսաստանից կամ Բելառուսից ներմուծման ծավալների ավելացում, հանդիպում են 2020 թ., թեև ծավալները պակաս են, ինչը բացատրվում է նրանով, որ 2020-ին ԵԱՏՄ մաքսատուրքերն ավելի ցածր են լինելու, հետևաբար՝ 3-րդ երկրի նկատմամբ կիրառվող ԵԱՏՄ և ՀՀ մաքսատուրքերի տարբերությունը, ըստ հաշվարկների, նվազում է, ուստի թուլանում են առևտուրը դեպի ԵԱՏՄ վերակողմնորոշելու խթանները:

<sup>14</sup> Ծխախոտի գծով 6.5% մաքսատուրքը հաշվարկվել է մինչ 2014 թ. գործող հաստատագրված վճարներից, որը վերացվել է նշված թվականին, և գործում է 10% մաքսատուրքի դրույթաչափը:

**Աղյուսակ 4**

**Մաքսատուրքի փոփոխությունների ազդեցությունը ներմուծման վրա՝  
2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի կիրառմամբ**

Անձնային տվյալ-ների տպարժեքով Ակ- րանք	Ապրանքի մկարագիր	Անձնային ժամակական գերի ընդունմամբ. <i>(1000 ԱՄՆ դոլար)</i>	Անձնային հրաժարական (%՝ > ՆՎՀ մաքսատուրք)	Հայտնի նկատմամբ	ԵԱՏՄ մաքսատուրք	Արտահանող երկրներ (կամ որ երկրնե- րից է << ներմուծվում)
2013	020714 Ընտանի հավի՝ մսեղի-քի մասեր և սննդային ենթամթերք՝ սարեցրած Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բի-տումացված հանքաքարից, թերև դիստիլյատ (օր.՝ բենզին)	-23,521	-0.23%	10.0	75.8	ԱՄՆ, Բրազիլիա, Չինաստան
	271011 Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բի-տումացված հանքաքարից (օր.՝ բենզին)	-7,292	-0.07%	0.0	4.5	Ռումինիա, Բուլղարիա
	710812 Ուսկի՝ այլ անմշակ տեսքով	-6,843	-0.07%	0.0	12.0	Շվեյցարիա
	271019 Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բի-տումացված հանքաքարից (օր.՝ բամնյութեն)	-6,322	-0.06%	0.0	4.8	Իսրայել, Իրաք, Թուրքմենստան
	870323 Թերև մարդատար ավ-տոմետենաներ՝ շարժիչի 1500-3000 խ/սմ աշխատանքային ժավալով	-5,575	-0.05%	10.0	30.7	Ճապոնիա, Հ. Կորեա, Գերմանիա, ԱՄՆ
	710239 Այլ ոչ արդյունաբերական ալմաստներ	-5,509	-0.05%	0.0	8.5	ԱՄԷ, Բելգիա, Հնդկաստան, Շվեյցարիա
	020230 Խոշոր ենջերավոր անասունների վիճ՝ սարեցրած, ուկրաիան արված	-3,333	-0.03%	10.0	28.3	Հնդկաստան, Բրազիլիա
	300490 Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	-2,928	-0.03%	0.0	3.6	Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Շվեյցարիա
	020712 Ընտանի հավի միս՝ չմասնատված, թարմ	-2,865	-0.03%	10.0	80.0	Բրազիլիա, Բուլղարիա, Ռումինիա
	240220 Սիկարետներ (ծխախոտ պարունակող)	-2,782	-0.03%	6.5	8.8	Ռումինիա, Գերմանիա
2014	710813 Ուսկի՝ այլ կիսամշակված տեսքով	-2,767	-0.03%	0.0	15.0	Ավստրիա, Շվեյցարիա, ԱՄԷ
	870210 Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ տեղակիցներու համար	-2,654	-0.03%	0.0	14.0	Ճինաստան, Գերմանիա, Հ. Կորեա
	870324 Մեծ մարդատար ավտոմետենաներ՝ շարժիչի > 3000 աշխատանքային ժավալով	-2,462	-0.02%	10.0	27.2	Ճապոնիա, Գերմանիա, ԱՄՆ, Ալիվակիա, Ավստրիա

	870422	5-20 տոննա ընդհանուր զանգվածով շարժիչային տրանսպորտային միջոցներ բեռները տեղափոխելու համար	-2,448	-0.02%	0.0	12.9	Ծվերիա, Գերմանիա, Միունիշեր
	151211	Բամբակի յուր և դրա զտաճառերը՝ չզտած	-1,468	-0.01%	5.0	13.1	Ուկրաինա, Վրաստան
<b>Ներմուծման նվազումը, ներառյալ այլ ապրանքներ</b>			<b>-117,772</b>	<b>-1.13%</b>			
	090111	Սուրճ (չբոված կամ առանց կոֆեինի)	2,336	0.02	10.0	0	Ինդոնեզիա, Վիետնամ, Ռիանդա, Եթովպիա
	851712	Հեռախոսային կամ հեռագովային էլեկտրական ապարատներ հաղորդայարային կապի համար	2,131	0.02	10.0	0	Չինաստան, Վիետնամ
	080300	Բանաններ, ներառյալ պլանտայններ՝ թարմ կամ չորացրած	920	0.01	10.0	4.3	Էկվատոր, Կոստա Ռիկա
	481840	Կանաչի հիգիենիկ միջադիրներ և վիրախուժներ (սամպոններ), մանկական խանձարուրներ, տակոդիրներ և համանման սանիտարահիգիենիկ իրեր	642	0.01	9.1	4.7	Չինաստան, Հունգարիա, Վիանու, Ծվերիա, Բուլղարիա
	841510	Օղի որակավորման ավտոնոմ կայաններ պատուհանի կամ պատի համար	488	0.00	10.0	0	Չինաստան, Թաիլանդ
<b>Ներմուծման աճը՝ ներառյալ այլ ապրանքներ</b>			<b>21,236</b>	<b>0.20%</b>			
<b>Ընդհանուր ազդեցությունը</b>			<b>-96,536</b>	<b>-0.92%</b>			

Ծանոթություն.  $\zeta\text{ՆԱ} = 10.44$  մլրդ ԱՄՆ դոլար, 2013 թ.

Աղբյուր՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկերի հիման վրա

## Աղյուսակ 5

### Առևտուրի վերակողմնորոշումը (Trade Diversion) կարճաժամկետ հեռանկարում (2013 թ. մաքսաստուրքեր)

Գործընկեր	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի նկարագիր	Առևտուրի վերակողմնորոշման ազդեցությունը (1000 ԱՄՆ դոլար)	%՝ ՀՆԱ-ի մկանմամբ
Ուկրաինա	271019	Նավթ (ոչ հում)` այլ նավթավերամշակման արտադրանքից և բիտումացված հանքաքարից, օր.՝ քսանյութեր	3,800	0.038
Ուկրաինա	240220	Ծխախոտներ (ծխախոտ պարունակող)	2,362	0.024
Ուկրաինա	870323	Թեթև մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչ 1 500-3000 լի/ս աշխատանքային ծավալով	1,082	0.011

ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	870422	5-20 տոննա ընդհանուր զանգվածով շարժիչային տրամսադրութային միջոցներ՝ բեռները տեղափոխելու համար	798	0.008
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	340220	Մակերևութակտիվ օրգանական նյութեր, լվացող ու մաքրող միջոցներ, որոնք պարունակում են օրգանական մակերևութակտիվ նյութեր մանրածախ վաճառքի համար	677	0.007
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	151219	Արևածաղկի յուղ, քրքումի յուղ և դրա զտամասերը (բացի հում յուղից)	597	0.006
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	220860	Էթիլային սպիրուտ, չքնակիուսված, 80 ծավալ %-ից պակաս սպիրուտի պարունակությամբ, ոմակելիքներ, ալկոհոլային այլ խմիչքներ	513	0.005
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	180690	Կակաոյից պատրաստուկներ (մածուկանման, փոշենման, հատիկների ձևով՝ բեռնարկերում կամ փաթեթավորմանը)	447	0.005
ԲԵԼԱԶՈՒՄ	870410	Ավտոմեքենաներ բեռների տեղափոխման համար, արտաձանապարհային օգտագործման համար նախատեսված ինքնաթափեր	417	0.004
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	151790	Այլ պատրաստուկներ կենդանական կամ բուսական ձարպերի կամ յուղերի	407	0.004
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	401110	Նոր ռետինե դոլեր մարդաստար ավտոմեքենաների համար	314	0.003
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	300490	Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	301	0.003
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	330510	Օճառահեղուկներ	294	0.003

**Աղբյուր՝** WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա

Ինչպես վերը ներկայացվեց, ներմուծման կորուստներն աստիճանաբար պակասում են, քանի որ ԵԱՏՄ մաքսատուրքերը ժամանակի ընթացքում կնվազեն: Ըստ այդմ՝ գնահատված է, որ Հայաստանի համար բարեկեցության կորուստները կլինեն 14.18 միլիոն դոլար (Հայաստանի 2013 թ. ՀՆԱ 0.14 տոկոսը), եթե Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցի 2013 թ. մաքսատուրքի կիրառմանք՝ կորուստների մինչև 9.31 միլիոն դոլար նվազմանք (ՀՆԱ 0.09 տոկոսը) մինչև 2020 թ., քանի որ ԵԱՏՄ մաքսատուրքը ժամանակի ընթացքում պակասում է: Այսինքն՝ նույնիսկ 2013 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի ամբողջական կիրառման դեպքում զուտ ազդեցությունը (կորուստը) ՀՀ տնտեսության վրա շատ մեծ չէ: Դա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև գնահատվում է, որ սպառողները կունենան բարեկեցության անկում ներմուծման կրծատման պատճառով, սակայն, մյուս կողմից, քանի որ Կառավարությունը լրացրացիք բյուջետային մուտքեր է ունենում բարձր մաքսատուրքերի հաշվին, դա որոշ չափով փոխառուցում է ներմուծման կրծատման հետևանքով բարեկեցության վնասմերը:

Մաքսատուրքերի գծով բյուջետային մուտքերի համար ունենք հետևյալ պատկերը. 2013 թ. տվյալներով ներմուծումից հավաքագրված մաքսատուրքը կազմել է 46.3 մլրդ դրամ կամ 113 մլն ԱՄՆ դոլար: Եթե ընդունենք, որ ԵԱՏՄ մաքսատուրքերն ամբողջապես կիրառվում են << 2013 թ. ներմուծման ծավալների և կառուցվածքի նկատմամբ (առանց բանակցված բացառումները հաշվի առնելու), ապա զմահատված է, որ մաքսատուրքերի գծով մուտքերը կկազմեն շուրջ 230 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ 117 մլն ԱՄՆ դոլարով ավելի<sup>15</sup>: Հարկ է նշել, որ << բանակցված մասնաբաժինը ընդհանուր ԵԱՏՄ շրջանակներում հավաքագրվող ընդհանուր մաքսատուրքերից կազմում է 1.11%՝ ընդ որում պահպանելով նաև բանակցված շուրջ 780 ապրանքատեսակի գծով << նախկին մաքսատուրքերը: 2013 թ. ԵԱՏՄ կողմից ընդհանուր բյուջե (որտեղից բաշխվում են միջոցները երկրների միջև ըստ յուրաքանչյուրի տոկոսային մասնաբաժնի) հավաքագրված մաքսատուրքը կազմել են շուրջ 24.0 մլրդ ԱՄՆ դոլար: Այլ հավասար պայմաններում նշված ցուցանիշի 1.11%-ը կազմում է 240 մլն ԱՄՆ դոլար, ինչը փոքր-ինչ ավելի է մոդելի զմահատումից:

Ստորև ներկայացված 6-րդ այլուսակում 2013 և 2020 թթ. ու նախկինում զմահատված բարեկեցության կորուստներն ամփոփ համեմատվում են միջանց հետ: Առևտության ավելի ցայտուն կորուստները և բարեկեցության վրա ազդեցությունները պայմանավորված են ամենաբարձր մաքսատուրքով ապրանքների ազդեցությամբ, որոնք ավելի հստակ նկատելի են Վերանայված տվյալների պարագայում, և որոնց մասով արդեն իսկ բանակցված է բացառումների կիրառումը (այսինքն՝ <<-ն շարունակելու է կիրառել իր նախկին մաքսատուրքերը առաջիկա մոտ 5 տարիների ընթացքում):

Կարենոր է նշել նաև, որ ՈՂ-ն ոչ ԵԱՏՄ երկիր որոշ ապրանքատեսակների արտահանման դեպքում կիրառում է մաքսատուրքեր. օրինակ՝ զագի մասով՝ 30%, չնշակված ադամանդի պարագայում՝ 7.5% և այլն: Ըստ ԵԱՏՄ ստեղծման մասին պայմանագրի՝ արտահանման նշյալ մաքսատուրքը չեն կիրառվում ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման դեպքում: Հետևաբար՝ ԵԱՏՄ անդամակցությամբ Հայաստանը ստանում է առավելություններ. միայն ՈՂ-ի կողմից զագի արտահանման 30% մաքսատուրքի չկիրառումը հանգեցնում է 10 անգամ ավելի մեծ տնտեսական օգուտների՝ տարեկան մոտ 140 մլն դոլար կամ ՀԱՀ 1.4%-ի չափով, որը Հայաստանը պարտադրված կլիներ վճարել, եթե չիներ ԵԱՏՄ անդամ:

## Աղյուսակ 6 ԵԱՏՄ-ին Հայաստամի ամդամակցության արդյունքում բարեկեցության փոփոխությունները

ԵԱՏՄ մաքսատուրքի սեննայ	Բարեկեցութան աճ (մին ԱՄՆ դոլար)	%՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Հայաստան		Մաքսային միություն	
			Պարզ միջին մաքսատուրք	Կշռված միջին մաքսատուրք	Պարզ միջին մաքսատուրք	Կշռված միջին մաքսատուրք
2020	-9.31	-0.09%	3.43	3.1	6.44	5.42
2013	-14.18	-0.14%	3.43	3.1	8.43	8.14

**Աղյուրը՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա**

<sup>15</sup> Գնահատականը ստատիկ է. չի ներառում մաքսատուրքերի փոփոխության հետևանքով ներքին տնտեսությունում առաջ եկող հարաբերական գների փոփոխությունը՝ յուրաքանչյուր ապրանքատեսակի մասով պահանջարկի առածզականություններ գներից կախված, հետևաբար՝ ներմուծման կառուցվածքային տեղաշարժերը ժամանակի ընթացքում:

ԵԱՏՄ անդամակցության մյուս օգուտը <<-ն ունենալու է ոչ սակագնային կարգավորումների ներդաշնակեցման դեպքում, որի արդյունքում ԵԱՏՄ երկրներ արտահանողների ծախսերը նվազելու են (ծախսերի կորը տեղափոխվելու է ձախ ներքն՝ վերջիններիս տալով լրացուցիչ գնային մրցունակություն): Այսպես օրինակ՝ մինչ անդամակցությունը ԵԱՏՄ շուկա արտահանող կազմակերպությունը պարտադրված էր ապրանքային յուրաքանչյուր խնբարանակի համար առևտորի արդյունաբերական պայմանագրությունը ստանալ ծագման սերտիֆիկատ, որը, միայն ժամանակի առումով, ծախս է: Նոր կանոններով՝ մեկ անգամ ծեռնարկությունը գրանցվում է համապատասխան ռեեստրում, և դրանից հետո յուրաքանչյուր խնբարանակի արտահանման դեպքում նոր ծագման սերտիֆիկատ չի պահանջվում: Ըստ որում, ՌԴ կամ ԵԱՏՄ անդամ երկրներ ապրանք տեղափոխելիս ներմուծման պահին չի ներկայացնում ծագման սերտիֆիկատ, քանի որ համապատասխան ռեեստրում գրանցվելն արդեն իսկ ներմուծող երկրի պատկան մարմնին հնարավորություն է տալիս տեսնելու, որ տվյալ ապրանքը «ԵԱՏՄ» ապրանք է: Նմանատիպ կանոններ են գործում նաև ոչ տարիֆային կարգավորումների այլ բնագավառներում (որակի ստանդարտներ, սննդի անվտանգությանը վերաբերող կանոններ և այլն): Այլ կերպ ասած՝ մաքսային ամբողջական զննում չի իրականացվում այն դեպքում, եթե ապրանքները տեղաշարժվում են ԵԱՏՄ անդամ երկրների միջև:

Քանի որ Հայաստանի համար ոչ սակագնային սահմանափակումների հետ կապված ծախսերի նվազման պատճական շարքեր չկան, որովհետև նմանատիպ գործընթաց <<-ում տեղի չի ունեցել մինչ ԵԱՏՄ անդամակցությունը, այդ իսկ պատճառով որպես հիմք են ընդունվել Ոչչարդ Բալդվինի և Չեզինիի աշխատությունների արդյունքները, որոնք ոչ սակագնային սահմանափակումների ազդեցությունը տնտեսավարողների ծախսերի վրա ԵՄ-ում գնահատել են 10% նվազում<sup>16</sup>: Ենթադրվել է, որ առնվազն նույնքան օգուտներ կունենան մեր արտահանողները դեպի ԵԱՏՄ շուկաներ արտահանման պարագայում, որը կիանգեցնի ՀՆԱ լրացուցիչ՝ 0.34 տոկոսային կետով աճի:

Երրորդ ուղղությամբ օգուտը գնահատված է լրացուցիչ մաքսատուրքերից մուտքի մասով: Իհարկե, բարեկեցության վրա ազդեցությունները գնահատելիս մոդելը տեսականորեն հաշվի է առնում բյուջեի լրացուցիչ մուտքերը: Սակայն, մյուս կողմից, քանի որ ավելի քանի 752 ապրանքատեսակի մասով մաքսատուրքերի բարձրացումներ չեն լինելու՝ բանակցված բացառումների շնորհիվ, հետևաբար և դրանց մասով սպառողների շրջանում բարեկեցության կորուստ չի լինելու, և, մյուս կողմից, ինչպես վերը նշվեց, Հայաստանն իր տոկոսային մասնաբաժնի հաշվին կստանա մաքսատուրքի ավելի գրւմար: Հետևաբար՝ սա ևս պետք է հաշվի առնել և, համապատասխանաբար, ավելացնել անդամակցությունից ստացվող շահումներին, որը գույտ արժեքով կազմում է շուրջ 80 մլն ԱՄՆ դոլար: Ստորև ներկայացվում է << ԵԱՏՄ-ին անդամակցության տնտեսական ազդեցությունների ամփոփ գնահատականը:

<sup>16</sup> Տե՛ս The growth effects of 1992, Baldwin R., NBER Paper, Cecchini Report on The European Single Market, 1988:

**ՀՆԱ տոկոսային կետ**

Ոչ սակագնա- յին սահմանա- վակումների վերացումից օգուտ	Գազի ար- տահանման մաքսատուր- թի վերացու- մից օգուտ	Լրացուցիչ մաքսատուր- թերի զուտ մուտքերից օգուտ	Վճառ մաքսա- տուրթերի բարձրա- ցումից	Ընդամենը կար- ձաժամկետ օգուտ ԵԱՏՄ-ին անդա- մակցությունից
0.35	1.3	0.8	-0.1	2.4

Ամփոփելով պետք է նշել, որ Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցումից, զուտ հաշվարկներով, շահեկան վիճակում է լինելու, որի ստատիկ արժեքը զնահատված է ՀՆԱ 2.35 տոկոսային կետ: Վճառներն առաջին իսկ տարում դրսևորվելու են միայն այն ապրանքների մասով, որոնք չեն հայտնվել բացառումների ցանկում, սակայն դրանց վերաբերյալ մաքսատուրթերի բարձրացում դիտվելու է: Վերլուծությունը հնարավորություն տվեց փաստելու, որ մաքսատուրթերի բարձրացումը և դրա հաշվին երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների գների աճը սահմանափակ է լինելու:

**ВАРДАН АРАМЯН**

Первый заместитель руководителя  
аппарата президента РА

**Экономическая оценка присоединения Армении к Евразийскому экономическому союзу, как региональной интеграции.**— Опыт стран в создании или присоединении к таможенным союзам показывает, что в ходе гармонизации тарифной и нетарифной систем, выявляются статические (первичное воздействие) или динамические экономические эффекты. Присоединение Армении к Евразийскому экономическому союзу (ЕАЭС) также имеет убытки и выгоды, которые оцениваются около 2,35% от ВВП с точки зрения чистой выгоды. За счет высоких тарифов ЕАЭС убыток благосостояния Армении оценивается в 0,14% от ВВП. В то же время, периодически высокие тарифы ЕАЭС будут уменьшаться, таким образом, снижая негативное воздействие на экономику Армении и уменьшая убытки благосостояния до 0,09% от ВВП:

**Ключевые слова:** таможенные пошлины, выгоды и убытки благосостояния, создание торговли, отвлечение торговли, инфляция, тарифные и нетарифные системы.

**VARDAN ARAMYAN**

First Deputy Chief of Staff of the Office  
to the President of the RA

**Economic Assessment of Armenia's Joining the Eurasian Economic Union as Regional Integration.**— Countries' experience in creating or joining custom unions shows that in the course of harmonization tariff and non-tariff systems, the static (first round impact) or dynamic economic effects take place. Armenia joining the Eurasian Economic Union (EAEU) also has losses and gains, which have been estimated around 2.35% of GDP in net gains. The higher tariffs of EAEU cause Armenia's welfare loss in 0.14% of GDP. However, periodically the higher tariffs of EAEU are going to be diminished thus lowering the negative effects on Armenian economy and bringing the welfare loss to 0.09% of GDP.

**Key Words:** custom duties, welfare gains and losses, trade creation, trade diversion, inflation, tariff and non-tariff systems.



## ԱՐԾՈՒՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ նախագահի վերահսկողական ժառայության  
առաջին բաժնի վարիչ,  
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության դոկտոր

## ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՅ

Վիճակագրական հարուստ նյութի հիման վրա ուսումնասիրվել է ՀՀ բնակչության եկամուտների ու ծախսերի դիմամիկան, ինչպես նաև շուկայական վերափոխումների արդյունքում ձևավորված աղքատության մակարդակը: Այդ նպատակով մանրամասն վերլուծվել են բնակչության դրամական եկամուտների, հանրապետության տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքի փոփոխությունները և հետևողությունն է արվել աշխատանքի վարձատրության որոշիչ դերի վերականգնման և այդ ոլորտում պետական կարգավորման ուժեղացման անհրաժեշտության վերաբերյալ:

Այդ նպատակով բացահայտվել է միջին ամսական անվանական աշխատավարձի էական շեղումը ինչպես տարածքային առումով, այնպես էլ ըստ սերերի, դիտարկվել են նաև ըստ հարուստների ու աղքատների՝ հասարակության բներացման հիմնական պատճառները:

Հետազոտվել է նշված գործընթացների ազդեցությունը աղքատության ցուցամիջի դիմամիկայի վրա:

**Հիմնաբառեր.** Եկամուտներ, ծախսեր, աղքատություն, աշխատավարձ, աշխատանքի վարձատրություն, տարածք, կենսամակարդակ

Հայաստանի Հանրապետությունում շուկայական վերափոխումների արդյունքում բնակչության եկամուտների ձևավորման մեջ տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Այսպես՝ էականորեն աճել է աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը՝ 1996 թվականի 23%-ից 2013 թվականին հասնելով 59,6%-ի: Միաժամանակ, աճել է սոցիալական տրանսֆերտների բաժինը՝ 1996 թվականի 7%-ից 2013 թվականին հասնելով 17,9%-ի:

## Աղյուսակ 1

«Հնակչության դրամական եկամուտների կառուցվածքը 1996–2013 թթ. (%)»<sup>1</sup>

Բնակչության եկամուտներ	Տարիներ										
	1996	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը. այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Աշխատանքի վարձատրություն	23	56,5	60,7	61,9	65,2	62,8	60,1	60,0	59,8	60,1	59,6
Սոցիալական տրանսֆերներ	7	13,6	14,1	13,9	13,7	18,1	20,0	18,7	19,0	18,4	17,9
Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	28	11,3	10,3	9,9	7,3	6,8	6,1	3,7	5,1	5,7	6,1
Այլ դրամական մուտքեր	42	18,6	14,9	14,3	13,8	12,3	13,8	17,6	16,1	15,8	16,4

Հարկ է նշել, որ 90-ական թվականների կեսերին բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում, կազմելով շուրջ 60,0%, առաջին տեղ մղվեցին հետևյալ հոդվածները. մուտքեր ֆինանսական համակարգից, եկամուտներ սեփականությունից, ծեռնարկատիրական գործունեությունից և այլն, այդ թվում՝ եկամուտներ արժեթղթերի և տարադրամի վաճառքից<sup>2</sup>: Հետագայում դրանց մի մասն իր արտացոլումը գտավ աշխատանքի վարձատրությունում, որն էլ հանգեցրեց նրան, որ, սկսած 2004 թվականից, էականուն (33,5 տոկոսային կետով) աճեց աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ նշանակալիորեն (23,4 տոկոսային կետով) նվազեցնելով այլ դրամական մուտքերի և բոլոր տեսակի վաճառքներից եկամուտների (16,7 տոկոսային կետով) տեսակարար կշիռները:

Առաջին հայացքից «Հնակչության դրամական եկամուտների ձևավորված կառուցվածքը համապատասխանում է այն միտումներին, որոնք բնորոշ են սոցիալական ուղղվածությամբ գարզացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներին: «Հնակչության եկամուտների գործոնային մոդելը վերացականորեն գնահատելով որպես բավականաչափ առաջադիմական, այնուամենայնիվ, պետք է նշել, որ իրականում դա այդպիսին է միայն արտաքուստ:

Այսպես՝ բնակչության դրամական եկամուտների ձևավորման կառուցվածքում աշխատանքի վարձատրության բաժինը (ներառյալ՝ թաքնված աշխատավարձը) զգալի է: Սակայն այն կայուն չէ, և վերջին տարիներին դրա բաժինը հաջորդաբար նվազում է՝ 2007 թվականի 65,2%-ից 2008 թվականին հասնելով 62,8%-ի, իսկ 2013 թվականին արդեն կազմելով 59,6%: Ճիշտ է, այդ փոփոխությունները որոշ չափով բացատրվում են «ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատեսական ճգնաժամի ազդեցությամբ: Դրա հետևանքով տեղի ունեցավ աշխատանքի վարձատրության նվազում՝ հօ-

<sup>1</sup> Կազմված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի: Եր., «ՀՀ ԱՎԾ», 2008՝ էջ 90, 2013՝ էջ 105, 2014՝ էջ 102:

<sup>2</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրք 2001(1997,1998)-ի տվյալների: Եր., «ՀՀ ԱՎԾ», 2001, էջ 60-61:

գուտ սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշռի աճի: Օրինակ՝ 2013 թվականին, նախաձգնաժամային տարվա՝ 2007-ի համեմատությամբ, աշխատանքի վարձատրության տեսակարար կշռը նվազեց 5,6 տոկոսային կետով, իսկ սոցիալական տրանսֆերտներին աճեց 4,2 տոկոսային կետով:

Նշված բացասական դրսերումներն ուղեկցվում են Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ի մեջ աշխատանքի վարձատրության առանց այն էլ ցածր բաժնի համապատասխան կրծատմամբ: Այսպես՝ եթե ՀՀ ՀՆԱ-ում աշխատանքի վարձատրության բաժինը 1996 թվականին կազմել է 40%, ապա 2004 թվականին՝ 39,5%, 2005 թվականին՝ 39,4%, 2006 թվականին՝ 39,0%, 2007 թվականին՝ 38,2%, իսկ 2008-ին արդեն՝ 37,2%: Միայն 2009 թվականին հնարավոր դարձավ կանխել այդ բացասական գործընթացը. աշխատանքի վարձատրության մասնաբաժինը հասցեց 38,4%-ի: Սակայն 2010 թվականին նվազման միտումը շարունակվեց՝ կազմելով 37,1%, իսկ 2012 թվականին՝ 36,6%<sup>3</sup>: Համեմատության համար նշենք, որ Եվրոմիության երկրներում, ԱՄՆ-ում և Ճապոնիայում ՀՆԱ-ում աշխատանքի վարձատրության բաժինը կազմում է, համապատասխանաբար՝ 68,9%, 72,0% և 75,9%<sup>4</sup>:

Միջին ամսական անվանական աշխատավարձը, ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների, խիստ տարբեր է: Այսպես՝ 2004 թվականին այն ֆինանսական գործունեության ոլորտում 3,5 անգամ գերազանցել է հանրապետությունում նույն ցուցանիշն ամբողջությամբ Վերցրած, այն դեպքում, երբ առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում դրա կազմել է 45,5%: Ավելին, միջին ամսական անվանական աշխատավարձը ֆինանսական գործունեության ոլորտում 7,7 անգամ գերազանցել է առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման բնագավառի միջին ամսական անվանական աշխատավարձը, որը վկայում է ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատավարձի շատ խոր շերտավորման մասին: Սակայն 2010 թվականին այդ ճեղքածքը փոքրացավ՝ կազմելով 4,2 անգամ: Այս փաստը վկայում է աշխատավարձի պետական կարգավորման դրական տեղաշարժի մասին: Սակայն 2010 թվականին, 2009 թվականի համեմատությամբ, հանքագործական արդյունաբերության և կոմունալ, սոցիալական ու անհատական ծառայությունների մատուցման ոլորտների միջին ամսական անվանական աշխատավարձերի միջև ճեղքածքը մեծացավ 2,7-ից 3,3 անգամ<sup>5</sup>: Չնայած նշված փոփոխություններին, 2013 թվականին աշխատավարձի անհամեմատ բարձր մակարդակը պահպանվեց ֆինանսական և ապահովագրական գործունեությունում, հանքագործական արդյունաբերությունում, տեղեկատվության և կապի ոլորտներում<sup>6</sup>:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, 2004 թ. միջին ամսական անվանական աշխատավարձը կանանց և տղամարդկանց շրջանում ունի խիստ արտահայտված անհավասար նկարագիր:

<sup>3</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի: Եր., ՀՀ ԱՎԾ, 2001(1997, 1998)՝ էջ 190, 2008՝ էջ 212, 2010՝ էջ 235, 2014՝ էջ 225:

<sup>4</sup>Տես Լևոն Դ.Ը., Էկոնոմիկա բարեկարգության մասին օրենքը, 2002, էջ 299:

<sup>5</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի: Եր., ՀՀ ԱՎԾ, 2009՝ էջ 74, 2011՝ էջ 90:

<sup>6</sup> Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2014: Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 87:

## Աղյուսակ 2

**Միջին ամսական անվանական աշխատավարձը <<ում 2004-2013 թթ.<sup>7</sup>**  
**Ըստ սեռերի (ընդհանուրի նկատմամբ, %)<sup>8</sup>**

Սեռը	Տարիներ									
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100
1. Տղանարդ	131,3	128,8	131,0	130,4	133,6	132,0	121,5	121,5	120,1	118,9
2. Կին	70,2	71,8	77,6	78,3	77,8	80,3	77,9	78,6	76,6	78,0

Այսպես՝ 2004 թ. տղանարդկանց աշխատավարձը գերազանցել է կանանց աշխատավարձը 1,9 անգամ: Ճիշտ է, այդ նկարագիրը վերջին տարիներին որոշ չափով մեղմացել է, և 2013 թվականին տարբերությունը կազմել է 1,5 անգամ: Աշխատավարձի մակարդակում նշված տարբերությունները օբյեկտիվորեն պայմանավորված են նաև կանանց որակավորման ցածր մակարդակով և << տնտեսության այնպիսի ճյուղերում նրանց գրաղվածության գերակշռությամբ, որտեղ ավանդաբար աշխատավարձի մակարդակը ցածր է: Այդպիսի ոլորտներից են կրթությունը, առողջապահությունն ու սոցիալական ծառայությունների մատուցումը, աշևատումն ու կենցաղային սպասարկումը և այլն: Սակայն դրա վրա ազդում են նաև աշխատանքի շուկայի ազգային առանձնահատկությունները, կանանց աշխատանքի նկատմամբ գործառուների ոչ պատշաճ վերաբերումնքը և այլն:

## Աղյուսակ 3

**Միջին ամսական անվանական աշխատավարձը <<մարզերում և Երևան քաղաքում 2004 թ. և 2013 թ.<sup>9</sup>**

Մարզեր	Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)		Ընդհանուրի նկատմամբ (%)	
	2004 թ. <sup>9</sup>	2013 թ.	2004 թ.	2013 թ.
Ընդամենը	43445	146524	100	100
1. ք. Երևան	49685	160804	114,4	110,0
2. Արագածոտնի	30188	102191	69,5	69,7
3. Արարատի	34614	117551	79,7	80,2
4. Արմավիրի	36865	126010	84,9	86,0
5. Գեղարքունիքի	34735	112439	80,0	76,7
6. Լոռու	35662	113456	82,1	77,4
7. Կոտայքի	47198	126488	108,6	86,3
8. Շիրակի	33261	104240	76,6	71,1
9. Սյունիքի	50401	178606	116,0	121,9
10. Վայոց ձորի	31124	105624	71,6	72,1
11. Տավուշի	31450	102247	72,4	69,8

<sup>7</sup> Կազմված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի: Եր., << ԱՎԾ, 2009՝ էջ 77, 2013՝ էջ 92, 2014՝ էջ 90:

<sup>8</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի: Եր., << ԱՎԾ, 2007՝ էջ 73, 2014՝ էջ 87: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2000-2004: Վիճակագրական ժողովածու: Եր., 2005՝ էջ 77, 2014՝ էջ 95:

<sup>9</sup> Առանց փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների:

Այսուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ անվանական աշխատավարձը տատանվում է նաև տարածքային առումով: Արավել բարձր աշխատավարձի մակարդակ ծևավորվել է Երևան քաղաքում և Սյունիքի մարզում, որն օրինաչափ է, քանի որ ֆինանսական գործունեությունը և խոշոր գործարությունը հիմնականում իրականացվում են մայրաքաղաքում: Ինչ վերաբերում է Սյունիքի մարզին, ապա այստեղ գործում են հանքային արդյունաբերության խոշոր ձեռնարկություններ, որն էլ ապահովում է միջին ամսական անվանական աշխատավարձի բարձր մակարդակ անբողջ մարզում:

Ամենացածր միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակ ծևավորվել է 2004 թվականին և մինչև օրս պահպանվում է Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում, որտեղ գործունեության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է: Այլ կերպ ասած՝ աշխատավարձի շերտավորումը հիմնականում պայմանավորված է տնտեսական գործունեության տեսակներով, այլ ոչ թե բացատրվում է տարածքային հանգամանքով:

Բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ են նաև տնային տնտեսությունների սպառողական ծախսերը:

#### Այսուսակ 4

#### «Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը (մեկ շնչի հաշվով՝ միջին ամսական) 2004–2013 թթ., %<sup>10</sup>

Ծախսերի հողմաժներ	Տարիներ												Այդ թվում՝			
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2004	2013	2004	2013	2004	2013
Սպառողական ծախսեր, այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
1. Սննդամթերք	56,1	57,0	56,5	53,5	51,9	51,1	51,8	52,7	48,7	47,9	53,1	45,4	62,5	52,8		
2. Ակուղուային խմիչք	0,8	0,8	0,9	0,9	0,8	0,9	1,0	0,8	0,7	0,6	0,8	0,6	0,9	0,8		
3. Ծխախոտ	4,2	4,0	4,1	3,8	3,5	3,7	3,5	3,4	3,4	3,5	4,3	3,3	4,0	3,9		
4. Ոչ պարենային ապրանքներ	14,5	14,3	14,0	15,6	16,4	15,5	15,5	15,4	17,7	17,9	13,6	16,7	16,4	20,1		
5. Ծառայություններ, այդ թվում՝	24,4	23,9	24,5	26,2	27,4	28,8	28,2	27,7	29,5	30,1	28,2	34,0	16,2	22,4		
- առողջապահություն	7,8	6,8	4,9	4,7	3,6	3,2	4,0	2,1	2,5	3,8	8,6	4,7	6,1	2,0		
- կրթություն	3,7	3,8	4,6	4,4	4,2	3,0	0,5	0,5	1,3	1,4	4,7	1,6	1,6	1,1		
- բնակլունակ	6,0	6,5	7,1	7,8	9,1	10,7	10,5	10,9	12,4	12,2	6,6	13,5	4,6	9,8		
- տրանսպորտ	3,6	3,8	3,4	3,0	3,3	4,0	3,2	3,1	3,5	3,1	4,4	3,7	1,8	1,8		
- կապ	1,5	1,6	2,6	3,7	4,9	4,6	5,0	4,8	5,8	5,6	2,0	6,1	0,5	4,7		
- այլ ծառայություններ	1,8	1,4	1,9	2,6	2,3	3,3	5,0	6,3	4,0	4,0	1,9	4,4	1,6	3,0		

<sup>10</sup> Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկույց, Եր., «ԱՎԾ», 2009՝ էջ 96–97, 2011՝ էջ 128–129, 2014՝ էջ 113–114:

Ինչպես երևում է այսուսակ 4-ի տվյալներից, սպառողական ծախսերի գերակշռող մասը բաժին է ընկնում սննդամբերքին:

Այսպես՝ եթե 2004 թվականին տնային տնտեսությունների սպառողական ծախսերի 56,1%-ը բաժին է ընկնում սննդամբերքին, ապա հետագա տարիներին, դրա չնչին աճից հետո, տեղի է ունենում տեսակարար կշռի մակարդակի աստիճանական հջեցում՝ 2009 թվականին կազմելով 51,1%։ Սակայն 2010–2011 թվականներին այդ ցուցանիշը մի փոքր նվազում է, որը, մեր կարծիքով, պայմանավորված է հաճախարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ բնակչության կենսամակարդակի դրոշակի անկմանը։ 2013 թվականին նշված ցուցանիշը կտրուկ նվազում է՝ կազմելով 47,9%։

Դա միանշանակ վկայում է Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի բարելավման մասին։ Ընդ որում, այդ ցուցանիշը առավել բարելավվել է քաղաքային բնակավայրերում՝ 2013 թվականին կազմելով 45,4%։ Սա փաստում է հանրապետության քաղաքներում կենսամակարդակի առավել բարձր մակարդակի մասին, որը, մեր կարծիքով, ձեռք է բերվել հիմնականում մայրաքաղաքի բնակչության հաշվին։

Գյուղական բնակավայրերում այդ ժամանակաշրջանում վերոնշյալ ցուցանիշը զգալիորեն բարելավվել է՝ 2004 թվականի 62,5%-ից 2013 թվականին հասնելով 52,8%-ի՝ այնուամենայնիվ զիշելով հանրապետության այդ ցուցանիշի 2013 թվականի ընդհանուր մակարդակը։

Այսուսակ 4-ի տվյալներից երևում է, որ ՀՀ տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում աճել է ոչ պարենային ապրանքների և ծառայությունների բաժինը, ընդ որում, Վերջինս աճել է ավելի մեծ չափով։ Հետաքրքիր է, որ ոչ պարենային ապրանքների բաժինը ավանդաբար բարձր է հանրապետության գյուղական վայրերում։ Առավել արագ են աճել բնակչունալի և կապի ծախսերը, նաև՝ գյուղական բնակավայրերում։

Սակայն ցավալի է, որ կրթության վրա կատարվող ծախսերը էականորեն նվազել են՝ 2004 թվականի 3,7%-ից 2010 թվականին հասնելով մինչև 0,5%-ի, իսկ 2013 թվականին կազմել են 1,4%։ Հանրապետությունում կրթության ծախսերի մակարդակի հջեցումը տեղի է ունենում 2007 թվականից սկսած։ Ընդ որում, դա արձանագրվում է և քաղաքային, և գյուղական վայրերում, ինչը վկայում է կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ բնակչության ծգունան կորստի մասին, որը, հավանաբար, անհասանելիության հետևանք է։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այդ ժամանակաշրջանում սպառողական ծախսերի կառուցվածքի դիմանմիկան ըստ բնակչության դեցիլյային խնբերի։ Ինչպես վկայում են այսուսակ 5-ի տվյալները, հանրապետության բնակչության գերակշռող մասը սպառողական ծախսերի կեսից ավելին ուղղում է սննդամբերի ծեռքբերմանը։ Առավել պակաս ապահովված ընտանիքները այդ նպատակին են ուղղում սպառողական ծախսերի գրեթե 2/3 մասը։

Բացառություն են կազմում միայն բնակչության առավել ապահովված շերտերը, որոնց շրջանում սննդի ծեռքբերման նպատակով կատարված ծախսերը սպառողական ծախսերի 1/3 մասից չեն անցնում։ Այդ խումբը մի փոքր ավելի ծախսում է մատուցված ծառայությունների դիմաց։

Բնակչության խմբերի միջև եկամուտների բաշխման և սպառման բնութագրման համար օգտագործվում է նաև Ձինիի գործակիցը։ Այդ համարիվը բնութագրում է բացարձակ հավասար բաշխվածության գծից փաստացի բաշխման շեղման աստիճանը։

**Աղյուսակ 5**

«Հ տնային տնտեսությունների սպառողական ժախսերի կառուցվածքն ըստ դեցիլյային խմբերի 2004 թ. և 2013 թ. (մեկ շնչի հաշվով, միջին ամսական), %<sup>11</sup>

Դեցիլյային խմբեր	Տարի	Մասառողական ծարեր	Այդ թվում				
			Անդամակից	Անդամակից խմբը	Անդամակից	Ժախսություն	Դաշտային պարբերություն
I	2004	100	73,4	0,4	5,1	8,6	12,5
	2013	100	62,0	0,2	4,7	8,7	24,4
V	2004	100	66,6	0,6	5,2	11,5	16,1
	2013	100	54,7	0,4	4,1	16,9	23,9
X	2004	100	38,0	1,1	2,9	18,6	39,4
	2013	100	34,7	1,0	2,1	20,3	41,9

Ինչպես երևում է աղյուսակ 6-ի տվյալներից, հանրապետության բնակչության բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ավելի խորն է, քան ըստ սպառման:

**Աղյուսակ 6**

Զինի գործակիցը «Հ-ում 2004–2013 թթ.<sup>12</sup>

Զինի գործակից	Տարիներ									
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
1. Ըստ եկամուտների	0,395	0,359	0,369	0,371	0,339	0,355	0,362	0,371	0,372	0,372
2. Ըստ սպառման	0,260	0,257	0,263	0,288	0,242	0,257	0,265	0,267	0,269	0,271

Զինի գործակիցը, հաշվարկված որպես եկամուտների խտացման համարիվ, 2004 թվականին եղել է բավականին բարձր՝ 0,395: 2005-ին այդ ցուցանիշը բարեկավվել է, սակայն 2006–2007 թթ. աճել՝ վկայելով հանրապետությունում եկամուտների անհավասարաչափ բաշխման սրացման մասին: Միայն 2008 թվականին հաջողվեց կանգնեցնել այդ գործընթացը: Սակայն 2009–2013 թվականներին եկամուտների անհավասարաչափ բաշխման խորացման գործընթացը վերսկսվեց՝ հասնելով և այնուհետև գերազանցելով 2005 թվականի մակարդակը:

Նոյն կերպ է փոխվել Զինի գործակիցը ըստ սպառման, միայն այն տարրերությամբ, որ անհավասարաչափ բաշխման այդպիսի սրություն այս տեղ չի դիմում: Դա, հավանաբար, պայմանավորված է արտերկրից ուղարկվող չիաշվառվող տրանսֆերտների ծավալների աճով:

<sup>11</sup> Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկույց, Եր., «Հ ԱՎԾ», 2014, էջ 118–119:

<sup>12</sup> Ներառյալ սեփական արտադրությունից սննդամթերքի սպառման արժեքը:

<sup>13</sup> Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկույց, Եր., «Հ ԱՎԾ», 2009՝ էջ 52, 2011՝ էջ 58, 2013՝ էջ 59, 2014՝ էջ 57:

Եկամուտների շերտավորման և սպառման մակարդակի մասին առավել լիիվ պատկերացում է տալիս բնակչության «բներային» խմբերի հարաբերակցության գործակիցը: Ընդ որում, նպատակահարմար է դա վերլուծել ինչպես ըստ բնակչության քվինտիլային, այնպես և ըստ դեցիլային խմբերի: Այդ գործակիցները հաշվարկվում են եկամուտների կամ սպառման հարաբերությամբ: առաջին դեպքում՝ 20%, իսկ երկրորդ դեպքում՝ 10% առավել ապահովված բնակչության, 20% կամ 10%՝ առավել պակաս ապահովված բնակչության եկամուտների կամ սպառման մակարդակի նկատմամբ:

Ինչպես երևում է այսուսակ 7-ի տվյալներից, ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարաչափությունն ավելի խորն է, քան սպառման, որի մասին է վկայում նաև Ձիմի գործակիցը: Ընդ որում, բաշխման անհավասարաչությունը ինչպես ըստ եկամուտների, այնպես և ըստ սպառման, առավել ցայտուն է արտահայտված բնակչության դեցիլային խմբերի հարաբերակցության գործակիցը հաշվարկելիս:

#### Այլուսակ 7

**20% և 10% ամենասպահով ու 20% և 10% ամենաաղքատ ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը 2004–2013 թթ., անգամ<sup>14</sup>**

	«Բներային» խմբերի հարաբերակցության գործակից, ըստ՝										
	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	
1. Ըստ դրամական եկամուտների	Քվինտիլային	Դեցիլային	Քվինտիլային	Դեցիլային	Քվինտիլային	Դեցիլային	Քվինտիլային	Դեցիլային	Քվինտիլային	Դեցիլային	Քվինտիլային
2. Ըստ սպառողական ծախսերի	5,8	9,5	6,0	10,0	5,4	7,6	8,7	5,6	8,0	5,2	7,8

Այսպես՝ եթե դրամական եկամուտների հարաբերակցության գործակիցը, ըստ բնակչության քվինտիլային խմբերի, 2004 թվականին կազմել է 10,6 անգամ, իսկ 2013 թվականին՝ 8,2 անգամ, ապա, ըստ դեցիլային խմբերի, համապատասխանաբար՝ 20,8 և 15,0 անգամ: Նույնն է պատկերը նաև սպառողական ծախսերի գործակիցների համադրության դեպքում: Այսպես՝ եթե ըստ բնակչության քվինտիլային խմբերի 2004 թվականին հարաբերակցությունը կազմում էր 5,8 անգամ, իսկ 2013 թվականին՝ 5,2 անգամ, ապա ըստ բնակչության դեցիլային խմբերի, համապատասխանաբար՝ 9,5 և 8,2 անգամ: Այդ փաստը մեկ անգամ ևս վկայում է հանրապետությունում բնակչության առավել հարուստների և առավել աղքատների ծայրահեռ բևեռացման մասին:

Այսպիսով՝ ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի կատարված վերլուծությունը վկայում է այդ հիմնախնդրի կարգավորմանը պետական մասնակցության անհրաժեշտության մասին:

<sup>14</sup> Կազմված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական գեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 117:

Հուկայական տնտեսությունում, հատկապես դրա ոչ կայուն զարգացման պայմաններում, մեծ տեղ է տրվում բնակչության եկամուտների մակարդակի կարգավորման բնագավառում պետության սոցիալական երաշխիքներին: Դա, մասնավորապես, վերաբերում է նվազագույն աշխատավարձի սահմանմանը, որը գործուն լժակ է աշխատանքի վարձատրության կարգավորման համար: Այդ տեսանկյունից առանձնապես կարևոր նշանակություն է ստանում սահմանված նվազագույն աշխատավարձի և սպառողական զամբյուղի միջև հարաբերակցության դինամիկայի ուսումնասիրությունը:

Այս նպատակին կարող են ծառայել ՀՀ ԱՎԾ-ի կողմից Համաշխարհային բանկի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և այլ դունոր կազմակերպությունների աջակցությամբ տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության արդյունքները:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ընդհանրական հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ անց է կացվել 1996 թվականին (մեկ ամսվա ընթացքում), այնուհետև՝ 1998/1999 թթ. և, սկսած 2001 թվականից, իրականացվում է ամեն տարի: Հաստատված մեթոդաբանության համաձայն՝ հաշվարկներ են կատարվել սպառողական զամբյուղի սահմանման նպատակով, որոշվել են ծայրահեղ (պարենային) աղքատության և աղքատության ընդհանուր գծերը, որոնք յուրաքանչյուր տարի ճշգրտվում են: 2009 թվականից Հայաստանի Հանրապետությունում կիրարվում է աղքատության գնահատման Համաշխարհային բանկի երրորդ՝ եռաստիճան մեթոդաբանությունը<sup>15</sup>.

Այժմ Վերլուծենք, թե ինչպես են Վերօշարադրյալ գործընթացներն ազդել ՀՀ բնակչության բարեկեցության մակարդակի վրա: Այդ նպատակով դիտարկենք աղքատության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում 2004–2013 թվականներին:

Ինչպես ցույց են տալիս այդուսակ 8-ի տվյալները, Հայաստանի Հանրապետությունում 2004–2013 թվականների ընթացքում աղքատության մակարդակը նվազել է 40,2%-ով՝ 53,5%-ից հզնելով 32,0%-ի: Ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 39,0%-ով՝ 4,4%-ից հզնելով 2,7%-ի:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հարվածեց նաև Հայաստանի Հանրապետության տնտեսությանը: Այսպես՝ 2008 թվականին ՀՆԱ տարեկան իրական աճը կազմեց 6,9%, ի տարբերություն նախաճգնաժամային շրջանում գրանցված տարեկան միջին աճի գերազանցապես երկնիշ ցուցանիշների: 2009 թվականի տնտեսական խոր անկումը (14,1%) հանգեցրեց նրան, որ, աղքատության մակարդակի առումով, 1998 թվականից հետո առաջին անգամ աճ գրանցվեց: Թեև 2010 թվականին արձանագրվեց տնտեսական աճ (2,2%), այնուամենայիվ, աղքատության մակարդակը շարունակեց աճել: 2011 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ,

<sup>15</sup> Ըստ Համաշխարհային բանկի սահմանման՝ աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է: <<-ում աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը: Հայաստանի բնակչությունը, ըստ կենսամակարդակի, բաժանվում է աղքատների և ոչ աղքատների: Աղքատներն իրենց հերթին տարբերակվում են՝ շատ աղքատներ և ծայրահեղ աղքատներ: Աղքատ են համարվում նրանք, ում սպառումը, մեկ չափահան անձի հաշվով, ցածր է աղքատության վերին ընդհանուր գծից, շատ աղքատ, ում սպառումը ցածր է աղքատության ստորին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերմակած, ում սպառումը, մեկ չափահան անձի հաշվով, ցածր է աղքատության պարենային գծից (Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկուց: Եր., <<ԱՎԾ, 2013, էջ 34-35):

տնտեսական աճը կազմեց 4,7%, իսկ 2012 թվականին՝ 7,2%, որի արդյունքում աղքատության մակարդակը ցուցաբերեց նվազման միտում: 2013 թվականին գրանցվեց տնտեսական աճի ոչ բարձր մակարդակ (3,5%), որի հետևանքով աղքատության մակարդակը նվազեց ընդամենը 0,4 տոկոսային կետով:

**Աղյուսակ 8**  
**Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան Հայաստանի  
Հանրապետությունում 2004–2013 թվականներին  
(իստ 2009 թվականի մեթոդաբանության)<sup>16</sup>, %**

<i>Տարիներ</i>	<i>Դչ աղքատ թնակչության մակարդակ</i>	<i>Աղքատ թնակչության մակարդակ</i>		
		<i>Մյու թվում՝ շատ աղքատ թնակչության մակարդակ</i>	<i>ծայրահեռ աղքատ թնակչության մակարդակ</i>	
2004	46,5	53,5	32,6	4,4
2005	59,9	40,1	19,6	3,3
2006	69,8	30,2	14,2	2,3
2007	73,6	26,4	14,5	2,0
2008	72,4	27,6	12,6	1,6
2009	65,9	34,1	20,1	3,6
2010	64,2	35,8	21,3	3,0
2011	65,0	35,0	19,9	3,7
2012	67,6	32,4	13,5	2,8
2013	68,0	32,0	13,3	2,7

Թեև 2010 թվականից աղքատության մակարդակն անընդմեջ նվազել է, այնուամենայնիվ, այն դեռևս գերազանցում է 2008 թվականի մակարդակը: Այսպես՝ 2013 թվականին Հայաստանի Հանրապետությունում աղքատության մակարդակը կազմել է 32,0%՝ 2008 թվականի 27,6%-ի դիմաց, շատ աղքատների տեսակարար կշիռը ամբողջ թնակչության մեջ 2013 թվականին կազմել է 13,3%՝ 2008 թվականի 12,6%-ի դիմաց, իսկ ծայրահեռ աղքատության մակարդակը ամբողջ բնակչության մեջ 2013 թվականին կազմել է 2,7%՝ 2008 թվականի 1,6%-ի դիմաց:

<sup>16</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 39:

## ԱՐՑՐՈՒՆԻ ՏՈՐՈՍՅԱՆ

Начальник 1-ого отдела Контрольной службы Президента РА,  
доцент кафедры „Экономической теории” АГЭУ,  
доктор экономических наук

### *Динамика доходов и потребительских расходов населения РА и уровень бедности.*

В статье на основе анализа богатого статистического материала исследована динамика доходов и расходов населения РА и сформировавшийся уровень бедности в результате рыночных преобразований в республике. С этой целью подробно проанализированы изменения в структуре денежных доходов населения, потребительских расходов домашних хозяйств республики и сделан вывод о восстановлении решающей роли оплаты труда и необходимости усиления государственного регулирования в этой области.

С этой целью раскрыты существующие отклонения среднемесячной номинальной заработной платы как в территориальном разрезе, так и по половому признаку, а также основные причины поляризации общества на богатых и бедных.

В комплексе рассмотрено влияние указанных процессов на динамику показателей бедности.

**Ключевые слова:** доходы, расходы, бедность, заработка плата, оплата труда, территория, уровень жизни.

## ARTSRUNI TOROSYAN

Head of the First Desk of the Presidential Oversight Service of the RA,  
Associate Professor at the Chair of „Theory of Economics” at ASUE,  
Doctor of Economics

*Incomes and Consumer Spendings Dynamics of the RA Population and the Poverty Level.*— On the basis of vast statistical data the dynamics of incomes and expenses of the population and the poverty level formed during market reforms were considered in this article. For this purpose a comprehensive analysis of changes in populations' monetary income and changes in consumer spendings of households was carried out. Based on the latter, a conclusion was derived related to the decisive role in the recovery of labor remuneration and the need of strengthening government regulation in this sphere.

According to the above mentioned, a significant deviation from the average monthly nominal wages was revealed both from territorial and gender standpoints and also main reasons of population's polarization from rich to poor were discussed.

The impact of these processes on the dynamics of poverty indicators was considered on the whole.

**Key words:** income, expenses, poverty, wages, labor remuneration, territory, living standard.

# ԱԿՐՈՏՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



## ՔԱՐԻԿ ՎԱՐՂԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ղոցենսու,  
տնտեսագիտության թեկնածու

## ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ղոցենսու,  
տնտեսագիտության թեկնածու

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդվածում վերլուծվել է «Հ տնտեսության վերջին տարիների մակրոտնտեսական իրավիճակը «հոլանդական հիվանդության» հակվածության տեսանկյունից: Ներկայացնելով «հոլանդական հիվանդության» բնորոշ գծերն ու բնութագրիչները՝ հեղինակները շեշտու դրել են «Հ տնտեսության ճյուղային կառուցվածքի, դրա փոփոխությունների և մասնավոր տրանսֆերտներից կախվածության վրա:

**Հիմնաբառեր.** հոլանդական հիվանդություն, Գրոնինգենի էֆեկտ, տնտեսական տատանումներ, մասնավոր տրանսֆերտներ, տնտեսության ճյուղային կառուցվածք

Համաշխարհային տնտեսության դինամիկությունը, տնտեսական տատանումների հաճախացումը, համաշխարհային նոր ճգնաժամի սպասումները տնտեսական քաղաքականության արդյունավետ միջոցառումների իրականացման մշտական լարված ռեժիմ են պարտադրում ազգային տնտեսական իշխանություններին, ինչի արդյունքում առանձին երկրների տնտեսական զարգացման խնդիրներն ազգային օրակարգից վերաճում են համընդհանրականի: Դրանց լուծնանն են ուղղվում երկրների և հատկապես կառավարման համաշխարհային ինստիտուտների համախմբված ջանքերն ու ռեսուրսները: Աշխարհում զարգացման օրակարգերը ձևավորվում են այն մո-

տեցմամբ, որ բոլոր երկրների համար առաջընթացի հստակ և համընդհանուր կիրառելի բանաձևեր գոյություն չունեն, և որ իրական սահմանափակումների աշխարհում միայն նոր գաղափարներն են, որ կարող են ապահովել շարունակական տնտեսական աճ: Այս համատեքստում զարգացման հարացույցը որպես առաջընթացի շարժիչներ է դիտարկում գիտելիքի և նոր գաղափարների կուտակումը, դրանց առևտրայնացումն ու տարածումը, յուրացումն ու արդյունավետ կիրառումը:

Համաշխարհային տնտեսությունում վերափոխումները, այն է՝ համընդգրկուն տնտեսական միջավայրում երկրների, տնտեսական ու քաղաքական միավորումների դերերի նոր որակի վերաբաշխումներն ու նոր բնույթի ուժային կենտրոնների առաջացումը, զարգացող երկրների դերի աճը, տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերի ծայրաստիճան սրումը, համաշխարհային գործընթացների հակակշռումը, տարածաշրջանային միասնացման միավորների աճող ազդեցությամբ, ձևակերպում են ՀՀ տնտեսական զարգացման օրակարգը՝ պահանջելով նախնառաջ նոր պայմաններում երկրի կարողությունների հստակ գնահատում, ռեսուրսների նպատակային ուղղորդում ու արդյունքին կողմնորոշված կառավարում, արտաքին ցնցումներին դիմակայելու կայուն երաշխիքների ձևավորում:

Գաղտնիք չէ, որ մակրոտնտեսական գործընթացներն ու ցուցանիշները փոխկապված են, և ցանկացած ներքին ու արտաքին տնտեսական ցնցում դրական կամ բացասական ազդեցություն է ունենում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա, որը, սակայն, միշտ չէ, որ արտահայտվում է անմիջականորեն՝ նույն ժամանակահատվածում:

Վերջին տասնամյակում ՀՀ տնտեսությանը բնորոշ է մի իրավիճակ, երբ պաշտոնական վիճակագրությունը հաղորդում է տնտեսության այս կամ այն ոլորտում արկա հաջողությունների ու անգամ աճի մասին /մինչև համաշխարհային ճգնաժամը՝ երկնիշ, հետո՝ աստիճանական ու դանդաղ տեմպերով/, սակայն բազմաթիվ մարդիկ ու որոշակի կազմակերպություններ, մեղմ ասած, հազիվ են «ծայրը ծայրին» հասցնում: Այս հակասական երևույթի պատճառները փորձենք վերլուծել մասնագիտական գրականության մեջ հայտնի տնտեսական մի երևույթի տեսանկյունից, որը ստացել է «հոլանդական հիվանդություն» (Գրոնինգենի Էֆեկտ) անվանումը, և պարզել, թե կարո՞ղ է Հայաստանի նման փոքրածավալ ռեսուրսներ ունեցող երկիրը վարակված լինել այս չարաբաստիկ հիվանդությամբ, և արդյոք մեր երկրի տնտեսությանը բնորո՞շ է դրա որևէ հատվածի չհաշվեկշռված, անհամանասնական աճի երկարաժամկետ բացասական ազդեցությունը տնտեսության մյուս ոլորտների վրա, կամ արդյոք երկրի տնտեսության վրա բացասաբա՞ր է ազդում արտաքին աշխարհի տնտեսական իրավիճակի փոփոխություններով պայմանավորված որևէ տնտեսական գործընթաց:

«Հոլանդական հիվանդություն» անվանումն ստացած տնտեսական երևույթի ձևավորման պատմությունն այսպիսին է. 1960-ական թվականներին Գրոնինգենում հայտնաբերվեց Արևմտյան Եվրոպայում բնական զագի ամենախոշոր հենքավայրը: Այս անսպասելի հարստության ոչ ճիշտ վերաբաշխման հետևանքով մշակող արդյունաբերությունն արագ անկում ապրեց: Գների աճի պատճառով տեղական արտադրանքը մրցունակ չէր, մեծացել էր ներմուծումը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Racquel Джесси**, High Quality Content by WIKIPEDIA articles, „Голландская болезнь“ (Эффект Гронингена) [http://economic\\_mathematics.academic.ru/1206/Голландская\\_болезнь\\_экономики](http://economic_mathematics.academic.ru/1206/Голландская_болезнь_экономики)

«Հոլանդական հիվանդությունը» ցայտուն դրսերվեց Կոլումբիայում, երբ արտահանվող ապրանքների գների բարձրացումն ուղեկցվեց դրանց ծավալների կտրուկ աճով: Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում (Բրազիլիա, Պերու) սուրճի տնկիների ցրտահարման և Գվատեմալայի երկրաշրջի պատճառով սուրճի առաջարկն աշխարհում 1975 թ. խիստ կրծատվեց, որի հետևանքով գները բարձրացան շուրջ 5 անգամ: Այդ հաճախանքից օգտվելով՝ Կոլումբիան 1975–1981 թթ. սուրճի արտադրությունն ավելացրեց 76%-ով, արտահանման հասույթն այդ ընթացքում աճեց 3 անգամ, իսկ դրայի կուրսը նվազեց 2 անգամ: Վերոնշյալի հետևանքով էականորեն փոխվեց Կոլումբիայի արտահանման կառուցվածքը: Արտահանվող բոլոր ապրանքների ծավալները նվազեցին 2.5–8%-ով, և միայն սուրճինն ավելացավ 6.7%-ով: Դուրսնման նման էֆեկտն ինքնին «հոլանդական հիվանդություն»՝<sup>2</sup>, երևոյթ, որը բնութագրվում է համաշխարհային շուկայում հումքի գների բարձրացմամբ, որա արտահանման ծավալների աճով, երկիր ներհոսող կապիտալի ավելացմամբ, ազգային արժույթի փոխանակային կուրսի բարձրացմամբ, տնտեսության ոչ հումքային հատվածի կրծատմամբ<sup>3</sup>:

Վերջին ֆինանսատեսական ճգնաժամին նախորդող տարիներին՝ 2002–2008 թթ., ՀՀ-ում ծևավորված տնտեսական աճի մողելը, կարելի է ասել, հիմնված էր արտաքին պաշտոնական ֆինանսավորման՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների, պաշտոնական և ոչ տրանսֆերտների հոսքերի վրա, որոնց ծավալները տարեցտարի աճում էին: Տնտեսական աճի տեմպն իր առավելագույն մակարդակին հասավ 2003 թվականին՝ 14.0%:

Այդ ժամանակահատվածում, ինչպես նաև 2009 թ. հաջորդող տարիներին տնտեսական աճի տեմպերը ՀՀ-ում ավելի բարձր էին, քան համաշխարհային տնտեսությունում, մասնավորապես՝ 2002–2008 թթ. միջինում գրանցվեց իրական ՀՆԱ տարեկան 11.6% աճ: Տնտեսության գրեթե բոլոր հատվածները նպաստեցին 2002–2008 թթ. ընթացքում մեծացող միջին աճին (11.6%), ինչը զգալի կառուցվածքային տեղաշարժերի էր հանգեցրել ՀՆԱ կազմում: Հատկապես նկատելի էր շինարարության աճի բարձր տեմպը, որն ապահովել էր 2008 թ. ՀՆԱ աճի 39.1%, և ՀՆԱ կառուցվածքում դրա տեսակարար կշիռը հասել էր մինչև 25.3%-ի:

Աճի և զարգացման նման միտումների շնորհիվ ՀՀ-ն Համաշխարհային բանկի դասակարգման սանդղակում ցածր եկամտով երկրների խմբից տեղափոխվեց միջին ցածր եկամուտ ունեցող երկրների խումբ:

2008 թ. ՀՀ-ում տարեկան աճի տեմպը նվազեց և կազմեց ընդամենը 6.9%: Այնուհանդերձ, այդ տարում երկրում ստեղծված նոր արդյունքի կամ եկամուտների մակարդակը, նախորդող տարիների շարունակական աճի արդյունքում, իրական արտահայտությամբ ավելի քան կրկնակի գերազանցեց 2002 թվականի, մոտ 3 անգամ՝ 1995 թվականի և մոտ 1.7 անգամ՝ 1990 թվականի մակարդակները:

Նախաձգնաժամանակին շրջանում հանրապետությունում ՀՆԱ աճը հիմնականում ապահովվել է տնտեսության բազային 5 ճյուղերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և առևտուր) ծավալների ավելացման հաշվին:

2003 թ. Վերջին մինչև 2008 թ. սկիզբը դրամն արժնորվեց 48%-ով: Դո-

<sup>2</sup> Տես <http://dictionary-economics.ru/word/Голландская-болезнь>

<sup>3</sup> Տես <http://ecsocman.hse.ru/text/19278955/>

լարի գինը 584 դրամից հասավ 304-ի. դրա պատճառներից էին արտերկրից ՀՀ եկող տրանսֆերտների աճն ու արտարժույթի առաջարկի ավելացումը, որի հետևանքով արդյունաբերությունը հայտնվեց խոր զգնաժամի մեջ: Արդյունաբերության և գյուղատնտեսության գումարային տեսակարար կշիռը 2003 թ. 44%-ից կրծատվելով՝ 2008-ին կազմեց 29.6%: Արդյունաբերության մրցունակության նակարդակի աստիճանական նվազման և արտահաննան հարաբերական անկման պայմաններում երկրի տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժը շինարարության և ծառայությունների ոլորտներն էին, որոնց գումարային տեսակարար կշիռը ՀՍԱ-ում 2003 թ. 50.1%-ի համեմատությանք աճելով՝ 2007 և 2008 թվականներին հանապատասխանաբար կազմեց 56.4% և 59.3%<sup>4</sup>:

Համաշխարհային ֆինանսատնտեսական զգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա արտահայտվեց 2008 թ. չորրորդ եռամյակից: 2009 թվականին Հայաստանում գրանցվեց աշխարհի վատագույն տնտեսական անկումներից մեկը՝ 14.1%: Անվանական ՀՍԱ-ն, որը, մինչև 2008 թ. ներառյալ, պահովել էր կայուն աճ, 2009 թ. կազմեց 2008 թ. անվանական ՀՍԱ ընդամենը 88.05%-ը կամ 3141.7 մլրդ դրամ: Զգնաժամն իր ազդեցությունն ունեցավ տնտեսության գրեթե բոլոր խոշոր ճյուղերի վրա: ՀՀ ՀՍԱ նշանակալի կրծատումը հիմնականում բացատրվում էր շինարարության ճյուղի աննախաղեա մեծ անկումով՝ գրեթե 42%, որը պայմանավորեց ՀՍԱ անկման 74.5%-ը և ՀՍԱ կառուցվածքում վերջինիս տեսակարար կշիռը նվազեցրեց մինչև 18.6%-ով: Մեծ էր անկումը նաև նշակող արդյունաբերության (8.8%) և էներգետիկայի (13.3%) ենթաճյուղերում: Տնտեսության մյուս ճյուղերում հնարավոր եղավ խուսափել տնտեսական անկման մեջ դրսնումներից: Առևտորի ոլորտը նվազեց ընդամենը 4%-ով, իսկ գյուղատնտեսությունը՝ 0.1%-ով<sup>5</sup>:

ՀՀ Կառավարությունը մշակեց և ներդրեց հակաձգնաժամային միջոցառումների ընդգրկում փաթեթ, որը բոլոր տվեց նվազեցնել համաշխարհային զգնաժամի ազդեցությունը ՀՀ ողջ տնտեսության ու սոցիալական ծանր հետևանքները բնակչության կենսամակարդակի վրա և արդեն 2010 թ. երկրորդ կեսից զսպել անկումը: Համարվում է, որ զգնաժամը դադարեց 2010 թ., եթե համաշխարհային տնտեսությունը, այդ թվում նաև Հայաստանը, որտեղ գրանցվեց 2.2% տնտեսական աճ, մտան վերականգնման փուլ: 2010 թ. տնտեսական աճի տեմպը մեր երկրում կազմեց 2.2%, հաջորդող տարիներին, հանապատասխանաբար՝ 4.7, 7.2, 3.5%<sup>6</sup>:

2014 թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը 2013 թ. նկատմամբ կազմեց 103.9%, իսկ տնտեսական աճը՝ 3.4%, թեև 2015 թ. բյուջեի նախագծում դրված է 4.1% տնտեսական աճը՝ որպես հաշվարկմերի ուղենիշ:

Անվանական ՀՍԱ-ն 2013-ին կազմեց 2009 թ. 136.0%-ը: 2013 թ. ՀՍԱ դեֆյատորը նախորդ տարվա նկատմամբ կազմեց 103.2%:

<sup>4</sup> Հաշվարկները կատարված են ՀՀ ԱՎԾ հրապարակումների հիմնա վրա. Հայաստանի Համարապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010, 2011, 2013, 2014 թվականի հունվար-դեկտեմբերին: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1638>

<sup>5</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, էջ 30: [http://www.armstat.am/file/article/5.poverty\\_2014a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/5.poverty_2014a_2.pdf)

<sup>6</sup> Տես <http://www.avenueconsulting.am/resources/avenue//uploads/pdf/db29443b5b5dac544a48d5ecfdabac.pdf>

## Աղյուսակ 1

Տնտեսության հիմնական ոլորտների աճը<sup>7</sup>


Ցուցանիշ	2010–2013 միջին	2010–2013 բաժին*	2013 տարեկան աճ	2013-ը 2008-ի նկատմամբ
ՀՆԱ (իրական)	4,4	4,4	3,5	101,9
Գյուղատնտեսություն	3,0	0,7	7,2	119,1
Արդյունաբերություն	8,6	1,3	5,4	129,4
Ծինարարություն	-4,0	-0,6	-10,8	49,6
Առևտուր և ծառայություններ	6,0	2,5	6,2	121,4
Զուտ հարկեր և ՖՄՎԾ**	4,2	0,4	-0,9	88,9

\* Մասնակցությունը տնտեսական աճին, սովորապես կեն

\*\* Ֆինանսական միջնորդության անուղղակի չափով՝ ծառայություններ

2009-ից համաշխարհային տնտեսությունն աճում է դանդաղ և նվազող տեմպերով: 2010–2012 թթ. համաշխարհային թողարկման միջին տարեկան աճը կազմեց գրեթե 4%, իսկ 2013-ին՝ 3%:

2013 թ. զարգացած երկրներում տնտեսական աճի տեմպը եղել է 1.3%, 2011–2013 թթ. միջին տարեկան 1.5%-ի փոխարեն, Եվրոզուսում, համապատասխանաբար՝ -0.5 և 0.1%, զարգացող երկրներում՝ 4.7 և 5.3%, ՀՀ-ում՝ 3.2 և 5.0%<sup>8</sup>:



Գծապատկեր 1. Համաշխարհային տնտեսության և ՀՀ տնտեսական աճի տեմպերը 2009–2013 թթ.<sup>9</sup>

2013 թ. միջին անվանական անսական աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ աճել է 4.1%-ով: 2014 թ. միջին անվանական անսական աշխատավարձը կազմել է 171 հազար դրամ: Քանի որ 2012–2014 թթ. քննարկվող ցուցանիշը ինչոր հմաստով համարվելի չէ նախորդ տարիների նույն ցուցանիշի հետ, այդ պատճառով էլ համեմատությունները իրական պատկերը բացահայտել չեն կարող:

<sup>7</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ:

<sup>8</sup> Տես նոյն տեղը, էջ 4:

<sup>9</sup> Հայաստանի տնտեսական զեկույց: Եվրասիական ինտեգրացիան և Հայաստանի առևտուրը, 2014, էջ 4:

**Աղյուսակ 2****Տնտեսական աճի տեսայի և մակրոտնտեսական  
հիմնական ցուցանիշների շարժմանը<sup>10</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2009</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3141,7	3460,2	3777,9	4000,7	4272,9
Իրական ՀՆԱ աճ (%)	-14,1	2,2	4,7	7,2	3,5
Գործազրկության մակարդակ (%)	18,7	19,0	18,4	17,3	16,2
Միջին աճական անվանա- կան աշխատավարձ (դրամ)	96019	102652	108092	113163/ 140739*	146524
Միջին տարեկան գնաճ (%)	3,4	8,2	7,7	2,6	5,8

\* Ցուցանիշը հաշվարկված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

2014 թվականին անվանական ՀՆԱ-ն կազմել է 4525875,0 մլն դրամ՝ շուրջայական գներով և 2013 թվականի նկատմամբ աճել է 3,4%-ով: Իրական ՀՆԱ աճը 2013 թվականին կազմեց 3.5%, 2014 թ.՝ 3.4%: Դա զիջում է 2013 թ. հոկտեմբերին ԱՄՀ-ի կողմից Հայաստանին տրված գնահատականին, որը կազմում էր 4.6%, զիջում է նաև 2013 թ. պետական բյուջեի հիմքում դրված 6.2% ծրագրային ցուցանիշին և 2014 թ. պետական բյուջեով 2013 թ. աճի 4.1% գնահատականին:

Տնտեսական աճի ուսումնասիրության տեսանկյունից շատ կարևոր է վերլուծել բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ փոփոխությունները քննարկվող ժամանակահատվածում: 2013 թվականի արդյունքներով ՀՆԱ-ն, մեր երկրի բնակչության մեկ շնչի հաշվով, կազմել է 1413.9 հազար դրամ (3452 ԱՄՆ դոլար կամ 2595 եվրո), իսկ 2014 թ.՝ 3610 ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ 2012 թվականին ՀՆԱ-ն, մեր երկրի բնակչության մեկ շնչի հաշվով, կազմել է 1322.9 հազար դրամ (3293 ԱՄՆ դոլար կամ 2544 եվրո), 2011 թվականին՝ 3363 ԱՄՆ դոլար, նախաձգնաժամային 2008 թվականին՝ 3606 ԱՄՆ դոլար:

**Աղյուսակ 3****ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով<sup>11</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>2006</b>	<b>2007</b>	<b>2008</b>	<b>2009</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>
ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	824,6	976,1	1103,3	968,5	1062,7	1252,8	1322,9	1413,9
ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1982,1	2853,3	3606,1	2666	2844	3363	3293	3452
ՀՆԱ ֆիզ. ծավալի համարիվ, 1 շնչի հաշվով, նախորդ տարվա նկատմամբ (%)	113,1	113,6	106,7	85,6	101,8	104,3	106,9	103,6


«Հայաստանի Հանրապետության 2012–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով» նախատեսվում է, որ 2025 թվականին, 2011 թվականի համեմատությամբ, մեր երկրի բնակչության մեկ շնչի հաշվով

<sup>10</sup> Աղյուսակը՝ ՀՀ ԱՎԾ տարեգրքեր՝ 2013, 2014:

<sup>11</sup> ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2011, 2012, 2013, 2014:

ՀՆԱ-ն գրեթե կեռապատկվի՝ կազմելով շուրջ 10000 ԱՄՆ դոլար<sup>12</sup>:

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ համարժեքային գնողունակությամբ (PPP) ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի երկրներից առաջ է միայն Վրաստանից: Այդուհանդերձ, 2007–2013 թթ. ընթացքում Վրաստանի ցուցանիշն աճել է 31.9%-ով, Հայաստանինը՝ միայն 16.7%-ով: Աղրբեջանի նույն ցուցանիշն աճել է 40.2%-ով, ԱՊՀ միջինը՝ 22.0%-ով: ԱՊՀ երկրների միջինը գերազանցում է Հայաստանի ցուցանիշը 2 անգամ: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 7-րդ տեղը: Հայաստանի ցուցանիշը զգալիորեն ցածր է նաև Մաքսային միության երկրների ցուցանիշից: 2014 թ. ՌԴ-ում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 14.4 հազար ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում՝ 3610 ԱՄՆ դոլար՝ 2013 թ. ցուցանիշը գերազանցելով 3.7%-ով<sup>13</sup>:



**Գծապատկեր 2<sup>14</sup>. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ համեմատական պատկերը հանրաժեքային գնողունակությամբ արտահայտված՝ ԱՄՆ դոլար (բայց ԱՄՀ տվյալների բազայի)**

Ցանկացած երկրի տնտեսության մասին նախնական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել տնտեսության ճյուղային կառուցվածքը: Չնայած այն փաստին, որ վերջին տարիների ընթացքում իրականացվել է տնտեսության կառուցվածքային ծևափոխմանն ուղղված տնտեսական քաղաքականություն, միևնույն է, ՀՆԱ կառուցվածքում շարունակում են գերակայել ցածր արտադրողականությամբ բնագավառները: ՀՆԱ-ում բարձր արտադրողականությամբ ոլորտը՝ շինարարությունը, ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո, իր տեղը զիջել է ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներին:


Համաշխարհային ճգնաժամն իր բացասական ազդեցություններով հանդերձ՝ իրակաց տնտեսության կառուցվածքային փոփոխություններ և աճի աղբյուրների բազմազանեցում: Աճի աղբյուրները տնտեսության ոչ արտահանելի հատվածից տեղափոխվեցին արտահանելի հատվածներ՝ ստեղծելով հետագա աճի գեներացման առավել կայուն հիմքեր: 2009-ից ի հայտ եկած ՀՆԱ կառուցվածքային փոփոխությունների միտումները պահպանվում

<sup>12</sup>Տե՛ս <http://b24.am/economy/47170.html>

<sup>13</sup>Տե՛ս <http://www.ereport.ru/stat.php?razdel=country&count=armenia>, <http://armenpress.am/arm/news/796513/hayastanum-mek-shnchi-hashvov-hna-n-atchel-e-37-tokosov.html>

<sup>14</sup>«Հեղնոմիկայի նախարարություն, Տնտեսական տեղեկագիր - 2013, էջ 7:

Են: Այսպես՝ արդյունաբերությունը 2008 թ. համեմատությամբ թեև գրանցել է 4%-ային կետով բարելավում, միևնույն է, գտնվում է իր հնարավոր պոտենցիալ մակարդակից շատ ցածր հարթությունում, զյուղատնտեսության բաժինն ավելացել է 3.0, իսկ ծառայություններինը՝ 6.1 տոկոսային կետով: Այդ աճը զուգակցվել է շինարարության տեսակարար կշռի կրծատմամբ (14.8 տոկոսային կետ):




Գծապատկեր 3. ՀՆԱ կառուցվածքը (%)<sup>15</sup>

Հատ կարևոր է նաև վերլուծել տվյալ ճյուղի ներսում տիրող իրավիճակ՝ մասնավորապես արդյունաբերության մեջ, քանի որ դա մեր տնտեսության կարևորագույն հիմնային է համարվում: 2014 թվականին ՀՆԱ աճին չեն նպաստել արդյունաբերության ոլորտի գործունեության բոլոր տեսակները, քանի որ այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են հանքագործական արդյունաբերությունը, բաց հանքերի շահագործումը, էլեկտրականության, գազի մատակարարման տեսակները, որոնք ՀՆԱ-ում զգալի կշռու ունեն՝ միասին 7%, չեն կարողացել ապահովել աճ: Հանքագործական արդյունաբերությունը գրանցել է տնտեսական անկում 5,8%-ով՝ 0,1%-ով միայն նպաստելով ՀՆԱ աճին: Էլեկտրականության, գազի մատակարարման ոլորտներում գրանցվել է 15,1%-ով տնտեսական անկում<sup>16</sup>:

Հանքագործական արդյունաբերության ծավալը վերջին 5 տարիների ընթացքում ավելացել է շուրջ 2 անգամ՝ 2014 թ. արդյունաբերության մեջ կազմելով 16%: Այս հանգամանքն ինքնին մտահոգիչ է, քանի որ հանքահումքային արդյունաբերության ծավալների կտրուկ ավելացումը կարող է հանգեցնել մակրոտնտեսական ցնցումների՝ տնտեսության մրցունակության անկման պատճառով: Պատկերը մտահոգիչ է նաև վերջին 5 տարիներին գրանցված արտահանման կառուցվածքն ուսումնասիրելիս: 2004-ից հանքահումքային արտադրանք ապրանքախմբի տեսակարար կշռը ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում անընդհատ աճել է՝ 2014 թ. հասնելով 26%-ի:

<sup>15</sup> Գծապատկերը կազմված է ՀՀ ԱԿԾ 2008–2014 թթ. տարեգրերի տվյալների հիման վրա:

<sup>16</sup>Տես <http://www.aravot.am/2015/03/05/548379/>



**Գծապատկեր 4. Արդյունաբերության կառուցվածքը 2014 թ.<sup>17</sup>**

2013 թ. հանքահումքային արտադրանքի բաժինը արտահանման կառուցվածքում կազմել է 34.8%: 2009 թ. այս նույն ցուցանիշը 20.5% է: Բերված տվյալները վկայում են, որ ՀՀ տնտեսությունը չափազանց մեծ կախում ունի միջազգային շուկայում ձևավորվող գունավոր մետաղների գներից: Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամի տարիներին միջազգային շուկայում հանքահումքային ապրանքների պահանջարկի կրծատման պատճառով դրանց գներն իջան. եթե Լոնդոնի բորսայում 1 տ պղնձի գինը 2002 թ. 1400 ԱՄՆ դոլար էր, 2004 թ.՝ 3000, 2005 թ.՝ 4000, 2008 թ.՝ 8414 ԱՄՆ դոլար, ապա 2008 թ. վերջին արդեն՝ 3717 ԱՄՆ դոլար<sup>18</sup>: Արդյունքում՝ ՀՀ-ից արտահանվող հանքահումքային արտադրանքի ծավալները կրծատվեցին, իսկ դրանից ստացվող եկամուտները կտրուկ նվազեցին: 2007 թ. պղնձի և դրանից հրերի արտահանումը կազմել է 74.7 մլն դոլար, 2009 թ.՝ 65.3 մլն դոլար, այսինքն՝ նվազել է 14.4%-ով<sup>19</sup>, իսկ 2009 թ. ՀՀ պետական բյուջեն, 2008 թ. համենատությամբ, պակաս է հավաքագրել 98.7 մլրդ դրամի հարկեր<sup>20</sup>: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այն երկրների տնտեսությունները, որոնց արտահանման կառուցվածքում մեծ կշիռ ունի հանքագործական արդյունաբերությունը, չափից ավելի խոցելի են, քանի որ վարակված են «հոլանդական հիվանդությամբ», համաշխարհային անբարենպաստ գարգացումների ռեաքտում առավել մեծ չափով են հակված կանգնելու լուրջ խնդիրների առջև,<sup>21</sup> հետևաբար՝ անհրաժեշտություն և իրականացվող քաղաքականության առաջնահերթություններից պետք է դառնա արտահանման բազմազանեցումը:

«Հոլանդական հիվանդության» հաջորդ ախտանիշը, որը բնորոշ է ՀՀ տնտեսությանը, տրամադրերտային մեծածավալ հոսքերն են: Առաջին հայացքի թվում է, թե դա պատմականորեն ձևավորված մի յուրահատկություն է,

<sup>17</sup>Գծապատկերը կազմված է ՀՀ ԱՎԾ 2014 թ. տարեգրի տվյալների հիման վրա:


<sup>18</sup>Տես Վ. Հարությունյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաձգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2009, էջ 25:

<sup>19</sup>Տես Հայաստանի վիճակագրական տարեգիր 2010, ՀՀ ԱՎԾ, Եր., 2010, էջ 467:

<sup>20</sup>Տես Տարեկան հաշվետվություն 2010, ՀՀ ԿՍ ՊԵԿ, այդուսկ 1, էջ 7:

<sup>21</sup>Տես Corden W., Booming Sector and Dutch Disease Economics: Survey and Consolidation. Oxford, Economic Papers, 1984, vol. 36:

որն ունի միայն դրական ազդեցություն Հայաստանի մակրոտնտեսական հրավիճակի վրա. գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրում աշխատանքային միզգրացիան դեպի երկիր փողի մեծածավալ հոսքեր ապահովելու միջոց է: Սակայն ավելի համապարփակ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, դրական մի շարք երևոյթների հետ մեկտեղ, դա ունի զգալի բացասական ազդեցություն: Արտերկրից եկող տրանսֆերտային հոսքերը, նպաստելով սոցիալական լարվածության թուլացմանը և զնողումակ պահանջարկի աճին, միաժամանակ ստեղծում են, այսպես կոչված, «հոլանդական հիվանդության» էֆեկտ, երբ «հեշտ» եկամուտների պատճառով մարդկանց մի մասը կորցնում է հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ, իսկ տնտեսությունն արտաքին ցնցումներից ուղղակի կախվածության մեջ է ընկնում: 2000–2008 թթ. գուտ մասնավոր տրանսֆերտներն ունեցել են անընդհատ աճի միտում՝ 85.6 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1062.4 մլն դոլարի<sup>22</sup>: 2009 թ. դրանք նվազել են 69%-ով և կազմել 733.2 մլն դոլար: 2010 թ. համաշխարհային ճգնաժամի հետևանքներով պայմանավորված՝ գուտ տրանսֆերտները դարձալ նվազել են և կազմել 477.1 մլն ԱՄՆ դոլար: Ըստ ԱՄՀ փորձագետների գնահատումների՝ ԱՊՀ երկրներ մասնավոր տրանսֆերտների ներհոսքի 10% աճը, միջին հաշվով, հանգեցնում է ՀՆԱ 0.3% աճի, ընդորում, նաև ներմուծող երկրների ՀՆԱ-ի վրա ազդեցությունը 0.4% է<sup>23</sup>:



**Գծապատկեր 5. Զուտ անձնական տրանսֆերտներ (մլն ԱՄՆ դոլար)<sup>24</sup>**

2014 թվականի հունվար–դեկտեմբերի ընթացքում ՀՀ բանկային համակարգով ֆիզիկական անձանց ոչ առևտության նպատակով իրականացված դրամական փոխանցումների ներհոսքը կազմել է 1728.6 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 339.6 մլն դոլար<sup>25</sup>, զուտ անձնական տրանսֆերտները՝ 713.0 մլն ԱՄՆ դոլար<sup>26</sup>:

<sup>22</sup>Տե՛ս <http://www.mminfin.am/>, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակային):

<sup>23</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2010, Եր., 2011 թ., էջ 17:

<sup>24</sup>Տե՛ս ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակային), <http://www.mfe.am/index.php?cat=69&lang=1>

<sup>25</sup>[https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/PRESS%20RELEASE-2014Q4.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/PRESS%20RELEASE-2014Q4.pdf)

<sup>26</sup>ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակային), <http://www.mfe.am/index.php?cat=69&lang=1>

Հետձգնաժամային փուլում նկատվում է զուտ անձնական տրանսֆերտ-ների զգալի աճ. 2014 թ., 2009-ի նկատմամբ՝ 42.9%: Սակայն 2014 թ., 2013 թ. համեմատությամբ, քննարկվող ցուցանիշը նվազել է ավելի քան 9%-ով: Ուռ-սաստանը Հայաստանի հիմնական տրանսֆերտային դոնորն է, այդ երկրին բաժին է ընկնում մեր տրանսֆերային շրջանառության մոտ 85%-ը (այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ գործնականում չի փոխվել): Ուռսաստանից տրանսֆերտների ածին նպաստել են ՀՀ-ից արտագաղթն այդ երկիր, արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացումը /հայ աշ-խատանքային միգրանտների մոտ 90%-ը բաժին է ընկնում ՌԴ-ին/: Ուռսաս-տանում երկար ժամանակ՝ ընդհուպ 2012 թ., ֆինանսական համեմատաբար բարվոր վիճակը պայմանավորված էր նաև միջազգային շուկայում հումքի բարձր գներով: Տրանսֆերտների ներհոսքի և արտահոսքի կառուցվածքում Ուռսաստանի մասնաբաժինը 2014-ին համապատասխանաբար կազմել է 72% և 28%, ընդ որում, ՌԴ տեսակարար կշիռը ներհոսքի կառուցվածքում 74%-ից, ըստ տարեկան հաշվարկների, նվազել, մինչդեռ արտահոսքի գծով մնացել է նույնը: Այսպես՝ Ուռսաստանից Հայաստան ֆիզիկական անձանց տրանսֆերտների ներհոսքը 2014 թվականին կազմել է 1,6 մլրդ դոլար (տա-րեկան անկումը՝ 6%), իսկ արտահոսքը Հայաստանից Ուռսաստան՝ 253 մլն դոլար (տարեկան աճը՝ 8%), ինչի արդյունքում զուտ ներհոսքը կազմել է 1.3 մլրդ դոլար՝ տարեկան հաշվարկներով նվազելով 13%-ով<sup>27</sup>: ՌԴ-ից եկող տրանսֆերտների կրատումը կապված է այդ երկրի տնտեսական աճի տեմ-պերի նվազման, Վերջինիս նկատմամբ հաճախարհային հանրության կող-մից կիրառվող պատժամիջոցների, նավթի գների անկման և ռուսական ռուբ-լու արժեգրկման հետ: Ինչպես Ուռսաստանի Դաշնությունից, այնպես էլ այլ երկրներից ստացված անձնական տրանսֆերտները մեծ մասամբ օգտա-գործվել են սպառման նպատակով: Այլ հավասար պայմաններում, եթե նույ-նիսկ ընդունենք, որ զուտ անձնական տրանսֆերտների ծավալը չի փոփոխ-վում, ապա միայն ռուսական ռուբլու արժեգրկման հետևանքով մեր տնտե-ստությունը մեծ վնասներ է կրում՝ բնակչության գնողունակության նվազում, չգնված, չսպառված ապրանքներ, այսինքն՝ չխթանված ամբողջական պա-հանջարկ և չարտադրված ամբողջական արդյունք փոխանցման մեխանիզ-մով: Այս ամենը հանգեցնում է բնակչության կենսամակարդակի անկմանն ու աղքատության խորացմանը: Հայաստան ուղղվող տրանսֆերտների գծով երկրորդ տեղում ԱՄՆ-ն է՝ 7,4% (2013-ի 6.6%-ի փոխարեն) կամ 156 մլն դո-լար, տարեկան աճը՝ 2%: Այս երկիրը երկրորդ տեղն է զբաղեցնում նաև Հա-յաստանից հոսող տրանսֆերտների գծով՝ 16.7% (2013-ի 15.7%-ի փոխա-րեն) կամ 151 մլն դոլար, տարեկան աճը՝ 13%: Երրորդ տեղում գերմանիան է՝ 1.6% (2013-ի 1.1%-ի փոխարեն) կամ 34.5 մլն դոլար, տարեկան աճը՝ 35%, իսկ արտահոսքի գծով երրորդ տեղում է Չինաստան՝ 9,2% (2013-ի 10,1%-ի փոխարեն) կամ 82.6 մլն դոլար, տարեկան անկումը՝ 3.5%: Ըստ երկրների՝ Հայաստան ուղղվող տրանսֆերտների հոսքը 2014 թվականին կրատվել է նաև Խաղաղիայից, Թուրքիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Չինաստանից և Ուկրաինայից, ընդ որում, Չինաստանից՝ 34%-ով, ԱՄԷ-ից՝

<sup>27</sup> ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակա-յին), <http://www.mfe.am/index.php?cat=69&lang=1>, ՀՀ վճարային հաշվեկշիռն ըստ 2012, 2013, 2014 թթ. [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/PRESS%20RELEASE-2014Q4.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/PRESS%20RELEASE-2014Q4.pdf):

17%-ով և Ուկրաինայից՝ 13%-ով: Հայաստանից տրամադրությունը արտահոսքի գծով արձանագրվել է ծավալների անկում՝ բացառությամբ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ղազախստանի և ԽՍՀՄիայի, ընդ որում, Հայաստանից դեպի Ուկրաինա դրամական փոխանցումները նվազել են 41%-ով<sup>28</sup>: Անկողինով նշենք, որ կատարված վերլուծությունները թույլ են տալիս անելու որոշակի հետևողություններ:

- Օստարերկրյա տրամադրություններն ազգային տնտեսությունում ունեն և դրական, և բացասական կողմեր: Դրականն այն է, որ նպաստում են սոցիալական լարվածության թուլացմանը, գնողունակ պահանջարկի աճին: Բացասականն այն է, որ ստեղծում են, այսպես կոչված, «հոլուանդական հիվանդության» էֆեկտ, երբ տնտեսությունն ու սպառդական պահանջարկը կախված են լինում օտար երկրում ընթացող գործընթացներից, և եթե արտաքին աշխարհում իրավիճակը փոփոխվում է, բացասական ցնցման փոփոխությունն անմիջապես հաղորդվում է ազգային տնտեսություն, ընդ որում 3–6 ամիս տևող՝ ըստ էության, բավական կարճ, ժամանակային լազով:
- Տնտեսական իշխանությունները պետք է ձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք կթուլացնեն արտաքին բացասական գործուններից մեր երկրի տնտեսության կախվածությունը:
- Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «հոլուանդական հիվանդությունը» կարելի է «բուժել» տնտեսության և արտահանման բազմազանեցմամբ, և օպտիմալ կառուցվածքի ձևավորմամբ, մշակող արդյունաբերության նկատմամբ հովանավորչական քաղաքականության ու արտահանման սուբսիդավորման իրականացմամբ:
- Հայրենիքից չիեռանալու խթանների ստեղծումը՝ գործազրկության կրծատմանը, սոցիալական պայմանների, տնտեսական ու քաղաքական ընդհանուր մթնոլորտի բարելավմանն ուղղված քաղաքականության միջոցառումների իրականացումը նույնպես քննարկվող «հիվանդության» բուժման ձևերից է:

<sup>28</sup> Տես նոյն տեղը:

**ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Доцент кафедры "Макроэкономики" АГЭУ,  
кандидат экономических наук

**ԳԱՅՆԵ ԱՎԱԿՅԱՆ**

Доцент кафедры "Макроэкономики" АГЭУ,  
кандидат экономических наук

***Склонность экономики РА к "голландской болезни"***

— В статье проанализирована макроэкономическая ситуация РА в последние годы с точки зрения тенденции "голландской болезни". Представляя характерные черты и характеристики "голландской болезни", авторы подчеркивают зависимость отраслевой структуры экономики РА, ее изменения и зависимость экономики от денежных переводов.

**Ключевые слова:** "Голландская болезнь", эффект Гронингена, экономические колебания, частные трансферты, отраслевая структура экономики.

**QNARIK VARDANYAN**

Associate Professor at the Chair of  
"Macroeconomics" at ASUE

**GAYANE AVAGYAN**

Associate Professor at the Chair of  
"Macroeconomics" at ASUE

***The Disposition of the Armenian Economy to the "Dutch Disease"***

— The article analyzes the macroeconomic situation of Armenia in recent years in terms of the "Dutch Disease" trend. Presenting the characteristics and specifications of the "Dutch disease", the authors emphasize the dependence of economic structure, its changes and the dependence the Armenian economy on remittances.

**Key words:** "Dutch Disease", Groningen effect, economic fluctuation, private remittances, branch structure of economy.



## ԼՈՒՍԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

### ԻՐԱԿԱՆ ՓՈԽԱՐՁԵՔԸ ԵՎ ՀՀ ԱՐՏԱԿԱՆՄԱՆ ՌԴ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևորելով ՀՀ արտաքին առևտում առկա հիմնախնդիրների լուծման հրատապությունը՝ հողվածում վերլուծվել են հանրապետության արտաքին առևտում ապահովագործքը, արտահանման և ներմուծման նկարագիրն ըստ երկրների: Առևտության հաշվեկշռի առավել ընդգրկում վերլուծության համար հաշվարկվել են արտահանման և ներմուծման չափարաժինները, դրանց միջին քառակուսային շեղումները, արտաքին առևտաշղանառության կառուցվածքի համաշակության և անհաշվեկշռվածության գործակիցները: Հաշվի առնելով, որ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են մի քանի ապրանքախմբեր՝ գնահատվել է դրանց վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցության չափը:


**Հիմնաբառեր.** իրական փոխարժեք, իրական արդյունավետ փոխարժեք, արտահանման կառուցվածք, ներմուծման կառուցվածք, ապահովագործքի հաշիվ, ժառայությունների հաշիվ

ՀՀ արտաքին առևտում առկա են հիմնախնդիրներ՝ կապված արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալների, ապրանքախմբերի կենտրոնացվածության աստիճանի հետ, սակայն գերխնդիր է ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի, մասնավորապես՝ առևտության հաշվեկշռի բացասական մնացորդը, որը պետության արտաքին պարտքի աճի պատճառ է, ինչն էլ, իր հերթին, կախվածություն է ենթադրում արտաքին աշխարհից:

Վիճակագրական տվյալները<sup>1</sup> փաստում են, որ ընթացիկ հաշվի պակասությը մինչև 1998 թ. աճել է, որից հետո՝ մինչև 2004 թ. նվազել, այնուհետև ընթացիկ հաշվի պակասությն աճել է: Մասնավորապես, պակասությի

<sup>1</sup> Աղյուրը՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

ամենամեծ հավելածը՝ 217.3%, գրանցվել է 2007 թ., ամենամեծ պակասուրդն արձանագրվել է 2008 թ.: Կազմելով 1745.7 մլն ԱՄՆ դոլար, որը հիմնականում պայմանավորված է եղել նախորդ տարվա նկատմամբ առևտրային հաշվեկշռի պակասուրդի 60% աճով: 2008 թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է: 2009 թ., ճգնաժամի խորացմանը զուգահեռ, ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ կրճատվել է 23%-ով, արտահանումը նվազել է 22.4%-ով, իսկ ներմուծումը՝ 23.1%-ով: Արդյունքում՝ 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է՝ կազմելով ՀՆԱ 18%-ը:



Գծապատկեր 1. Ընթացիկ հաշվի պակասուրդի միտում 1993–2017 թթ.


Ինչպես հետխորհրդային մի շարք երկրներում, ՀՀ-ում ևս, 2010 թվականից սկսած, համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմանը զուգընթաց, արտաքին առևտրի ցուցանիշները փոքր-ինչ բարելավվել են: Այսպես՝ 2013 թ. տեղի է ունեցել արտահանման և ներմուծման դոլարային ծավալների աճ: Ըստ որում, արտահանումն աճել է 7%-ով, ներմուծումը՝ 3%-ով: 2013 թ. ՀՀ արտաքին առևտրի շրջանառությունը հասել է 7.67 մլրդ դոլարի՝ 4.1%-ով գերազանցելով 2012 թ. ցուցանիշը: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշռը կազմել է 2.2 մլրդ դոլար: 2014 թ. ՀՀ արտաքին առևտրի շրջանառությունը հասել է 8.76 մլրդ դոլարի՝ 14.2%-ով գերազանցելով 2013 թ. ցուցանիշը: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշռը 2.17 մլրդ դոլար է:

ՀՀ ներմուծման բացարձակ ծավալները ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում մշտապես գերազանցել են արտահանման ծավալները, ինչի արդյունքում առևտրային հաշվեկշռն ունի բացասական մնացորդ: Ներմուծում-արտահանում հարաբերության ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է 1997 թ. կազմելով 2.9, այնուհետև հարաբերակցությունը մինչև 2006 թ. իջել է՝ 2005-ին կազմելով 1.54, 2006–2008 թթ. աճել է՝ գրեթե հասնելով 1997 թ. մակարդակին: 2010-ից հարաբերակցությունն իջել է, և 2013-ին ներմուծումը գերազանցել է արտահանումը 1.8 անգամ, 2014-ին՝ 1.7 անգամ:

Դիտարկվող ժամանակահատվածում մշտապես արձանագրվել է արտահանման և ներմուծման ծավալների աճ, բացառությամբ 1997 թ., երբ ապրանքների և ծառայությունների արտահանումը կրճատվել է 9%-ով, 1999 թ., երբ ներմուծումը կրճատվել է 10%-ով, 2008-ին արտահանումը կրճատվել է 2%-ով: 2009 թ. արտահանումը նվազել 22%-ով, ներմուծումը՝ 23%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման աճի տեմպը հիմնակա-

նում գերազանցել է ներմուծման աճի տեմպը: 2000–2005 թթ. արտահանումը միջինում աճել է 25%-ով, իսկ ներմուծումը՝ 16%-ով: 2006–2008 թթ. ներմուծման աճի տեմպը արագացել է՝ նշված ժամանակահատվածում բնակչության եկամուտների շարունակական աճով և դրամի արժևորմանբ պայմանավորված: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, 2009 թ. արտահանման ծավալները կրծատվել են 22.4%-ով, իսկ ներմուծմանը՝ 23.1%-ով՝ պայմանավորված արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսնորման ժամանակային խզմանը: Վերլուծվող ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատությամբ, ներմուծման աճի բարձր տեմպ արձանագրվել է 2007 թ., իսկ արտահանման ամենամեծ աճի տեմպ՝ 2010-ին: 2010 թ. արտահանման ծավալները աճել են 45%-ով, իսկ ներմուծմանը՝ 14%-ով, որը բացատրվում է համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներին Կառավարության հակաձգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերած օժանդակությամբ: 2011 թ. արտահանման ծավալներն աճել են 25%-ով, ներմուծման ծավալները՝ 8%-ով, իսկ 2012 թ. արտահանումն աճել է 3.5%-ով, ներմուծումը՝ 2%-ով: Համաշխարհային տնտեսությունում պահանջարկի վերականգնման և արտահանողներին ցուցաբերած օժանդակության շնորհիվ 2013 թ. արտահանման աճման միտումը պահպանվել է, և նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 7%, ներմուծումը՝ 2,6%<sup>2</sup>:

Նշված փոփոխությունների հետ կապված՝ 2010–2014 թթ. ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդոն կրծատվել է՝ արտահանման 19% և ներմուծման 7% միջին աճի պայմաններում: 2010-ից սկսած՝ արտահանման աճի տեմպերը մշտապես գերազանցել են ներմուծման աճի տեմպերը՝ հնարավորություն զններելով աստիճանաբար մեղմացելու առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը:




Գծապատկեր 2. Ապրանքների հաշվի շարժմացը և պակասուրդի միտումը  
1993–2017 թթ.

<sup>2</sup>Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՊԾ, 2013, էջ 253:

Ապրանքների և ծառայությունների հաշվում, դիտարկվող ժամանակահատվածում, ապրանքների հաշվի տեսակարար կշիռը միջինում կազմել է 86%, ծառայությունների հաշվինը՝ 14%: Ապրանքների և ծառայությունների հաշվի կառուցվածքի փոփոխությունները հստակ օրինաչափություն չեն դրսնորել, սակայն հետձգնաժամային 2009 թ. մինչև 2014 թ. ծառայությունների հաշվի բաժինը կտրուկ նվազել է և 2014-ին հասել 5%-ի:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում, որոշակի վայրիվերումներով, արձանագրվել է ապրանքների տեսակարար կշրի նվազման միտում: Այսպես՝ եթե 1994 թ. ապրանքների արտահանումը կազմել է 94%, ծառայություններինը՝ 6%, ապա 2014-ին, հաճապատասխանաբար՝ 50.5% և 49.5%: 2014 թ. արձանագրվել է ապրանքների տեսակարար կշրի ամենացածր մակարդակը: Դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում ապրանքների տեսակարար կշիռը կազմել է 69%, ծառայություններինը՝ 31%:




**Գծապատկեր 3. Ծառայությունների հաշվի շարժնթացը և պակասուրդի միտումը 1993–2017 թթ.**

Ի տարբերություն նախորդի, ապրանքների և ծառայությունների ներմուծման կառուցվածքը էական փոփոխություններ չի կրել: Չնայած ներմուծման կառուցվածքում ապրանքների տեսակարար կշրի նվազմանը, այս ցուցանիշը մեծ է միջինում՝ 78%, ծառայությունների ոլորտում՝ 22%: Վերջինիս բնագավառում ամենամեծ տեսակարար կշրի արձանագրվել է 1995-ին՝ 90%, ամենափոքը 2014-ին՝ 68%:

Էական տեղաշարժեր են արձանագրվել ծառայությունների արտահանման և ներմուծման կառուցվածքներում:


2001 թ. ծառայությունների արտահանման կառուցվածքում տրանսպորտային ծառայությունների տեսակարար կշիռը զգալի նվազել է, չնայած դիտարկվող ժամանակահատվածում այս ոլորտի արտահանման աճի միջին տեմպը կազմել է 28%: Հատկապես կտրուկ աճ է արձանագրվել 1995–1996 թթ.: Նշված ժամանակահատվածում ամենափոքը տեսակարար կշիռը արձանագրվել է 2014 թ.՝ 11%, ամենամեծ տեսակարար կշիռը 1995 թ. և 1997 թ.՝ 50%:



Գծապատկեր 4. Ծառայությունների արտահանման կառուցվածքի փոփոխությունները 1993–2014 թթ.

Հեռահաղորդակցության տեսակարար կշիռը 1993 թ. 98%-ից իջել և ներկայում է 8%: Այդ ծառայությունների արտահանումը, դրսևությունը փոփոխությունների անկայուն վարքագիծ, աճել է միշտնում 10%-ով:

Արտահանման կառուցվածքում ճանփորդական ծառայությունները միշտնում ունեն 35% տեսակարար կշիռ, սակայն այդ ծառայությունների 41% աճի միշտին տեսնայի պայմաններում 2014-ին արձանագրվել է 60% ցուցանիշ: Շինարարական ծառայությունները միշտնում ունեն 4% տեսակարար կշիռ, սակայն պետք է փաստել, որ արտահանման ծավալների անկայուն փոփոխության պայմաններում արձանագրվել է տեսակարար կշռի կտրուկ ավելացում՝ 2010-ի 1%-ից 2013 թ. աճելով մինչև 20%-ի: 2014 թ. այդ ցուցանիշը կազմել է 13%: Այլ ծառայությունները արտահանման կառուցվածքում միշտնում 12% են կազմել:



Գծապատկեր 5. Ծառայությունների ներմուծման կառուցվածքի փոփոխությունները 1993–2014 թթ.

Ծառայությունների ներմուծման կառուցվածքում նույնպես առկա են փոփոխության որոշակի միտումներ: Այսպես՝ տրանսպորտային ծառայությունների ներմուծման ծավալների միջինում 13% աճի պայմաններում դրանց տեսակարար կշիռը միջինում կազմել է 47%: Արձանագրվել է ցուցանիշի անկման միտում՝ 2014 թ. հասնելով 27%-ի: Հեռահաղորդակցությունը ծառայությունների ներմուծման կառուցվածքում միջինում ունեցել է 3% տեսակարար կշիռ և դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխություններ չի կրել՝ բացառությամբ 1999 թ., թեև միջին աճի տեսակառ կազմել է 27%:

Ճանփորդական ծառայությունների ներմուծման՝ միջինում 46% աճի պայմաններում արձանագրվել է աճի միտում. միջինում տեսակարար կշիռը կազմել է 27%, 2014 թ.՝ 60%՝ 1993 թ. 1%-ի փոխարեն: Այլ ծառայություններ ներմուծման կառուցվածքում միջինում ունեցել են 23% տեսակարար կշիռ, արձանագրվել է այդ ցուցանիշի նվազում. 2014 թ. կազմել է 10%:

ՀՀ արտահանման մեջ, 2005 թ. սկսած, մեծ տեսակարար կշիռ են ունեցել՝ 1. ոգելից և ոչ ոգելից ըմպելիք, քացախ, 2. հանքաքար, խարամ, մոխիր, 3. վառելանյութ, նավամթերք, բիտումային միջոցներ, մոնանյութ, 4. մարզադիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, 5. սև մետաղներ, 6. պղինձ և իրեր դրանից: 2013 թ. բացի նշված ապրանքախմբերից արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև՝ ծխախոտ, այսումին և իրեր դրանից ապրանքախմբերը: 2014 թ. արտահանման, ինչպես և նախորդ տարիներին ՀՀ-ից արտահանված հիմնական արտադրատեսակը պղինձի հանքաքար և խտահանքն է. արտահանվել է 185 հազ. տոննա պղինձի հանքաքար և խտահանք՝ 236 մլն դոլար ընդհանուր արժեղությամբ, ինչը ամբողջ արտահանման 15.7%-ն է կազմել: 2014-ին արտահանվել է 13.1 մլն լիտր սպիրտային խմիչք՝ 165 մլն դոլար ընդհանուր արժեքով և արտահանման կառուցվածքում ունեցել է 11% տեսակարար կշիռ, 2014-ին երկարահանալվածքի արտահանումը կազմել է ամբողջ արտահանման 7.3%-ը:

ՀՀ ներմուծման մեջ, 2005 թ. սկսած, մեծ տեսակարար կշիռ են ունեցել՝ 1. վառելանյութ, նավամթերք, բիտումային միջոցներ, մոնանյութ, 2. մարզադիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, 3. միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, 4. էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, ձայնագրող ապարատներ, 5. վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր, 6. հացահատիկ: 2013-ին, բացի նշված ապրանքախմբերից, ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև դեղագործական մթերքներ, ինչպես նաև ալաստոնասա և դրանից իրեր ապրանքախմբերը: ՀՀ արտաքին առևտուրը բազմազանեցված չէ ըստ ապրանքախմբերի: ՀՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 6 ապրանքախմբերը ընդհանուր արտահանման մեջ 2005 թ. կազմել են 81.5%, 2012-ին՝ 70.8%: Իհարկե, սա դրական երևույթ է, քանի որ առկա է արտահանման բազմազանեցում: Սակայն ավելի արագ տեսակարար պետք է փորձել բազմազանեցնել արտահանումն ըստ ապրանքատեսակների՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնելով 1. տեքստիլ հագուստ և հարակից իրեր, 2. դեղագործական մթերք, 3. ծխախոտ, 4. այումին և իրեր դրանից, 5. ժամացցույներ և դրանց մասեր, 6. էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, 7. միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, 8. ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանից ապրանքախմբերի արտահանման ծավալների մեծացմանը: 2005 թ. ՀՀ ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 6 ապրանքախմբերի ցուցանիշն ընդհանուր արտահանման մեջ կազմել

է 58%, 2012 թ.՝ 51.2%: Ի տարբերություն արտահանման, ներմուծումն ըստ ապրանքախմբերի ավելի բազմազանեցված է:

Արտահանման մեջ 2005–2013 թթ. ամենամեծ տեսակարար կշիռ ունեցել են ԵՄ անդամ Երկրները, սակայն եթե 2005–2008 թթ. արտահանման դրական աճ է եղել, ապա 2009 թվականից կտրուկ նվազել է, 2010, 2011 թթ. ցուցանիշը պահպանվել է, իսկ 2012 և 2013 թթ. նորից նկատվել է կտրուկ նվազում: << արտահանումն ԱՊՀ Երկրներ 2005–2008 թթ. աճել է, 2009–2010 թթ.՝ նվազել, իսկ վերջին տարիներին նկատվում է աճ, և ապագայում էլ ավելի կաձի՝ կապված Մաքսային միությանը << անդամակցությամբ: << արտահանումը այլ Երկրներ 2005-ից նվազել է և իր ամենացածր կետին հասել 2008 թ., որի հիմնական պատճառը ճգնաժամն էր, սակայն 2009-ից կտրուկ աճել է, 2010–2011 թթ. ցուցանիշը պահպանվել է, 2012 թ. կրկին աճել, իսկ 2013 թ. գրեթե հավասարվել ԵՄ անդամ Երկրների ապրանքների արտահանման տոկոսային կշրջին, ինչը, իհարկե, դրական երևույթ է: Այլ Երկրներ արտահանման մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել Իրանը, Վրաստանը, Կանադան, Շվեյցարիան, Չինաստանը, ԱՄԵ-ը<sup>3</sup>:

2005 թ. ամենամեծ տեսակարար կշիռը << արտահանման մեջ ունեցել է Գերմանիան, ապա, ըստ հաջորդականության՝ Նիդեռլանդները, Բելգիան, Ուստաստանը, ԱՄՆ-ը, իսկ վերոնշյալ մնացած Երկրների տեսակարար կշիռն այդ թվականին դեռ փոքր է եղել: 2006 թ. գրեթե նույնն է եղել Երկրների տեսակարար կշիռն << արտահանման մեջ: 2007–2008 թթ. արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 5 Երկրներն են՝ Ուստաստան, Գերմանիա, Նիդեռլանդներ, Բելգիա, Վրաստան: 2009 թ. ընդհանուր արտահանման մեջ Երկրների տեսակարար կշիռների փոփոխություններ են տեղի ունեցել, ինչը կապված էր ճգնաժամի հետ: 2010 թ. Գերմանիան իր տեղը զիջել է Բուլղարիային, իսկ Ուստաստանը նորից հայտնվել է 1-ին տեղում: 2011–2012 թթ., չնչին փոփոխություններով հանդերձ, հիմնական կառուցվածքը պահպանվել է: 2013 թ. << արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 9 Երկրներն են՝ Ուստաստան, Բուլղարիա, Բելգիա, Իրան, ԱՄՆ, Վրաստան, Գերմանիա, Չինաստան, Նիդեռլանդներ<sup>4</sup>:

<< ներմուծման մեջ 2005–2007 թթ. ամենամեծ տեսակարար կշիռ ունեցել են ԵՄ անդամ Երկրները, սակայն 2008–2009 թթ. ներմուծումը ԵՄ Երկրներից նվազել է, 2010–2011 թթ.՝ աճել, իսկ 2012–2013 թթ. նորից նկատվել է նվազում: << ներմուծումն ԱՊՀ Երկրներից 2005–2007 թթ. աճել է, 2009 թ.՝ նվազել, 2010-ին՝ աճել, 2011–2013 թթ. շատ մեծ փոփոխությունների չի ենթարկվել, և տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ տատանվել է 29–31%-ի սահմաններում: << ներմուծումն այլ Երկրներից 2005 թ. նվազել է՝ իր ամենացածր կետին հասնելով 2007 թ., սակայն 2008 թ. կտրուկ աճել և պահպանել է այդ տեմպերը մինչև 2013 թ.: Այլ Երկրների մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել Իրանը, Վրաստանը, Կանադան, Շվեյցարիան, Չինաստանը, Իտալիան<sup>5</sup>:

2005 թ. ամենամեծ տեսակարար կշիռը << ներմուծման մեջ ունեցել է Ուստաստանը, ապա, ըստ հաջորդականության՝ Գերմանիան, Ուկրաինան,

<sup>3</sup> Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք, << ԱՎԾ 2008՝ էջ 455-457, 2010՝ էջ 482-484, 2012՝ էջ 468-470, 2014՝ էջ 473-475:

<sup>4</sup> Տես նույն տեղը, 2008՝ էջ 458-459, 2010՝ էջ 485-486, 2012՝ էջ 471-472, 2014՝ էջ 476-477:

<sup>5</sup> Տես նույն տեղը, 2008՝ էջ 455-457, 2010՝ էջ 482-484, 2012՝ էջ 468-470, 2014՝ էջ 473-475:

ԱՄՆ-ը, իսկ վերոնշյալ մնացած երկրների տեսակարար կշիռն այդ թվականին դեռ փոքր է եղել: 2006 թ. << ներմուծման կառուցվածքը, ըստ երկրների, գրեթե չի փոխվել, միայն Ուկրաինան է 4-րդից հայտնվել 2-րդ, իսկ Գերմանիան՝ 4-րդ տեղում: 2007 թ. << ներմուծման մեջ վերոնշյալ երկրներից մեծ տեսակարար կշիռ ունեցող 5 երկրներն են եղել Ռուսաստանը, Ուկրաինան, Գերմանիան, Չինաստանը, ԱՄՆ-ը: 2008 թ. փոփոխություններ են արձանագրվել՝ կապված ճգնաժամի հետ, և մինչև 2013 թ. այս ոլորտում մեծ տեսակարար կշիռ ունեցող երկրներն իրենց դիրքերը պահպանել են. փոփոխություններ են եղել միայն միջյանց նկատմամբ: 2013 թ., ըստ << արտահանման մեջ տեսակարար կշրջի մեծության, երկրների հաջորդականությունը հետևյալն է՝ Ռուսաստան, Չինաստան, Գերմանիա, Ուկրաինա, Թուրքիա, Իրան, Իտալիա, ԱՄՆ<sup>6</sup>:

Մեծ խնդիր է նաև ըստ երկրների << արտաքին առևտորի ոչ բազմազանեցված լինելը: Այսպես՝ եթե 2005 թ. << ընդհանուր արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրների 1-ին տասնյակի տեսակարար կշիռների գումարը կազմել է ընդհանուր արտահանման 81.6%-ը, ապա 2012-ին՝ 82.9%, 2013-ին՝ 75.1%: Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրների 1-ին տասնյակի տեսակարար կշիռների գումարը 2005-ին կազմել է ընդհանուր ներմուծման 67.4%-ը, 2012 թ.՝ 67.5%, 2013 թ.՝ 60.2%: Այս տարիների ընթացքում թեև կառուցվածքային փոփոխություններ եղել են, սակայն, ընդհանուր առումով, բազմազանեցման փոխարեն դիտվել է նվազում, բացառությամբ՝ 2013 թ.: Այս խնդիրի լուծման նպատակով մոտակա ժամանակաշրջանում պետք է արտաքին առևտորաշրջանառության ծավալները մեծացնել հատկապես Խորհրդայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի, Իտալիայի, Հնդկաստանի, Բելգիայի, Բրազիլիայի, Իսպանիայի, Կանադայի, ԱՄԵ-ի հետ:

2000–2014 թթ. արտահանման չափաբաժինը միջինում կազմել է 25.3%, 2014 թ.՝ 30.3%, ներմուծման մասնաբաժինը միջինում՝ 47.5%, 2014 թ.՝ 50.2%: Այս ցուցանիշներն արտացոլում են տնտեսության ծավալները և դրա կախվածությունը համաշխարհային տնտեսությունից: Ի դեպ, զարգացած տնտեսահանակարգերում արտահանման և ներմուծման չափաբաժինները << Ա-Ա-ում փոքր են: Աշխատանքի միջազգային քաժանման գործընթացում << դիրքն անկայուն է: Այդ մասին է վկայում << արտահանման և ներմուծման սահմանաչափերի միջին քառակուսային շեղումների մեծ արժեքը. արտահանման սահմանաչափի միջին քառակուսային շեղումը 5.74% է, ներմուծման սահմանաչափինը՝ 3.85%: Սա փաստում է, որ ելքային ցուցանիշների, հետևաբար՝ սպասվող արդյունքների տատանողականությունը մեծ է:

Արտաքին առևտորաշրջանառության կառուցվածքի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ մեծ է փոքր ավելացված արժեքով արտադրանքի տեսակարար կշիռը: Սա լուրջ հիմնախնդիր է, փաստում է տնտեսական համակարգի զարգացման ցածր աստիճանի մասին՝ պահանջելով հրատապ լուծում: Համաշափության (սիմետրիկության) գործակիցը փոքր է 1-ից, որը հիմք է տալիս արձանագրելու, որ արտաքին առևտորաշրջանառության կառուցվածքը համաչափ չէ, և երկիրը աշխատանքի միջազգային քաժանման մեջ միտված է դեպի ռեսուրսարդյունահանող տեխնոլոգիաներ:

<sup>6</sup> Տես նոյն տեղը, 2008՝ էջ 460-461, 2010՝ էջ 487-488, 2012՝ էջ 473-474, 2014՝ էջ 478-479:

**Աղյուսակ 1**
**Արևոտրային հաշվեկշռի վիճակի վերլուծության ցուցանիշների  
փոփոխությունները 2000–2014 թթ.**

Թվական	Արտահանման մասնաբաժինը (%)	Արտահանման մասնաբաժինի շեղումը միջինից(%)	Ներմուծման մասնաբաժինը (%)	Ներմուծման մասնաբաժինի շեղումը միջինից (%)	Ամեաշվեկշռվածության դրույթը	Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)
2000	23.8	-1.6	51.6	4.1	0.37	15.8
2001	26.5	1.2	51.1	3.6	0.32	10.4
2002	31.5	6.1	50.8	3.3	0.24	6.2
2003	35.0	9.6	54.5	7.0	0.22	6.2
2004	31.2	5.9	49.3	1.8	0.22	2.2
2005	29.8	4.4	45.7	-1.8	0.21	2.5
2006	24.3	-1.1	42.0	-5.5	0.27	3.9
2007	19.5	-5.8	41.4	-6.1	0.36	8.5
2008	15.1	-10.2	42.7	-4.8	0.48	15.0
2009	15.8	-9.5	44.3	-3.2	0.47	17.6
2010	21.3	-4.0	47.1	-0.4	0.38	14.2
2011	24.3	-1.0	46.4	-1.1	0.31	11.1
2012	25.7	0.3	48.3	0.8	0.31	11.1
2013	26.2	0.8	47.3	-0.2	0.29	8.0
2014	30.3	4.9	50.2	2.7	0.25	7.9

Բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման կառուցվածքում գերակշռում են գիտական սարքավորումները, քիմիական նյութերը, էլեկտրոնիկա-հեռահաղորդակցման արտադրանքը: 2004 թ. ՀՀ-ում գրանցվել է բարձր տեխնոլոգիաների ներմուծման ծավալների կտրուկ աճ, ինչը մասամբ պայմանավորված է հեռահաղորդակցության ոլորտի հնտենսիվ զարգացմանը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բարձր տեխնոլոգիաների ներմուծման ծավալները 2008 թ. նվազել են: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ համակարգիչները, էլեկտրոնիկան և հեռահաղորդակցման պարագաները ՀՀ ներմուծվող բարձրտեխնոլոգիական ապրանքների 70–80%-ն են կազմում, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների բաժինը 2% է: Փաստորեն, նոր տեխնոլոգիաների ներմուծման միջոցով տեղայնացվող նորամուծությունը և արտադրական կարողությունների տեխնոլոգիական նորացման հնարավորությունները սահմանափակ են:

Արևոտրային հաշվեկշռի կայունությունը բնութագրող անհաշվեկշռվածության գործակիցը ՀՀ-ում միջինում կազմել է 31%, որը փաստում է, որ տնտեսական զարգացումը՝ հատկապես արտաքին առևտորային բաղկացուցիչը, անկայուն է:

ՀՀ ֆինանսական շուկան ներքին և արտաքին ցնցումներին արձագանքում է փոխարժեքի տատանումներով, ինչն էլ, իր հերթին, առաջացնում է արտահանման և ներմուծման, տրանսֆերտների, եկամուտների և կապիտալի հոսքերի տատանումներ: Իրական արդյունավետ փոխարժեքի և առևտորային հաշվեկշռի կապը հիմնավորելու նպատակով տնտեսաչափական մոդելի օգնությամբ կատարվել է ռեգուլյար վերլուծություն:

**Առևտրային հաշվեկշռի և իրական արդյունավետ փոխարժեքի (ԻԱՓ) կապը  
բնութագրող ուղղեցիոն հավասարման լուծման արդյունքները<sup>7</sup>**

$$\text{TRADE} = 4.78 * \text{REER}(-1) - 17.6$$

<i>Dependent Variable: LTRADE_SA</i>				
<i>Variable</i>	<i>Coefficient</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
LREER_SA(-1)	4.787736	0.476962	10.03798	0.0000
C	-17.59959	2.267837	-7.760519	0.0000
R-squared	0.593546	Mean dependent var		5.158559
Adjusted R-squared	0.587655	S.D. dependent var		0.702326
S.E. of regression	0.450992	Akaike info criterion		1.273031
Sum squared resid	14.03418	Schwarz criterion		1.336768
Log likelihood	-43.19259	Hannan-Quinn criter.		1.298377
F-statistic	100.7609	Durbin-Watson stat		0.246037
Prob(F-statistic)	0.000000			

Դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1% աճի (արժենորման) դեպքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը խորանում է 4.78%-ով, իսկ նվազման (արժեգրկման) դեպքում տեղի է ունենում առևտրային հաշվեկշռի պակասուրդի նույն չափով նվազում:

Հաշվի առնելով, որ արտահանման մեջ բաժինը և որակական մասը ապահովում են այնպիսի ապրանքախմբեր, ինչպիսիք են հանքահումքային արտադրանքը, պատրաստի սննդի արտադրանքը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները, ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, մոդելները նշակվել են հենց այդ ապրանքախմբերի վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցության չափը գնահատելու նպատակով<sup>8</sup>:

Հանքահումքային արտադրանքի արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարումը.

<sup>7</sup> Վերլուծության համար հիմք են հանդիսացել վճարային հաշվեկշռի առանձին հաշվվների և իրական արդյունավետ փոխարժեքի 1997–2014 թթ. եռամսյակային տվյալները: Տվյալների շարքը լոգարիթմվել են, հարթեցվել, շարքերից հանվել է սեղոնայնության գործոնը: Հաշվարկները կատարվել են **Eviews 7** ծրագրային փաթեթի օգնությամբ: (TRADE՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճի հնդեքս):

<sup>8</sup> Մոդելների մշակումն իրականացվել է առանձին բազմաչափ ռեգրեսիոն հավասարումների կառուցման միջոցով՝ կիրաելով փոքրագույն քառակուսիների մեթոդ, իսկ ռեգրեսիաների որակի գնահատման համար հիմք են հանդիսացել հայտնի վիճակագրական բաշխումների արժեքները և կամխատեսման սխալների մեջությունը: Գնահատված պարամետրերի վիճակագրական նշանակալիությունը ստուգելու համար որպես հիմք են ծառայել R դետերմինացիայի գործակիցը, ռեգրեսիայի ստանդարտ սխալը, AKAICKE և SCHWARZ տեղեկատվական չափանիշները: Մոդելների տվյալների բազայի կառուցման համար ընտրվել են համապատասխան ցուցանիշների 1997–2014 թթ. եռամսյակային տվյալները: Տվյալների մեջ մասը լոգարիթմվել է և, անհրաժեշտության դեպքում, սեղոնայնորեն հարթեցվել, ստացիոնարության խնդիրը լուծելու նպատակով որոշ ցուցանիշները նաև դիֆերենցվել են:

$$\text{EXP_MINERAL_PROD} = 0.63 * \text{EXP_MINERAL_PROD}(-1) + 0.3 * \text{IND_MINING}(-1) - 2.55 * D_{REER}(-1) + 0.16^9$$

<i>Dependent Variable: LEXP_MINERAL_PROD_SA</i>				
<i>Variable</i>	<i>Coefficient</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
LEXP_MINERAL_PROD_SA(-1)	0.633096	0.102970	6.148373	0.0000
D_LREER_SA(-1)	-2.552790	1.093002	-2.335576	0.0238
LIND_MINING_SA(-1)	0.304846	0.086149	3.538595	0.0009
C	0.157705	0.253494	0.622124	0.5369
R-squared	0.915577	Mean dependent var	5.794835	
Adjusted R-squared	0.910188	S.D. dependent var	0.846955	
S.E. of regression	0.253821	Akaike info criterion	0.170806	
Sum squared resid	3.027968	Schwarz criterion	0.322322	
Log likelihood	-0.355551	Hannan-Quinn criter.	0.228705	
F-statistic	169.9069	Durbin-Watson stat	2.291452	
Prob(F-statistic)	0.000000			

Մոդելի արդյունքները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով ավելացումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման 2.55%-ային կետով նվազման, հանքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի և հանքահումքային արտադրանքի արտահանման 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման՝ համապատասխանաբար 0.3%-ային կետով և 0.63%-ային կետով աճի:

Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարությունը.

$$\text{EXP_PREP_FOOD} = -1.01 * \text{REER}(-1) + 1.38 * \text{IND_MANUFACTURING}(-1) + 0.53 * \text{D122} + 3.37^{10}$$

<i>Dependent Variable: LEXP_PREP_FOOD_SA</i>				
<i>Variable</i>	<i>Coefficient</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
LREER_SA(-1)	-1.008504	0.374996	-2.689370	0.0099
LIND_MANUFACTURING_SA(-1)	1.383556	0.105017	13.17458	0.0000
D122	0.527214	0.237301	2.221711	0.0312
C	3.369415	1.468910	2.293821	0.0263

<sup>9</sup> EXP\_MINERAL\_PROD՝ հանքահումքային արտադրանքի արտահանման աճի ինդեքս, IND\_MINING՝ հանքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի աճի ինդեքս, D\_REER՝ իրական արդյունավետ փոխարժեքի աճ ինդեքսի դիֆերենցիալ. բոլոր մոդելներում իրական արդյունավետ փոխարժեքի աճը նշանակում է արժևորում, D\_FOREIGN\_DEMAND՝ արտաքին պահանջարկի աճի ինդեքսի դիֆերենցիալ, (-1)' լադ (համապատասխան ցուցանիշի նախորդ եռամսյակի արժեք):

<sup>10</sup> EXP\_PREP\_FOOD՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման աճի ինդեքս, REER՝ իրական արդյունավետ փոխարժեքի աճի ինդեքս, IND\_MANUFACTURING՝ վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի աճի ինդեքս, D122՝ ժամանակավոր շոկ:

R-squared	0.850610	Mean dependent var	5.841695
Adjusted R-squared	0.841075	S.D. dependent var	0.581468
S.E. of regression	0.231805	Akaike info criterion	-0.010657
Sum squared resid	2.525475	Schwarz criterion	0.140859
Log likelihood	4.271744	Hannan-Quinn criter.	0.047242
F-statistic	89.20432	Durbin-Watson stat	1.158141
Prob(F-statistic)	0.000000		

Մոդելի արդյունքները վիճակում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժեկորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.18%-ային կետով նվազման, վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի 1%-ային կետով աճը երկու եռամսյակ անց նպաստում է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.38%-ային կետով աճին:

Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարումը.

$$\text{EXP\_PREC\_METAL} = 0.55 * \text{EXP\_PREC\_METAL} - 1.85 * \text{REER}(-1) + \\ 0.24 * \text{IND\_MANUFACTURING}(-1) + 9.9^{11}$$

<i>Dependent Variable: LEXP_PREC_METAL_SA</i>				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LEXP_PREC_METAL_SA(-1)	0.548415	0.101808	5.386753	0.0000
LREER_SA(-1)	-1.855625	0.497445	-3.730308	0.0005
LIND_MANUFACTURING_SA(-1)	0.236620	0.107593	2.199220	0.0327
C	9.886888	2.355400	4.197541	0.0001
R-squared	0.823269	Mean dependent var	5.088872	
Adjusted R-squared	0.812223	S.D. dependent var	0.417693	
S.E. of regression	0.181000	Akaike info criterion	-0.506837	
Sum squared resid	1.572526	Schwarz criterion	-0.356741	
Log likelihood	17.17776	Hannan-Quinn criter.	-0.449294	
F-statistic	74.53292	Durbin-Watson stat	1.894345	
Prob(F-statistic)	0.000000			

Ստացված կախվածությունները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժեկորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտադրանքի արտահանման 1.85%-ային կետով նվազման, վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի և

<sup>11</sup> EXP\_PREC\_METAL՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտադրանքի արտահանման աճի ինդեքս:

նույն ապրանքախմբի արտահանման 1% աճը մեկ եռամսյակ անց նպաստում է դիտարկվող ապրանքախմբի արտահանման՝ համապատասխանաբար 0.24% և 0.55%-ային կետով աճին:

Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել են հետևյալ արդյունքները.

$$\text{EXP\_BASE\_METAL} = 0.69 * \text{EXP\_BASE\_METAL}(-1) - 0.34 * \text{REER}(-3) + \\ 0.25 * \text{IND\_MINING}(-1) + 1.9^{12}$$

<i>Dependent Variable: LEXP_BASE_METAL_SA</i>				
<i>Variable</i>	<i>Coefficient</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
LEXP_BASE_METAL_SA(-1)	0.691358	0.107476	6.432690	0.0000
LREER_SA(-3)	-0.337751	0.215970	-1.563874	0.1247
LIND_MINING_SA(-1)	0.249221	0.090357	2.758180	0.0083
C	1.861344	0.965463	1.927930	0.0601
R-squared	0.962639	Mean dependent var		6.049807
Adjusted R-squared	0.960202	S.D. dependent var		0.829010
S.E. of regression	0.165382	Akaike info criterion		-0.684495
Sum squared resid	1.258161	Schwarz criterion		-0.531533
Log likelihood	21.11237	Hannan-Quinn criter.		-0.626246
F-statistic	395.0752	Durbin-Watson stat		2.025442
Prob(F-statistic)	0.000000			

Ստացված արդյունքները վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժեորումը երեք եռամսյակ անց հանգեցնում է ոչ թանկարժեք մետաղների արտահանման 0.34%-ային կետով նվազման, ոչ թանկարժեք մետաղների արտահանման 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց հանգեցնում է նույն ապրանքախմբի արտահանման՝ 0.69%-ային կետով, իսկ հանգքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց՝ 0.25%-ային կետով աճի:

Ստացված գործակիցների նշանները բավարարում են տնտեսագիտության տեսության պահանջները, և մոդելների արդյունքներից ակնհայտ է ստացված կապերի՝ տնտեսագիտորեն հիմնավորված լինելը: Մշակված մոդելները կարելի են օգտագործել որպես համապատասխան ցուցանիշների կանխատեսման կարևոր և որակյալ գործիքներ:

Այսպիսով՝ իրական փոխարժեքն այն հիմնարար և առանցքային փոփոխականն է, որն անմիջական և նշանակալի ազդեցություն է ունենում համաշխարհային շուկայում ՀՀ տնտեսության մրցունակության վրա, ուստի արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորման կարևոր գործիք է:

<sup>12</sup> EXP\_BASE\_METAL՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման աճի ինդեքս:

**ЛУСИНЕ МХИТАРЯН***Аспирант кафедры "Макроэкономики" АГЭУ*

**Реальный обменный курс и изменения структуры экспорта и импорта РА.** – В статье проанализированы внешнеторговая товарная структура, структура экспорта и импорта РА по странам. Для более полного анализа торгового баланса, рассчитаны квоты импорта и экспорта, их среднее квадратное отклонения, коэффициент неуравновешенности и симметричности структуры внешней торговли, удельный вес текущего счета в ВВП.

Учитывая, что удельный вес и качество экспорта обеспечивают некоторые товары, оценено влияние реального обменного курса как ценовой фактор на эти товары.


**Ключевые слова:** реальный обменный курс, реальный эффективный обменный курс, структура экспорта, структура импорта, счет по товарам, счет по услугам.

**LUSINE MKHITARYAN***Post-graduate at the Chair of  
"Macroeconomics" at ASUE*

**The Real Exchange Rate and Changes in Export and Import Structure of the Republic of Armenia.** – The article analyzes the foreign trade commodity structure, the structure of export and import of Armenia. For a more complete analysis of the balance of trade, import and export quotas, their mean square deviation, coefficient of imbalance symmetry and structure of foreign trade, the share of current account in GDP have been calculated.

Taking into consideration that the quality and most of the export is provided with some group of products, the impact of the real exchange rate is estimated as the price factor on these products.

**Key Words:** *real exchange rate, real effective exchange rate, export structure, import structure, account on commodities, account on services.*



## ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի  
ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐ

Հայաստանն այսօր տնտեսական զարգացման նոր հարթությունում է՝ նոր մարտահրավերներով և հնարավորություններով։ Կառուցվածքային վերափոխման անհրաժեշտությունը բխում է կապիտալի միջազգային շուկայում տնտեսության մրցակցելիության բարձրացման կարևորությունից։ Ի վերջո, տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևափորումը կարևոր նախադրյալ է ինչպես ներդրումների ներգրավման, այնպես էլ տնտեսական կայուն աճի ապահովման համար։

**Հիմնաբառեր.** տնտեսության կառուցվածք, մակրոտնտեսական կայունություն,  
ներդրումային քաղաքականություն, ներդրումներ

Վերջին տարիներին Հայաստանում բարենպաստ մակրոտնտեսական գործուների ազդեցությամբ պայմանավորված՝ տնտեսական աճի և ներդրումային ակտիվության որոշակի նախադրյալներ ապահովվեցին։ Այնուամենայնիվ, հանրապետությունում դեռևս չեն հաղթահարվել այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են եկամուտների ցածր մակարդակն ու գերբեռացումը, գործազրկությունը, համախառն խնայողությունների փոքր ծավալները, ներդրումային պակասուրդը և դրանցից ածանցվող բազմաթիվ բացասական միտումներ։ Իհարկե, անկախացման երկրորդ տասնամյակում արդեն երկիրը կարողացավ լուծել մի շարք իհմնախնդիրներ և դուրս գալ զարգացման նոր ուղի։ Ներդրումների ներգրավման առումով ևս զգալի ձեռքբերումներ արձանագրվեցին նախաձգնաժամային ժամանակահատվածում, սակայն 2008 թ. սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամը երևան հանեց իրականաց-


Վոդ տնտեսական քաղաքականության բացքողումները, սրվեցին նաև այն խնդիրները, որոնք դեռևս լուծում չէին ստացել: Հայաստանի տնտեսության՝ միջազգային ֆինանսական համակարգին թույլ ինտեգրմամբ և տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններով՝ պայմանավորված՝ հիմնական հարվածն իր վրա կրեց տնտեսության իրական հատվածը: Տվյալ հանգամանքը պատճառ հանդիսացավ վերանայելու մակրոտնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունները՝ իրական հատվածի խթանումը դարձնելով տնտեսական քաղաքականության միջոցառումների առանցքը: Հանրապետությունում տնտեսական զարգացման ներկայիս փուլում իրական հատվածի դերն ընդգծվում է ոչ միայն վերոնշյալ հանգանաքներից ելնելով, այլ նաև այն պարզ պատճառով, որ երկրում տնտեսության արդյունաբերականացումը դեռևս ընթացքում է: Տնտեսության իրական հատվածին պետության ակտիվ աջակցությունը ռազմավարական գերակայություն է համարվում նաև Հայաստանի արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ՝ նպատակ ունենալով մեծացնելու տնտեսության բազմազանեցման աստիճանը և ընդլայնելու արտահանելի հատվածը:

Հայաստանի համար զգնաժամք, իհարկե, լուրջ փորձություն էր, սակայն նաև մակրոտնտեսական քաղաքականության ռազմավարական գերակայությունները վերագնահատելու կարևոր հնարավորություն: Տնտեսական քաղաքականությունը կառուցելիս պետք է հաշվի առնել այն փաստը, որ տնտեսական աճը և, առավել ևս՝ մակրոտնտեսական կայունությունը լոկ ՀԱԱ աճով չի ապահովվում: Վերջինս, անշուշտ, մակրոտնտեսական հավասարակշռություն ապահովող գործիքներից մեկն է: Մինչդեռ տնտեսական աճը ենթադրում է երկրի սոցիալ-տնտեսական ներուժի աճ, կենսամակարդակի բարձրացում և, վերջապես, աշխատանքի միջազգային բաժանման մեջ իրավահավասար մրցակցության ապահովում<sup>1</sup>: Նման ծևակերպում հանդիպում է նաև << ներդրումային քաղաքականության հայեցակարգում, հանաձայն որի հիմնական նպատակ է սահմանվում տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ծևակորման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի, բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը: Այս տեսանկյունից՝ երկրում իրականացվող ներդրումային քաղաքականությունը հետազոտվել է տնտեսության զարգացման մոդելի գերակա առանձնահատկությունների ընդգծմամբ: Ինչպես նշվում է << էկոնոմիկայի նախարարության պաշտոնական փաստաթղթերում, Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը, ներդրումներին աջակցությունը տնտեսական քաղաքականության առանձքային ուղղություններից մեկն է և ամրագրված է << Կառավարության գործունեության ծրագրում: Վերջինս նպատակառուղյամբ է ներդրումային բարենպաստ միջավայրի ծևակորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության մեծացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների ավելացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը և, այդ ամենի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի լուծման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովմանը:

<sup>1</sup> Տե՛ս Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Տարեգիր 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 156:

Ներդրումների խրախուսումը՝ ՀՀ տնտեսական քաղաքականության որոշիչ ուղղություններից է և առկա է իրականացվող բոլոր ծրագրերում։ Որպես նպատակ ունենալով ներդրումային քաղաքականության արդյունավետ իրագործումը՝ ՀՀ-ն հայտարարել և վարում է «բաց դռների» քաղաքականություն, որն ամրագրված է ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտում՝ 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում<sup>2</sup>։

Ժառանգելով տնտեսավարման նախկին պայմաններին համապատասխան կառուցվածք և կրելով նոր տնտեսակարգի ձևավորման բոլոր հնարավոր ռիսկերը՝ անկախացման երկու տասնամյակում Հայաստանը կարողացավ հաղթահարել համակարգային ճգնաժամը։ ՀՀՍ կառուցվածքը և զարգացման դինամիկան դիտարկելիս պարզ է դառնում, որ մինչգնաժամային հատվածում տնտեսական աճի ապահովման հիմնական ոլորտը շինարարությունն է եղել, իսկ հետձգնաժամային շրջանում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀՍ կառուցվածքում։ ՀՀ տնտեսության իրական հատվածի կարևոր բնագավառներ համարվող գյուղատնտեսությունն ու արյունաբերությունը նախաձգնաժամային հատվածում տնտեսական աճին նպաստման տեսանկյունից առանձնապես աչքի չեն ընկել։ Ավելին, շատ հայրենական տեսաբաններ, հաշվի առնելով շինարարության՝ ոչ արտահանելի ոլորտ լինելու հանգամանքը, ՀՀ տնտեսության մինչգնաժամային հատվածը որակել են որպես կորցրած հնարավորությունների ժամանակաշրջան<sup>3</sup>։




**Գծանկար 1. ՀՀՍ կառուցվածքն ըստ տնտեսության հիմնական ոլորտների (սուլրամերով) 2005–2014 թթ.<sup>4</sup>**

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն. <http://www.mineconomy.am/arm/508/gortsaruyt.html>: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը։

<sup>3</sup> Տե՛ս **Գ. Ղարիբյան, Ա. Մարկոսյան, Բ. Ավագյան**, Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և հակաձգնաժամային միջոցառումները, Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., էջ 120։

<sup>4</sup> Տնտեսության ճյուղերի տեսակարար Կշիռները հաշվարկված են առանց գուտ անուղղակի հարկերի։



Աղյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am) - <<ԱՎԾ հրապարակումներ, <<սոցիալ - տնտեսական վիճակը 2005–2014 թթ.

#### Գծանկար 2. Տնտեսության հիմնական ոլորտների՝ ՀՆԱ աճին նպաստման չափը (սոցիսային կետով) 2005–2014 թթ.

Այսպիսով՝ նախաձգնաժամային տարիներին հանրապետությունում տնտեսական զարգացման էական գործոնը ոչ արտահանելի հատվածն է եղել: Խնդիրը այն է, թե արձանագրված տնտեսական աճը երկրում ապահովե՞լ է արդյոք մակրոտնտեսական կայունություն և ստեղծել կապիտալ ներգրավելու հնարավորություններ: Վերոնշյալ ոլորտներն առանձնացնելու նպատակով գնահատվել են նաև տնտեսության բնագավառների՝ տնտեսական աճին նպաստման հնարավորությունները:

#### Աղյուսակ 1

#### Տնտեսության հիմնական ոլորտների՝ ՀՆԱ աճին նպաստման չափի ու տեսակարար կշիռների փոփոխությունը 2007/2014 թթ. (%)

	ՀՆԱ աճին նպաստման չափը		Տես. կշիռ ՀՆԱ-ում	
	2007	2014	2007	2014
Գյուղատնտեսություն	15,7	45.5	17.5	19.7
Արդյունաբերություն	5,6	-3.0	15.7	17.2
Շինարարություն	41,6	-15.2	25.6	9.8
Ծառայություններ	37,1	72.7	32.5	44

Աղյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am)

Մինչգնաժամային և հետձգնաժամային վիճակագրական ցուցանիշների շարժընթացը ցույց է տալիս, որ << տնտեսության իրական հատվածում ձգնաժամի ազդեցությունը էական է եղել: ՀՆԱ-ում շինարարության տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է, իսկ աճին նպաստման տեսանկյունից էականորեն մեծացել է գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտի դերը: Արդյունաբերության բնագավառում զարգացումները հիմնականում պայմանավորված են մետաղների միջազգային գների տատանումներով:

Մրցունակ տնտեսության ձևավորման նախադրյալներից մեկը արտադրողականության մակարդակի բարձրացումն է ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակներում: Վերջինս պայմանավորված է տնտեսական զարգացման ձիշտ մոդելի ընտրությամբ: Տնտեսությունում նոր արդյունքի ստեղծման գործընթացը պետք է աչքի ընկնի տեխնոլոգիական լուծումներով՝ ար-

տադրողական գբաղվածության ընդլայնման շեշտադրմամբ: Ուսուրսատար տնտեսության ոլորտների մասնաբաժնի կրճատումը, տեխնոլոգիատար և առավել արտադրողական արտադրությունների կազմակերպումը պետք է սկզբունքային դրույթ դարձնա տնտեսական քաղաքականության միջոցառումները մշակելիս: Բնական է, որ ցանկացած ոլորտի զարգացման համար էլ նաև ներդրումներ, ապա նաև գնողունակ և տարրողունակ շուկա է անհրաժեշտ: Հաշվի առնելով այն փաստը, որ հանրապետության ներքին շուկան զարգացման լուրջ նախադրյալներ չի կարող ապահովել, մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից կարևորվում է արտաքին առևտորի դերը և:

Առևտորային հաշվեկշիռը, ըստ էության, արտացոլում է տնտեսության կառուցվածքը՝ պայմանավորելով տնտեսության զարգացման գերակա միտումներն ու կապիտալի կլանման հնարավորությունները: Ունենալով փոքր սպառման շուկա և սահմանափակ ռեսուրսային ներուժ՝ հանրապետությունը, բնականաբար, ՀՍՍ աճ կարող է ապահովել արտաքին առևտորի հաշվին: Այսինքն՝ ՀՍՍ կառուցվածքային վերափոխումները, ի նպաստ արտահանման կողմնորոշում ունեցող տնտեսության ոլորտների, այսօր լուրջ մարտահրավեր են հանրապետության համար: ԵՏՍ անդամակցությունը, այս առումով, դրական լուծում էր: Մաքսային միության շրջանակներում միասնական շուկայի առկայությունը արտաքին առևտորի խթանման նոր հնարավորություններ կարող է ստեղծել տնտեսության համար: ԵՏՍ արտաքին առևտորային քաղաքականության սկզբունքները, այս տեսանկյունից, նախընտրելի են: Ներկայիս տնտեսության կառուցվածքով, սակայն, հանրապետությունը հագիվ թե կարողանա արտահանման ներուժի ընդլայնման հնարավորություններ ապահովել: Իհարկե, արտահանման վիճակագրությունը բավական խոսուն է քանակական ցուցանիշների բարելավման առումով, սակայն արտահանման կառուցվածքի՝ ՀՍՍ աճի ապահովման երաշխիք լինելու փաստը հետազոտման անհրաժեշտություն ունի:

2014 թ. ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճ է արձանագրվել, ինչի արդյունքում առևտորային հաշվեկշրի պակասուրդը 2014 թ. ՀՍՍ 26,5%-ն է կազմել՝ 2013 թ. համեմատությամբ նվազելով 2,3 տոկոսային կետով: Տնտեսության արտահանման հակվածությունը բնութագրող արտահանում/ՀՍՍ հարաբերական գործակիցը 2014 թ. 13,9% է կազմել 2013 թ. 14,2% դիմաց, իսկ 2000–2012 թթ. դրա միջինը տատանվել է 14%-ի միջակյալքում: Նշված ժամանակահատվածում ցուցանիշի առավելագույն մեծությունը գրանցվել է 2003 թ.՝ 32,2%, որից հետո դրսնորվել է նվազման միտում՝ 2009 թ. արձանագրելով ամենացածր արժեքը՝ 8,3%: Արտահանման տեսակարար կշրի նվազումը թե՝ ՀՍՍ-ում, թե՝ արտաքին ապրանքաշրջանառության ծավալներում ավելի է վատթարացնում վճարային հաշվեկշրի պատկերը: Չուտ արտահանման տեսակարար կշրի նվազման միտումը ՀՍՍ-ում նախորդող տասնամյակում հայրենական տնտեսագիտության ներկայացուցիչները որակել են որպես «ՀՀ տնտեսության փոքրացման միտում», այսինքն՝ հանրապետությունը ՀՍՍ միավոր աճի հաշվով կորցնում է զարգացման հեռանկարները: Իսկ որպեսզի երկրի տնտեսությունը դուրս բերվի դեպի «ոչ մի տեղ չտանող և փոքրացող» տնտեսության կարգավիճակից, զարգացման մայուղի դարձվի արտահանման ավելացումն ու համաշխարհային տնտեսության լայն և անսահմանափակ հնարավորությունների օգտագործու-

մը, անհրաժեշտ է նախ օբյեկտիվորեն գնահատել առկա հնարավորություններն ու ռիսկերը, ապա նաև արտաքին ազդեցություններից հնարավորինս գերծ և ոչ զգայուն արտադրության ենթալորտներում արտահանման նախադրյալներ ստեղծել<sup>5</sup>:

2005–2014 թթ. ընթացքում ՀՆԱ, արտահանման և ներմուծման աճի տեմպերը համադրելիս պատկերը առավել ընդգծված է դաշնում: Մասնավորապես՝ 2014-ին, 2005 թ. համեմատությամբ, ՀՆԱ-ն ավելացել է 101,8%-ով, արտահանումը՝ 55,9%-ով, իսկ ներմուծումը՝ 144,3%-ով: Փաստորեն, ՀՆԱ 1% աճն ապահովել է 0,55% արտահանման և 1,42% ներմուծման աճ: Այսինքն, տնտեսական աճը երկրում չի նպաստել արտահանման ծավալների ավելացմանը, և ավելի է խորացել վճարային հաշվեկշռի պակասուրդը: Արտահանման աճն էլ մեծ մասամբ նետաղների միջազգային գների վերջին տարիների աճի արդյունք է: Վճարային հաշվեկշռի զարգացման շարժընթացը դիտարկելիս պարզ է դաշնում, որ ընթացիկ հաշվի եկամուտներ և ընթացիկ տրանսֆերտներ ենթահաշիվներով ստացված ֆինանսական մուտքերը բավարար չեն եղել արտաքին առևտուրի բացասական ձեղքվածքը փոխհատուցելու համար: 2014 թ. տվյալներով՝ ստացված մուտքերը կազմել են ելքերի մոտ 60,2%-ը՝ 2005 թ. 70,1%-ի դիմաց<sup>6</sup>: Տնտեսությունն այսօր սպառում է արտաքին պարտքի հաշվին՝ չունենալով բավարար մուտքեր, իսկ պարտքը տրվում է վերադարձման պայմանով: Այսինքն՝ տնտեսությունն այսօր իրավիճակային լուծումներ է տալիս ձեղքվածքը փոխհատուցելու համար, իսկ մակրոտնտեսական կայունությունը տվյալ պայմաններում վտանգված է: Այն, որ մուտքերը կանխատենել և կառավարել հանրապետությունը չի կարող, ստիպում է ուշադրություն դարձնել արտաքին առևտուրին՝ արտահանման մեծացմանը և ներմուծման սահմանափակմանը:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության կառուցվածքը, տնտեսական աճին նպաստման տեսանկյունից, բավարար արդյունավետությանը աչքի չի ընկել: Տարիների ընթացքում ավելի է խորացել երկրի վճարային հաշվեկշռի ձեղքվածքը՝ որպես առևտուրային զամբյուղի անարդյունավետ կառուցվածքի արդյունք: Սրանք նարտահրավերներ են, առանց որոնց հաղթահարման տնտեսությունը չի կարող ստիպում ներդրումների ներգրավման նախադրյալներ ապահովել:

<sup>5</sup>Տես Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Զանգակ», 2014, էջ 270-271:

<sup>6</sup>Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 98-102: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 85, 87:

**ЛИАНА КАРАПЕТЯН**

Соискатель кафедры "Финансов"  
факультета „Экономики и менеджмента“ ЕГУ

**Структурные перестройки экономики как приоритетный вызов инвестиционной политики.**— Экономическое развитие Армении перешагнуло в новое измерение, с новыми вызовами и возможностями. Необходимость структурной перестройки Армении обусловлена повышением экономической конкурентоспособности на международном рынке капитала. Формирование эффективной структуры экономики является важной предпосылкой как для привлечения инвестиций, так и для устойчивого экономического роста.

**Ключевые слова:** структура экономики, макроэкономическая стабильность, инвестиционная политика, инвестиции.

**LIANA KARAPETYAN**

*Researcher at the Chair of "Finance"  
Department of Economics and Management at YSU*

**Restructuring the Economy as a Priority Challenge to the Investment Policy.**— The economic development of Armenia stepped into a new dimension, with new challenges and opportunities. The need for restructuring Armenian economy is stipulated by the increase of competitiveness in the international capital market. After all, formation of an effective structure of the economy is an important prerequisite both for attracting investment and for sustainable economic growth.

**Key Words:** *structure of the economy, macroeconomic stability, investment policy, investment.*

# ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



## ՍՈՒՍԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասխատենու

### ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՌԼՈՐՏԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Զբոսաշրջությունը դարձել է տնտեսության առանձնահատուկ ոլորտ, որտեղ, բնակչանարար, գործում են տնտեսական զարգացման այնպիսի օրենքներ, ինչպիսիք են արտադրության արդյունավետության բարձրացման, արժեքի, պահանջարկի ու առաջարկի, գնագոյացման և այլն: Զբոսաշրջությունը խոշոր ազդեցություն է թողնում տնտեսության կարևոր բնագավառների վրա՝ տրամադրություն և կապ, առևտուր, շինարարություն, գյուղատնտեսություն, լայն սպառման ապրանքների թողարկում:

20-րդ դարի սկզբներին զբոսաշրջությունը զարգացավ աննախառեալ թափով՝ պայմանավորված հանգստի և առողջարանային կենտրոնների ծևավորմամբ, աշխարհագրական նոր հայտնագործություններով, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա մայրցամաքների ակտիվ յուրացմամբ, տրամադրություն զարգացմամբ և այլ գործոններով:

**Հիմնաբառեր.** զբոսաշրջություն, զբոսաշրջային ենթակառուցվածքներ, զբոսաշրջության հավելածի տեմպ, ներգնա և արտագնա զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջատար և առավել դիմամիկ զարգացող ոլորտներից մեկն է և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով հայտարարված է որպես տնտեսության զարգացման գերակա ձյուլ<sup>1</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են հսկայական ռեսուրսներ, նախապայ-

<sup>1</sup> Տե՛ս «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 17.12.2003 թ.):

մաններ, որոնց լիարժեք օգտագործումը կարող է մեծապես նպաստել զբոսաշրջային գործունեության հետ կապված խնդիրների լուծմանը՝ Հայաստանը դարձնելով այս ոլորտում մասնագիտացված ակտիվ և զարգացած երկիր: «Ետևաբար՝ տեղեկատվական ոչ լիարժեք դաշտի պայմաններում << զբոսաշրջության շուկայի համեմատաբար լայն բնութագրումը պահանջում է վերլուծության ենթարկել ոչ միայն այս շուկայի ենթակառուցվածքները և դրանց վրա ազդող գործոնները, այլև տվյալ բնագավառին առնչվող ծառայությունների զարգացման միտումները, տնտեսական բարեփոխումների և պետական կարգավորման լծակների ազդեցությունը զբոսաշրջության վրա:»

Խոսելով Հայաստանի զբոսաշրջության զարգացման մասին՝ պետք է հաշվի առնել, որ վաղ անցյալում Հայաստանի տարածքով անցնող առևտորական բանուկ և կարևոր ճանապարհները խոչը դեր են խաղացել նրա տնտեսության և քաղաքների (Արտաշատ, Դվին, Տիգրանակերտ, Անի) զարգացման գործում:

Հայոց բնաշխարհի հրաշալիքները, պատմությունն ու հուշարձանները հինուց ի վեր գրավել են մարդկանց: Հայաստան են այցելել բյուզանդացի, արաբ, սիրիացի, Ասիայի ու Եվրոպայի տարբեր երկրների ճանապարհորդներ, աշխարհագրագետներ, պատմաբաններ, նկարիչներ, գրողներ ու գիտնականներ:

Որպես տնտեսության առանձին ճյուղ կամ ոլորտ՝ զբոսաշրջությունը մեր հանրապետությունում սկսել է ձևավորվել 20-րդ դարի 30-ական թվականներից:

Այսպես՝ Հայաստանի ԺԿԽ՝ 1931 թ. մայիսի 7-ի որոշմամբ ստեղծվել է Պորլետարական տուրիզմի ընկերությունը, որի անդրանիկ համագումարը տեղի է ունեցել 1932-ին: Ընկերությունն ունեցել է խանութ, հանդերձանքի, վարձույթի կետ, հրատարակել է «Պորլետարական տուրիստ» եռամսյա թերթը: 1932–34 թթ. Հայաստանում համամիութենական երկու շենքներ ու հյուրանոցներ են վարձակալվել Ստեփանավանում, Գորիսում, Ղափանում, Սևանում, Դիլջանում<sup>2</sup>:

1952-ին կազմակերպվել են Երևանի տուրիստական-էքսկուրսիոն բազան, Թումանյան ավանի տուրբազան: 1954 թ. հանրապետությունն ընդգրկվել է համամիութենական տուրիստական երթուղիներում:

Առաջին անգամ դեպի Սև ծով ուղևորություն հասարակության համար կազմակերպվել է 1968-ին: 1970-ից ինքնաթիւռով զբոսաշրջային ուղևորություններ էին կատարվում Մոսկվա, Լենինգրադ, Ռիգա և ԽՍՀՄ այլ քաղաքներ: 1970–80-ական թթ. շահագործման են հանձնվել «Նախի», «Էրեբումի», «Լալվար», «Կումայրի», «Տուրիստ» հյուրանոցները:


Հայաստանի զբոսաշրջային այցելությունների բուռն աճ արձանագրվեց 2001 թվականին (123 հազար մարդ), երբ տոնվում էր Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի հաստատման 1700-ամյակը: Նման աճ ապահովվեց ինչպես ենթակառուցվածքների որոշակի բարելավման, այնպես էլ երկրի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի բարձրացման շնորհիվ: Համեմատության համար նշենք, որ, օրինակ՝ 1999 թվականին Հայաստան այցելուների քանակը կազմել է ընդամենը 40 հազար մարդ, որոնք, համաձայն ԶՀԿ սահմանման, դասվում են միջազգային ներգնա զբոսա-

<sup>2</sup>Տես Հայկական սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան, Եր., 1987, էջ 324:

շրջության խմբին այն դեպքում, երբ, օրինակ՝ 1992–1993 թվականներին այդ ցուցանիշը 4–5 հազար այցելու է<sup>3</sup>:

Խորհրդային շրջանում գրոսաշրջային արդյունքի արտահանման լավագույն տարում՝ 1987 թվականին, գրոսաշրջիկների թիվը հասել է 500 հազարի, որոնցից միայն 100 հազարը ԽՍՀՄ տարածքից չեն եղել:

Վերջին տարիներին, շնորհիվ վարվող պետական քաղաքականության, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, հանրապետություն Եկող միջազգային գրոսաշրջիկների քանակը զգալիորեն աճել է:



**Աղյուսակ** [4](http://mineconomy.am/uploads/20151902175107148.pdf)

#### Գծանկար 1. Հայաստանում միջազգային գրոսաշրջային այցելությունների շարժմանը\*

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների՝ 2014 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում հանրապետություն է ժամանել 683979 գրոսաշրջիկ՝ 2013 թ. նույն ժամանակաշրջանի 677910 գրոսաշրջիկների դիմաց: Նույն ժամանակահատվածում գրոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 640032 մարդ, կամ 2013 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշի աճի տեսակ կազմել է 121.6%<sup>4</sup>: Բերված ցուցանիշների աճի տեսակ կայում են, որ տարեցտարի ավելանում է հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես գրոսաշրջային երկրի նկատմամբ: Հաշվի արմենով գրոսաշրջային արդյունաբերությունում ներկայումս իրականացվող պետական և մասնավոր ծրագրերի ծավալները՝ 2015 թ. ընթացքում ակնկալվում է գրոսաշրջային այցելությունների քանակի 20% աճ: Հարկ է նշել նաև, որ 2014 թ. ընթացքում օտարերկրյա պետություններում << ռիվանագիտական ներկայացուցչությունների կողմից տրվել է << մուտքի 24085 վիզա<sup>5</sup>:

<sup>3</sup> <http://www.mineconomy.am/uploads/20152701171522463.pdf>

<sup>4</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ԱՎԾ, 2015, էջ 128:

<sup>5</sup> Տես նույն տեղը, էջ 126:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մեր երկիրն առաջարկում է հետաքրքիր համադրությամբ գրոսաշրջային արդյունք՝ հարուստ մշակութային ժառանգություն, անաղարտ բնություն, հյուրասիրության հարուստ ավանդույթ, Հայաստանը բոլոր հնարավորություններն ունի գրավելու իր ուրույն դիրքը միջազգային շուկայում: Սա իր հերթին պահանջում է գրոսաշրջային ռեսուրսների պատշաճ և մանրամասն գնահատում, համաշխարհային շուկայում պահանջարկի և հայկական գրոսաշրջային առաջարկի (գրոսաշրջային արդյունք, ծառայություններ) վերանայում, հայկական գրոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում համաշխարհային շուկայի թիրախսային հատվածներում (աշխարհագրական, կրոնական, մշակութային և այլն):

#### Աղյուսակ 1

#### Հայաստանում միջազգային գրոսաշրջային այցելությունների շարժընթացը\*

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Ընդամենը՝ ժամանող գրոսաշրջիկներ	262959	318563	382240	510622	558443	575281	683979	757935	963000	1084188	1203746
Որից տեղաբաշխվել են.											
Հյուրանոցային հանգրվան ներում	227525	268538	327766	444328	487795	494648	594975	664333	884596	1035722	1109457
Այլ վարձով կամ բարեկամների տանը	35434	50025	54474	66294	70648	80633	89004	93602	78404	48466	94289

\* Աղյուսակը՝ <http://mineconomy.am/uploads/20151902175107148.pdf>

Ակնհայտ է, որ արտագնա գրոսաշրջության հավելածի տեմպերը գերազանցում են ներգնա գրոսաշրջության համանման ցուցանիշները, որը, բնավ, գրոսաշրջության առաջանցիկ տեմպերի մասին չի վկայում:

Ուսումնասիրությունները և բերված ցուցանիշները վկայում են, որ տարեցտարի ավելանում է եվրոպական երկրների հետաքրքրությունը Հայաստանի՝ որպես գրոսաշրջային երկրի նկատմամբ: Այս առօլմով, Եվրոպական երկրներից այսօր կարելի է առանձնացնել Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Հունաստանը, Կիպրոսը, Չեխիան, Միացյալ Թագավորությունը, Ավստրիան: Համաձայն սահմանային անցնան կետերում հավաքագրված տվյալների՝ 2014 թ. նկատվել է Եվրոպական տարածաշրջանից դեպի Հայաստան այցելությունների զգալի աճ՝ 23.28%<sup>6</sup>:

Անդրադարձով հյուրանոցների ծանրաբեռնվածության խնդրին՝ նշենք, որ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում գիշերակացի քանակը կազմում է 595335, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում ննջատեղերի թիվը ավելի քան 100000 է, ըստ որի հյուրանոցների գրաղվածությունը շուրջ 22% է: Ընկերների և հարազատների բնակարաններում հանգրվանող գրոսաշրջիկների տոկոսային հարաբերակցության աճ՝ նկատվում հայկական ծագում ունեցող այցելուների շրջանում՝ 79.9%, մինչդեռ միևնույն խմբում նվազել է հյուրանոցներում հանգրվանողների թիվը՝ հասնելով 9.8%-ի: Ըստ այդմ՝ այցելության ժամանակ ընկերների և հարազատների տանը

<sup>6</sup>Տես [http://www.mineconomy.am/files/210\\_zbosashrjutyun\\_verlucutyun-168.pdf](http://www.mineconomy.am/files/210_zbosashrjutyun_verlucutyun-168.pdf)

հանգրվանելու հավանականությունն առնչվում է հայկական ծագումով գրոսաշրջիկների տոկոսային հարաբերությանը<sup>7</sup>:

**Աղյուսակ 2**  
**ՀՀ այցելած գրոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու  
ամի տեսապ 2013–2014 թթ. հունվար–դեկտեմբերին\***

	<i>Տեսակարար կշիռ (%)</i>		<i>Զրոսաշրջիկների բացարձակ թվի ամի տեսապ (%)</i>
	<i>2013 թ. հունվար– դեկտեմբեր</i>	<i>2014 թ. հունվար– դեկտեմբեր</i>	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>110.1</b>
այդ թվում՝			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>19.9</b>	<b>21.8</b>	<b>121.1</b>
որից՝			
Ուկրաինա	1.9	1.8	104.4
Ուստաստանի Դաշնություն	16.8	18.5	121.3
ԱՊՀ այլ երկրներ	1.1	1.5	146.7
<b>ԵՄ երկրներ</b>	<b>38.5</b>	<b>38.4</b>	<b>109.7</b>
որից՝			
Նիդեռլանդներ	2.0	0.9	51.7
Իտալիա	6.2	6.6	116.4
Ֆրանսիա	10.0	8.6	94.4
Գերմանիա	5.5	5.5	108.7
Միացյալ Թագավորություն	4.7	7.6	175.8
ԵՄ այլ երկրներ	10.0	9.2	101.7
<b>Այլ երկրներ</b>	<b>41.6</b>	<b>39.8</b>	<b>105.2</b>
որից՝			
ԱՄՆ	14.8	13.1	96.9
Իրան	7.4	6.8	101.5
Վրաստան	2.6	2.8	119.1
Թուրքիա	1.4	0.8	68.3
Կանադա	1.7	1.3	84.1
այլ երկրներ	13.7	15.0	119.9

\* Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված գրոսաշրջիկներին:

**Աղյուսակ՝** <http://www.cf.am/files/news/369/bc92dc4a54.pdf>

Վերլուծելով ներգնա գրոսաշրջիկների ընդհանուր բնութագիրը՝ անհրաժեշտ է նշել, որ գրոսաշրջիկների մեծամասնությունը Ուստաստանից (34.9%), Վրաստանից (28.1%), Իրանից (7.8%), ԱՄՆ-ից (4.5%), Ֆրանսիայից (3.5%), Գերմանիայից (2.9%) և Ուկրաինայից (2.0%) է (այցելությունների միջին տևողությունը 20 օր է):

Զրոսաշրջիկների 22%-ը Հայաստան են այցելել գործարարության նպատակով, 12%-ը՝ հանգստի, իսկ 45%-ը՝ հարազատներին և բարեկամներին այցելելու նպատակով, ընդ որում, առաջին նպատակով այցելող գրոսաշրջիկների 53%-ը Ուստաստանից, Վրաստանից և ԱՄՆ-ից են:

Հատկանշական է այն փաստը, որ կրկնվող այցելությունները Հայաստան բավականին շատ են. բոլոր գրոսաշրջիկների 53%-ը կատարել է չորս կամ ավելի այցելություն: Հայաստանի մասին տեղեկատվության հիմնական

<sup>7</sup> Տես [http://mineconomy.am/up/files/ARMENIAN\\_INTERNATIONAL\\_VISITOR%20SURVEY-170.pdf](http://mineconomy.am/up/files/ARMENIAN_INTERNATIONAL_VISITOR%20SURVEY-170.pdf)

աղբյուրներն են. ընկերները և բարեկամները՝ 52.4%, նախկին այցելությունները՝ 36.1%, ռադիո-հեռուստատեսային գովազդները՝ 2.6%, և 1%-ից պակաս գրուաշրջիկներ են համացանցի միջոցով գնել գրուաշրջային փաթեթներ և ծառայություններ:

Յուրաքանչյուր գրուաշրջիկ Հայաստանում ծախսում է մոտ 36 ԱՄՆ դոլար/օրական և մոտ 705 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր այցելության ընթացքում:

Հայաստան այցելած գրուաշրջիկների ճամփորդության նպատակը ներկայացնենք արյուսակ 3-ի օգնությամբ.

### **Աղյուսակ 3 Զբոսաշրջիկների՝ դեպի Հայաստան ճամփորդության նպատակները 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ**

Ճանապարհորդության նպատակը	/Նույնակարար կշիռը, %/																	
	Ամ	Կանադա	Ամարինա	Ուկանան	Վրաստան	Արգենտինա	Հրամանական	Իտալիա	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա	Գրեանդինա	Արգենտինա	Իրան	Արմանիա	Սիրիա	Իրան	Հունաստան	Ադրբեյջան
Բնություն	65.4	45.0	66.7	60.6	78.0	78.6	68.4	65.0	66.7	68.1	72.1	70.7	50.0	66.7	64.7	69.4	68.6	
Մշակույթ/պատմություն	67.9	55.0	66.7	39.4	39.0	50.0	73.7	65.0	66.7	84.0	77.9	62.7	41.7	50.0	38.2	72.9	59.3	
Ուստագնացություն	6.4	35.0	5.6	3.2	15.1	7.1	26.3	5.0	3.3	14.9	1.5	1.3	8.3	27.8	0	4.7	8.8	
Մասնագիտական շրջագայություն	3.8	5.0	5.6	4.3	8.8	21.4	10.5	0	6.7	4.3	7.4	5.3	0	11.1	0	14.1	6.8	
Էկոտուրիզմ/արկածային տուրիզմ	3.8	0.0	5.6	17.0	15.1	21.4	15.8	20.0	3.3	12.8	19.1	13.3	0	11.1	8.8	10.6	12.4	
Հայաստանի ավանդույթներ	25.6	25.0	5.6	10.6	8.2	21.4	36.8	25.0	20.0	29.8	25.0	14.7	16.7	11.1	8.8	27.1	18.6	
Այլ	9.0	45.0	5.6	20.2	6.3	14.3	5.3	0.0	6.7	1.1	2.9	6.7	50.0	16.7	17.6	5.9	9.4	

Աղյուր՝ [http://mineconomy.am/uploads/TEXEKANQ\\_FORUM\\_sayt.pdf](http://mineconomy.am/uploads/TEXEKANQ_FORUM_sayt.pdf)

Զբոսաշրջիկների 68.6%-ի՝ Հայաստան այցելության որպես հիմնական նպատակ է նշվել բնությունը, 59.3%-ի դեպքում՝ պատմությունը և մշակույթը: Հայկական ավանդույթները (18.6%) և էկոտուրիզմ/արկածային տուրիզմը (12.4%) ևս նշվել են որպես այցելության նպատակներ Հայաստան ժամանած զգալի թվով գրուաշրջիկների կողմից: Ուստագնացությունը և մասնագիտական շրջագայությունները շուկայի նշանակալի մաս չեն կազմում:

Անժխստելի է այն փաստը, որ վերջին տարիներին Հայաստանում գրուաշրջության ենթակառուցվածքների զարգացման նպատակով մեծածավալ ներդրումներ են կատարվել. կառուցվել են նոր հյուրանոցներ և ռեստորաններ, ծեռք են բերվել միջազգային չափանիշներին համապատասխանող գրուաշրջային ավտորուսներ: Շարունակվում են գրուաշրջային և կենսական նշանակության ճանապարհների բարեկավման աշխատանքները: Վերակառւցման և զարգացման միջազգային բանկը 2013 թ. 45 մլն ԱՄՆ դոլարի չա-

<sup>8</sup> Տես նույն տեղը:

<sup>9</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ԱՎԾ, 2015, էջ 126:

փով վարկ տրամադրեց կենսական և գրոսաշրջային նշանակության ձանապարհացանցի բարելավման ծրագրի իրականացման՝ 2013–2015 թթ. ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում ձանապարհների վերակառուցման և վերականգնման համար: Ծրագրի առաջին տարվա աշխատանքներում ներառվեցին մոտ 70 կմ ձանապարհների վերականգնման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2013 թ. վերջին, իսկ պայմանագրով առանձնացված թերությունների վերացման ժամանակաշրջանը կտևի մինչև 2015 թվականի վերջը:

Վերոհիշյալ ծրագիրը տնտեսական խթան կիանության գյուղական համայնքների համար՝ ապահովելով աշխատատեղեր և վերականգնված կենսական նշանակության ենթակառուցվածքից երկարաժամկետ հատվածում օգտվելու հնարավորություն: Ի լրումն նշված տնտեսական օգուտների (գրոսաշրջության հետագա զարգացում, գյուղատնտեսական ապրանքների շուկաների հասանելիություն, աշխատատեղերի ստեղծում և այլն)՝ կրարելավեն նաև գյուղական բնակչության սոցիալական պայմանները կրթական, բժշկական և սոցիալական ծառայությունների հասանելիության մեծացման արդյունքում:

2008 թ. ՀՀ-ում բացվեց «Լինսի» հիմնադրամը: 73 միլիոն դոլարի ձանապարհաշինարարական և 14 միլիոն դոլարի Երևանի փողոցների բարեկարգման աշխատանքներին հատկացումները նոր տեսք տվեցին մայրաքաղաքի գլխավոր պողոտաներին, փողոցներին ու հրապարակներին:

45 միլիոն դոլար հատկացվեց երկրաշարժից ավերված բնակելի ֆոնդի վերականգնմանը, ինչի շնորհիվ Շիրակի և Լոռու մարզերում կառուցվեց 149 շենք՝ 3674 բնակարանով: Փաստորեն, 3674 ընտանիք քայլաված ու խոնավ տնակներից տեղափոխվեցին բարեկարգ բնակարաններ:

«Լինսի» հիմնադրամի «Մշակույթ» ծրագրին հատկացված գումարը, թվում է, այնքան էլ մեծ չէ. ընդամենը 18 միլիոն դոլար, սակայն, ընդհանուր առնամբ, հիմնովին վերականգնվեց 34 մշակութային հաստատություն՝ 13 թատրոն ու համերգասրահ, 7 թանգարան-ցուցասրահ, 9 տուն-թանգարան, 4 պատմամշակութային համալիր և Ծաղկաձորի համահայկական մարզական երիտասարդական ձամբարը<sup>10</sup>:

Իրականացվում են կապիտալ ներդրումներ քաղաքաշինության և գվարձանքի օբյեկտներում, միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան վերակառուցվել է «Զվարենոց» միջազգային օդանավակայանը, իրագործվում է «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող գրոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը<sup>11</sup>: Նշված ծրագրի արդյունքում հնարավոր կլինի ներկայացնել հայրենական գրոսաշրջային արդյունքը նոր որակական չափանիշներով՝ նոր հյուրանոցներ, սպասարկման նոր որակ, գրոսաշրջային գրավչության նոր վայրեր, ինչպես նաև ձմեռային գրոսաշրջության զարգացման շնորհիվ կարելի կլինի երկարաձգել գրոսաշրջային ժամանակաշրջանը Հայաստանում<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս <http://www.2rd.am/hy/Linsi-himnadramy-Hayastanum>

<sup>11</sup> Տե՛ս «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող գրոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիր, էջ 1. (հաստատվել է ՀՀ Կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի 948-Ն որոշմանք՝ ՀՀ ՊՍ 27.07.05/ 48 (420)), հոդված 922:

<sup>12</sup> Տե՛ս «Զբոսաշրջության զարգացման ազգային գործակալություն» ՓԲԸ պաշտոնական կայքը՝ [www.armeniainfo.am](http://www.armeniainfo.am)

Ուշագրավ երևոյթ է նաև Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնումը: Վերջինս, լինելով շահույթի ստացման նպատակ չինտապնդող ոչ առևտրային նախագիծ, ունի մի շարք խնդիրներ. մասնավորապես՝

- Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում հիմնել ժամանակակից միջազգային դպրոց:
- Միջազգային որակյալ կրթությունը հասանելի դարձնել Երիտասարդներին՝ անկախ ազգությունից և ֆինանսական հնարավորություններից:
- Սովորողների համար ապահովել բազմակողմանի կրթություն, որը նոր հնարավորություններ կստեղծի նրանց համար:
- Սովորողներին նախապատրաստել՝ ընդունվելու աշխարհի լավագույն բուհեր:
- Ուսուցիչների և սովորողների միջև հաստատել լիարժեք երկխոսություն:
- Սովորողների մեջ սերմանել մշտական ինքնակատարելագործման գիտակցում և ծգուում:

Զբոսաշրջային ներուժը գնահատելիս անպայման պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է, ինչը նրան գրավիչ է դարձնում միջազգային զբոսաշրջային հանրության համար:

Մեր Երկրում զբոսաշրջության ոլորտն արձանագրում է դրական զարգացումներ. թե՛ ներգնա և թե՛ ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կայուն ու դիմանիկ աճում է: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2013 թ. Հայաստան է ժամանել 1084188 միջազգային զբոսաշրջիկ՝ 12.6%-ով գերազանցելով 2012 թ. ցուցանիշը: 2014 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետություն է ժամանել 941151 զբոսաշրջիկ՝ 13.6%-ով ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում:

2013 թ. ներքին զբոսաշրջիկների թիվը Հայաստանում կազմել է 669 540՝ 2012 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճելով 30.1%-ով: 2014 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջիկների թիվը հասնել է 785 180-ի՝ 2013 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 33.7%-ով:

2000–2013 թթ. Հայաստան այցելած ներգնա զբոսաշրջիկների թիվն ավելացել է ավելի քան 24 անգամ<sup>13</sup>:

<sup>13</sup>Տես [http://armef.com/news/category/comment/article/article\\_1424110206](http://armef.com/news/category/comment/article/article_1424110206)

**СУСАННА КАРАПЕТЯН**

Ассистент кафедры "Управления" АГЭУ

**Нынешнее состояние и особенности развития туризма в РА.**— Туризм стал особенной сферой экономики, где естественно действуют такие законы экономического развития, каковыми являются законы повышения эффективности производства, стоимости, спроса и предложения, ценообразования и т.д.

Туризм оказывает значительное влияние на такие важнейшие сферы экономики, как транспорт и связь, торговля, строительство, сельское хозяйство, выпуск потребительских товаров.

В начале 20-го века туризм начал развиваться беспрецедентными темпами, которые связаны с формированием оздоровительных центров и центров отдыха, новыми географическими открытиями и активностью континентов Америки, Африки и Австралии, развитием транспорта и другими факторами.

**Ключевые слова:** туризм, туристические инфраструктуры, темпы прироста туризма, внутренний и внешний туризм.

**SUSANNA KARAPETYAN**

Assistant at the Chair of "Management" at ASUE

**Present Condition and Features of Tourism Development in the RA.**— Tourism becomes a special sphere of economy with special laws of economic development, like laws of increasing production efficiency, costs, supply and demand, pricing, etc.

Tourism renders significant influence on such major spheres of economy, as transport and communication, trade, construction, agriculture, output of consumer goods.

At the beginning of the 20th century tourism started to develop unprecedented rates which are connected with the formation of health centers and resthomes, new geographical openings and the activity of continents of America, Africa and Australia, development of transport and other factors.

**Key Words:** tourism, tourist infrastructures, rates of tourism growth, internal and external tourism.



## ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասխատենու

### ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հանրային ծառայությունը հանրային կառավարմանը գուգընթաց զարգացել և դարձել է վերջինիս արդյունավետությունը ապահովող ամենակարևոր ինստիտուտը։ Հանրային ծառայությունն ուղղված է պետության և հասարակության պահանջնունքների բավարարմանը և շահերի պաշտպանությանը։ Հանրային ծառայության մեջ քաղաքականության և մասնագիտական գործունեության փոխազդեցությունը ապահովում է պետության և հասարակության զարգացումը։ Քաղաքականությունն անգործունակ է առանց մասնագիտական գործունեության իրականացման, իսկ ծառայությունն առանց քաղաքականության անհմաստ է։ Պետության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է քաղաքականության և մասնագիտական ծառայության ներդաշնակեցում։

**Հիմնաբառեր.** հանրային կառավարում, հանրային ծառայություն, քաղաքականություն, պետություն, հասարակություն, իշխանություն, բյուրոկրատիա, մասնագիտական գործունեություն, պահանջնունք, շահ

Հանրային ծառայությունը հանրային կառավարմանը գուգընթաց զարգացել և դարձել է վերջինիս արդյունավետությունը ապահովող ամենակարևոր ինստիտուտը։ Հանրային իշխանության և կառավարման համակարգում հանրային ծառայության տեղի և դերի հստակեցումը եղել և մնում է հանրային կառավարման գիտության առավել արդիական տեսական և գործնական խնդիրներից մեկը։

Հանրային կառավարման էության բացահայտման ընթացքում է միայն հնարավոր գնահատել հանրային ծառայության կարևորությունը և դերը հանրային գործընթացների կառավարման մեջ։

Ըստ առավել լայն տարածված մոտեցման՝ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման և տեղական ինքնակառա-

վարման ամբողջություն: Հանրային կառավարման էության նման մեկնաբանությունն անհիմն չէ, սակայն թերի է: Այդ հասկացության բովանդակությունն ավելի լայն ու տարրողունակ է, քան «պետական կառավարումը» և, որպես երևոյթ, հանրային կառավարումը բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումը էվոլյուցիոն զարգացման շնորհիվ վերաձել է հանրային կառավարման<sup>1</sup>:

Հանրային կառավարման գիտական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե տեսաբանները հանրային կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացման հիմնախնդիրները պայմանավորել են վարչական մարմինների գործունեությամբ, ուստիև գիտական ուսումնախությունների թիրախ է դարձել պետական վարչակազմը: Պետականագիտության ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը բացատրվում էր հանրային ծառայությունը բարեփոխելու և հանրային ծառայողների գործունեությունը ժողովրդավարական սկզբունքներով իրականացնելու պահանջով:

Սա վկայում է այն մասին, որ հանրային կառավարման գիտությանը գործակի ձևավորման հանրային ծառայության գիտական արմատները: Հանրային կառավարման գիտության զարգացման ընթացքում հրատարակվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնք վերաբերում են վարչարության ուսումնասիրությանը<sup>2</sup>:

Վկիսոն-վեբերյան տեսակետները անվերապահորեն կարելի է համարել արդյունաբերական հասարակության կառավարման հիմքը, որոնք մինչ այսօր էլ անգնահատելի են կառավարման գիտության մեջ, սակայն բյուրոկրատիայի բացարձակացումը մեծ քննադատություն առաջացրեց գիտական շրջանակներում: Դա հիմնավորվեց առավելապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ ձևավորվեց բյուրոկրատիզմը, որը բյուրոկրատիայի խեղայուրված ձևն է: Սա պայմանավորված էր ժամանակի հասարակության խնդիրները լուծելու սահմանափակ հնարավորությամբ: Այս ժամանակաշրջանում կառավարման դիտակետը դարձան մարդը և մարդկային հարաբերությունները, իսկ համակարգակենտրոն կառավարմանը փոխարինեց անհատակենտրոն կառավարումը, աստիճանակարգային կառավարմանը՝ գործընկերային և մասնակցողական կառավարումը:

1970–80-ականների տնտեսական զգնաժամերը (նավթի գների աճ, բյուջետային մուտքերի կրծատում և այլն) վերջնականապես խաթարեցին զարգացած տնտեսությամբ երկրների հանրության վստահությունը ավանդական բյուրոկրատական հանրային կառավարման մոդելի նկատմամբ: Հանրային կառավարման սկզբունքների և կառուցակարգերի արդիականացման ուղղությամբ գիտական հանրությի գործադրած ջանքերի արդյունքը դարձավ նոր հանրային կառավարման մոդելի ստեղծումը, որը պետք է կարողանար առավելապես բավարարել հանրային պահանջմունքները:

Ընդհանուր առմամբ, «հանրային կառավարում» հասկացությունն արտացոլում է ընդհանրական համակարգ, որի ենթահամակարգերի ու տարրերի դերում հանդես են զալիս քաղաքական ծրագրային կողմնորոշումները և գերակայությունները, իրավական կարգավորումը, ընթացակարգերը, պետա-

<sup>1</sup> Տե՛ս Յուլ. Սուվարյան, Վ. Միրզոյան, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Եր., «Գիտություն», 2013, էջ 12-13:

<sup>2</sup> Տե՛ս Woodrow W., Congressional Government: A Study in American Politics, 1885, The Study of Administration, 1887, Goodnow F., Politics and Administration, 1900, Weber M., Politics as a Vocation, 1919, Economy and Society, 1921:

կան կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձևավորված կենտրոնացված, ինչպես նաև ապակենտրոնացված կազմակերպական կառուցվածքները և դրանց աշխատակազմերը, որոնք կառավարման տարբեր մակարդակներում և հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում պատասխանատու են հասարակական հարաբերությունների կարգավորման համար: Հանրային կառավարումն ընդգրկում է հանրության համակարգման ներքին կառուցվակարգերը, մարդկային, ֆինանսական, նյութական և տեղեկատվական ռեսուրսների կառավարումը և արդյունքների արդարացի բաշխումը:

Հանրային կառավարումը կառավարման օբյեկտի՝ հասարակության, հասարակական հարաբերությունների և դրա մասնակիցների, հանրային գործընթացների վրա իշխանական ներգործություն է, որն իրականացվում է կառավարման սուբյեկտի՝ պետական և տեղական իշխանության մարմինների, նրանց կողմից լիազորված մարմինների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ու քաղաքացիների (ովքեր ժողովրդավարական հասարակարգում իշխանության առաջնային կրողներ են) կողմից:

Պարզ է դաշնում, որ հանրային կառավարումը ոչ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կառավարչական ներգործությունն է, այլ նաև ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ հասարակությունը, ելնելով իր պահանջմունքներից, պարտադրում է իշխանության մարմիններին ձևակորել իրավական, տնտեսական, քաղաքական, սոցիալական այնպիսի միջավայր, որտեղ առավելագույնս կրավարարվեն հանրային պահանջմունքները և կպաշտպանվեն հանրային շահերը, որոնք էլ պետության առաքելության հիմքն են կազմում: Մյուս կողմից՝ պետական իշխանության կրողներն ընդունում են այնպիսի որոշումներ, որոնք նպաստում են պետական կառույցի պահպանմանը: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ հանրային կառավարումը կարելի է ներկայացնել որպես ժամանակակից պետության վարչական կառավարմանը հանրության մասնակցության տարբեր ձևերի անբողջություն:

«Կառավարման նորացում» գրքում Դ.Օսբորնը և Թ.Գերբերը պնդում են, որ քաղաքակիրթ հասարակությունը չի կարող գործել առանց արդյունավետ պետության, և ոչ թե մարդիկ են պետական կազմակերպություններում խնդիր ստեղծում, այլ համակարգը, որում նրանք գործում են: Այսպես՝ հեղինակները նշում են, որ հանրային կառավարման մարմինները պետք է՝

- խթանեն միջակցությունը հանրային ծառայությունների մատակարարների միջև,
- ընդլայնեն քաղաքացիների իրավունքները՝ կառավարական և հանրային հաստատությունների գործունեության նկատմամբ հսկողությունը բյուրոկրատ-պաշտոնյաներից փոխանցելով անմիջականորեն հասարակությանը,
- հանրային հաստատությունների աշխատանքը գնահատել ոչ թե ծախսերով, այլ արդյունքներով,
- իրականացնել դեկավարում նպատակներով, այլ ոչ թե օրենքներով և կանոններով,
- քաղաքացիներին դարձնել ազատ սպառողներ՝ նրանց վերապահելով մատուցվող հանրային ծառայություններն ընտրելու իրավունքը,

- կենտրոնանալ ոչ թե ծառայությունների մատուցման, այլ հասարակությունում ծագող խնդիրների լուծման վրա և այլն<sup>3</sup>:

Այդեւար աստիճանաբար տարածվեցին և հասարակության կողմից ընդունվեցին «հետքուրոկրատական կազմակերպության», կառավարման ոլորտում հօգուտ գործընկերային հորիզոնական հարաբերությունների, կոռուպտացիայի, շուկայական փոխանակության կառավարման դասական աստիճանակարգային կառուցվածքից հրաժարման, «հաստատության տրամաբանությունից» «սպասարկման տրամաբանությանն» անցման գաղափարները<sup>4</sup>:

Պետական կառավարման համակարգի նորացումը և հանրային կառավարման համակարգի կայացումը չէին կարող չանդրադառնալ հանրային ծառայության ինստիտուտի կառուցվածքի և բովանդակության վրա, քանի որ հանրային ծառայության պատմական դերը անքակտելիորեն կապված է պետության գոյության հետ:

Հանրային ծառայության ինստիտուտն ունի խոր արմատներ. դա ձևավորվել է պետության առաջացման հետ մեկտեղ, ապա փոխվել է դրա էռությունը՝ պայմանավորված «քագին» ծառայելու անհրաժեշտությամբ: Ծառայությունը միապետին կատարվել է «կերակրման» համակարգով և ունեցել է որոշակի ձևական հիմքեր: Սահմանադրական-ժողովողավարական պետության ձևականությունը, կառավարման համակարգի ռացիոնալացումը նպաստեցին կանոնակարգված պետական ծառայության համակարգի ներդրմանը՝ կապված իշխանության առանձին թերին ծառայելու և քաղաքական խնդիրները լուծելու անհրաժեշտության հետ: Հանրային կառավարման էվոլյուցիային գուգացավ և կայացավ հանրային ծառայության ինստիտուտը՝ դաշնալով պետական ծառայության իրավահաջորդը:

Հանրային ծառայության ինստիտուտի կայացման առումով կարևոր դեր են ունեցել տարբեր ժողովուրդների անկախացման, հասարակության ձևավորման, ժողովրդավարության հաստատման, իրավական և սոցիալական պետությունների կայացման գործընթացները, երբ յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տրվում, ենելով իր ունակություններից, զբաղեցնելու հանրային պաշտոններ և նաև հանրային կառավարմանը: Այնուհետև տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը որակապես փոխեց հանրային ծառայության բնույթը, քանի որ մունիցիպալ ծառայողները նույնական ընդգրկվեցին հանրային ծառայության համակարգում:

Հանրային ծառայության արդիականացման հիմնական արդյունքները հանգեցին հետևյալին:

- տեղի ունեցավ քաղաքականությունից ծառայողների ինստիտուցիոնալ առանձնացում,
- ծառայության կադրային կազմակերպման հիմքում դրվեցին արհեստավարժության, բանինացության, մրցութային ընտրության, ծառայողական կարիերայի կայունության սկզբունքները,
- ծառայողին վարձողը դարձավ պետությունը կամ, ավելի ճշգրիտ՝ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, այլ ոչ թե քաղաքական գործիչը,

<sup>3</sup>Տես **Օսборն Դ.**, Управление без бюрократов: пять стратегий обновления государства /Общ. ред. Л.Н. Лопатикова. М., Прогресс, 2001, էջ 230:

<sup>4</sup>Տես **Оболонский А.В., Барабашев А.Г.**, Государственная служба (комплексный подход). /Учебное пособие, 2-е изд., М., Дело, 2000, էջ 29-30:

- ծառայողների քաղաքական պատասխանատվությունը (ժողովրդի առջև) փոխարինվեց վարչական-ծառայողական պատասխանատվությամբ (պետության առջև),
- սկսեց ձևակորպել հանրային իրավունքի նոր ձյուդ՝ վարչական-ծառայողական իրավունք, որը կարգավորում է ծառայողական հարաբերությունները,
- վարչական գիտությունը կենտրոնացավ ծառայության ինստիտուտի կատարելագործման տեխնոլոգիական մակարդակի վրա՝ անձնակազմի կառավարում, վարչարարության արդյունավետություն:

Անշուշտ, քաղաքականությունից հանրային ծառայության տարանջատումը, դրա ժողովրդավարացումը և ռացիոնալացումը նպաստեցին հանրային կառավարման տնտեսական արդյունավետության բարձրացմանը, հետևաբար նաև՝ 20-րդ դարի առաջին կեսին պետությունների բարեկեցության աճին: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պետության կառավարման ռացիոնալ մոդելը սկսեց կտրուկ կորցնել իր «արդյունավետ» ներուժը: Արդյունաբերական աշխարհը հեղեղվեց բյուրոկրատիզմի, կոռուպցիայի նոր ալիքով, ընդգծեցին վարչական և քաղաքական վերնախավերի սերտածման միտումները, նվազեց ծառայողական գործունեության արդյունավետությունը:

Ծառայության ռացիոնալ մոդելը իրականություն և ձեռքբերում դարձավ մոդեռնի դարաշրջանի համար: Սակայն այդ դարաշրջանն ավարտվեց, քանի որ աշխարհայացքային սկզբունքները՝ տեխնոլոգիական, ունիվերսալիզմը և տնտեսական դետերմինիզմը, մեծապես սպառեցին իրենց գիտական և գործնական ներուժը: Այս ամենը ակտիվացրեց հանրային ծառայության արդյունավետ կազմակերպման խնդրի լուծման նոր տեսական մոտեցումների որոնումները<sup>5</sup>:

Հանրային ծառայության ռացիոնալիստական հայեցակարգը անտեսում է բյուրոկրատիայի «մարդկային գործոնը»՝ չափելով «մարդկային կապիտալը», այսինքն՝ հանրային ծառայության մարդկային ռեսուրսների որակը գնահատվում է մասնագիտական գիտելիքների (առաջին հերթին՝ տեխնիկական) և մասնագիտական պատրաստվածության մակարդակով:

Այս համատեքստում հանրային ծառայության ժամանակակից հայեցակարգի մշակման ժամանակ արդիական նշանակություն ունի մշակութային-արժեքային բաղադրիչի ներկառուցումը, ինչը նշանակում է նաև բյուրոկրատիայի պատմական զարգացման առանձնահատկությունների հաշվառման և զահատման անհրաժեշտություն:

Այսպիսով՝ քաղաքականությունը և հանրային ծառայությունը կազմունեն պետության երկու՝ գործառության (քաղաքականությամբ գրաղվող և քաղաքական ծրագրերը կյանքի կոչող պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունն ուղղված է պետության գործառույթների իրագործմանը) և գործընթացային (պետական և համայնքային ծառայողներն ապահովում են քաղաքականության իրականացման գործընթացը) հենայուները, և դրանց տարանջատման անհրաժեշտությունը թելադրված է ժողովրդավարական պետականաշխնության տրամաբանությամբ: Հանրային ծառայությունը, իր էությամբ, հանրային իշխանության իրականացման կառու-

<sup>5</sup>Տես Օմել’ченко Հ.Ա., Իстория государственного управления в России: учебник. М., Проспект, 2006:

ցակարգն է, այսինքն՝ հանրային կառավարման սուբյեկտների որոշումների հրագործողը: Գործնականում դա հանրային կազմակերպությունների, կառույցների համակարգ է, որը պատասխանատու է պետական և մունիցիպալ քաղաքականության իրականացման, հանրային իշխանության բոլոր օղակների ընթացիկ գործունեության ապահովման համար:

Քաղաքացիական հասարակության ձևավորումը ամբողջությամբ և նորովի է բացահայտում հանրային ծառայության անհրաժեշտությունը, հանրային կառավարման մեջ դրա դերն ու նշանակությունը: Հասարակության անդամների պահանջմունքների մեծացումը, բազմատեսակացումը, քաղաքացիների փոխհարաբերությունների զարգացումը, իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, սոցիալական շերտավորումը, ազգային արժեքների գիտակցումը և պաշտպանությունը պահանջում են դրանց օրինական, ամենօրյա և նորովի լուծում:

Հարկ է նկատել, որ հետազոտական շրջանակներում չկա միասնական կարծիք ինչպես «հանրային ծառայություն», այնպես էլ «պետական ծառայություն» հասկացությունների բնորոշման հարցում: Հաճախ դրանք նույնացվում են, կամ «հանրային ծառայությունը» ներկայացվում է որպես «պետական ծառայության» և «մունիցիպալ ծառայության» ամբողջություն, սակայն հանրային ծառայության զարգացման ժամանակակից տրամաբանությունն ավելի ընդգրկուն է: Հանրային ծառայությունը առանձնահատուկ սոցիալ-իրավական ինստիտուտ է, որը ներառում է հանրային կառավարման մարմինների և դրանց աշխատակազմերի գործունեությունը, առանց որի հնարավոր չէ ոչ միայն պետության և հասարակության զարգացումը, այլև դրանց գոյությունն ընդհանրապես:

Հանրային ծառայության բնույթը ավելի լավ հասկանալու համար փորձենք մեկնաբանել նաև «հանրային ծառայություն» (public service) եզրույթը, որը կառուցված է «ծառայություն» և «հանրային» հասկացությունների համակցությամբ:

«Ծառայություն» եզրույթը տարբեր կերպ է մեկնաբանվում. որպես մարդու հասարակայնորեն օգտակար գործունեության տեսակ, որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, որպես սոցիալական հանրային մարմինների համակարգ, որպես մարդկանց որոշակի խնդիր մասնագիտական գործունեություն և այլն: Ընդհանուր ըմբռնմանք, ծառայությունը, պետական, հասարակական և այլ սոցիալական կառույցների լիազորությունների կատարման կազմակերպման և իրագործման առնչությամբ, անձանց որոշակի խնդիր մասնագիտական գործունեություն է: Ըստ այդմ, ծառայությունը՝ որպես հասարակայնորեն օգտակար գործունեության տեսակ, ի հայտ է եկել տարբեր սոցիալական համակարգերում՝ որպես հասարակության նորմալ կենսագործունեության անհրաժեշտ գործոն<sup>6</sup>:

Հանրային (լատ. publicus՝ հասարակական) հասկացությունը նշանակում է բաց, իրապարակային, հասարակության, հանդիսատեսի ներկայությամբ տեղի ունեցող, այլ իմաստով՝ հասարակական, հասարակության տիրապետության տակ գտնվող, ոչ մասնավոր: Այս համատեքստում հանրայինը բնորոշվում է նաև որպես «հասարակական բարիքի ձեռքբերմանն ուղղված»<sup>7</sup>:

<sup>6</sup> Տես Կօզբանենկո Վ.Ա., Պублично-правовая природа статуса гражданских и муниципальных служащих: общее и особенное // Конституционное и муниципальное право, 2003, № 3, էջ 28–34:

<sup>7</sup> Տես Чаннов С.Е., Административно-правовая модель регулирования служебных отношений в Российской Федерации: понятие и основные черты: автореферат дис. д-ра юрид. наук. Саратов, 2010, էջ 4:

Հանրային ծառայության եզրույթի պարզաբանումը հնարավորություն է տալիս բացահայտելու հանրային ծառայության իրականացման և ձևը, և բովանդակությունը, և նպատակը:

Կարելի է հանրային ծառայությունը ներկայացնել տարբեր տեսանկյուններից.

- պետության գործառույթների իրականացման գործընթաց,
- հանրային կառավարման իրավործում, հասարակության կայունության և զարգացման ապահովման գործընթաց,
- պետության կառավարման մեջ հասարակության մասնակցության գործընթաց,
- հանրային իշխանության բոլոր օղակների աշխատունակության ապահովում,
- օրենքների կատարում և օրենքների կատարման ապահովում,
- հանրության կենսագործունեության տարբեր ոլորտների կարգավորում:

Այսպիսով՝ քաղաքականությունը և մասնագիտական ծառայությունը հանրային կառավարման երկու փոխկապված և փոխպայմանավորված ենթահամակարգեր են, քանի որ՝

- քաղաքականությունը վճռականորեն ներգործում է հանրային ծառայության էության և կազմակերպման վրա, իսկ քաղաքական մշակույթը մեծապես պայմանավորում է ծառայողական մշակույթի բնույթը,
- քաղաքականության և վարչական կառավարման առաջնահերթ աղբյուր և ռեսուրս (միևնույն ժամանակ՝ նաև բարձրագույն արժեք) են համարվում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները,
- հանրային ծառայողն իր գործունեության ընթացքում ապահովում է ինչպես քաղաքական, այնպես էլ վարչական-կառավարչական գործառույթների կենսագործումը,
- թե՛ քաղաքական գործիքները և թե՛ պաշտոնյաները (հատկապես՝ հանրային ծառայության բարձրագույն պաշտոններ գրադեցնողները) իրենց իրավասության շրջանակներում իրականացնում են ինչպես քաղաքական (դեկապարում, պլանավորում, հսկողություն), այնպես էլ վարչական (համակարգում, ապահովում, կատարում) գործառույթներ: Ըստ որում, որքան բարձր է հանրային ծառայողի պաշտոնը, այնքան ավելի շատ քաղաքական գործառույթներ է այն պարունակում (օրինակ՝ մասնակցությունը բյուջեի կազմնամբ և դրա կատարման ապահովումը, օրենսդրական նախագծերի պատրաստումը և այլն),
- գործնականորեն յուրաքանչյուր պաշտոնյա իրավունք ունի (թեկուզ և սահմանափակ ու հստակ կանոնակարգված) որոշակի իրավիճակում գործելու իր հայեցողությամբ՝ այդկերպ մեկնաբանելով պետության քաղաքականությունը:

Հանրային ծառայության մեջ քաղաքականության և մասնագիտական գործունեության փոխազդեցությունը կանխորոշված է պետության նպատակային էությանը՝ լուծել հասարակական զարգացման խնդիրները: Քաղաքականությունն անգործունակ է առանց մասնագիտական գործունեության իրա-

կանացման, իսկ ծառայությունն առանց քաղաքականության անհմաստ է: Պետության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է քաղաքականության և մասնագիտական ծառայության փոխազդեցության ներդաշնակեցում: Այդ իսկ պատճառով 21-րդ դարում պետականության համակարգում քաղաքական և վարչական իշխանությունների փոխազդեցությունների մասին տեսական բանավեճերում «Երկվություն» եզրույթը աստիճանաբար իր տեղը գիշում է «Փիոխարգացում», «Փիոխլրացում» հասկացություններին: Ընդ որում, բացի գիտական շրջանակներից, քաղաքականությունը որպես հանրային ծառայություն է դիտարկվում իրավական ակտերում. մասնավորապես՝ «Պետական ծառայության մեջ աշխատանքային հարաբերությունների մասին» 1978 թվականի հունիսի 27-ի կոնվենցիայում, որի առաջին հոդվածում քաղաքականությանը և կառավարմանը գրաղվողները ներկայացվում են որպես բարձրաստիճան ծառայողներ<sup>8</sup>:

Հանրային ծառայողները կառավարման ոլորտի արհեստավարժ մասնագետներ են, վարձատրություն են ստանում ծեռք բերված որոշակի արդյունքների համար, ինչը ենթադրում է աշխատավայրում նրանց կողմից նախաձեռնության ցուցաբերում: Պաշտոնյաների աշխատանքում հիմնականը կողմնորոշումն է դեպի հաճախորդը և հանրային ծառայությունների որակի ու մատուցման հարմարավետության աստիճանի բարձրացումը: Մասնավոր հատվածի կառավարման սկզբունքների կիրառումը և ուղղված է հանրային կառավարման տեխնոլոգիաների փոփոխությանը: Այսպես՝ նախընտրելի են համարվում հորիզոնական կապերի ստեղծումը (միջգերատեսչական փոխազդեցություն), առութակի սկզբանը և քվազիհանրային կազմակերպություններին լիազորությունների պատվիրակումը՝ հանրային իշխանության համակարգից այդ կազմակերպությունների հետագա հնարավոր դուրսբերմանը, ինչը թույլ կտա բարձրացնել հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը:

Հետազոտողների կարծիքով՝ առավելագույն կողմնորոշվածությունը դեպի հաճախորդը կարող է բարձրացնել պետական և հանայնքային կառավարման ապարատների աշխատանքի որակը, ինչը, իր հերթին, արտացոլվում է հանրային մարմինների դեկավարների և ենթականների միջև համաձայնություններում (պայմանագրերում): Նոր հանրային կառավարման հայեցակարգի առանցքային գաղափարներից մեկը հանրային ծառայողների շահադրդման բարձրացումն է. վերջիններիս համար պետք է շահավետ լինի հանրային ծառայությունների մատուցումը, որոնցում հանրությունն իսկապես հետաքրքրված է: Հետաքրքրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ յուրաքանչյուր հանրային ծառայող, լինելով հանրության մի մասնիկը, իր վրա կրում է հանրային ծառայության ազդեցությունը: Ուստի շատ կարևոր է նաև շահադրդման հոգեբանական մեթոդների և գաղափարախոսության գործադրումը, որը կնպաստի հանրային ծառայողների պատասխանատվության աստիճանի բարձրացնանը, կնվազեցնի վերջիններիս շահերի բախումը:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետությունը «Պետական ծառայության մեջ աշխատանքային հարաբերությունների մասին» 1978 թվականի հունիսի 27-ի կոնվենցիային միացել է 1993 թ. դեկտեմբերի 21-ի Գերագույն խորհրդի որոշմամբ:

Այս դեպքում լուծվում է նաև տեղեկատվական անհամաշափության խնդիրը, որը հատուկ է կառավարման աստիճանակարգային մոդելին՝ յուրաքանչյուր ծառայողի՝ իր նպատակների ոչ հստակ գիտակցման, կառավարչական մակարդակում շահերի բախման, տեղեկատվության խեղաթյուրման հետևանքով։ Շուկայական մոդելը մրցակցությունը դիտարկում է որպես այնպիսի գործոն, որը կարող է բացառել կազմակերպության նպատակների փոխարինումը ծառայողների անձնական նպատակներով։ Այսպես՝ հանրային ծառայողների, կառուցվածքային ստորաբաժանումների և ինստիտուտների միջև ծագող մրցակցությունը թույլ է տալիս խուսափել բյուրոկրատական կառուցվածքի դասական համակարգում նախատեսված հսկողության կոչտ համակարգի ձևավորումից։ Շուկայական մոդելի առավելությունների թվին կարելի է դասել խնդիրների լուծման մեջ ձկունությունը, ինչը հանրային ծառայողներին թույլ է տալիս կողմնորոշվել դեպի արդյունքը։ Նոր հանրային կառավարման հայեցակարգի կարևոր գաղափար է հանրային ծառայողների գործունեության մեջ լրացրուցիչ խթանների ներմուծումը, որոնք կարող են նպաստել նրանց աշխատանքի արդյունավետության մակարդակի բարձրացմանը և օպորտունիտական վարքագիր ձևավորմանը։

Նոր հանրային կառավարման մոդելի կարևոր դիտակետերից մեկը դեպի ապակենտրոնացումը և լիազորությունների պատվիրակումը կողմնորոշված կառավարման տեխնոլոգիաների կիրառումն է, որը վերաբերում է առավելապես հանրային ծառայության գործընթացի կազմակերպմանը։

Հանրային իշխանության մարմնի շրջանակներում նորաստեղծական ներուժի ձևավորումը դաշնում է դրա հաջող գործունեության գրավականը։ Նախուակարգերի փոփոխությանը և նոր խնդիրների լուծմանը իշխանության մարմնի հարմարվողականությունը ձեռք է բերվում անձնակազմի արհեստավարժության զարգացման, առաջադրված նպատակների իրազործմանը ընդհանուր մոտեցումներով և արժեքներով օժտված փորձագետների ներգրավման միջոցով։ Հանրային կառավարման զարգացման արդի փուլում հանրային ծառայությունը և ծառայողները դարձել են հանրային իշխանության անքակտելի մասը։ Ժողովրդի իշխանությունը չի կարող իրականացվել առանց նրա կամքի գրագետ և հմուտ կատարողների, այսինքն՝ կառավարչական գործառույթների կատարման համար հանրային իշխանության վարձած արհեստավարժ մասնագետների՝ ծառայողների։

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանը ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները։ Օրենքը սահմանում է նաև պետական և համայնքային պաշտոնները, որոնք լինում են քաղաքական, հայեցողական և քաղաքացիական<sup>9</sup>։

Ընդհանրացնելով տեսաբանների մոտեցումները և իրավական հիմքերը՝ կարելի է առանձնացնել հանրային ծառայության առավել բնութագրական բնորոշումները։

<sup>9</sup> Տես «ՀՀ օրենքը «Հանրային ծառայությունների մասին», հոդված 3 (ընդունվել է 2011 թ. մայիսի 26-ին):

- պետության նպատակների և գործառույթների իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձև,
- պետության, հասարակության, օրենքի և քաղաքացու հարաբերությունների կապի իրագործման ձև,
- հանրային իշխանության և հանրային կառավարման ինստիտուտների ձևավորման, իրագործման և կատարելագործման կառուցակարգ,
- հանրային խնդիրների լուծման և գործառույթների կատարման համար իրենց ծառայողներն ունեցող պետական և մունիցիպալ մարմինների հաճակարգ,
- կառավարչական գործունեության հատուկ տեսակ:

## ԱԾՄԻԿ ԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

Ասսիստենտ կաֆեդրա „Մենեջմենտ“ ԱԳԷՍ

**Роль публичной службы в системе публичного управления.**— Публичная служба наравне с публичным управлением разивалась и стала важным институтом, обеспечивающим эффективность публичного управления. Публичная служба направлена на удовлетворение потребностей и защиту интересов государства и общества. В публичной службе взаимодействие политики и профессиональной деятельности обеспечивает параллельное развитие общества. Политика бездеятельна без осуществления профессиональной службы, а служба без политики бессмысlena. Для эффективной деятельности государства необходимо взаимодействие политики и профессиональной службы.

**Ключевые слова:** публичное управление, публичная служба, политика, государство, общество, власть, бюрократия, профессиональная деятельность, потребность, выгода.

## HASMIK HARUTYUNYAN

Assistant at the Chair of "Management" at ASUE

**The Role of Public Service in the System of Public Administration.**— Public service in a line with public administration has developed and become the most important institute in ensuring efficiency of public administration. Public service is aimed at satisfying the needs of state and society and protection of their interests. In public service the interaction of politics and professional activities ensures the parallel development of state and society. Politics is impotent without fulfillment of professional activities, and public service itself is meaningless without politics. The efficient functioning of government requires harmonization of interaction between politics and professional service.

**Key Words:** *public management, public service, policy, state, society, authority, bureaucracy, professional activity, need, benefit.*



## ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱԱՀ տնտեսագիտական ֆակուլտետի  
ԱԱՀ Էկոնոմիկայի ամբիոնի դասախոս,  
տնտեսագիտության թեկնածու

## ՄԱՐՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԱՀ տնտեսագիտական ֆակուլտետի  
ԱԱՀ Էկոնոմիկայի ամբիոնի ասիստենտ

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Զբոսաշրջությունը «Հ տնտեսության դիմամիկ զարգացող ճյուղ է, որի իրավական կարգավորումն իրականացվում է «Զբոսաշրջության և գրոսաշրջային գործութեության մասին» «Հ օրենքով, ինչպես նաև «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով»: Զբոսաշրջիկների թվի աճը նպաստում է տնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը, ինչպես նաև ապահովում է լրացուցիչ արտարժույթի ներհուսը:

Վերջին տարիներին «Հ-ում գործարար զբոսաշրջությունը բնութագրվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հաշվառված գրոսաշրջիկների քանակի ավելացմամբ: Հայաստան այցելողների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության և այցելության նպաստակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները ներկայում հավաքագրվում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած գրոսաշրջիկներից: «Հ-ում գրոսաշրջությունից ստացվող մուտքերի և եկամուտների համեմատական բաժինը ՀՆԱ-ում դեռևս բավականին ցածր է այդ հատվածի հսկայական ներուժի համեմատությամբ:

**Հիմնաբառեր.** զբոսաշրջություն, զբոսաշրջային արդյունք, մրցունակություն, սակագին, հյուրատուն, գիշերակաց

Ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ «Հ տնտեսության համար զբոսաշրջությունը դիմամիկ զարգացող ճյուղ է, որի իրավական կարգավորումն իրականացվում է «Հ-ում 17.12.2003 թ. ընդունված «Զբոսա-

շրջության և գրոսաշրջային գործունեության մասին» օրենքով, ինչպես նաև 2008 թ. ընդունված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով»:

Զբոսաշրջկերի թվի աճը նպաստում է տնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը, ինչպես նաև ապահովում է լրացուցիչ արտարժույթի ներհոսք: Զբոսաշրջության բնագավառում առաջատար համարվող երկրներում (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Եգիպտոս) նշված ոլորտից ստացվող արտարժույթի տարեկան ներհոսքը կազմում է արտահաննան ծավալների 30–35%-ը<sup>1</sup>:

ՀՀ-ն արդեն 5 տարի է, ինչ ներգրավված է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող «Համաշխարհային զբոսաշրջության և ձանփորդության մրցունակության գեկույցում»: Ըստ զբոսաշրջության մրցունակության համարվի՝ 2013 թ. Հայաստանի դիրքը 11 տեղով բարձրացել է 2011 թ. համեմատությամբ: Ըստ «2013 թ. զբոսաշրջության մրցունակության գեկույցի»՝ ՀՀ-ն, այդ առումով, 79-րդն է 140 երկրների շարքում<sup>2</sup>: Զբոսաշրջության մրցունակության համարիվը, որն ամբողջությամբ գնահատում է երկրների մրցունակության կարողությունները տվյալ ոլորտում, կազմված է 3 ենթահամարթվերից՝ զբոսաշրջության կանոնակարգման դաշտ (51-րդ տեղ), զբոսաշրջության բիզնես միջավայրը և ենթակառուցվածքներ (88-րդ տեղ), զբոսաշրջության նարդկային, մշակութային և բնական կարողություններ (94-րդ տեղ)<sup>3</sup>, որոնք հաշվարկում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

Մրցունակությունը՝ որպես տնտեսագիտական հասկացություն, շուկայական տնտեսության զարգացման անքակտելի բաղադրիչն է: Դա սահմանվում է որպես կազմակերպության, ճյուղի կամ ազգային տնտեսության կարողություն՝ ապահովելով կայուն առաջընթաց, բնակչության բարձր կենսամակարդակ՝ եկամուտների և աշխատավարձի բարձր մակարդակի հաշվին մնալով բաց՝ միջազգային մրցակցության հանարդ<sup>4</sup>:

Ճյուղի և դրա գործուների մրցունակության առավել մանրամասն ուսումնասիրություն է կատարել պրոֆ. Ս.Պորտերը: Ըստ նրա՝ ճյուղի մրցունակությունը կախված է տվյալ ճյուղի մրցակցային կարողությունների առավելությամբ<sup>5</sup>: Ս.Պորտերի և այլ հետազոտողների կարծիքով՝ մրցունակությունը կապված է ճյուղային քառակունությունից, որի միջոցով ստեղծվում է նպաստավոր միջավայր՝ օգտագործելու երկրի ռեսուրսային ներուժը և տնտեսական գործուները: Տնտեսական կայուն համակարգը, մեծածավալ պաշարների առկայությունը, աշխարհագրական բարենպաստ դիրքը տվյալ երկրի մրցունակության համար պիտանի, սակայն ոչ բավարար պայմաններ են, քանի որ «բարեկեցիկ կենսապայմանները ժառանգաբար չեն փոխանցվում, այլ ստեղծվում են»<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գյոլյաև Վ.Ղ., Տуризм: экономика и социальное развитие. М., Финансы и статистика, 2003, էջ 220:

<sup>2</sup> Տե՛ս <http://www.mineconomy.am/uploads/TEXEKANQ FORUM sayt.pdf>

<sup>3</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս Globalization and Competitiveness: Relevant Indicators. OECD Science, Technology and Industry. Working Papers 1996/06. Organization for Economic Cooperation and Development. Paris, 1996, էջ 3:

<sup>5</sup> Տե՛ս Porter M., Competitive Advantage, New York: Free press, 1985:

<sup>6</sup> Տե՛ս Porter M., The Competitive Advantage of Nation, New York, 1990, էջ 531:

ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ը (ՀՀ վերականգնողական և ֆիզիկական բժշկության, կուրորտաբանության մասնագիտացված ուսումնագիտագործնական բուժհաստատություն) Հայաստանում առանձնացրել է 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն բոլոր բնական, բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխներ, տորֆ, կլիմայաբուժության կազմակերպման համար նպաստավոր պայմաններ: Դրանց մեջ ընդգրկված է նաև Սյունիքի մարզը՝ որպես լեռնակլիմայական կուրորտ, որի հիմնական բուժիչ գործոններն են բարենպաստ կլիման և հանքային ջրերի աղբյուրները<sup>7</sup>:

Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգման (կոդ՝ 63191.0) համաձայն՝ «կուրորտը» բուժիչ բնակլիմայական պայմաններ և բուժիչ բնական միջոցներ ունեցող վայր է, որտեղ կառուցված են առողջարաններ, հանգստյան տներ, մարդկանց հանգստի և ժամանցի կառուցներ, ինչպես նաև սպասարկող կոմունիկացիաները<sup>8</sup>:

Զբոսաշրջությունը կարելի տարանջատել ըստ հետևյալ բաղադրիչների. պատմամշակութային, առողջարանային, արկածային, կրօնական, ընկերութարազատներին տեսակցելու, էկոտուրիզմ, գործնական, խոհանոցային, վիրտուալ և թոլքինյան<sup>9</sup>:

Վերջին տարիներին ՀՀ-ում գործարար զբոսաշրջությունը բնութագրվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հաշվառված զբոսաշրջիկների քանակի ավելացմամբ: Մասնավորապես՝ ՀՀ այցելած գործարար զբոսաշրջիկներին թվի աճը կազմել է 17.9%: Գործարար զբոսաշրջիկներին դեպի մեր երկիր գրավելը կարևոր նշանակություն ունի, քանզի, համաձայն վիճակագրական տվյալների, նրանք ուղևորության ընթացքում օրական միջինը ծախսում են 98.3 ԱՄՆ դոլար<sup>10</sup>:

Ըստ ամերիկյան «National Geographic» կազմակերպության կատարած հետազոտությունների՝ էքստրեմալ տուրիզմի լավ պայմաններ ունեցող երկրների ցանկում ՀՀ-ն զբաղեցնում է 3-րդ տեղը: «Էքստրեմալ» տուրիզմը արկածային տուրիզմի տեսակ է<sup>11</sup>:

2014 թ. Հայաստան այցելել է 1.203.746 մլն միջազգային զբոսաշրջիկ՝ 11.3%-ով ավելի, քան 2013 թ.: 2013 թ. ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 669.540՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճելով 30.1%-ով<sup>12</sup>:

ՈՐ-ը և ԱՄՆ-ը շարունակում են մնալ Հայաստանի զբոսաշրջային առաջատար շուկաներ, քանի որ այդ երկրներում են բնակվում Հայաստանի ներզնա զբոսաշրջային շուկայի մեծ հատվածը երկայացնող սփյուռքահերթը: Դա հիմք հանդիսացավ, որ համաշխարհային զբոսաշրջային շուկայում առկա ֆինանսատնտեսական ճգնաժամի միտումները խիստ չարտահայտ-

<sup>7</sup> Տե՛ս <http://fizecomed.com>. «Հայաստանի կուրորտները և ռեկրեացիոն գոտիները» բաժնում:

<sup>8</sup> Տե՛ս «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների 2004–2008 թթ. հեռանկարային զարգացման ծրագիր». 2003 թ. հոկտեմբերի 2-ի ՀՀ Կառավարության նիստի N39 որոշում:

<sup>9</sup> Տուրիզմի այս տեսակը մեծ տարածում է ստացել «Մատանիների տիրակալը» գրքաշարի և ֆիլմի շնորհիվ:

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-հուլիսին, Եր., ԱՎԾ, 2013, էջ 105:

<sup>11</sup> Տե՛ս <http://www.copypaste.am/2012/03/11/ե-ք-ս-տ-ր-ի-մ/>

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 15.02.2015 թ. N120-Ն որոշում:

Վեն Հայաստանի գրոսաշրջային տնտեսությունում: Ներգնա գրոսաշրջիկների ընդհանուր քանակում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև իրանցի գրոսաշրջիկները, սակայն նրանց այցելությունները սեզոնային բնույթ են կրում, և, այդ առումով, առավել ակտիվ է մարտ-հունիս ժամանակահատվածը:

ՀՀ-ում գրոսաշրջությունից ստացվող մուտքերի և եկամուտների համեմատական բաժինը ՀՆԱ-ում դեռևս բավականին ցածր է այդ հատվածի հակայական ներուժի համեմատությամբ: 2013 թ. դրությամբ գրոսաշրջության ուղղակի բաժնեմասը ՀՆԱ-ում կազմել է 2.0%-՝ 90.0 մլրդ դրամ: Այստեղ ներառված է այնպիսի ենթակառուցվածքների գործունեությունը, ինչպիսիք են՝ հյուրանոցային տնտեսությունները, գրոսաշրջային գործակալությունները, ուղևորափոխադրող կազմակերպությունները և այլն: Կանխատեսվում է, որ այս ցուցանիշը մինչև 2024 թ. կգրանցի տարեկան 3.4% աճ՝ կազմելով 129.5 մլրդ դրամ: Ճյուղի բաժնեմասը ՀՆԱ-ում, որը ներառում է նաև ներդրումները, պետական ծախսերը և սպասարկման ոլորտը, կազմել է 8.2%-՝ 336.9 մլրդ դրամ, իսկ մինչ 2024 թ. ակնկալվում է տարեկան 2.5% աճ՝ 444.8 մլրդ դրամ:

Ներգնա և ներքին գրոսաշրջիկների կողմից կատարված ծախսումների բաժնեմասը ՀՆԱ-ում 2012 թ. կազմել է, համապատասխանաբար՝ 74.1% և 25.9%: Կանխատեսվում է ներքին գրոսաշրջության ծախսերի աճ տարեկան 5.4%-՝ 2023 թ. հատելով 119.9 մլրդ դրամի սահմանագիծը:

Հայաստան այցելողների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության և այցելության նպատակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները ներկայումս հավաքագրվում են միայն ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած գրոսաշրջիկների: Հարկ ենք համարում նշել, որ 2012 թ. Հայաստան այցելած 843330 գրոսաշրջիկների միայն 16.2%-ն<sup>13</sup> է հանգրվանել հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, իսկ 706686 հազարը (83.8%-ը)<sup>14</sup> բարեկամի, հարազատի տանը կամ վարձով:

2012 թ. Հայաստան այցելած 136644 գրոսաշրջիկների 30.1%-ը ժամանել է գործնական նպատակներով, 21.3%-ը՝ հանգատի և ժամանցի, 0.5%-ը՝ բուժման, իսկ 48.1%-ը՝ այլ նպատակներով: Մեծ է հայկական ծագում ունեցողների մասնաբաժինը, այդ իսկ պատճառով տրամաբանական է, որ այցելությունն ընկերներին և հարազատներին կարող է դիտվել որպես Հայաստան կատարած ուղևորությունների հիմնական նպատակներից մեկը: Այս ներուժն օգտագործելու համար անհրաժեշտ է թիրախային շուկաներում իրականացնել հայաստանյան գրոսաշրջության ուղղակի խթանում և զարգացնել գրոսաշրջային նոր ուղղություններ:

Սյունիքի մարզը գտնվում է ՀՀ հարավ-արևելքում: Բաղկացած է նաև կին խորհրդային Կապանի, Գորիսի, Սիսիհանի և Մեղրիի վարչական շրջանների միավորումից: Մարզը գրաղեցնում է հանրապետության տարածքի ավելի քան 15%-ը և ունի ամենամեծ ցամաքային տարածքը, աչքի է ընկնում հարուստ բնահումքային ռեսուրսներով, բուսական և կենդանական աշխարհի բացարձիկ բազմազանությամբ, պատմամշակութային և բնական հուշարձաններով:

<sup>13</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվարին, Եր., ԱՎԾ, 2013, էջ 82:

Սյունիքի մարզին բնորոշ են բարձրգոտիականությունը (միջին բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 2200 մ է) և կլիմայական տիպերի մեջ բազմազանությունը՝ մերձարևադարձայինց մինչև մերձքեռային։ Ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է՝ 2-րդը ՀՀ-ում (3906 մ), ամենացածր կետը ծովի մակերևույթից 375 մ է (Մեղրիի տարածաշրջան)։ Խոշոր գետերն են Որոտանը, Ողջին, Մեղրին։ Բնական և արհեստական ջրամբարներից հայտնի են Կապուտ լիճը, Սև ջուրը և Գյոլ-գյոլ լճակները, Շամբի և Սպանդարյանի ջրամբարները։

Պատմամշակութային հուշարձաններից ամենահայտնիներից են Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանք վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեղինի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, «Զօրաց քարերի» հնագույն աստղադիտարանը, Ուղտասարի ժայռապատկերները, «Սատանի կամուրջը», Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները։

2010 թ. շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթև» («Տաթևի թեր») ձոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտանի կիրճով՝ Հալիձորի գլխից հասնելով Տաթևի վանական համալիր։ «Տաթև» ձոպանուղին կառուցել է «Garaventa Doppelmayr Group» (Շվեյցարիա-Ավստրիա) ընկերությունը, որի կերտած որեւէ ձոպանուղի երբեւ չի խափանվել, ոչ մի ուղևոր չի վնասվել։ 2010 թ. «Տաթև» ձոպանուղին գրանցվել է «Գիմեսի» համաշխարհային ռեկորդների գրքում՝ որպես աշխարհի ամենաերկար հետադարձ ուղինով ձոպանուղի<sup>14</sup>։ 2014 թ. ձոպանուղուց օգտվողները երկվողմանի՝ Հալիձոր-Տաթև ուղու համար վճարում էին 4000 դրամ, իսկ հարակից գյուղական համայնքների բնակչներն իրենց անձնագրերով՝ 500 դրամ։ 2015 թ., կապված էլեկտրականացմանի գները և գյուղացիների, և գրոսաշրջիկների համար՝ դառնալով համապատասխանաբար՝ 1000 և 5000 դրամ։ 2010 թ. գյուղացիների համար ձոպանուղուց օգտվելն անվճար է եղել, իսկ գրոսաշրջիկների համար՝ 3000 դրամ (պարզել ենք սեփական հարցումներով)։ Տոնսերի վաճառքից գոյացած ամբողջ շահույթը տրամադրվում է Տաթևի վանական համալիրի վերակառուցմանը, իսկ մնացած մասն ուղղվում է համալիրի ընթացիկ ծախսերին, աշխատողներին աշխատավարձի վճարմանը (60 աշխատող՝ Գորիս քաղաքից և Տաթևի վանական համալիրին կից գյուղական համայնքներից)։

«Տաթև» ձոպանուղին գրոսաշրջության զարգացման կարևոր բաղադրիչներից համարվեց ՀՀ Կառավարության 26.06.2009 թ. N848-Ն որոշման համաձայն, որտեղ նշվում է Սյունիքի մարզի Խոստի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Աղվանիի, Բարձրավանի և Քաշունիի գյուղական համայնքների գրոսաշրջային համալիրը՝ «Տաթև» գրոսաշրջային կենտրոնով, ինչի շնորհիվ լուծվում են մի շարք սոցիալական նշանակության խնդիրներ վերը նշված գյուղական համայնքներում։ Չնայած այս ամենին, Տաթևի և հարակից գյուղական համայնքներում կան բազում չլուծված խնդիրներ, որոնք խոչընդոտում են գրոսաշրջության զարգացումը։ Համայնքում կա-

<sup>14</sup> Տես Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ձեռքբերումները 2007-2011 թթ., Եր., Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենսորոն, 2012, էջ 28։

բելային համացանցային կապից օգտվում է 30 տնային տնտեսություն. դիտում են 2 հեռուստաալիք՝ Հ1, «Արմենիա»: Տրանսպորտային համակարգը բավարար է զարգացած: Համայնքից օրը 1 անգամ ավտոբուս է մեկնում Գորիս, իսկ շաբաթը 2 անգամ՝ Կապան: Ուղևորափոխադրման արժեքը կազմում է, համապատասխանաբար՝ 1000 և 1300 դրամ<sup>15</sup>:

Աշխարհի մի շարք քաղաքներում գործում է «գրոսաշրջային հարկ» հասկացությունը, որը թույլ տալիս կուտակել բավականին գումար քաղաքային բյուջեում: Այս հարկը հետագայում օգտագործվում է քաղաքի ենթակառուցվածքների զարգացման ու առավել թվով գրոսաշրջիկներ ներգրավելու նպատակով: Նման հարկատեսակ գործում է Հռոմ, Սիլվան, Ֆլորենցիա, Վենետիկ, Նեապոլ և իտալական այլ քաղաքներում. մեկ անգի հաշվով յուրաքանչյուր գիշերվա համար պետք է վճարել 0.35 եվրոյից մինչև 5 եվրո լրացրացիչ գումար: Մինչև 16 տարեկանների համար այս հարկը սովորաբար չի գանձվում: «Զբոսաշրջային հարկի» «շքեղության» ռեկորդն առկա է Խորվաթիայի Դուբրովնիկ քաղաքում, որտեղ 1 գիշերվա համար պետք է վճարել մինչև 7 եվրո: Սակայն կան բացառություններ. մինչև 12 տարեկան երեխաներն ազատված են նման հարկատեսակից, իսկ 12–18 տարեկանների համար գործում է մինչև 50 տոկոս գեղչ<sup>16</sup>:

Սյունիքի մարզը հարուստ է նաև ստորերկրյա քաղցրահամ, հանքային թերմալ ջրերով, որոնցից են Սիսիան-Ռևուտյան, Լիճք-Տաշտունյան, Քարաշեն-Խողնավարյան հանքային աղբյուրները, «Քաջարան» թերմալ ջուրը, Դարպասի «Տատնի» հանքային ջուրը, որոնք «Ձերմուկի» նմանողինակն են:

Սյունիքում զբոսաշրջային գրավչության տարր են նաև այունեցու կերպարը, խաչնվածքը, հյուրասիրությունը, բարիքները՝ Սիսիանի պանիրը, քարահունջի թթի օղին, Կապանի ժինզալով հացը, Մեղրու նուրճն ու թուզը:

2014 թ. Սյունիքում իրականացվել են մի շարք հետաքրքրական միջոցառումներ: Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը, Նորվեգիայի թագավորության պատվո հյուպատոս Թիմորի Շեյվի Մարեյը և ՀՀ մի շարք պաշտոնյաներ մասնակցել են «Ոչխարների խուզում-2014» փառատոնին: «Տաթկի վերածնունդ» ծրագրի և «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» (IDeA) հիմնադրամի կազմակերպած առաջին փառատոնը Հալիծորում հավաքել էր մերձակա համայնքների բնակչությունը, զբոսաշրջիկների և Հայաստանի տարբեր վայրերից ժամանած մարդկանց<sup>17</sup>:

2014 թ. օգոստոսի 23-ին մարզի «Գորիս» քաղաքային համայնքում իրականացվել է «Սյունյաց ավանդույթներ» ամենամյա փառատոնը<sup>18</sup>.

2012 թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորավագ (Ղանդունց նով ու Ներքին թաղ) մինյանց կապող՝ իր տեսակի մեջ եզակի կախովի կամուրջը, որի երկարությունը ավելի քան 160 մ է, իսկ բարձրությունը ամենախոր տեղում 63 մ է: Տեղի բնակչությունն այն կոչում է «Ճոճվող կամուրջ», քանի որ կապված է ձիգ ու անոր ճոպաններով և քայլելիս ճոճվում է<sup>19</sup>:

ՀՀ Կառավարության 10.06.2011 թ. N973 որոշման համաձայն՝ մարզի «Գորիս» քաղաքային համայնքը ճանաչվել է զբոսաշրջային էկոլոգիական և

<sup>15</sup> Տես <http://www.cf.am/files/news/141/8ce264fd7c7c2ba.pdf>: Տաքս համայնքի համայիր զարգացման ծրագիր 2012–2015 թթ., էջ 9:

<sup>16</sup> Տես <http://www.banks.am/am/news/interviews/9579/>

<sup>17</sup> Տես <http://168.am/2014/05/04/31060.html>

<sup>18</sup> Տես <http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html>

<sup>19</sup> Տես ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով: Վիճակագրական ժողովածու, 2014, էջ 296:

արկածային գրոսաշրջության զարգացման կենտրոն: Գորիս և Ֆրանսիայի Վիեն քաղաքները հայտարարվել են քույր-քաղաքներ, ինչը նպաստում է դրանց միջև գրոսաշրջության զարգացումը խթանող մի շարք ձանաչողական միջոցառումների իրականացմանը: Գորիսը նաև տարանցիկ ուղի է և Լեռնային Ղարաբաղի, և Իրանի Իսլամական Հանրապետության համար:

2015 թ. փետրվարի 6-ին «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) միջև ստորագրվել է փոխընթանման հուշագիր, համաձայն որի համատեղ աշխատանքներ կիրականացվեն «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի կառավարման բարելավման ուղղությամբ, կստեղծվի «Տաթև» ազգային պարկը՝ նպաստելով յուրահատուկ էկոհամակարգի, կենսաբազմազանության պահպանմանը և էկոտուրիզմի զարգացմանը<sup>20</sup>:

Սյունիքի մարզի խիտ բնակեցված քաղաքային համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով դիտելու 4–7 հեռուստաալիք, իսկ փոքր քաղաքներում և որոշ գյուղական բնակավայրերում՝ 1–3: Միայն 1 հեռուստաալիք է դիտում մարզի բնակչության 12%-ը (բնակավայրերի 33%-ը)<sup>21</sup>:

Մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում ՀՀ-ում գործող 3 օպերատորներ՝ «ԱրմենՏել», «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» և «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ները: Բջջային CDMA ռադիոկապի բազային կայաններ են տեղադրված Կապան, Գորիս, Քաջարան, Սիսիան, Մեղրի քաղաքներում (ընդհանուր ունակությամբ՝ 40000 հեռախոսահամար), սակայն բաժանորդների քանակը ավելի քան 32000 է: Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն է մատուցում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն մարզում տեղակայված հեռախոսակայանների միջոցով, որոնք նախատեսված են 115000 բաժանորդի համար, սակայն մարզում բաժանորդների ընդհանուր թիվը 24000 է<sup>22</sup>:

Սյունիքի մարզի «գրոսաշրջային արդյունքը» դասակարգել ենք հետևյալ կերպ՝

- գրավչություն (բնական միջավայր, պատմամշակութային հուշարձաններ, ծառայություններ՝ մանրածախ առևտուր, զվարճանքի կենտրոններ, փառատոններ),
- հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, ամառանոց, հյուրատուն, վարձով տուն, հանգստյան տուն, ռեստորան),
- տրանսպորտ (տուրիստական, միջքաղաքային, միջհամայնքային, երկաթուղի, ճոպանուղի, օդանավակայան),
- հետաքրքրական միջոցառումներ (փառատոններ, տոնավաճառներ, օլիմպիադաներ, մրցաշարեր՝ մշակութային, կրոնական և գիտական),
- օժանդակ ծառայություններ (բժշկական, տուրոպերատորների, ուղեկցորդների, բանկեր, բանկոմատներ, հեռահաղորդակցություն, WiFi):

«Զրոսաշրջային արդյունքը» ցանկացած պետության, տարածաշրջանի և համայնքի զարգացման հիմնական տարրերից է: Ուստիմնասիրելով Սյունիքի մարզի գրոսաշրջության զարգացման հեռանկարները՝ գրոսաշրջային արդյունքից ստացված գումարներով մարզի համայնքներում՝ հատկապես Գորիսի տարածաշրջանում լուրջ սոցիալական խնդիրներ են լուծվում:

<sup>20</sup> Տես <http://armenia.panda.org/?238496/IDeA-Charitable-Foundation-and-WWF-Armenia-Arm>

<sup>21</sup> Տես [syuniq.gov.am/files/docs/10245.pdf](http://syuniq.gov.am/files/docs/10245.pdf) փաստաթուղթ, էջ 9:

<sup>22</sup> Տես նոյն տեղը:

**Աղյուսակ 1**

Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝<sup>1</sup>

	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը				Միաժամամասնակայա տպարությունը				Տարեկայի օրենքի բամակը							
	2009	2010	2011	2012	2013	2009	2010	2011	2012	2013	2009	2010	2011	2012	2013	
<	118	142	143	157	229	7204	8005	9692	12040	19004	402.4	524.2	556.9	699.3	1019.4	
Սյունիքի մարզ	8	12	13	19	31	661	251	726	730	1727	5.7	9.3	6.9	12.2	52.6	

**Աղյուսակ 2**

Հյուրանոցներում 1 օրվա գիշերակացի արժեքը<sup>2</sup>

Հյուրանոցի անվանույթ	Գտնվելող վայրո	Մեռմանցի համար	Մեռմանցի համար	Եղանակամոց	Եղանակամոց	Եղանակամոց	Եղանակամոց	Լուրս համար
1.	Քրիստ	Գորիս, Սաշտոցի փ.9	12000-14000	18000-20000	-	-	-	2-1000-2400
2.	Եղևոնտ	Գորիս, Երևանյան խճ. 7	14000-18000	18000-22000	200000-250000	300000-350000	300000-350000	
3.	Բասեն	Սիսիհան, Ոլոտան փ. 6/8	10000-12000	14000-18000	21000-24000	-	-	
4.	Լավաներ	Սիսիհան, Սիսիհան փ. 9	10000	15000-2000	35000	20000-250000	20000-250000	
5.	Քարոզչ	Երևան-Գորիս ճայրուղի, գ.Դշտանասար 1	-	14000	14000	18000	18000	
6.	Ղարիստ	Կապամ, Ա. Աբամուկյան փ. 1ա	12000	15000-18000	-	22000	22000	
7.	Ղիան	Կապամ, Գործարանային փ. 3/2/1-2	15000	18000	25000	35000	35000	
8.	Էն-Էլ	Ազարակ, Սայաթ-Նովա 68	25000	35000	40000	35000-400000	35000-400000	
9.	Մարիշուկ	Ազարակ, Դ. Հովհաննեսիս փ. 24	15000	20000	-	-	-	

<sup>1</sup> «Հ Անդենու և Երևան քաղաքի թվերով: Կիձասպարական ժողովածին», Եր., 2014, էջ 214:


<sup>2</sup> <http://www.armhotels.am>

Այսուակ 1-ի տվյալներից երևում է, որ ՀՀ-ում հյուրանոցային տնտեսությունների<sup>1</sup> օբյեկտների քանակն ավելացել է 1.94 անգամ: Աճ է գրանցվել նաև Սյունիքի մարզում. մոտ 4 անգամ ավելացել է՝ հասնելով 31-ի:

Գյուղական համայնքներում (Հալիձոր, Տաթև, Ծինուհայր և այլն) տարեցտարի զարգանում է նաև հյուրատնային գործարարությունը: Համայնքի բնակչութեան իրենց տներում ապահովում են նվազագույն հյուրանոցային պայմաններ (երբեմն նաև WiFi), զբոսաշրջիկներին գիշերակաց տրամադրելով: Օրինակ՝ Հալիձորում 1 գիշերակացի մեջ ներառվում է նաև նախաձաշը՝ 6000 դրամ արժեքով (սեփական ուսումնասիրության արդյունք): Գյուղացիներից շատերը գերադասում են զբաղվել հյուրատնային բիզնեսով, քան գյուղատնտեսական աշխատանքներով, քանի որ առաջինից ստացվող եկամուտն ավելի շոշափելի է:

Այսուակ 2-ում ներկայացվել են մարզում գործող հյուրանոցների 1 օրվա գիշերակացի արժեքները՝ տարբեր տարածաշրջաններից ընտրելով 2-ական պատահական հյուրանոց: Հյուրանոցների գները տատանվում են 1 անձի համար 10000-ից մինչև 25000 դրամի սահմաններում, իսկ յուրս համարները՝ 18000–40000 դրամի սահմաններում: Հյուրանոցներն ապահովված են հարմարավետ (հեռուստացույց, ներքին սանհանգույց, WiFi) հանգիստ անցկացնելու բոլոր պայմաններով: Կան հյուրանոցներ, որոնք նախաձաշը ներառում են հյուրանոցի գիշերակացի արժեքի մեջ:

Մարզում կան գյուղական համայնքներ, որտեղ դեռևս չկա գազանատակարարում (օրինակ՝ Հալիձոր, Տաթև, Տամաւտափ, Սվարանց և այլն): Հաշվի առնելով նոյնիսկ Տաթևի վանական համալիրի և Ճոպանուղու արկայությունը, ինչն աշխուժացնում է գյուղական համայնքների կյանքը մարտիկութեան ամիսներին, հարկ է նշել, որ կան ճանապարհներ, որոնք խոչընդուռ են դառնում զբոսաշրջիկների՝ մեքենաներով երթևեկության համար: Զբոսաշրջության արդյունքը կապված է տվյալ տարածաշրջանի տնտեսության առանձին ճյուղերի զարգացման հետ, ինչն էլ կախված է պետության և մասնավոր հատվածի համատեղ փոխգործակցությունից (օրինակ՝ «Տաթևի վերածնունդ» ծրագիրը):



**Գծապատկեր 1. Զբոսաշրջության զարգացման խոչընդուռները Սյունիքի մարզում**

<sup>1</sup>Տես «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 8–11: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N6 (305), 29.01.2004 թ., էջ 23-25:

Ըստ գծապատկեր 1-ի՝ մարզում կան մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է տարածքային կառավարման մարմինների և ներդրողների համատեղ աշխատանքը:

Վերլուծելով մարզի գրոսաշրջության ներկա վիճակը, ինչպես նաև բնակչինայական պայմանները՝ առաջարկում ենք «Տաթև» համայնքային միավորնան տարածաշրջանում տեղադրել հակակարկության կայաններ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել ճոպանուղու անխսափան աշխատանքը, քանի որ անբարենպաստ բնակլիմայական պայմաններում (կայծակ, ամպրոպ, մառախոտ, անձրև) չի շահագործվում «Տաթև» ճոպանուղին, ինչը ֆինանսական կորուստների պատճառ է դառնում:

Անհրաժեշտ է խորհրդատվական միջոցառումներ անցկացնել գյուղական համայնքներում՝ հյուրատներում մատուցվող ծառայությունների և վաճառվող ապրանքների գների վերաբերյալ։ Գների քարձը լինելը խոչընդոտում է գրոսաշրջիկի հաջորդ այցելությունը։ Դեռևս մի քանի տարի առաջ մարզի Մեղրի քաղաքը հյուրընկալ վայր էր համարվում հարևան Իրանի Խուզանական Հանրապետության քաղաքացիների համար, սակայն գրոսաշրջիկները, համեմատելով Մեղրի և Երևան քաղաքների ծառայությունների և ապրանքների գները, նախընտրում են Մեղրիում չիջևանել։ Այսօր կան մի քանի հյուրանոցային տնտեսություններ, որոնք փորձում են վերականգնել Մեղրիի՝ որպես հյուրընկալ քաղաքի համբավը։

**КРИСТИНЕ СААКЯН**

Преподаватель кафедры "Экономики АПК"  
экономического факультета НАУА,  
кандидат экономических наук

**МАРТИН ОГАННИСЯН**

Ассистент кафедры "Экономики АПК"  
экономического факультета НАУА

**Роль туризма в деле повышения конкурентоспособности экономики Сюникского марза.** – Для экономики РА туризм является динамично развивающейся отраслью. Ее правовое урегулирование осуществляется посредством принятых в РА закона "О туризме и туристической деятельности", а также посредством "Концепции развития туризма." Рост числа туристов способствует развитию всех отраслей экономики, а также обеспечивает приток дополнительной валюты.

В течение последних лет в Армении бизнес туризм характеризуется увеличением числа туристов, зарегистрированных в объектах гостиничной экономики. В настоящее время официальные статистические данные относительно географического распределения гражданства посетителей Армении, а также относительно цели визитов собираются лишь от туристов, зарегистрированных в объектах гостиничной экономики. В Армении сравнительная доля доходов туристического сектора и поступлений от туризма в ВВП пока слишком низка по сравнению с огромным потенциалом данного сектора.

**Ключевые слова:** туризм, туристический результат, конкурентоспособность, тариф, гостиница, ночлег

**KRISTINE SAHAKYAN**

Lecturer at the Chair of Economics of  
Agro-Industrial Complex, Department of Economics at ANAU,  
PhD in Economics

**MARTIN HOVHANNISYAN**

Assistant at the Chair of Economics of  
Agro-Industrial Complex, Department of Economics at ANAU

**The Role of Tourism in the Increase of Competitiveness in the Economy of the Syunik Marz.** – Tourism is a dynamically developing branch of the RA economy, whose legal regulation is conducted by the RA law "On Tourism and Tourist Activities", as well as by the "Tourism Development Concept". The growth of the number of tourists contributes to the development of all the branches of economy, as well as provides an inflow of additional currency.

During the recent years business tourism in Armenia has been characterized by the increase of the quantity of tourists registered at the hotel economy entities. The official statistical data about the geographical distribution of citizenship of visitors to Armenia and the purpose of their visits are now collected only from the tourists registered at the hotel economy entities. In Armenia the comparative share of the income of tourists and revenues received from tourism in GDP is too low now in comparison with the huge potential of this sector

**Key words:** *tourism, tourist result, competitiveness, tariff, hotel, accommodation.*

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵԹՈՂՆԵՐ



## ՀԱՅԿ ՍԱՐԳԱՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի ասպիրանտ

## ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԴԻՍԿՐԵՏ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԼՈՒՇՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Հրապարակման նպատակը դիսկրետ մոդելավորման որոշ օժանդակ եղբերի (ախտորոշող և ստուգող թեստեր), ինչպես նաև քաստերային վերլուծության ու դրանց կիրառությունների լուսաբանման միջոցով՝ առաջին մոտարկմանը, պայմանական օրինակով «սահմանադրականություն» հասկացության գնահատման ուղեցումն է:

**Հիմնաբառեր.** դիսկրետ մոդելավորում, քաստերային վերլուծություն, սահմանադրականություն, թեստեր

1. Խնդիրների դրվածքը և մոդելավորման մեթոդները: Կերպարների ձանաչողության և դասակարգման մեթոդները լայն կիրառություն ունեն հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում առաջացող խնդիրներում, որոնցում պահանջվում է երևույթներն ու օբյեկտներն ուսումնասիրել դրանց բնորոշ որոշակի հատկությունների (հայտանիշների) միջոցով: Աշխատանքում հետազոտման առարկա են բազմաչափ օբյեկտների բազմությունները՝ մասնավորաբար դիսկրետ մոդելավորման և քաստերային վերլուծության մեթոդների կիրառմանը:

Դեռևս անցյալ դարի 60-ականներին դիսկրետ մոդելավորման մեթոդների օգնությամբ կատարվել են թեստային հետազոտություններ, որոնց նպատակն էր երևույթներն ուսումնասիրելիս՝ ա) գնահատել հայտանիշների կա-

րևորության աստիճանը, բ) դասակարգել օբյեկտները (անձինք, կազմակերպություններ, երկրներ և այլն), գ) որոշել նոր օբյեկտի՝ որոշակի բազմությունում կամ տվյալ բազմության որևէ դասում հնարավոր ընդգրկման պայմանները: Հաջորդ մեթոդը՝ քլաստերային վերլուծությունը, հնարավորություն է տալիս հեռավորության չափման որևէ եղանակ ընտրելով՝ տրոհել օբյեկտների բազմությունը համասեր կոմպակտ քլաստերների (խմբերի, դասերի) այնպես, որ տրոհման խմբերը միմյանցից հեռու լինեն (տարրերվեն), իսկ յուրաքանչյուր խմբում ընդգրկված օբյեկտները՝ միմյանց մոտ: Որոշ դեպքերում տրոհման խմբերն ունենում են իրենց «կենտրոնները» (տիպական օբյեկտը):

Թեստային հետազոտման և քլաստերային վերլուծության մեթոդներն ունեն որոշակի ընդհանություններ: Երկուսում էլ ոհտարկվում են օբյեկտների վերջավոր բազմություններ, այդ օբյեկտներին բնորոշ հայտանիշների բազմություններ և փորձագիտական կամ անմիջական չափումների արդյունքների հիման վրա ստացված բնութագրիների այլուսակներ, որոնց տարրերը ցույց են տալիս, թե յուրաքանչյուր օբյեկտ ի՞նչ չափով է բավարարում հայտանիշները:

Սակայն տարրեր են օբյեկտների հեռավորության չափման եղանակները: Քլաստերային վերլուծություններում հաշվի չի առնվում հայտանիշների կարենորությունը, իսկ օբյեկտների հեռավորության չափերն որոշվում են դրանց քանակական կամ որակական բնութագրերով, և, ըստ ընտրված հետավորության, կատարվում է օբյեկտների դասակարգում (տրոհում խմբերի): Թեստային հետազոտություններում նախ որոշվում են հայտանիշների կարևորությունները (տեղեկատվական կշիռները), այնուհետև դրանց միջոցով՝ օբյեկտների տեղեկատվական կշիռները, ապա այդ հաշվարկների հիման վրա կատարվում է օբյեկտների դասակարգում: Եթե քլաստերային վերլուծությունում երկու օբյեկտներ մոտ են (նոյն դասից են), ապա թեստային հետազոտման արդյունքում նոյնպես այդ երկու օբյեկտները (գրեթե միշտ) կինըն նոյն դասից: Հետաքանի է, որ թեստային հետազոտման արդյունքում երկու օբյեկտներ լինեն նոյն դասից (տեղեկատվական կշիռները մոտ լինեն), սակայն քլաստերային վերլուծությունում՝ տրոհման տարրեր դասերում: Այդպես կարող է ստացվել, քանի որ հայտանիշների տեղեկատվական կշիռները թեստային հետազոտություններում ունեն որոշիչ դեր:

**1.1. Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում<sup>1</sup>:** Դիտարկենք նմանատիպ օբյեկտների  $E = \{e_1, e_2, \dots, e_n\}$  բազմություն և այդ բազմության օբյեկտներին բնորոշ հայտանիշների  $P = \{p_1, p_2, \dots, p_n\}$  բազմություն:  $t_{ij}$  –ով նշանակենք այն չափը, որով  $i$ -րդ օբյեկտը բավարարում է  $j$ -րդ հայտանիշը՝  $t_{ij} \in \{0, 1, \dots, r - 1\}, r \geq 2; i = 1, 2, \dots, m; j = 1, 2, \dots, n\}$  Ենթադրենք՝ բոլոր օբյեկտներն օժտված են որևէ  $x$  հատկությամբ, իսկ  $m \times n$  չափի  $T = (t_{ij})$  ցուցանիշների այլուսակի բոլոր տողերն իրարից տարրեր են:

Սահմանենք թեստային հետազոտություններում կիրառվող հիմնական հասկացությունները:  $T$  այլուսակի սյունակների (հայտանիշների)  $\langle t_1, t_2, \dots, t_l \rangle$  Ենթաբազմությունը կոչվում է ախտորոշող թեստ (կամ պարզապես թեստ)  $T$  այլուսակի համար, եթե այդ սյունակներով առաջացած ենթաայլուսակում բոլոր տողերն իրարից տարրեր են ( $i$  –ը կոչվում է թեստի երկարություն):  $T$

<sup>1</sup>Տես Հ. Սարգսյան, Գ. Տոնյան, Ն. Քոչինյան, Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում, ԵՊՀ, Եր., «Զանգակ», 2015:

այուսակի թեստը կոչվում է **փակուղային**, եթե նրա ոչ մի սեփական ենթաբազմություն այդ այուսակի համար թեստ չէ:  $T$  այուսակի բոլոր փակուղային թեստերի քանակը  $n_1$ -ով, իսկ այն փակուղային թեստերի քանակը, որոնցում հանդիպում է  $j$ -րդ սյունակը՝  $k(j)$ -ով:  $R(j) = k(j)/k$  թիվը կոչվում է  $j$ -րդ հայտանիշի տեղեկատվական կշիռ, որը գնահատում է  $j$ -րդ հայտանիշի կարևորությունը (ազդեցության ուժը) դիտարկվող երևոյթի վրա: Այնուհետև կարելի է դասավորել հայտանիշները տեղեկատվական կշիռների նվազման կարգով և, ըստ այդմ՝ տրոհել դասերի (դասակարգել ըստ կարևորության):  $e(i) = (\sum_{j=1}^n R(j) \cdot t_j) / L$  մեծությունը կոչվում է  $i$ -րդ օբյեկտի տեղեկատվական կշիռ, որտեղ՝  $L = (r - 1) \cdot \sum_{j=1}^n R(j)$ : Ինչպես հայտանիշների պարագայում, օբյեկտները կարելի է դասավորել տեղեկատվական կշիռների նվազման կարգով և ըստ այդմ՝ տրոհել դասերի (դասակարգել ըստ  $x$  հատկության կարևորության):

**Նոր օբյեկտի ճանաչման խնդիրը:** Դիցուք՝ ունենք նոր ուսումնասիրվող  $e'$  օբյեկտ, որի համար հայտնի է, թե այն ինչ չափով է բավարարում  $P$  բազմության հայտանիշները, սակայն պարզ չէ (կամ դժվարլուծելի խնդիր է), թե ինչ չափով է օժտված  $x$  հատկությամբ: Այսինքն՝ կարելի<sup>2</sup> է արդյոք այն ներառել  $E$  բազմությունում, թե<sup>3</sup> ոչ: Դիցուք՝  $t_j$ -ն ցույց է տալիս, թե  $e'$  օբյեկտը ինչ չափով է բավարարում  $P$  բազմության  $j$ -րդ հայտանիշը: Հաշվենք  $e'(T) = (\sum_{j=1}^n (P(j) \cdot t_j) / L$  մեծությունը, որն, ինչ-որ իմաստով,  $e'$  օբյեկտի տեղեկատվական կշիռն է  $T$  այուսակի համար: Նշանակենք  $min(T) = min_{i=1,2,\dots,n} e_i(T)$ ,  $max(T) = max_{i=1,2,\dots,n} e_i(T)$ :

Եթե  $min(T) - \epsilon \leq e'(T) \leq max(T) + \epsilon$ , ապա կասենք, որ  $e'$  օբյեկտն օժտված է  $x$  հատկությամբ, և այն կարելի է ներառել  $E$  բազմությունում: Հակառակ դեպքում՝ ոչ: Ընդ որում,  $\epsilon > 0$  մեծությունն ընտրում ենք՝ կախված տրված հետազոտության նպատակից և  $T$  այուսակից:

**Ստորև թեստերի կամ թեստորների հետ կապված հիմնական հասկացությունների սահմանումը:** Դիցուք՝  $E$  բազմության օբյեկտներն ըստ որևէ  $x$  հատկության բավարարելու չափի տրոհված են  $q$  ( $q \geq 2$ ) ենթաբազմությունների (դասերի), իսկ  $T$  այուսակն էլ, համապատասխանաբար,  $q$  ենթաայուսակների՝  $E = E_1 \cup E_2 \cup \dots \cup E_q$ ,  $E_i \cap E_j = \emptyset$ ,  $T = T_1 \cup T_2 \cup \dots \cup T_q$ ,  $T_i \cap T_j = \emptyset$ ,  $i \neq j$  (հատումը և միավորումը հասկացվում են ըստ տողերի): Աղյուսի տրոհում կարելի է կատարել՝ գտնելով  $E$  բազմության օբյեկտների տեղեկատվական կշիռները և օբյեկտները դասակարգելով ըստ տեղեկատվական կշիռների նվազման կարգի:

$T$  այուսակի սյունակների  $\langle t_1, t_2, \dots, t_q \rangle$  ենթաբազմությունը (համապատասխան հայտանիշների ենթաբազմությունը) կանվանենք **թեստոր** կամ **ստորև թեստ**  $T$  այուսակի  $(T_1, T_2, \dots, T_q)$  տրոհման համար, եթե այդ սյունակներով առաջացած ենթաայուսակում  $T_i$  –ի բոլոր տողերը տարբեր են  $T_j$  –ի բոլոր տողերից ( $\forall i, j = 1, 2, \dots, q$   $i \neq j$ ) ( $i$  –ը կոչվում է թեստորի երկարություն):  $T$  այուսակի  $(T_1, T_2, \dots, T_q)$  տրոհման թեստորը կոչվում է **փակուղային**, եթե դրա ոչ մի սեփական ենթաբազմություն այդ այուսակի  $(T_1, T_2, \dots, T_q)$  տրոհման համար թեստոր չէ:  $T$  այուսակի  $(T_1, T_2, \dots, T_q)$  տրոհման բոլոր փակուղային թեստորների քանակը  $n_1$ -ով, իսկ այն փակուղային թեստորների քանակը, որոնց մեջ հանդիպում է  $j$ -րդ սյունակը՝  $k(j)$  –ով:  $R(j) = k(j) / k$  թիվը կոչվում է  $j$ -րդ հայտանիշի տարբերակող կշիռ, որը գնահատում է  $j$ -րդ հայտանիշի կարևորությունը (ազդեցության ուժը) ըստ  $x$  հատկության բավարարելու չափի  $E_i$  բազմության  $E_i$  տրոհման

դասերն ուսումնասիրելիս: Որոշակի հետազոտություններով պարզվում է, որ մեծ տարբերակող կշիռ ունեցող հայտանիշներն ավելի որոշիչ են: Այսպիսով՝ հայտանիշները կարելի է տարբերակող կշիռների նվազման կարգով դասավորել և ըստ այդ կարգի տրոհել խճերի (դասակարգել ըստ կարևորության):

Այժմ ձևակերպենք նոր օբյեկտների դասակարգման խնդիրը: Դիցուք՝ ունենք նոր ուսումնասիրվող  $E'$  օբյեկտների բազմություն, որի յուրաքանչյուր օբյեկտի համար հայտնի է, թե այն ինչ չափով է բավարարում  $P$  բազմության հայտանիշները, սակայն պարզ չէ, թե այն  $x$  հատկությամբ ի՞նչ չափով է օժտված ( $E'$  - ի տրոհման ո՞ր դասում ներառվի): Դիցուք՝  $t_j$  – ն ցույց է տալիս, թե տրված  $e^t \in E'$  օբյեկտն ինչ չափով է բավարարում  $P$  բազմության  $j$ -ը դրա հայտանիշը: Նշանակենք  $t_{ij}$  – ով  $T_s$  ենթաայուսակի տարրերը ( $s = 1, 2, \dots, q$ ;  $t = 1, 2, \dots, |E_s|$ ;  $j = 1, 2, \dots, n$ ):

**Նոր օբյեկտի դասակարգման I եղանակ:** Դիտարկենք  $e'(T_2) = \left( \sum_{i=1}^{|E_s|} \sum_{j=1}^n |t_{ij}^2 - t_j^2| \right) / |E_s|$  մեծությունները ( $s = 1, 2, \dots, q$ ), որոնք ցույց են տալիս  $(t_{ij}, t_{ij}, t_{ij})$  վեկտորի «մոտիկության» հարաբերական քանակները  $T_s$  ենթաայուսակների տողերի հետ, այլ կերպ ասած՝  $E_s$  դասի օբյեկտների ցուցանիշներին  $e^t$  օբյեկտի համապատասխան ցուցանիշների մոտիկությունը: Դիցուք՝  $\min_{s=1,2,\dots,q} e'(T_s) = e'(T_q)$  միակն է, ապա կանխատեսվում է, որ  $e^t$  –ը կներառվի  $E_q$  դասում: Հակառակ դեպքում պահանջվում են լրացնելի հետազոտություններ:

**Նոր օբյեկտի դասակարգման II եղանակ:** Հաշվենք  $e'(T_2, R) = (\sum_{i=1}^q e^t(i) \cdot \sum_{j=1}^{|E_s|} |t_{ij} - t_j|) / |E_s|$  մեծությունները ( $s = 1, 2, \dots, q$ ), որոնց ցույց արդեն հաշվի է առնվում ոչ միայն  $E_s$  դասի օբյեկտների ցուցանիշներին  $e^t$  – ի համապատասխան ցուցանիշների մոտիկությունը, այլև այդ ցուցանիշների կարևորությունը: Դիցուք՝  $\min_{s=1,2,\dots,q} e'(T_s, R) = e'(T_q, R)$  միակն է, ապա կանխատեսվում է, որ  $e^t$  –ը կներառվի  $E_q$  դասում: Հակառակ դեպքում պահանջվում են լրացնելի հետազոտություններ:

Այսպիսով՝ օգտագործելով I կամ II-րդ եղանակները, կկարողանանք ձանաշման միջոցով  $E'$  բազմության բոլոր օբյեկտները դասակարգել:

**1.2. Քլաստրային վերլուծության մեթոդաբանական գործիքակազմը<sup>2</sup>:** Դիցուք՝ ունենք  $n$  հատ օբյեկտների  $X = \{x_1, x_2, \dots, x_n\}, i = 1, \dots, n$  և այդ օբյեկտներին բնորոշ  $d$  հատ հայտանիշների  $I = \{I_1, I_2, \dots, I_d\}, j = 1, \dots, d$  բազմություն: Նշանակենք  $x_{ij}$  –ով  $i$  –րդ օբյեկտի  $j$  –րդ հայտանիշի արժեքը: Արդյունքում կստանանք  $(n \times d)$  չափանի հետևյալ մատրիցը՝

	1	...	j	...	a'
1	$x_{11}$	...	$x_{1j}$	...	$x_{1d}$
:	:	:	:	:	:
i	$x_{i1}$	...	$x_{ij}$	...	$x_{id}$
:	:	:	:	:	:
n	$x_{n1}$	...	$x_{nj}$	...	$x_{nd}$

<sup>2</sup> Տե՛ս Jain A.K., Dubes R.C., Algorithms for Clustering Data, Prentice Hall, 1988: Everitt B.S., Landau S., Leese M., Stahl D., Cluster Analysis, 5<sup>th</sup> edition, Wiley series in probability statistics, 2011: Han J., Kamber M., Pei J. Data Mining: Concepts and Techniques. -3<sup>rd</sup> edition, 2012, OECD. Handbook on constructing composite indicators: Methodology and user guide / OECD/JRC, 2008: Mooi E., Sarstedt M., A Concise Guide to Market Research: The Process, Data, and Methods Using IBM SPSS Statistics, 2011, <http://www.springer.com/978-3-642-12540-9>, Դյորան Բ., Օգելի Պ., Կլաստերնայի անալիզ. Պեր. ս անգլ. Դեմիդենկո Ե., Մ., Статистика, 1977, "IBM SPSS Statistics 21 Command Syntax Reference", IBM, 2012, էջ 325:

Քլաստերային վերլուծության խնդիրն է վերոբերյալ  $[x_{ij}]$  մատրիցի տվյալների հիման վրա օբյեկտների  $X$  բազմությունը տրոհել  $m$  հատ ( $m < n$ ) քլաստերների՝  $C = \{C_1, \dots, C_q, \dots, C_m\}$ ,  $q = 1, \dots, m$  այնպես, որ յուրաքանչյուր  $i$  օբյեկտ պատկանի միայն մեկ քլաստերի  $(C_i \cap C_k = \emptyset, C_1 \cup \dots \cup C_q \cup \dots \cup C_m) = X$ , և որպեսզի միևնույն քլաստերին պատկանող օբյեկտները (հեռավորության չափման որոշակի մեթոդի համաձայն) իրար հնարավորինս մերժ լինեն, իսկ տարբեր քլաստերներին պատկանող օբյեկտները՝ հեռու:

Քլաստերային վերլուծության վերոծնակերպյալ խնդիրի լուծումը պահանջում է նախևառաջ պարզեցնել, թե ո՞ր դեպքում երկու օբյեկտներ կհամարվեն իրար մերժ և ո՞ր դեպքում՝ միմյանցից հեռու: Դրա համար ներմուծենք երկու օբյեկտների միջև հեռավորության գաղափարը: Նշանակենք  $d(i, k)$  – ով  $i$ -րդ և  $k$ -րդ օբյեկտների ( $i, k \in \{1, \dots, n\}$ ) միջև հեռավորությունը: Օբյեկտների բոլոր զույգերի համար հեռավորությունների հաշվարկման արդյունքում կստանանք  $(n \times n)$  չափմանի  $[d(i, k)]$  մատրիցը, որը կոչվում է մերժության մատրից:

	1	...	$i$	...	$n$
1	0	...	$d(1, i)$	...	$d(1, n)$
:	:	:	:	:	:
$i$	$d(i, 1)$	...	0	...	$d(i, n)$
:	:	:	:	:	:
$n$	$d(n, 1)$	...	$d(n, i)$	...	0

Նկատենք, որ անկյունագծային տարրերի համար  $d(i, k) = 0$ , եթե  $i = k$ :

Հիմնական հարցն այն է, թե ինչպես չափել օբյեկտների միջև հեռավորությունը: Այս համատեքստում հաճախ օգտագործվող մեծությունը Մինկովսկու ցուցանիշն է, որը սահմանվում է հետևյալ կերպ՝

$$d(i, k) = (\sum_{j=1}^r |x_{ij} - x_{kj}|)^{\frac{1}{r}}, \text{ որտեղ } r \geq 1:$$

Մինկովսկու ամենահայտնի ցուցանիշներն են՝

1. Եթե  $r = 2$  (Եվկլիդյան հեռավորություն)՝  $d(i, k) = \sqrt{\sum_{j=1}^r (x_{ij} - x_{kj})^2}$ ,
2. Քառակուսային Եվկլիդյան հեռավորություն՝  $d(i, k) = \sum_{j=1}^r (x_{ij} - x_{kj})^2$ ,
3. Եթե  $r = 1$  (Մանիեթենի հեռավորություն)՝  $d(i, k) = \sum_{j=1}^r |x_{ij} - x_{kj}|$ ,
4. Եթե  $r \rightarrow \infty$  (Չեբիշևի հեռավորություն)՝  $d(i, k) = \max_{1 \leq j \leq r} |x_{ij} - x_{kj}|$ :

Աստիճանակարգային քլաստերային վերլուծության ալգորիթմի միջոցով վերլուծության իրականացման համար կիրառվում է մատրիցի թարմացման ալգորիթմ<sup>3</sup>, ինչը ներկայացնում է ազլումերատիվ գործընթաց, որը հաջորդաբար հեռացնում է մերժության մատրիցի տողերն ու սյուները՝ ինն քլաստերները նորերում միավորմանը ցուցընթաց:

Նշանակենք  $d[(r), (s)]$  – ով  $(r)$  – րդ և  $(s)$  – րդ քլաստերների միջև մերժությունը և  $L(p)$  – ով՝  $p$  – րդ քլաստերավորման մակարդակը: Ալգորիթմը կներկայացվի հետևյալ կերպ՝

<sup>3</sup> Առաջարկել է Քինգը, զարգացրել՝ Զոնսոնը. King B., Step-Wise Clustering Procedures, Journal of the American Statistical Association 69, 1967, էջ 86-101: Johnson S., Hierarchical Clustering Schemes, Psychometrika 32, 1967, էջ 241-254:

**Քայլ 1.** Սկսել մասնատված քլաստերավորումից, երբ առկա են  $m$  հատ քլաստերներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մեկ օբյեկտ,  $L(0) = 0$ :

**Քայլ 2.** Գտնել քլաստերների ամենանման զույգը՝  $\{r, s\}$ , հետևյալ կերպ՝  $d[(r), (s)] = \min\{d(i), (k)\}$ :

**Քայլ 3.** Անցնել քլաստերավորման հաջորդ փուլին՝  $p \leftarrow p + 1$ : Միավորել  $\{r\} - r$  և  $\{s\} - s$  - րդ քլաստերները մեկ քլաստերում՝ սահմանելով դրա մակարդակը՝  $L(p) = d[(r), (s)]$ :

**Քայլ 4.** Թարմացնել մերձության մատրիցը՝ հեռացնելով  $\{r\} - r$  և  $\{s\} - s$  - րդ քլաստերներին համապատասխանող տողերն ու սյուները և ավելացնելով նոր ծևազորված  $\{r, s\}$  քլաստերին համապատասխանող տող և սյուն: Նոր քլաստերի և իին քլաստերներից  $\{r\}$  յուրաքանչյուրի միջև հեռավորությունը կհաշվարկվի հետևյալ կերպ<sup>4</sup>:

$$d[(k), \{r, s\}] = \alpha_r d[(k), (r)] + \alpha_s d[(k), (s)] + \beta d[(r), (s)] + \gamma d[(k), (r)] - d[(k), (s)]$$

Պարամետրերի արժեքները հիմնական ալգորիթմների համար անփոփած են ստորև բերված այլուսակում:

**Քայլ 5.** Եթե բոլոր օբյեկտները միավորվել են մեկ քլաստերում, կանգ առնել: Այլապես՝ անցում կատարել քայլ 2-ին:

Քլաստերավորման մեթոդ	$\alpha_r$	$\alpha_s$	$\beta$	$\gamma$
Եզակի կապի մեթոդ	1/2	1/2	0	-1/2
Ամրողական կապի մեթոդ	1/2	1/2	0	1/2
Թվաքանական միջինի օգտագործմամբ չշրջաված զույգային մեթոդ	$\frac{n_r}{n_r + n_s}$	$\frac{n_s}{n_r + n_s}$	0	0
Թվաքանական միջինի օգտագործմամբ չշրջաված զույգային մեթոդ	1/2	1/2	0	0
Չշրջաված զույգային մեթոդ	$\frac{n_r}{n_r + n_s}$	$\frac{n_s}{n_r + n_s}$	$\frac{-n_r n_s}{(n_r + n_s)^2}$	0
Թենտրոիդի օգտագործմամբ չշրջաված զույգային մեթոդ	1/2	1/2	-1/4	0
Պուարդի (նվազագույն վարիացիայի) մեթոդ	$\frac{n_r + n_s}{n_r + n_s + n_k}$	$\frac{n_s + n_k}{n_r + n_s + n_k}$	$\frac{-n_k}{n_r + n_s + n_k}$	0

**Քլաստերային վերլուծության օրինակ:** Ներկայացնենք քլաստերային վերլուծության իրականացման ընթացքը երեք հայտանիշներով բնութագրվող վեց օբյեկտների պայմանական օրինակի հիման վրա: Տվյալները ներկայացված են ա. մատրիցում: Քառակուսային էվկլիդյան հեռավորության եղանակով կստանանք մերձության մատրիցը ( $\rho$ ):

ա.  $\rho$ .

Օբյեկտ	Հայտամիջ			Օբյեկտ					
	1	2	3	1	2	3	4	5	6
1	1	2	2	1   0	2	3	9	5.5	<b>1.5</b>
2	2	1	2	2	0	5	11	12.5	2.5
3	3	1	3	3		0	18	6.5	6.5
4	3	4	3	4			0	9.5	3.5
5	0	3.5	3.5	5			0	6	
6	2	2.5	2.5	6					0

<sup>4</sup> Այս բանաձևն առաջարկել են Լանսը և Ուիլյամսը. Lance G.N., Williams W.T., A General Theory of Classificatory Sorting Strategies II. Clustering Systems, Computer Journal 10, 1967, էջ 271-277:

Ստացված մերձության մատրիցը կթարմացնենք վերօբերյալ ալգորիթմի համաձայն՝ 1.  $L(0) = 0, p = 0$  : 2. Քլաստերների ամենամերժ զույգն է՝  $\{1, 6\}$  –ը, քանի որ  $d[\{1, 6\}] = d[(1), (6)] = 1,5$  : 3. Քլաստերավորման հաջորդականության համարն է՝  $1 \leftarrow 0 + 1$ : Այս քլաստերավորման մակարդակն է՝  $L(1) = d[(1), (6)]$ , որի ընթացքում միավորվելու են (1) և (6) քլաստերները: 4. Մերձության մատրիցը կթարմացվի՝ ջնջելով (1) և (6) քլաստերներին համապատասխանող տողերը և այուները, ավելացնելով նոր (1,6) քլաստերի համար տող և սյուն: 5. Մինչև բոլոր օբյեկտների՝ մեկ քլաստերում միավորման հաստատումը անհրաժեշտ է կրկնել 2–4 քայլերը՝ կատարելով մերձության մատրիցի հաջորդական թարմացումներ:

**Ուստի մեթոդի համաձայն՝** մինչև վերջնարդյունքի հաստատումը կկատարվեն հետևյալ 4 թարմացումները՝

	I.					II.				
	1,6	2	3	4	5		1,2,6	3	4	5
1,6	0	<b>2,5</b>	5,8(3)	7,8(3)	7,17		1,2,6	<b>6,25</b>	10,75	11
2		0	5	11	12,5		3	0	18	6,5
3			0	18	6,5		4	0	9,5	
4				0	9,5	5			0	
5					0					

	III.				IV.		
	1,2,3,6	4	5		1,2,3,6	4,5	
1,2,3,6	0	14,55	10,15		1,2,3,6	<b>14,55</b>	
4	0	<b>9,5</b>			4,5	0	
5		0					

Յուրաքանչյուր թարմացման ընթացքում ձևավորված նոր քլաստերի և հին քլաստերների միջև հեռավորությունների հաշվարկը ներկայացվում է ստորև.

$$\begin{aligned}
 d[(2),(1,6)] &= (2/3)2+(2/3)2,5-(1/3)1,5=2,5, \\
 d[(3),(1,6)] &= (2/3)3+(2/3)6,5-(1/3)1,5=5,8(3), \\
 d[(4),(1,6)] &= (2/3)9+(2/3)3,5-(1/3)1,5=7,8(3), \\
 d[(5),(1,6)] &= (2/3)5,5+(2/3)6-(1/3)1,5=7,17, \\
 d[(3),(1,2,6)] &= (2/4)5+(3/4)5,8(3)-(1/4)2,5=6,25, \\
 d[(4),(1,2,6)] &= (2/4)11+(3/4)7,8(3)-(1/4)2,5=10,75, \\
 d[(5),(1,2,6)] &= (2/4)12,5+(3/4)7,17-(1/4)2,5=11, \\
 d[(4),(1,2,3,6)] &= (2/5)18+(4/5)10,75-(1/5)6,25=14,55, \\
 d[(5),(1,2,3,6)] &= (2/5)6,5+(4/5)11-(1/5)6,25=10,15, \\
 d[(4),(1,2,3,5,6)] &= (2/6)9,5+(5/6)14,55-(1/6)10,15=13,6, \\
 d[(1,2,3,6),(4,5)] &= (5/6)14,55+(5/6)10,15-(4/6)9,5=14,25:
 \end{aligned}$$

Արդյունքում կստանանք յուրաքանչյուր քլաստերավորման մակարդակները՝

Փուլ	Միավորվող քլաստերներ	Գործակից $d[(k),(r,s)]$	Ճշգրտված գործակից $(W_1 = W_0 + 0,5d[(k),(r,s)])$
$L(1)$	$d[(1), (6)]$	1,5	0,75
$L(2)$	$d[(2), (1,6)]$	2,5	2
$L(3)$	$d[(3), (1,2,6)]$	6,25	5,125
$L(4)$	$d[(4), (5)]$	9,5	9,875
$L(5)$	$d[(1,2,3,6), (4,5)]$	14,25	17


IV. Դիսկրետ մոդելավորման և քաստերային վերլուծության մեթոդների կիրառությունը սահմանադրականության կայունության հետազոտման պայմանական օրինակի նկատմամբ: Որպես դիսկրետ մոդելավորման և քաստերային վերլուծության կիրառություն՝ գուտ ցուցադրական նպատակով կրերենք այնպիսի ցուցանիշի քանակական գնահատմանն ու երկրների համեմատություններում դրա դիտարկմանը, ինչպիսին սահմանադրականության կայունության ցուցանիշն է, որը որոշակի ինդիկատորների (հայտադիրների) համակարգով հաշվարկվող ինտեգրալային ցուցանիշ է<sup>5</sup>.

$$U_t = \sum_{j=1}^m \left[ \frac{(x_{ij} - \bar{x}_j^{(t+1)})}{\sigma(x_{ij})} \prod_{\substack{p=1 \\ p \neq j}}^m (1 - r_{pj}) \right],$$

որտեղ՝  $U_t$  – ն  $i$  – րդ երկրի սահմանադրականության կայունության ինտեգրալային մակարդակն է,  $x_{ij}$  – ն՝  $i$  – րդ երկրի  $j$  – րդ ինդիկատորի արժեքը,  $\bar{x}_j^{(t+1)}$  – ն՝ էտալոնային երկրի  $j$  – րդ ինդիկատորի արժեքը,  $r_{pj}$  – ն՝ գույգային կորելյացիայի արժեքը,  $\sigma(x_{ij})$  – ն՝  $j$  – րդ ինդիկատորի միջին քառակուսային շելումը ( $i = 1, 2, \dots, n$ ;  $j = 1, 2, \dots, m$ ):

Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշը որոշ հեղինակներ հաշվարկում են իրավական պետության, դեմոկրատական զարգացման և սոցիալ-տնտեսական բնութագրիչների համախմբով: Մեր պայմանական օրինակում ներառվել են ցուցանիշներ առաջին երկու խմբից: Որպես էտալոնային երկրի ցուցանիշ՝ պայմանականորեն դիտարկվել է Երկրների համախմբի միջին արժեքը, որն այսուհետ ունի սուկ հաշվարկային բնույթ:

Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշը հաշվարկվել է Freedom House-ի տվյալների հիման վրա՝ ըստ անցումային տնտեսությամբ երկրների (2014 թ.): Այդ տվյալները ներկայացված են հավելված 1-ում: Հաշվարկների արդյունքում երկրները դասակարգվել են սահմանադրականության կայունության նվազման կարգով հետևյալ կերպ.



Գծապատկեր 1. Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշներ

<sup>5</sup>Տես Արյունյան Գ.Գ., Կոնստիտուցիոնալիզմ: уроки, вызовы, гарантии. Киев, Логос, 2011, էջ 99–100:

**2.1. Պայմանական օրինակի թեստային հետազոտման որոշ դիպաշառեր:** Օգտվելով անցումային տնտեսությամբ 29 երկրների ութ հայտամիշներով ներկայացված ցուցանիշների աղյուսակից (հավելված 1)` կատարենք նշված երկրների որոշակի խմբերի թեստային հետազոտություններ:

**Դիպաշար 1.** Առանձնացնենք այն երկրները, որոնք սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշով գրոյն մոտ են և միմյանցից էապես չեն տարրերովում: Երկրների այդ խումբն է. Չեռնոգորիա (60), Մակեդոնիա (67), Ալբանիա (80), Բոսնիա և Հերցեգովինա (77), Ուկրաինա (90), Վրաստան (98)<sup>6</sup>:

Տվյալ երկրները ներառող ենթաայուսակի համար փակուղային թեստերի բազմությունն է.  $\langle 1,4 \rangle, \langle 1,5 \rangle, \langle 5,6 \rangle, \langle 5,7 \rangle, \langle 1,2,6 \rangle, \langle 1,2,8 \rangle, \langle 1,6,7 \rangle, \langle 1,7,8 \rangle, \langle 2,3,4 \rangle, \langle 2,3,5 \rangle, \langle 2,3,6 \rangle, \langle 2,3,8 \rangle, \langle 2,4,5 \rangle, \langle 2,4,8 \rangle, \langle 2,6,7 \rangle, \langle 2,6,8 \rangle, \langle 2,7,8 \rangle, \langle 3,4,6 \rangle, \langle 3,4,7 \rangle, \langle 3,7,8 \rangle, \langle 4,6,7 \rangle, \langle 4,6,8 \rangle, \langle 4,7,8 \rangle, \langle 6,7,8 \rangle$ :

Որոշենք հայտանիշների տեղեկատվական կշիռները.  $k=24$ ,  $k(1)=6$ ,  $k(2)=11$ ,  $k(3)=7$ ,  $k(4)=9$ ,  $k(5)=5$ ,  $k(6)=k(7)=k(8)=10$ , իսկ  $P(1)=6/24$ ,  $P(2)=11/24$ ,  $P(3)=7/24$ ,  $P(4)=9/24$ ,  $P(5)=5/24$ ,  $P(6)=P(7)=P(8)=10/24$ :

Հայտանիշների տեղեկատվական կշիռները դասակարգելով նվազման կարգով՝ կարող ենք արձանագրել, որ, այլ հավասար պայմաններում, սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշով 0-ի շրջակայքում հայտնված 6 երկրների դասի համար, ըստ կարևորության նվազման կարգի, հայտանիշներն են՝ I խումբ. Բնորոշվում է քաղաքացիական հասարակություն հայտանիշի ամենաբարձր արժեքը, որ ամենակարևորն է, II խումբ.  $P_6=P_7=P_8=10/24$  (անկախ դասական համակարգ, կոռուպցիա, դեմոկրատիայի աստիճան), III խումբ.  $P_4=9/24$  (ազգային դեմոկրատական կառավարում), IV խումբ.  $P_3=7/24$  (անկախ լրատվամիջոց), V խումբ.  $P_1=6/24$  (ընտրական գործընթաց), VI խումբ.  $P_5=5/24$  (տեղական դեմոկրատական կառավարում): Օգտվելով հայտանիշների տեղեկատվական կշիռներից՝ հաշվարկենք երկրների տեղեկատվական կշիռները՝ երկրները դասակարգելով նվազման կարգով.

$$L = 3 \cdot \sum_{i=1}^8 P(i) = \frac{104}{24}, e(1) = \frac{18}{204}, e(2) = \frac{146}{204}, e(3) = \frac{118}{204}, \\ e(4) = \frac{102}{204}, e(5) = \frac{73}{204}, e(6) = \frac{71}{204};$$

Այստեղից հետևում է, որ դիտարկված դասում ամենատիպական երկիրը Չեռնոգորիան է:

**Դիպաշար 2.** Դիտարկվող երկրներն են. Ուլմինիա (49), Խորվաթիա (45), Չեռնոգորիա (60), Մակեդոնիա (67), Ալբանիա (80), Բոսնիա և Հերցեգովինա (77), Ուկրաինա (90), Հայաստան (91):

Փակուղային թեստերի բազմությունն է՝  $\langle 1,3,5 \rangle, \langle 1,5,6 \rangle, \langle 3,5,7 \rangle, \langle 3,7,8 \rangle, \langle 5,6,7 \rangle, \langle 6,7,8 \rangle, \langle 1,2,3,6 \rangle, \langle 1,2,3,8 \rangle, \langle 1,2,6,8 \rangle, \langle 1,3,4,6 \rangle, \langle 1,3,4,8 \rangle, \langle 1,3,6,7 \rangle, \langle 1,4,6,8 \rangle, \langle 2,3,6,7 \rangle, \langle 3,4,6,7 \rangle$ :  $k=15$ ,  $k(1)=9$ ,  $k(2)=4$ ,  $k(3)=10$ ,  $k(4)=4$ ,  $k(5)=4$ ,  $k(6)=10$ ,  $k(7)=7$ ,  $k(8)=6$ : Հայտանիշների տեղեկատվական կշիռներն են՝  $P(1)=9/15$ ,  $P(2)=P(4)=P(5)=4/15$ ,  $P(3)=10/15$ ,  $P(6)=10/15$ ,  $P(7)=7/15$ ,  $P(8)=6/15$ : Դասավորենք հայտանիշների տեղեկա-

<sup>6</sup> Փակագերում նշված է աշխարհի երկրների շարքում տվյալ երկրի տեղը՝ ըստ գնողունակության համարժեք արտահայտված համախառն ազգային եկամտի ցուցչի (2012 թ.). աղբյուր՝ <Բ կայքի տվյալները>:

տվական կշիռները նվազման կարգով՝ I խումբ.  $P(3)=P(6)=10/15$ , II խումբ.  $P(1)=9/15$ , III խումբ.  $P(7)=7/15$ , IV խումբ.  $P(8)=6/15$ , V խումբ.  $P(2)=P(4)=P(5)=4/15$ : Ինչպես տեսնում ենք, երկրների այս խմբի համար ամենակարևոր հայտանիշներն են անկախ լրատվամիջոցը, անկախ դատական համակարգը, ընտրական գործընթացը և կոռուպցիան, իսկ մյուս 4 հայտանիշներն ավելի քիչ կարևոր են: Երկրների տեղեկատվական կշիռները կլիմեն.

$$L = 3 \cdot \sum_{i=1}^5 P(i) = 3 \cdot \frac{30}{90} = \frac{30}{90}$$

$$\Rightarrow (1) = \frac{30}{90}, (2) = \frac{24}{90}, (3) = \frac{10}{90}, (4) = \frac{8}{90}, (5) = \frac{10}{90}, (6) = \frac{12}{90}:$$

**Դիպաշար 3.** Այս օրինակում բերված երկրների ընտրությունն առանձնանում է նրանով, որ դրանք, ըստ համախառն ազգային եկամտի ցուցչի, գտնվում են համեմատաբար բարձր դիրքերում՝ Լեհաստան (42), Լիտվիա (37), Սլովակիա (35), Հունգարիա (43), Ռումինիա (49), Սերբիա (69):

Փակուղային թեստերի բազմություն՝  $\langle 1,2,3 \rangle$ ,  $\langle 1,3,5 \rangle$ ,  $\langle 1,3,6 \rangle$ ,  $\langle 1,3,8 \rangle$ ,  $\langle 1,4,6 \rangle$ ,  $\langle 1,4,8 \rangle$ ,  $\langle 2,3,8 \rangle$ ,  $\langle 2,4,8 \rangle$ ,  $\langle 3,6,8 \rangle$ ,  $\langle 4,6,8 \rangle$ :  $k=10$ ,  $k(1)=k(3)=k(8)=6$ ,  $k(2)=3$ ,  $k(4)=k(6)=4$ ,  $k(5)=1$ ,  $k(7)=0$ : Հայտանիշների տեղեկատվական կշիռներ՝  $P(1) = P(3) = P(5) = \frac{6}{10}$ ,  $P(2) = \frac{3}{10}$ ,  $P(4) = P_6 = \frac{4}{10}$ ,  $P_7 = \frac{1}{10}$ ,  $P_8 = 0$ :

Հայտանիշների դասակարգում նվազման կարգով՝ I խումբ.

$$P_1 = P_3 = P_5 = \frac{6}{10} \text{ II խումբ. } P_4 = P_6 = \frac{4}{10}, \text{ III խումբ. } P_7 = \frac{1}{10}, \text{ IV խումբ. }$$

$$P_8 = \frac{1}{10}, \text{ V խումբ. } P_2 = 0: \text{ Երկրների տեղեկատվական կշիռները կլիմեն՝}$$

$$L = 3 \cdot \sum_{i=1}^5 P(i) = 3 \cdot \frac{30}{90} = \frac{30}{90}$$

$$\Rightarrow (1) = \frac{30}{90}, (2) = \frac{24}{90}, (3) = \frac{10}{90}, (4) = \frac{8}{90}, (5) = \frac{10}{90}, (6) = \frac{12}{90}:$$

Նկատենք, որ երկրների այս խմբի համար էապես փոխվում է հայտանիշների առաջնայնության պատճերը: Օրինակ՝ ինչպես տեսնում ենք, կոռուպցիան, որը դոմինանտ էր սահմանադրականության ինտեգրալային մակարդակով 0-ի շրջակայքում գտնվող երկրների դասի համար (դիպաշար 1), իր տեղը զիջում է ընտրական գործընթաց, անկախ լրատվամիջոց և դեմոկրատիայի աստիճան հայտանիշներին: Կոռուպցիան կարևոր հայտանիշ չէ երկրների այս խմբի համար, որովհետև դիտարկվող խմբի բոլոր երկրների համար էլ կոռուպցիայի մակարդակը գրեթե նույնն է (CO-ի ցուցանիշների արժեքները պատկանում են [3,5; 4,25] միջակայքին, հավելված 1):

Ղծվար չէ նկատել, որ դիտարկված 3 դիպաշարերում էլ թեստային հետազոտությամբ ստացված երկրների դասակարգումը նվազման կարգով գրեթե միշտ համընկնում է երկրների սահմանադրականության կայունության ինտեգրալային և գնողունակության համարժեքով արտահայտված համախառն ազգային եկամտի ցուցանիշներով ստացված դասակարգման հետ: Նկատենք, որ թեստային հետազոտությունների արդյունքում ստացվում է նաև հավելյալ տեղեկատվություն հայտանիշների կարևորության առումով:

**Դիպաշար 4.** Տրոհենք դիպաշար 2-ում դիտարկված երկրներն ըստ տեղեկատվական կշիռների նվազման կարգի երկու դասերի՝  $E_1$  և  $E_2$ .

$$E_1 \left[ \begin{array}{l} 1. Ռումինիա (49) \\ 2. Խորվաթիա (45) \\ 3. Չեռնոգորիա (60) \\ 4. Սակեռնոնիա (67) \end{array} \right] \quad E_2 \left[ \begin{array}{l} 5. Ալբանիա (80) \\ 6. Բունիա - Քերտեզովինա (77) \\ 7. Ուկրաինա (90) \\ 8. Հայաստան (91) \end{array} \right]$$

Երկու դասերով որոշված աղյուսակի համար բոլոր փակուղային թեստորների բազմությունը կլինի.  $\langle 4 \rangle$ ,  $\langle 1,5 \rangle$ ,  $\langle 5,7 \rangle$ ,  $\langle 7,8 \rangle$ ,  $\langle 1,2,6 \rangle$ ,  $\langle 1,2,8 \rangle$ ,  $\langle 1,6,7 \rangle$ ,  $\langle 2,6,7 \rangle$ ,  $\langle 3,6,7 \rangle$ :

$$k = 9, k(1) = 4, k(2) = 3, k(3) = k(4) = 1, k(5) = 2, k(6) = 4, k(7) = 5, k(8) = 2;$$

Հայտանիշների տարրերակող կշիռները կլինեն՝

$$R(1) = R(6) = \frac{4}{9}, R(2) = \frac{3}{9}, R(3) = R(4) = \frac{1}{9}, R(5) = R(8) = \frac{2}{9}, R(7) = \frac{5}{9};$$

Համանմանությամբ կունենանք՝ I խումբ.  $R(7) = \frac{5}{9}$ , II խումբ.

$$R(1) = R(6) = \frac{4}{9}, \text{ III խումբ. } R(2) = \frac{3}{9}, \text{ IV խումբ. } R(5) = R(8) = \frac{2}{9},$$

$$\text{V խումբ. } R(3) = R(4) = \frac{1}{9};$$

Այսպիսով՝ ( $E_1, E_2$ ) տրոհման դասերի երկրների տարրերակման ամենակարևոր հայտանիշներն են՝ կոռուպցիան, ընտրական գործընթացը և անկախ դեմոկրատական համակարգը:

**Դիպաշար 5.** Դիտարկենք երկրների 2 դաս՝  $E_1$  և  $E_2$ .

$E_1$	$\begin{cases} \text{Ձեռնոցորիա (60)} \\ \text{Մակերդնիա (67)} \\ \text{Ալբանիա (80)} \\ \text{Ռւեկանիա (90)} \\ \text{Վրաստան (98)} \end{cases}$	$E_2$	$\begin{cases} \text{Սուրբվա (118)} \\ \text{Պայասան (91)} \\ \text{Կոսովո (85)} \\ \text{Ռուսաստան (130)} \\ \text{Ռուսաստան (40)} \end{cases}$
-------	---	-------	--

Նկատենք, որ այս օրինակում դիտարկվող երկրների  $E_2$  դասում սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշով երկրների դասակարգումը տարրերվում է ըստ համախառն ազգային եկամտի ցուցչի դասակարգումից: Փակուղային թեստորների բազմություն՝  $\langle 1,3 \rangle$ ,  $\langle 3,4 \rangle$ ,  $\langle 3,5 \rangle$ ,  $\langle 3,6 \rangle$ ,  $\langle 3,7 \rangle$ ,  $\langle 3,8 \rangle$ ,  $\langle 1,4,6 \rangle$ ,  $\langle 1,5,6 \rangle$ ,  $\langle 1,6,7 \rangle$ ,  $\langle 1,6,8 \rangle$ ,  $\langle 2,4,6 \rangle$ ,  $\langle 2,5,6 \rangle$ ,  $\langle 2,6,7 \rangle$ ,  $\langle 2,6,8 \rangle$ ,  $\langle 4,5,6,7 \rangle$ ,  $\langle 5,6,7,8 \rangle$ :

$$k = 16, k(1) = k(5) = k(7) = 5, k(2) = k(8) = k(4) = 4, k(3) = 6, k(6) = 11;$$

Հայտանիշների տարրերակող կշիռներ՝

$$k = 16, k(1) = k(5) = k(7) = 5, k(2) = k(8) = k(4) = 4, k(3) = 6, k(6) = 11;$$

Հայտանիշների դասակարգում նվազման կարգով՝ I խումբ.  $R(6)=11/16$ , II խումբ.  $R(3)=6/16$ , III խումբ.  $R(1)=R(5)=R(7)=5/16$ , IV խումբ.  $R(2)=R(4)=R(8)=4/16$ :

Ինչպես տեսնում ենք, երկրների այս դասերի տարրերակման կարևոր հայտանիշներն էապես տարրերվում են դիպաշար 4-ում ստացված արդյունքներից: Օրինակ՝ այստեղ արդեն տարրերակման ամենակարևոր հայտանիշն է անկախ դատական համակարգը, որի տեղեկատվական կշիռը մոտ երկու անգամ մեծ է II և III խմբերի հայտանիշների տեղեկատվական կշիռներից:


Նկարագրելով դիպաշարերը՝ նպատակ չունենք բազմապլան, առավել ևս որակական վերլուծություններ կատարելու: Սակայն փաստ է, որ ստացված արդյունքներն արդեն իսկ հնարավորություն են ընձեռում կատարելու որոշակի մեկնաբանություններ: Օրինակ՝ դիպաշար 3-ում ընտրված էր 6 երկիր՝ կենսամակարդակի ցուցիչով համեմատաբար բարձր դիրք ունեցող: Թեստային հետազոտման արդյունքում  $R_1$  (կոռուպցիա) հայտանիշը հետին պլան է մղվում՝ իր տեղը զիջելով  $R_2, R_3, R_4$  հայտանիշներին: Բնական է, որ երկիրն առավել բարվոր վիճակ «տեղափոխելու» կառավարման խնդիրներում համակարգի զգայունությունը (ինչպես ցույց է տալիս վերլուծությունը)

ավելի մեծ չափերով պայմանավորվելու է ընտրական գործընթացով՝  $P_1$ , անկախ լրատվամիջոցով՝  $P_2$  և դեմոկրատիայի  $P_3$  աստիճանով:

Այժմ անցնենք քլաստերային վերլուծությանը սահմանադրականության կայունության 29 օբյեկտները բնորշող 8 հայտանիշներով պայմանական օրինակի հիման վրա (հավելված 1): Քառակուսային Եվկլիդյան հեռավորության եղանակով կստանանք մերձության մատրիցը, որը, նախորդ բաժնում բննարկված ալգորիթմի հիման վրա, Ուարդի մեթոդով հաջորդականորեն թարմացնելու արդյունքում, կստանանք յուրաքանչյուր քլաստերավորման մակարդակները (Ուարդի գործակիցները՝  $L(1)=0$ ,  $L(2)=0.065$ ,  $L(3)=0.285$ ,  $L(4)=0.566$ ,  $L(5)=0.882$ ,  $L(6)=1.231$ ,  $L(7)=1.734$ ,  $L(8)=2.256$ ,  $L(9)=2.963$ ,  $L(10)=3.746$ ,  $L(11)=4.574$ ,  $L(12)=5.672$ ,  $L(13)=6.858$ ,  $L(14)=8.195$ ,  $L(15)=9.622$ ,  $L(16)=11.214$ ,  $L(17)=12.923$ ,  $L(18)=14.845$ ,  $L(19)=17.389$ ,  $L(20)=20.014$ ,  $L(21)=23.04$ ,  $L(22)=26.591$ ,  $L(23)=30.525$ ,  $L(24)=36.551$ ,  $L(25)=46.431$ ,  $L(26)=99.306$ ,  $L(27)=283.507$ ,  $L(28)=681.607$ :

Քլաստերների օպտիմալ քանակն որոշելու համար դիտարկենք Ուարդի գործակիցների աճը՝ քլաստերների թվի աճին զուգընթաց: Ինչպես տեսնում ենք, չորրորդ քլաստերին հաջորդող քլաստերները շատ փոքր աճ են ավելացնում դիտարկումների միջև տարբերակումների համար: Այդ իսկ պատճառով քննարկված օրինակում քլաստերների օպտիմալ քանակը 4 է:

Գրաֆիկորեն այս եզրակացնությունը հաստատում է նաև հաջորդական քլաստերավորմների ընթացքը ներկայացնող հետևյալ դենդրոգրամը: Ակներևեն, կարելի է նկատել զատորոշված չորս քլաստերների առկայությունը.



Զատորոշված չորս քլաստերները՝ դրանց պատկանող երկրների ցանկով, ներկայացված են ստորև՝

Քաստեր 1	Քաստեր 2	Քաստեր 3	Քաստեր 4
1. Ալբանիա	2. Հայաստան	3. Ադրբեյջան	8. Չեխիա
6. Բուլղարիա	5. Բունիա և Հերցեգովինա	4. Բելառուս	9. Էստոնիա
7. Խորվաթիա	10. Վրաստան	12. Ղազախստան	11. Հունգարիա
17. Մակեդոնիա	13. Կոստղոն	22. Ռուսաստան	15. Լատվիա
19. Չեռնոգորիա	14. Ղողզստան	26. Տաջիկստան	16. Լիտվա
21. Ռումինիա	18. Մոլդովա	27. Թուրքմենստան	20. Լեհաստան
23. Սերբիա	28. Ուկրաինա	29. Ուզբեկստան	24. Ալովակիա
			25. Ալովենիա

Համադրելով ստացված արդյունքը սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշի արժեքների հետ՝ տեսնում ենք, որ դրանք լիովին համընկնում են: Քլաստերային վերլուծության արդյունքում կարող ենք առանձնացնել սահմանադրականության կայունության (ՍԿ) չորս մակարդակ՝ եթե  $ՍԿ \geq 52$ , ապա տվյալ երկիրը բնութափովում է սահմանադրականության կայունության բարձր մակարդակով, եթե  $0 \leq ՍԿ < 52$ , ապա՝ միջին, եթե  $-50 \leq ՍԿ < 0$ , ապա՝ ցածր, եթե  $-110 \leq ՍԿ < -50$ , ապա՝ գերցածր:

Անփոփելով նշենք, որ սույն աշխատանքի նպատակը դիսկրետ մոդելավորման որոշ օժանդակ եղբերի (ախտորոշող թեստեր և թեստորներ) և քլաստերային վերլուծության կիրառությունների լուսաբանման միջոցով, թեկուզն պայմանական օրինակի դիտարկմամբ, առաջին մոտարկմամբ սահմանադրականություն հասկացնության գնահատման ուղիներից ճեկի մշակումն է:

Հետազոտության հետագա ուղղություններն ունենալու են կիրառությունների հստակ ուղղվածություն. ընտրված երկրի սահմանադրականության մակարդակի գնահատում, մեթոդների ու ծրագրային ապահովման փաթեթների գործադրմամբ փորձարարական հաշվարկների իրականացում, ըստ հավելված 2-ում բերված սահմանադրականության համաթվի կառուցվածքային պատկերի՝ կառավարման այս կամ այն որոշումների կայացման ու սահմանադրականության մակարդակի մշտադիտարկման կառուցակարգերի մշակում: Գործողությունների նշված համախումբը բովանդակելու է մշակվելիք սահմանադրականության գնահատման ու մշտադիտարկման հետազոտական ծրագիր:

**Հավելված 1****Freedom House-ի տվյալները անցումային տնտեսությամբ երկրների համար (2014 թ.)**

<b>Երկրներ</b>	<b>Հայտանիշներ</b>	<b>1 EP</b>	<b>2 CS</b>	<b>3 IM</b>	<b>4 NGOV</b>	<b>5 LGOV</b>	<b>6 JFI</b>	<b>7 CO</b>	<b>8 DS</b>
1.	Ալբանիա	4.00	3.00	4.00	4.75	3.50	4.75	5.25	4.18
2.	Հայաստան	5.75	3.75	5.75	5.75	5.75	5.50	5.25	5.36
3.	Աղբեջան	7.00	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.75	6.68
4.	Բելառուս	7.00	6.50	6.75	6.75	6.75	7.00	6.25	6.71
5.	Բոսնիա և Հերցեգովինա	3.25	3.50	4.75	5.75	4.75	4.25	4.75	4.43
6.	Բուլղարիա	2.25	2.25	4.00	3.75	3.00	3.25	4.25	3.25
7.	Խորվաթիա	3.25	2.75	4.00	3.50	3.75	4.50	4.00	3.68
8.	Չեխիա	1.25	1.75	2.75	3.00	1.75	1.75	3.50	2.25
9.	Էստոնիա	1.75	1.75	1.50	2.25	2.50	1.50	2.50	1.96
10.	Վրաստան	4.50	3.75	4.00	5.50	5.50	5.00	4.50	4.68
11.	Հունգարիա	2.25	2.25	3.50	3.75	2.75	2.50	3.75	2.96
12.	Ղազախստան	6.75	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.50	6.61
13.	Կոսովո	4.75	3.75	5.75	5.50	4.75	5.50	6.00	5.14
14.	Ղրղզստան	5.50	4.50	6.00	6.50	6.25	6.25	6.25	5.89
15.	Լատվիա	1.75	1.75	2.00	2.00	2.25	1.75	3.00	2.07
16.	Լիտվա	2.00	1.75	2.25	2.75	2.50	1.75	3.50	2.36
17.	Մակեդոնիա	3.25	3.25	5.00	4.25	3.75	4.25	4.25	4.00
18.	Մոլդովա	4.00	3.25	5.00	5.50	5.75	4.75	5.75	4.86
19.	Չեռնոգորիա	3.50	2.75	4.25	4.25	3.25	4.00	5.00	3.86
20.	Լեհաստան	1.25	1.50	2.50	2.50	1.50	2.50	3.50	2.18
21.	Ումանիա	3.00	2.50	4.25	3.75	3.00	3.75	4.00	3.46
22.	Ուսասատան	6.75	5.75	6.25	6.50	6.00	6.00	6.75	6.29
23.	Սերբիա	3.25	2.25	4.00	3.75	3.50	4.50	4.25	3.64
24.	Սլովակիա	1.50	1.75	2.75	3.00	2.50	3.00	3.75	2.61
25.	Սլովենիա	1.50	2.00	2.25	2.00	1.50	1.75	2.50	1.93
26.	Տաջիկստան	6.75	6.25	6.25	6.50	6.00	6.25	6.25	6.32
27.	Թուրքմենստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
28.	Ուկրաինա	4.00	2.50	4.25	6.00	5.50	6.00	6.25	4.93
29.	Ուգրեստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
<b>Միջին</b>	<b>3.99</b>	<b>3.58</b>	<b>4.53</b>	<b>4.72</b>	<b>4.29</b>	<b>4.45</b>	<b>4.89</b>	<b>4.35</b>	
<b>Մեջիան</b>	<b>3.50</b>	<b>3.00</b>	<b>4.25</b>	<b>4.75</b>	<b>3.75</b>	<b>4.50</b>	<b>4.75</b>	<b>4.18</b>	

Երկրները գնահատված են 1-7-միավորային սանդղակով: 1-ը՝ ներկայացնում է ցուցանիշների ամենաբարձր, իսկ 7-ը՝ ամենացածր մակարդակը: Այդուսակում ընդգրկված ցուցիչներն են՝ EP (Electoral Process), ընտրական գործընթաց, CS (Civil Society), քաղաքացիական հասարակություն, IM (Independent Media), անկախ լրատվամիջոց, NDG (National Democratic Governance), ազգային դեմոկրատական կառավարում, LDG (Local Democratic Governance), տեղական դեմոկրատական կառավարում, JFI (Judicial Framework and Independence), անկախ դատական համակարգ, CO (Corruption), կորուպցիա, DS (Democracy score). դեմոկրատիայի աստիճան:

## Հավելված 2

### Սահմանադրականության համաթվի կառուցվածքային պատկերը

ՑՈՒՑԻՉ	N	ԵՆԹԱՑՈՒԹՅՈՒՆ	
<b>I. ՍՊԻՇԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b>			
1. Պատշաճ կենսամակարդակի իրավունք	1.1.	1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ	
	1.2.	Արքատության նակարդակ	
	1.3.	Գնաճ	
	1.4.	Միգրացիոն մնացորդ	
	1.5.	Ազգային խնայողությունները ՀԱԱ-ում	
2. Սեփականության իրավունք	2.1.	Սեփականության իրավունքներ	
	2.2.	Մտավոր սեփականության պաշտպանվածություն	
	3.1.	Գործազրկության նակարդակ	
	3.2.	Աշխատանքի ազատություն	
	3.3.	Աշխատանքի ընդունման դժվարություն և նվազագույն աշխատավարձի ազդեցություն	
	3.4.	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացներ	
	3.5.	Ժամային կարգավորումներ	
	3.6.	Աշխատողների իրավունքներ	
	3.7.	Համագործակցություն գործատու-աշխատող փոխհարաբերություններում	
	3.8.	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կայ	
	3.9.	Տաղանդավոր անձանց պահելու երկիր ունակություն (ուղեղների արտահոսք)	
4. Սոցիալական ապահովության իրավունք	4.1.	Զինիի գործակից	
	4.2.	Սոցիալական ապահովության համակարգ	
	4.3.	Հնարավորությունների հավասարություն	
	4.4.	Տրանսֆերտներ և լրահատկացումներ	
	5. Զեռնարկատիրական գործունեության գրանցելու իրավունք	5.1.	Գործարարության ազատություն
	5.2.	Սասանավոր ընկերությունների գործունեության դյուրինություն	
	5.3.	Հակամենաշնորհային միջոցառումներ	
	5.4.	Տեղական մրցակցության հնտենսիվություն	
	5.5.	Շուկայի գերիշխանություն	
	5.6.	Հակամենաշնորհային բաղաքականության արդյունավետություն	
6. Կրթության իրավունք	6.1.	Գրագիտության նակարդակ	
	6.2.	Կրթության/հետազոտությունների օգագացում	
	6.3.	ՄԱԿ-ի կրթության համարիվ	
	6.4.	Կրթական համակարգի որակ	
	6.5.	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածություն	
	6.6.	Երկորրդային կրթության (բակալավրիատ) բնագավառում սովորողների ընդգրկվածություն	
	6.7.	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածություն	
<b>II. ՔՐՂԱԲԱՑԻԿԱՆ-ՔՐՂԱԲԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b>			
7. Մտքի և դավանանքի ազատության իրավունք	7.1.	Կրոնի ազատություն	
8. Համոզությների ազատության և արտահայտման իրավունք	8.1.	Խոսքի և մամուլի ազատություն	
	8.2.	Ազատ ձայնի իրավունք	
	8.3.	Մամուլի ազատության համաշխարհային համարիվ	
	8.4.	Մամուլի ազատություն	
	8.5.	Արտահայտման և համոզմունքների ազատություն	
	9.1.	Հավաքների և միությունների կազմելու ազատություն	
	9.2.	Համախմբվելու/հավաքվելու իրավունք	
	9.3.	Ասցիացիոն և կազմակերպական իրավունքներ	
10. Տեղաշարժման ազատություն	10.1.	Ներքին տեղաշարժման ազատություն	
	10.2.	Արտաքին տեղաշարժման և ճանապարհորդելու ազատություն	

<b>11. Երկրի կառավարմանը մասնակցելու/ընտրելու իրավունք</b>	11.1. Ընտրական գործընթաց 11.2. Ազատ և արդար ընտրություններ 11.3. Ընտրական իմքնորոշում 11.4. Քաղաքական բանտարկություններ 11.5. Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն 11.6. Կուսակցական հաճակարգ
<b>12. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ընդհանրական ցուցիչներ</b>	12.1. Քաղաքացիական իրավունքներ 12.2. Քաղաքացիական հասարակության ավանդույթներ 12.3. Քաղաքացիական հասարակության մասնակցություն 12.4. Զան և հաշվետվողականություն
<b>13. Իրավունքի գերակայություն</b>	13.1. Իրավունքի գերակայություն
<b>III. ԻՇԽԱՆԱԿԱՆ ԹԵՎԵՐԻ ՏԱՐՍԱՑԱՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ</b>	
<b>14. Իշխանական թերի բաժանում</b>	14.1. Իշխանության և գործադիր ուժերի տարանջատում
<b>15. Ղատական իշխանություն</b>	15.1. Ղատական հաճակարգի անկախություն 15.2. Անաշար ղատարաններ
<b>16. Գործադիր իշխանություն</b>	16.1. Կառավագործական գործունեություն 16.2. Կառավագործական արդյունավետություն 16.3. Կառավարման դրակ 16.4. Կառավագործական ծախսումների շրայլում 16.5. Կառավագործական կարգավորումների բեռ 16.6. Կառավագործական քաղաքականության թափանցիկություն
<b>17. Օրենսդիր իշխանություն</b>	17.1. Օրենսդրական հաճակարգի արդյունավետություն վեճերի կարգավորման գործում 17.2. Օրենսդրական հաճակարգի արդյունավետություն խնդրահարուց հարցերի կարգավորման գործում
<b>18. Կոռուպցիա և հովանավորչություն</b>	18.1. Կոռուպցիայից ազատություն 18.2. Ոչ պաշտոնական վճարներ պետական պաշտոնյաներին 18.3. Պատժամիջոցներ պաշտոնական դիրքի չարաշահման համար 18.4. Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործում 18.5. Անօրինական վճարներ և կաշառակերություն 18.6. Պետական այրերի վճիռների վրա հովանավորչության աղդեցություն 18.7. Կոռուպցիայի նկատմամբ հսկողություն

**ГАЙК САРКИСЯН**

Декан факультета “Экономики и менеджмента” ЕГУ,  
доктор экономических наук, профессор

**ЖИРАЙР МХИТАРЯН**

Аспирант факультета “Экономики и менеджмента” ЕГУ

**Оценка уровня конституционализма в стране с методами дискретного моделирования и кластерного анализа.**— Целью публикации является указание оценки феноменального понятия “конституционализм” в первом приближении на условном примере, с помощью некоторых вспомогательных понятий дискретного моделирования (диагностические, а также проверяющие тесты) и кластерного анализа и освещения их применений.

**Ключевые слова:** дискретное моделирование, тесты, кластерный анализ, конституционализм.

**HAYK SARGSYAN**


*Dean of the Department of “Economics and Management”,  
Doctor of Economics, Professor at YSU*

**ZHIRAYR MKHITARYAN**

*Post-graduate of the Department  
of “Economics and Management” at YSU*

**Evaluation of the Level of Constitutionalism with the Methods of Discrete Modelling and Cluster Analysis.**— The target of the current issue is the assessment of the phenomenal concept of constitutionalism through the presentation of some additional boundaries (diagnostics and verifying tests) of discrete modelling and cluster analysis, and their application coverage as the preliminary approximation based on the case study consideration.

**Keywords:** discrete modelling, tests, cluster analysis, constitutionalism.



## ԵՎԳԵՆՅԱ ԲԱԶԻՆՅԱՆ ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասխատենու

### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՌԻՏՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ելեկով այն հանգամանքից, որ միջազգային պրակտիկայում գործարար միտումների հարցումների հիման վրա կառուցված ցուցանիշները կիրառվում են տնտեսության մակրոսիտիտականների կանխատեսման գործընթացում՝ սույն հոդվածով մերկայացվում է <<ԿԲ-ի կողմից հաշվարկվող գործարար ակտիվության ցուցանիշի և տնտեսության հիմնական ճյուղերի ավելացված արժեքների միջև փոխկապվածության ուսումնասիրությունը»:

**Հիմնաբառեր.** գործարար պարբերաշրջան, բաղադրյալ ցուցանիշ, առաջնորդող ցուցանիշ, գործարար միտումների հարցումներ

Վստահելի տնտեսական կանխատեսումները տնտեսագետների առջև վաղուց ծառացած և ամենազիստավոր խնդիրներից են համարվում, քանզի դրանց վրա են հիմնվում կառավարությունը և գործարար աշխարհը ապագա ռազմավարությունը մշակելիս: Միջազգային ասպարեզում լայն կիրառություն է ստացել տարբեր տնտեսական ցուցանիշների փոփոխությունները բնութագրելու և տնտեսական կանխատեսումներ կատարելու նպատակով համընկնող և առաջնորդող ցուցանիշների կառուցումը<sup>1</sup>: Այս ցուցանիշների հանդեպ առանձնահատուկ ուշադրության դրսնորումը պայմանավորված է տնտեսական գործակալների, որոշում կայացնողների և քաղաքականություն

<sup>1</sup> **Süre Baştan E., Dolgun G., Ayanoğlu Ö.,** The Central Bank of the Republic of Turkey, Improving the Real Sector Confidence Index for Turkey as a Leading Macroeconomic Indicator, 2013, էջ 6:

մշակողների՝ տնտեսությունում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ ժամանակին տեղեկատվություն ստանալու օրեցօր աճող պահանջարկով։ Գործարար հարցումների արդյունքները լայնորեն կիրառվում են տնտեսական վերլուծությունում, քանի որ մինչ մակրոտնտեսական ցուցանիշների պաշտոնական վիճակագրության հրապարակումը դրանք համարվում են ներկա տնտեսական զարգացումների արագ արձագանքը և առավել կարևորվում են կանխատեսում իրականացնելիս։

ՀՀ գործարար միջավայրը բնութագրող հարցումների հիման վրա Կենտրոնական բանկը սկսել է հաշվարկել և հրապարակել բարարյալ տնտեսական ցուցանիշներ 2005 թ. երկրորդ եռամսյակից։ Այդ համարվերը շարունակաբար ենթարկվում են փոփոխությունների՝ հարմարեցվելով ազգային տնտեսության փոփոխություններին։ Ներկայումս ՀՀ ԿԲ-ն հաշվարկում է գործարար միջավայրի և սպառողների վստահության եռամսյակային ցուցանիշներ։ Սույն աշխատանքում ուսումնասիրվել է առանձին ձյուղերի համար հաշվարկված գործարար ակտիվության ցուցանիշի (ԳԱՑ) և ձյուղերի ավելացված արժեքների միջև փոփոխապվածությունը։

ԳԱՑ-ի կառուցվածքն ըստ տնտեսության չորս հիմնական ձյուղերի՝ արդյունաբերություն, շինարարություն, ծառայություն և առևտուր, ունի հետևյալ տեսքը։

#### Աղյուսակ 1 Արագարկող միասնական բաղադրյալ ցուցանիշի կառուցվածքը (ԳԱՑ)<sup>2</sup>

Արդյունաբերություն	Ծինարարություն	Ծառայություններ	Առևտուր
Թողարկման փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)	Թողարկման փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)	Ենթաճյուղի տնտեսական վիճակի փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)	Թողարկման փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)
Թողարկման փոփոխությունը (գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ)	Աշխատողների թվի փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)	Ենթաճյուղի տնտեսական վիճակի փոփոխությունը (ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ)	Թողարկման փոփոխությունը (գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ)
Հումքի պաշարի փոփոխությունը (գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ)			Պահանջարկի փոփոխությունը (գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ)

Կատարվել են փոփոխականների հետևյալ նշանակումները՝  
 Թող. ընթ. - թողարկման փոփոխությունը ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ,  
 Թող. գ. - թողարկման փոփոխությունը գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ,  
 Հումք. գ. - հումքի պաշարի փոփոխությունը գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ,

<sup>2</sup> Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ և միջազգային պրակտիկայում առկա մեթոդաբանությունը։

Աշխ. ընթ. - աշխատողների թվի փոփոխությունը ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ,

Ենթ. ընթ. - Ենթաճյուղի տնտեսական վիճակի փոփոխությունը ընթ. Եռ.-ում նախ. Եռ.-ի նկատմամբ,

Ենթ. գ. - Ենթաճյուղի տնտեսական վիճակի փոփոխությունը գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ,

Պահ. գ. - պահանջարկի փոփոխությունը գալիք Եռ.-ում ընթ. Եռ.-ի նկատմամբ,

Արդ. ԱԱ - արդյունաբերության ձյուղի ավելացված արժեքները,

Շին. ԱԱ - շինարարության ձյուղի ավելացված արժեքները,

Առ. ԱԱ - առևտորի ձյուղի ավելացված արժեքները,

Ծառ. ԱԱ - ծառայությունների ձյուղի ավելացված արժեքները:

Ներկայացնենք առաջարկվող բաղադրյալ ցուցանիշի՝ թվարկված ձյուղների ավելացված արժեքների համար առաջնորդող ինդիկատոր լինելու ուսումնասիրությունը: Առաջնորդող ինդիկատորների բացահայտման նպատակով կիրառվել են հետևյալ 3 մոտեցումները<sup>3</sup>

**1. Շրջադարձային կետերի մոտեցում.** ԳՎ8 և անհատական փոփոխականների ԾԿ-երի՝ ավելացված արժեքների ԾԿ-երին նախորդելու (առաջնորդելու) վարկածների ստուգում. առաջնորդող ԾԿ-երի բացահայտման դեպքում հաշվարկվել են «առաջնորդելու միջին տևողությունները»,

**2. Առավելագույն կոռելյացիայի մոտեցում.** այս մոտեցման շրջանակներում հաշվարկվել են ավելացված արժեքների հետ ԳՎ8, ԳՎ8 և անհատական փոփոխականների՝

- զրոյական լագով կոռելյացիայի գործակիցները (սկզբնական կոռելյացիա),
- «առաջնորդելու միջին տևողությունների» համապատասխան լագերի համար կոռելյացիայի գործակիցները (Ճգրտված կոռելյացիա),
- տարբեր լագերի համար հաշվարկվել են կոռելյացիայի գործակիցները՝ բացահայտելու կոռելյացիաների առավելագույն գործակիցները և համապատասխան լագերը,

**3. Գրենցերի պատճառահետևանքային թեստերի մոտեցում.** տնտեսության տարբեր ձյուղերի ավելացված արժեքների և ԳՎ8, ԳՎ8, ինչպես նաև անհատական փոփոխականների միջև պատճառահետևանքային կապերի բացահայտման նպատակով Գրենցերի թեստերի ստուգում:

Կիրառվել են հետևյալ վիճակագրական գործիքները. ժամանակային շարքերի սեզոնային հարթեցման «անսովոր տատանվող արժեքների» (outliers) բացահայտման Demetra+ փաթեթի X12 ARIMA մեթոդը, ժամանակային շարքերից տրենին բացառան Հոդրիկ-Պրեսկոտի գործիքը, ինչպես նաև կոռելյացիոն վերլուծության, ժամանակային շարքերի պարբերաշրջանային տատանումների (շրջադարձային կետերի) բացահայտման Բրայ-Բոշանի ալգորիթմը<sup>4</sup> և Գրենցերի պատճառահետևանքային կապի բացահայտման թեստը:

Բրայ-Բոշանի ալգորիթմը Ենթադրում է ուսումնասիրվող ժամանակային շարքում պարբերաշրջանների առանձնացում՝ ԾԿ-երի բացահայտման միջո-

<sup>3</sup> Թվարկված մոտեցումներից առաջին երկուսը մշակել է հեղինակը:

<sup>4</sup> Տես **Bry G., Boschan C.**, Cyclical Analysis of Time Series: Selected Procedures and Computer Programs, NBER Technical Paper 20. New York, 1971, էջ 230:

ցով: Սույն վերլուծությունում կիրառվել է տվյալ ալգորիթմի ձևափոխված տարբերակը, որը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

$$t = \text{CQ} \text{ եթե } \left\{ \begin{array}{l} X_{t-2} < X_{t-1} < X_t > X_{t+1} > X_{t+2} \Rightarrow t - \text{ն գագաթային CQ է} \\ X_{t-2} > X_{t-1} > X_t < X_{t+1} < X_{t+2} \Rightarrow t - \text{ն նվազագույն CQ է} \end{array} \right. \text{կամ}$$

Կարող ենք փաստել, որ արդյունաբերության և շինարարության ճյուղերում ավելացված արժեքների ժամանակային շարքերում բացահայտվել է 4, ծառայությունների ճյուղում 1 և առևտորի ճյուղում 5 ԾԿ:

ԾԿ-երի բացահայտումից հետո յուրաքանչյուր ճյուղի ավելացված արժեքների համար ուսումնասիրենք առանձին փոփոխականների առաջնորդող ինդիկատորներ լինելու վարկածներն ըստ թվարկված երեք տարբերակների: Ներկայացնենք հաջորդաբար ըստ ճյուղերի:

Այլուսակ 2-ը վկայում է, որ առաջարկվող միասնական ԳԱՅ8-ը արդյունաբերության ավելացված արժեքների համար առաջնորդող ինդիկատոր է մեկ եռամսյակ լագով՝ ըստ երեք մոտեցումների:

Այլուսակ 2  
Արդյունաբերության ճյուղի ԳԱՅ8<sup>5</sup>

	ԾԿ	Առաջնորդող ԾԿ	Առաջնորդելու միջին տուղություն	Ակդրնական կոռեյցիա	Ճշրտված կոռեյցիա	Առավելագույն կոռեյցիա	Առավելագույն կոռեյցիայի լազ
Արդ. ԱԱ	4						
Թող. ընթ.	3	1	1.0	0.447	0.409	0.447	0
Թող. գ.	8	3	1.0	0.387	0.411	0.411	1
Հումք. գ.	4	1	1.0	0.426	0.498	0.597	2
ԳԱՅ8	6	2	1.0	0.648	0.654	0.654	1
Գրենցերի պատճառահետևանքային գրոյական վարկածներ				Լազ 1	Լազ 2	Լազ 3	
				F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	
ԳԱՅ8-ը, ըստ Գրենցերի, պատճառ չի հանդիպում Արդ. ԱԱ -ի համար				3.2309	0.083	1.5373	0.234
Արդ. ԱԱ -ն, ըստ Գրենցերի, պատճառ չի հանդիպում ԳԱՅ8-ի համար				0.0094	0.924	0.3008	0.743
						0.0967	0.961

Շինարարության ճյուղում առաջարկվող միասնական ԳԱՅ8-ը ճյուղի ավելացված արժեքների համար առաջնորդող ինդիկատոր է մեկից եռամսյակ լագով՝ ըստ երեք մոտեցումների:

<sup>5</sup> Այլուսակներում ներառված հաշվարկների համար հիմք են ծառայել ՀՀ ԱՎԾ և Կենտրոնական բանկի տվյալները, ինչպես նաև հեղինակի կատարած հաշվարկները՝ [www.cba.am](http://www.cba.am), [www.armstat.am](http://www.armstat.am)

## Աղյուսակ 3

## Շինարարության ճյուղի ԳԱՅՑ

	ԾԿ	Առաջնորդող ԾԿ	Առաջնորդելու միջին տևողություն	Սկզբնական կոռեկցիա	Ճշգրտված կոռեկցիա	Առավելագույն կոռեյսիացիայի լազ	Առավելագույն կոռեյսիացիայի լազ
Շին. ԱԱ	4						
Թող. ընթ.	3	0		0.387		0.527	1
Աշխ. ընթ.	3	2	1.5	0.145	0.289	0.480	2
<b>ԳԱՅՑ</b>	<b>4</b>	<b>2</b>	<b>1.5</b>	<b>0.015</b>	<b>0.658</b>	<b>0.658</b>	<b>2</b>
Գրենցերի պատճառահետևանքային գրոյական վարկածներ				Լազ 1 F-Վիճակ. Հավան.		Լազ 2 F-Վիճակ. Հավան.	Լազ 3 F-Վիճակ. Հավան.
<b>ԳԱՅՑ-ը</b> , ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում <b>Շին. ԱԱ-ի</b> համար				3.2309	0.083	1.5373	0.234
<b>Շին. ԱԱ-ն</b> , ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում <b>ԳԱՅՑ-ի</b> համար				0.0094	0.924	0.3008	0.743

Ծառայությունների ճյուղում միասնական ԳԱՅՑ-ը համընկնում է ԳԱՅՑ-ի հետ և ճյուղի ավելացված արժեքների համար առաջնորդող ինդիկատոր է երեքից չորս եռանյակ լազով՝ ըստ երեք մոտեցումների:

## Աղյուսակ 4

## Ծառայությունների ճյուղի ԳԱՅՑ

	ԾԿ	Առաջնորդող ԾԿ	Առաջնորդելու միջին տևողություն	Սկզբնական կոռեկցիա	Ճշգրտված կոռեկցիա	Առավելագույն կոռեյսիացիայի լազ	Առավելագույն կոռեյսիացիայի լազ
Ծառ. ԱԱ	1						
Ենթ. ընթ.	2	1	4.0	0.104	0.479	0.479	4
Ենթ. գ.	2	1	3.0	0.044	0.425	0.425	3
<b>ԳԱՅՑ</b>	<b>3</b>	<b>1</b>	<b>4.0</b>	<b>0.084</b>	<b>0.358</b>	<b>0.523</b>	<b>3</b>
Գրենցերի պատճառահետևանքային գրոյական վարկածներ				Լազ 1 F-Վիճակ. Հավան.		Լազ 2 F-Վիճակ. Հավան.	Լազ 3 F-Վիճակ. Հավան.
<b>ԳԱՅՑ-ը</b> , ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում <b>Ծառ. ԱԱ-ի</b> համար				0.510	0.481	0.063	0.939
<b>Ծառ. ԱԱ-ն</b> , ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում <b>ԳԱՅՑ-ի</b> համար				0.072	0.791	0.259	0.774

Առևտորի ճյուղում միասնական ԳԱՅՑ-ը ճյուղի ավելացված արժեքների համար առաջնորդող ինդիկատոր է մեկ եռանյակ լազով, ըստ երեք մոտեցումների:

Քանի որ ՀԱԱ-ն այն ցուցանիշն է, որի կանխատեսմանն էլ հիմնականում ուղղված է առաջնորդող ինդիկատորների բացահայտումը, ուստի չափագանց կարևոր է, որ առաջարկվող ցուցանիշը առաջնորդող լինի ՀԱԱ-ի համար.

## Աղյուսակ 5

## Առևտրի ճյուղի ԳԱՅՑ

	ԾԿ	Առաջնորդող ԾԿ	Առաջնորդելու միջին տևողություն	Ականական կոռելյացիա	Ճգոտված կոռելյացիա	Առավելագույն կոռելյացիա	Առավելագույն կոռելյացիայի լազ
Առ. ԱԱ	5						
Թող. ընթ.	2	1	1.0	0.105	0.541	0.663	2
Թող. գ.	4	2	0.5	0.474	0.460	0.474	0
Պահ. գ.	2	1	1.0	0.259	0.597	0.597	1
ԳԱՅՑ	4	2	1.0	0.335	0.656	0.656	1
Գրենցերի պատճառահետևանքային գրոյական վարկածներ				Լազ 1	Լազ 2	Լազ 3	
ԳԱՅՑ-ը, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում Առ. ԱԱ-ի համար				F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	
Առ. ԱԱ-ն, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում ԳԱՅՑ-ի համար				10.185	0.003	6.776	0.004
Առ. ԱԱ-ն, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում ԳԱՅՑ-ի համար				2.834	0.103	2.114	0.141

## Աղյուսակ 6

## Առաջնորդող ԾԿ-երը ՀՆԱ և ԳԱՅՑ-ի ժամանակային շարքերում

	ԾԿ	Առաջնորդող ԾԿ	Առաջնորդելու միջին տևողություն	Ականական կոռելյացիա	Ճգոտված կոռելյացիա	Առավելագույն կոռելյացիա	Առավելագույն կոռելյացիայի լազ
ՀՆԱ	7						
ԳԱՅՑ	2	1	2.0	0.557	0.752	0.752	1
Գրենցերի պատճառահետևանքային գրոյական վարկածներ				Լազ 1	Լազ 2	Լազ 3	
ԳԱՅՑ-ը, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում ՀՆԱ-ի համար				F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	F-Վիճակ. Հավան.	
ՀՆԱ-ն, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում ԳԱՅՑ-ի համար				11.985	0.003	7.021	0.006
ՀՆԱ-ն, ըստ Գրենցերի, պատճառ չի համարվում ԳԱՅՑ-ի համար				1.482	0.238	3.341	0.060

ՀՆԱ-ի համար միասնական ԳԱՅՑ-ը առաջնորդող ինդիկատոր է մեկ երանյակ լագով՝ ըստ երկու մոտեցումների: Շրջադարձային կետերի մոտեցմանք չի հիմնավորվել ԳԱՅՑ-ի՝ առաջնորդող ինդիկատոր լինելու վարկածը, որի պատճառը ՀՆԱ ժամանակային շարքում մեծ թվով (7) շրջադարձային կետերի առկայությունն է:

ԳԱՅՑ-ի՝ առաջնորդող ինդիկատոր լինելու վարկածների արդյունքները առանձին ճյուղերի և ՀՆԱ-ի համար ներկայացնենք աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7**

**ԳԱՑ-ի՝ առաջնորդող ինդիկատոր լինելու վարկածներն առանձին ճյուղերի  
ավելացված արժեքների և ՀԱԱ-ի համար**

գԱ.8	Այլ / 1	Մոտ. 1	Արդյունա-բերություն	Այլ / 1.5	Մոտ. 1	Եհարա-լուրիուն
	Այլ / 1	Մոտ. 2	Արդյունա-բերություն	Այլ / 2	Մոտ. 2	Եհարա-լուրիուն
	Այլ / 1,3	Մոտ. 3		Այլ / 1,3	Մոտ. 3	
				Այլ / 4	Մոտ. 1	Ծառայու-թյուններ
				Այլ / 3	Մոտ. 2	
				Այլ / 3	Մոտ. 3	
				Այլ / 1	Մոտ. 1	
				Այլ / 1	Մոտ. 2	Առարկու
				Այլ / 1,2	Մոտ. 3	
					Մոտ. 1	
				Այլ / 1	Մոտ. 2	ՀԱԱ
				Այլ / 1,2	Մոտ. 3	

Այսպիսով՝ վերլուծության արդյունքները հիմնավորում են ԳԱՑ-ի՝ տնտեսության առանցքային ճյուղերի ավելացված արժեքների, ինչպես նաև ՀԱԱ-ի համար առաջնորդող ինդիկատոր լինելու վարկածը։ Առաջարկում ենք մակրոտնտեսական կանխատեսման մոդելներում ներառել վերոհիշյալ բաղադրյալ ցուցանիշը։

**ЕВГЕНИЯ БАЗИНЯН**

Ассистент кафедры  
„Экономико-математических методов” АГЭУ

***Исследование взаимосвязи между добавленными стоимостями отраслей экономики и индексами опросов деловых тенденций.***— Учитывая тот факт, что в международной практике композитные экономические индикаторы, построенные на основе опросов деловых тенденций, используются в макроэкономических прогнозированиях, в данной статье была изучена взаимосвязь между композитным индикатором деловой активности (Центральный Банк РА) и добавленными стоимостями в основных секторах экономики.

**Ключевые слова:** деловой цикл, композитный индикатор, ведущий индикатор, опрос деловых тенденций.

**YEVGENYA BAZINYAN**

Assistant at the Chair of  
„Economic-Mathematical Methods” at ASUE

***Investigation of the Relationship between Economic Activity Indicator and the Values Added in the Main Sectors of Economy.***— Based on the fact that in international practice the composite indicators constructed on the basis of business tendency surveys are used for macroeconomic indicators forecasting models, in the current study we have analyzed the relationship between economic activity indicator (constructed by the Central Bank of the RA) and the values added in main sectors of economy.

**Key words:** business cycle, composite indicator, leading indicator, business tendency survey.

# ՊԱՌԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



## ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի  
«Ազգային անվտանգության հետազոտություններ» ժուղարի տնօրեն,  
տնտեսագիտության թեկնածու

## ԼԻԼԻԹ ԴԱՊԱՅԱՆ

ՀՊՏՀ մարդերինգի ամբիոնի ղոցենսու,  
տնտեսագիտության թեկնածու

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԾՈՒԶ

Հոդվածը նվիրված է ազգային անվտանգության առանցքային ուղղություն համարվող տեղեկատվական անվտանգության ապահովման արդի հիմնախնդիրներին:

Արդյունաբերական հասարակությունից արմատական փոփոխություններով բնութագրվող հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակությանն անցնան ներկայիս դարաշրջանի որակապես նոր սպառնալիքներին և համընդհանրական մարտահրավերներին դիմակայելու համար տեղական և միջազգային տեղեկատվական դաշտում անհրաժեշտ է գործել այնպիսի կանոններով, որոնցից վճռորոշ են տեղեկատվական հոսքերի համակարգումը, վերահսկումը և անվտանգության ապահովումը:

Տեղեկատվական-հաղորդակցական անվտանգության խնդիրների համատեքստում հոդվածում ներկայացված են այն առանցքային նպատակներն ու խնդիրները, որոնց ձևակերպումն ու համակարգային լուծումը կնպաստեն տեղեկատվական դորոշում անհատի, հասարակության և պետության պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

**Հիմնաբառեր.** տեղեկատվական անվտանգություն, ազգային անվտանգություն, սպառնալիք, տեղեկատվական-հաղորդակցական միջավայր, ազգային շահեր, տեղեկատվական ռեսուրսներ

Ազգային անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության առանցքային խնդիրներից մեկն է: Առօրյա գիտակցական մակարդակում «անվտանգություն» հասկացությունը բնորոշվում է որպես «Վտանգի բացակայություն», «Վիճակ, երբ Վտանգ չի սպառնում»<sup>1</sup>: «Վտանգ» հասկացությունն իր հերթին նշանակում է «որևէ Վտանգի հնարավորություն, սպառնալիք»<sup>2</sup>, իսկ «սպառնալիք» հասկացությունը՝ «հնարավոր Վտանգ, ահարեկություն, որևէ մեկին անախորժություն, չարիք պատճառելու խոստում»<sup>3</sup>: Այսպիսով՝ «անվտանգություն» հասկացությունը մեկնաբանվում է որպես որևէ մեկին և որևէ բանի սպառնալիքի բացակայություն: Նմանատիպ մոտեցմամբ տվյալ հասկացությունը մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում է որպես «իրավիճակ, որի դեպքում որևէ մեկի կամ որևէ բանի համար գոյություն չունի սպառնալիք որևէ մեկի կամ որևէ բանի կողմից, ընդ որում, չի բացառվում Վտանգի միաժամանակ մի բանի աղբյուրների առկայությունը»<sup>4</sup>: Փաստորեն, կարող ենք ենթադրել, որ «անվտանգությունը» առկա սպառնալիքի հետևանքով որևէ մեկին կամ որևէ բանի վնաս հասցնելու անհնարինությունն է կամ նրանց պաշտպանվածությունը սպառնալիքից:

Անվտանգության հիմնական օբյեկտներն են՝

- անհատը (իրավունքներն ու ազատությունը),
- հասարակությունը (նյութական և հոգևոր արժեքները),
- պետությունը (սահմանադրական կարգը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը)<sup>5</sup>:

Միաժամանակ, պետությունը, հասարակությունը և քաղաքացիները անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտներ են: Դրանցից, իհարկե, կարևոր դեր է խաղում պետությունը, որը կոչված է ապահովելու ինչպես ռազմավարական նշանակություն ենթակառուցվածքների (ատոմակայան, ջրամատակարարման և էներգամատակարարման համակարգեր, հեռախոսակապ և այլն), այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու անվտանգությունը:

«Ազգային անվտանգություն» հասկացությունը ներառում է երեք առանցքային բաղադրիչներ՝

- ռազմաքաղաքական անվտանգություն,
- սոցիալ-տնտեսական անվտանգություն,
- տեղեկատվական անվտանգություն:

Եթե առաջին և երկրորդ բաղադրիչների խնդիրների և այդ ոլորտներում ընթացող հակամարտությունների վերաբերյալ ուսումնասիրությունները հենվում են հարուստ պատմական ավանդույթների և արդեն իսկ հղված տեսական ու գործնական մշակումների վրա, ապա արդի ժամանակաշրջանի տեղեկատվական հեղափոխության համատեքստում առաջացած տեղեկատվական պատերազմների և տեղեկատվական անվտանգության նաևին պատկերացումները դեռևս վերջնական տեսական ձևակերպումներ չեն ստացել:

<sup>1</sup>Տես Общая теория национальной безопасности: учебник / под общ. ред. Прохожева А.А., М., 2002, էջ 13–15:

<sup>2</sup>Տես Возжеников А.В., Парадигма национальной безопасности реформирующейся России. М., 2000, էջ 73:

<sup>3</sup>Словарь современного русского литературного языка, т. 8, АН СССР. М., 1959, с. 882.

<sup>4</sup>Безопасность. Толковый словарь терминов и понятий. М., 1999, с. 21.

<sup>5</sup>Տես Информационно-коммуникационная безопасность: монография / под общ. ред. проф. Василенко В.И., М., Проспект, 2015, էջ 38:

Ներկայումս ազգային անվտանգության տեսության գարգացումը հիմնավում է հետևյալ հիմնական ուղղությունների հետազոտությունների և արդյունքների վրա:

**1.** Մարդկային գործունեության և պետությունների միջև անվտանգության ապահովման ոլորտում միջազգային համագործակցության, էվոլյուցիայի հիմնական միտումների և համաշխարհային, տարածաշրջանային ու ներպետական անվտանգության հետագա համակարգերի մոդելների, դրանց արդյունավետության գնահատման չափանիշների պատճական փորձի ուսումնասիրություն: Այստեղ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել, այսպես կոչված, շրջադարձային դարաշրջանների ուսումնասիրությանը, եթե անցյալում և ներկայում գոյություն ունեցող հասարակություններն ու պետությունները բախվում էին տարբեր ցնցումների և ճգնաժամների, որոնք կամ միավորում էին նրանց՝ դիմակայելու առկա մարտահրավերներին, կամ փոփոխությունների ավիքները դուրս էին մղում նրանց աշխարհաքաղաքական բոլոր գործընթացներից՝ պարտադրելով կորցնել պետականությունը և ցրվելով աշխարհով մեկ:

**2.** Միասնական հայեցակարգային համակարգի և տերմինաբանական բազայի ստեղծում, միասնական մեթոդաբանության մշակում ինչպես ազգային շահերի դիտարկմամբ, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

**3.** Երկրի ազգային անվտանգության արդի վիճակի ուսումնասիրություն և առկա, այդ թվում՝ ներքին և արտաքին, համաշափ և անհամաշափ, իրական և հնարավոր սպառնալիքների բացահայտում ու գնահատում: Այստեղ անհրաժեշտ է կարևորել նաև սպառնալիքների ցուցիչների մշակումը, ինչն էլ, իր հերթին, դրանց դասակարգման հնարավորություն կընձեռի:

**4.** Անվտանգության համակարգերի կառուցման օրինաչափությունների և սկզբունքների ուսումնասիրություն՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը և տվյալ երկրի առանձնահատկությունները: Ներկայումս առկա են ազգային անվտանգության ապահովման տարբեր համակարգեր և մոդելներ: Բացի այդ, գոյություն ունեն հավաքական անվտանգության ապահովման համակարգեր, ինչպիսիք են, օրինակ՝ Հյուսիսաւլանտյան դաշինքը (ՍԱՏՕ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):

Մարդկության գարգացման ժամանակակից փուլը բնորոշվում է արդյունաբերական հասարակությունից հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակությանն անցմամբ, ինչն էլ բնորագրվում է անհատի կյանքում և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ տեղեկատվության տեղի ու դերի փոփոխությամբ: Տեղեկությունների հավաքագրման և տարածման գործընթացները հանգեցրին նոր ոլորտի ձևավորմանը, որը «տեղեկատվություն» և «հաղորդակցություն» տերմինների միավորմամբ ստացել է տեղեկատվական-հաղորդակցական անվանումը: Առավել պատկերավոր ներկայացնելու համար նշենք միայն, որ Վերջին 50 տարում տեղեկատվության արագությունը ավելացել է 300 000 անգամ<sup>6</sup>:

Տեղեկատվական-հաղորդակցական միջավայրը համընդգրկուն հեռահաղորդակցական ցանց է, որը համապատասխան տեխնոլոգիաների օգտա-

<sup>6</sup>Տես Պանарин И.Н., Информационная война, PR и мировая политика. Курс лекций, 2-е изд., стереотип. М., Горячая линия – Телеком, 2014, էջ 135:

գործման և հաղորդագրությունների փոխանցման միջոցով բավարարում է տեղեկատվության նկատմամբ հասարակության պահանջմունքները՝ միաժամանակ դաշնայով գիտելիքների հանրամատչելի պահեստարան:

Ընդ որում, տեղեկատվական ոլորտը, որպես տեղեկություններ հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, ենթահամակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների համակարգ, ունենալով հասարակական կյանքը համակարգող և կարգավորող կարևոր գործառույթ, ակտիվորեն ագրում է պետության անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Այդ իսկ պատճառով էլ այսօր ազգային անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և այդ կախվածությունն աստիճանաբար մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին համընթաց:

Տեղեկատվական իրավունքի ոլորտում տեղեկատվական-հաղորդականական միջավայրը դիտարկվում է որպես «տեղեկատվության շրջանառության միջավայր» (ստեղծում-տարածում-սպառում), որի դեպքում սուբյեկտներն իրազործում են իրենց պահանջները և հնարավորությունները տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի նկատմամբ, որտեղ տեղի է ունենում դրա շրջանառությունը»<sup>7</sup>:

Տեղեկատվական ռեսուրսները, տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները և հեռահաղորդակցման ենթակառուցվածքը միասին ձևավորում են ժամանակակից հասարակության տեղեկատվական միջավայրը: Տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի հիմնական սուբյեկտներն են՝ իշխանության և կառավարման մարմինները, զանգվածային լրատվամիջոցները (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն), համացանցը, լրատվաբուժակության ստեղծողները, գովազդատունները, օգտագործողները:

Ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաներն առաջացնում են բաց և հասանելի տեղեկատվական միջավայր, որն ապահովում է գրեթե ցանկացած տեղեկատվության նկատմամբ անհատի պահանջմունքների բավարարում: Դրան զուգահեռ, տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները ստեղծում են հաղորդակցական տարածություն, ընդորում են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները և դառնում են հասարակության շարժիչ ուժը, ընդ որում, հաղորդակցության նոր միջոցները ձևավորում են նոր սոցիալ-մշակութային իրականություն, որը պահանջում է փոխհարաբերությունների կարգավորման նոր իրավական ձև: Բացի այդ, ժամանակակից հասարակության հաղորդակցությունները դադարում են լինել հաջորդական ակտերի շղթա: Դրանք անցնում են միաժամանակության վիճակի:

Արդյունքում ստեղծվում է հագեցած տեղեկատվական-հաղորդակցական միջավայր, որն ունի իր կառուցվածքը և ընթացակարգերը, փոխգործունեության նորմերն ու կանոնները: Ինչպես արդարացիորեն նշում է Ս.Ս. Նազարովը, «....հասարակության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է տեղեկատվական ոլորտի աճող դերով, որը ներկայացնում է տեղեկությունների, տեղեկատվական ենթակառուցվածքի, տեղեկատվության

<sup>7</sup> Информационное право / под ред. акад. РАН Топорнина Б.Н., 2-е изд., с изм. и доп., СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2005, с. 73.

հավաքում, ձևավորում, տարածում և օգտագործում իրականացնող սուբյեկտների, ինչպես նաև այդ ժամանակ առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգի ամբողջություն»<sup>8</sup>:

Հարկ է նշել, որ տեղեկատվական հեղափոխության արդյունքում այսօր էապես աճել է տեղեկատվական հոսքերի դերակատարումը: Դրական միտումներին զուգահեռ ի հայտ են գալիս նաև որակապես նոր բնույթի սպառնալիքներ և մարտահրավերներ, որոնք պետություններից պահանջում են միջազգային դաշտում գործել այնպիսի կանոններով, որոնց մեջ վճռորոշ են տեղեկատվական հոսքերի համակարգումը, վերահսկումը և անվտանգությունը, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման և հավաստի տեղեկատվության արգելափակման միջոցով հասարակական կարծիքի խեղաթյուրման կանխարգելումը և այլն: Այդ իսկ պատճառով փոխներափականցելիության այսօրինակ իրողությունների պայմաններում ներկայումն առանձնահատուկ նշանակություն է ծերում պետության անվտանգության ապահովումը տեղեկատվական ոլորտում:

«Տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը հասարակության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածության վհճակն է, որն ապահովում է դրա ձևավորումը և զարգացումը՝ ի շահ քաղաքացու, հասարակության և պետության<sup>9</sup>: Աշխարհում ընթացող որակական տեխնոլոգիական թթիչքն առաջացրել է նոր սոցիալական հեղափոխություն, որը հասարակության վրա ազդեցության ուժով բացարձակապես չի զիջում անցյալի հեղափոխություններին: Տեղեկատվական անվտանգություն ասելով պետք է հասկանալ նաև այնպիսի իրավիճակ, երբ հասարակությունում ստեղծվում են պայմաններ, որոնք առկա տեղեկատվության հիման վրա հնարավորություն են տալիս օբյեկտիվորեն գնահատելու պատճական ընթացքը, աշխարհում, տարածաշրջանում և երկրի ներսում տիրող իրադրությունը, մշակելու և ընդունելու ինքնուրույն որոշումներ:

Նոր տեխնոլոգիաների, համաշխարհային տեղեկատվական ցանցերի, կապի և հաղորդակցության արբանյակային և այլ միջոցների ներդրման ու կիրառման հետ միասին ավելի բարդ ու յուրահաստուկ է դաշնում տարբեր կառույցների, այդ թվում՝ հասուլ ծառայությունների գործունեությունը, որոնք օգտագործում են ԳՏՀ նվազումները տարաբնույթ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության, փոխանցման և օգտագործման, միաժամանակ՝ տարբեր պետությունների ռազմական, քաղաքական և տնտեսական գործընթացների զարգացման կանխատեսման և մշտադիտարկման համար: Այդ առումով, երկրի տեղեկատվական հոսքերի պաշտպանվածությունը յուրաքանչյուր պետության առանցքային խնդիրներից է:

Հարկ է նշել, որ առանց հաղորդակցման հնարավոր չէ սոցիալական ընդհանրությունների, ինստիտուտների և կազմակերպությունների գործունեությունը, պետության բնականոն զարգացումը: Պետական մարմինների համար տեղեկատվության տիրապետման անհրաժեշտությունը դիտարկվում է որպես պահանջմունք, առանց որի բավարարման հնարավոր չէ պետական կառավարումը:

<sup>8</sup> Назаров М.М., Массовая коммуникация в современном мире. М., Эдиториал УРСС, 1999, с. 233.

<sup>9</sup> Վ.Կ. Աթոյան, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ: Դասախոսություններ: Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 89:

Մյուս կողմից՝ տեղեկատվական հոսքերի հիմնական մասի տեղափոխումը էլեկտրոնային ցանցեր դժվարացնում է դրանց վերահսկողությունը սոցիալական ինստիտուտների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կողմից: Օրինակ՝ ֆլեշ-մոբի տեխնոլոգիան, իր կայծակնային էֆեկտի շնորհիվ, թույլ է տալիս հաշված րոպեների ընթացքում իրազեկել բազմաթիվ մարդկանց ինչ-որ խնդրի կամ գաղափարի մասին և ձեռք բերել մեծ թվով կողմնակիցներ:

Ցանկացած տեղեկատվական տեխնոլոգիա հաղորդակցական գործառույթ է իրականացնում: Այսօր սկսվել է հաղորդակցությունների հիմնարար ապակենտրոնացման դարաշրջանը, որն իրականացվում է զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ: Միևնույն ժամանակ, վերջիններս, պայքարելով իշխանության պետական մարմիններից անկախության համար, ընկնում են իրենց հովանավորող կառույցների ուղիղ ենթակայության տակ, հակառակ դեպքում՝ դրանցից շատերը պարզապես գոյություն ունենալ չեն կարող:

Ցանցային տեղեկատվական միջավայրի պետական կարգավորումը, ըստ իր առանձնահատկության, նվազագույն մակարդակի վրա է գտնվում: Բազմաթիվ երկրների ենթակավարմեր չեն ժխտում պետական միջամտության անհրաժեշտությունն անհատական տեղեկատվության պահպանաման, ծածկագրման միջոցների օգտագործման ու վաճառքի ազատության և պետական ու այլ կառույցների կողմից ծածկագրերի նկատմամբ պարտադիր մուտքի արգելքի, հատուկ միջոցներով ծնողներին ապահովման հարցում, որոնք հնարավորություն են տալիս կանխելու երեխաների մուտքը դեպի համացանցի անցանկալի ռեսուրսներ:

Հեռահաղորդակցական ցանցերի դերը ոչ թե դրանց բովանդակության, այլ հասանելիության փաստի մեջ է: Եթե անհատը կամ կազմակերպությունը գրանցված չեն ցանցում, ապա նրանք չեն կարող լիարժեք մասնակցություն ունենալ ժամանակակից հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքին: Այսօր համացանցը դարձել է առանցքային գործոն, այսինքն՝ ով ներկայացված է և աշխատում է համացանցում, մասնակցում է արդի գործընթացներին, հակառակ դեպքում՝ անհուսալիորեն հետ է մնում դրանից: Հետևաբար՝ կարևորագույն հարց է դարնում ցանցի հասանելիությունը, քանի որ ներառվածությունը տեղեկատվական մարմանը մասնակցության նախապայման է համարվում:

Ակնհայտ է, որ այսօր ձևավորվում է նոր տեղեկատվական միջավայր, որն աստիճանաբար առավել մեծ թվով մարդկանց է մասնակից դարձնում հարավուիլու գործընթացներին և տեղեկատվության փոխանակմանը: Փորձագիտական գնահատումների համաձայն՝ 2014 թ. վերջին աշխարհում համացանցի օգտատերերի ընդհանուր թիվն արդեն իսկ պետք է կազմեր շուրջ 3 մլրդ<sup>10</sup>:

Այդ միջավայրում սոցիալական փոխագրեցությունը չի սահմանափակվում հաղորդակցման ավանդական ձևերով: Այդ իմաստով, դրա նախորդ ձևերը կարելի է դիտարկել որպես զարգացման հաջորդական փուլեր:

Հարկ է նշել, որ երբեմն տեղեկատվական տեխնոլոգիան ներկայացվում է կամ որպես ազատության ձնշման գործիք, կամ ազատագրման միջոց:

<sup>10</sup>Տես MCЭ: количества пользователей Интернета к концу 2014 года достигнет 3 млрд, (09.05.2014), <http://www.3dnews.ru/819820>

Սակայն, կարծում ենք՝ ցանկացած տեխնոլոգիա, այդ թվում նաև տեղեկատվականը, որպես կանոն, չեզոք է, իսկ դրա դերը և հետևանքները որոշվում են կիրառությամբ: Տեղեկատվության պաշտպանության խնդրի, տեղեկատվությունից պաշտպանելու և տեղեկատվության որակի ապահովման խնդիրների լուծումը պայմանավորում է օբյեկտների գործունեության արդյունավետությունը: Առաջանում է նաև տեղեկատվության արդյունավետ կառավարման խնդիրը՝ տեղեկատվահաղորդակցական միջավայրի հիմնական սուբյեկտների գործունեության անվտանգության հայեցակարգի ձևավորման և պահպանման համար:

Ըստ Վ.Ի. Վասիլենկոյի՝ ներկա պայմաններում նկատելի են երկու հակունյա գործընթացներ: Մի կողմից՝ տեղեկատվական ազդակներից կախված, հասարակությունը հարմար օբյեկտ է կառավարման համար, քանի որ հեշտությամբ է ենթարկվում մանհապույտայի (աճպարարություն): Մյուս կողմից՝ հասարակությունը որոշ չափով դարնում է ինքնակառավարվող, քանի որ տեղեկատվությունը, որով դեկավարվում է սովորական անհատը, միշտ չէ, որ կարգավորվում է իշխանության մարմինների կողմից, իսկ երբեմն էլ ընտրվում է պատահականության սկզբունքով<sup>11</sup>: Միաժամանակ, հասարակությունը որպես վարքագիր կողմնորոշչիներ է ընտրում ոչ թե «իրական» վարքագիր «իրական» մարդկանց, այլ ընդհանրական կերպարների և այս ընտրության դեպքում ևս դեկավարվում է սեփական ցանկություններով և սպասումներով:

Սակայն, ըստ ազդեցության խորության և ուղղվածության, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների իրագործման աստիճանը կախված է հասարակության մեջ այն սոցիալ-մշակութային փոփոխություններից, որոնք պետք է նախաձեռնվեն պետության կողմից՝ ներառյալ կենսագործունեության բոլոր ոլորտներում կարգավորման նոր մեխանիզմների կազմակերպումը: Այդ վերափոխումները դեռևս զգալիորեն հետ են մնում տեխնոլոգիական գործընթացի տեմպերից: Տեղեկատվահեռահաղորդակցական տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները և առավելությունները ինքնուրույն չեն կարող գործադրվել: Անհրաժեշտ է որոշակի պետական քաղաքականություն իրականացնել ոչ միայն այդ տեխնոլոգիաների կիրառման, այլև համապատասխան միջավայրում սոցիալական հարաբերությունների կառուցման ոլորտում: Այդ քաղաքականության առանձնահատկությունը կախվածությունն է տեղեկատվահաղորդակցական միջավայրի հասարակ օգտագործողների տրամադրություններից, հավակնություններից և պահանջներից: Դժբախտաբար, երեսման տեղեկատվական քաղաքականության ձևավորման և իրագործման գործընթացներում գերիշխող դիրք են գրավուն մարդիկ, ովքեր հեռու են ազգային և համամարդկային իդեալներից: Արդյունքում՝ ժամանակակից կառավարման սկզբունքները հիմնվում են այն մարդկանց կամ հասարակության կառավարչական խնդիրներին հարմարվողականության վրա, որոնց առջև դրանք դրվում են<sup>12</sup>:

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում առանձնացվել են տեղեկատվության ոլորտում ՀՀ ազգային

<sup>11</sup> Տես Информационно-коммуникационная безопасность, նշվ. հրատ., էջ 55:

<sup>12</sup> Տես Պատրակով Գ.Յ., Общество как объект управления: вчера и сегодня // Вестник Тюменского государственного университета. 2009, № 5. Сер. "Педагогика. Психология. Философия", էջ 224–228:

շահերը բնութագրող իինգ իիմնական բաղադրիչներ, որոնք ներառում են պետության ներքին և արտաքին քաղաքականության առանցքային խնդիրները<sup>13</sup>:

**Առաջին բաղադրիչը** ներառում է տեղեկատվության ստացման և օգտագործման ոլորտում մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, երկրի հոգևոր զարգացման ապահովումը, հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրական և մարդասիրական ավանդույթների, մշակութային և գիտական ներուժի պահպանումն ու ամրապնդումը:

**Երրորդ բաղադրիչն** ամփոփում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության տեղեկատվական ապահովումը՝ կապված հայ և միջազգային հանրությանը հավաստի տեղեկատվության նաև ստուգման, հանրապետության և միջազգային կյանքում տեղի ունեցող քաղաքական և սոցիալական կարևորագույն իրադարձությունների նկատմամբ պետության պաշտոնական դիրքորոշման իրազեկման հետ՝ միաժամանակ ապահովելով հասանելիությունը պետական բաց տեղեկատվական միջոցներին:

**Երրորդ բաղադրիչն** ընդգրկում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, կապված արտադրանքի ներքին շուկայի պահանջարկի բավարարման և համաշխարհային շուկա արտահանման հետ, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովումը:

**Չորրորդ բաղադրիչը** ներառում է երկրի տեղեկատվական ոլորտի միասնացումը միջազգային տեղեկատվական դաշտին, Հայաստանի և հայության մասին ճշնարիտ տեղեկատվության անկողմնակալ և արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակագրումը ապատեղեկատվության ու ստահոդ քարոզչությանը, համացանցում և Հայաստանին, հայագիտության բոլոր ճյուղերին ու հայությանն առնչվող հայալեզու տեղեկատվության անհրաժեշտ ծավալի և որակի, ինչպես նաև դրանց համաշափության ապահովումը:

**Հինգերորդ բաղադրիչն** ընդգրկում է տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածությունը չքույլատրված հասանելիությունից, տեղեկատվության, կապի և հեռահաղորդակցության համակարգերի անվտանգության ապահովումը:

Գտնվելով աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում և ներքաշված լինելով տարաբնույթ տեղեկատվական ակտիվ ներագրեցությունների և հոսքերի մեջ՝ Հայաստանի Հանրապետությունն ազգային անվտանգության ապահովման համատեքստում այսօր կարևորագույն խնդիր ունի՝ նվազագույնի հասցեն տեղեկատվական ոլորտում պետության ազգային շահերին սպառնացող վտանգների բացասական միտունները։ Որպես տեղեկատվական ոլորտի սպառնալիք՝ կարելի է առանձնացնել հեռահաղորդակցային համակարգերի բնական գործունեության խաթարումը, ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվության միջոցների թույլ պաշտպանվածությունը, չքույլատրված մուտքերի հնարավորությունը, հեռահաղորդակցության ոլորտում մենաշնորհային դիրքի ամրագրումը, անօրինական կարգով տրամադրված տեղեկատվությունը /տեղեկատվության արտահոսք/ և այլն։

<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ. <http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559>

Պետության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, ըստ ընդհանուր ուղղվածության, դասակարգվում են հետևյալ տիպերի:

1. սպառնալիքներ՝ ուղղված մարդ-քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրա անհատական, խնբային և հասարակական գիտակցության ձևավորմանը,
2. սպառնալիքներ՝ ուղղված երկրի պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը,
3. սպառնալիքներ՝ ուղղված հայրենական տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, արտադրանքի ներքին շուկայի բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը,
4. սպառնալիքներ՝ ուղղված երկրի տեղեկատվական և հեռահաղորդակցային ռեսուրսների և համակարգերի անվտանգությանը<sup>14</sup>:

Նշված սպառնալիքներն իրենց հերթին ներառում են՝

- պետական իշխանության մարմինների կողմից նորմատիվային իրավական ակտերի ընդունումը, որոնք սահմանափակում են հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունը,
- նորմատիվների անբավարար մշակվածությունը, որոնք կարգավորում են հարաբերությունները տեղեկատվական ոլորտում,
- տեղեկատվության ձևավորման, ստացման և տարածման մեջնաշնորհի ստեղծումը,
- քաղաքացիների կողմից իրենց սահմանադրական իրավունքների և ազատության իրագործումը,
- զանգվածային և անհատական գիտակցության վրա ազդեցության արգելված միջոցների կիրառումը (ազդեցություն ենթակացական բնագիտների վրա տեսալսողական արտադրանքների, հեռուստա-, տեսաֆիլմերի և կինոժրագրերի, ծայնային արահետների, համակարգչային ծրագրերի մեջ թաքնված ներդիրների<sup>15</sup>),
- պետական իշխանության մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից օրենսդրության պահանջների անտեսումը,
- անհատական տվյալներ պարունակող գաղտնի տեղեկատվության, պետական գաղտնիքի, բանկային գաղտնիքի և այլնի օգտագործման կանոնների խախտումները,
- մշակութային արժեքների, ներառյալ՝ արխիվների, կուտակման և պահպանման համակարգի ոչնչացումը,
- պետական մարմինների բաց տեղեկատվական ռեսուրսներ քաղաքիների մուտքի, այլ՝ սոցիալապես արժեքավոր տեղեկատվության սահմանափակումները,
- տեղեկատվության մանհպույացիա (ապատեղեկատվություն, տեղեկատվության գաղտնի պահում կամ խեղաթյուրում) և այլն:

<sup>14</sup>Տե՛ս Վ.Կ. Արոյան, ԱշՎ. աշխ., էջ 91:

<sup>15</sup>Տե՛ս Կյոմակ Ա.Ի., Յումակ Մ.Պ., Актуальные связи с общественностью: сфера, генезис, технологии, области применения, структуры: учеб.-практ. пособие. М., Высшее образование, Юрайт-Издат, 2009. էջ 230: Լինդստրոմ Մ., Buyology: увлекательное путешествие в мозг современного потребителя / пер. с англ. Е. Фалиок. М., Эксмо, 2010, էջ 83-102:

Ցավոք, այսօր հաճախ անտեսվում են տեղեկատվական քաղաքականության այնպիսի հիմնական բաղկացուցիչներ, ինչպիսիք են՝ տեղեկատվության բովանդակությունը և վերջնական օգտագործողը՝ մարդը, ով նաև այդ տեղեկատվության ստեղծողը, կրողն ու փոխանցողն է: Տեղեկատվության ծավալի աճի պայմաններում փոխվում են ոչ միայն տեղեկատվական հոսքերը, այլև նոր տեղեկատվության հավաքման, պահպանման և դասակարգման վերահսկողության եղանակները, ինչպես նաև հասանելիության և օգտագործման խնդիրները: Դրա շուրջ առաջանում են գործունեության նոր բնագավառներ, որոնք պետության կողմից պահանջում են կարգավորում, ինչպես նաև քաղաքացիների տեղեկատվական անվտանգությանը վերաբերող պետության պատասխանատվության նոր ոլորտների ստեղծում:

Ժամանակակից սպառնալիքների թվին պետք է դասել նաև տեղեկատվական հոսքերի ազդեցությամբ անհատի կառավարման խնդիրը: Քանի դեռ նոր տեղեկատվական տեխնոլոգիաները շարունակում են մնալ սահմանափակ թվով խմբերի ձեռքում, պահպանվում է մարդկանց զանգվածային կառավարման սպառնալիքը: Ուստի կարևոր է ոչ միայն հասկանալ հասարակական փոփոխությունների միտումները, այլև սոցիալական ինստիտուտները հարմարեցնել ներկա և նախապատրաստել ապագա փոփոխություններին:

Անկասկած, պետությունը պետք է իր տեղեկատվական քաղաքականությունում պատշաճ ուշադրություն դարձնի մարդկանց մեջ տեղեկատվություն գտնելու կարողության և տեղեկատվությունից օգտվելու մշակույթի ձևավորմանը, որն անհրաժեշտ է առօրյա կյանքում: Հավաստի անհրաժեշտ տեղեկատվությունը կարևոր է նաև Հայաստանի ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից՝ հաշվի առնելով Ադրբեյջանի հետ տեղեկատվական և քարոզչական պատերազմի առկայությունը:

Ակնհայտ է, որ տեղեկատվական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համակարգի առանցքային տարրերից է, որի դերն ու նշանակությունը տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի զարգացմանը զուգընթաց, բնականաբար, աձելու է: Պատահական չէ, որ այսօր անհատի, հասարակության և պետության տեղեկատվական անվտանգության խնդիրներն ամբողջ աշխարհում մանրակրկիտ ուսումնասիրվում են: Այդ խնդիրների վերլուծության գործում մասնագիտացել են բազմաթիվ միջազգային ձանաչում ունեցող կենտրոններ: Հայաստանը ևս փորձում է հետ չմնալ այդ գործընթացներից: Մասնավորապես՝ այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացնում Հայաստանի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը և մի շարք այլ կազմակերպություններ:

